11 ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ

Նինո Կապանաձե, Նինո Տալախաձե,
Թամար Ցխադաիա, Մզիուրի Ճավաձե

Երաշխավորված է Վրաստանի կրթության և գիտության
նախարարության կողմից 2024 թվականին

Հրատարակչությունն
«ՍԻԴԻ»

Քաղաքացիություն 11
Ուսուցչի գիրք տասն կերորդ դասարանցիների համար
Թբիլիսի, 2024
Առաջին հրատարակություն

Հեղինակներ՝ Նինո Կապանաձե, Նինո Տալախաձե, Թամար Ցխադաիա, Մզիուրի Շավաձե

Խմբագիր՝ Թեոնա Բեքիշվիլի
Տեխնիկական դիզայներ՝ Դաչի Կոճաուրի

© Հրատարակչություն «ՍԻԴԻ», 2024
Բոլոր իրավունքները պաշտպանված են

ՍՊԸ «ՍԻԴԻ հրատարակչություն»

Հասցե. Թբիլիսի, Նոնեշվիլի պող. 2/5/169

Հեռ.՝ 599623610
Կայք էջ՝ www.ceed.ge
Էլ.-փոստ՝ info@ceed.ge
ceedgeorgia@yahoo.com
https://www.facebook.com/ გამომცემლობა სიდი

Citizenship 11
Student's Book
© Ceed Publishing, 2024
all rights reserved.
2/5/169 Noneshvili Ave, Tbilisi, Georgia, 2024

ISBN 978-9941-8-6512-1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասագրքի հայեցակարգը.....2

Դիմում՝ ուսուցչին.....4

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլան (առարկայական չափորոշիչ - Քաղաքացիություն առարկա).....5

Թեմա 1. Ձեռնարկատիրություն և բիզնես 9

Թեմա 2. Քաղաքականություն և քաղաքական մշակույթ 104

Հավելվածներ.....172

Դասագրքի հայեցակարգը

Այս գիրքը տասնմեկերորդ դասարանի «Քաղաքացիություն» առարկայի աշակերտի դասագրքի զույգացված ռեսուրսն է, որի նպատակն է օգնել ուսուցչին ուսանում-ուսուցման գործընթացը արդյունավետորեն կազմակերպելու հարցում: Երկու գիրքն էլ բովանդակային առումով և մեթոդապես համապատասխանում են միջին աստիճանի Ազգային ուսումնական պլանի առարկայական չափորոշչի պահանջներին:

Աշակերտի գիրքը առաջարկում է տասնեկերորդ դասարանի «Ձեռնարկատիրություն և բիզնես» և «Քաղաքականություն և քաղաքական մշակույթ» երկու թեմայի ենթատեքստում կառուցված երկարաժամկետ նպատակներին/թիրախային հասկացություններին կողմնորոշված միջանկյալ նպատակներ՝ համալիր առաջադրանքների տեսքով և համապատասխան ակտիվություններ:

Աշակերտի գրքում «Ձեռնարկատիրություն և բիզնես» **թեմայում** ընտրված **հարցերը** տրված են 20 պարագրաֆով, իսկ «Քաղաքականություն և քաղաքական մշակույթ» թեմայում՝ 10 պարագրաֆով: Պարագրաֆները 4 ենթագլուխներով են բաժանված՝ համալիր առաջադրանքից մինչև համալիր առաջադրանքը: Յուրաքանչյուր պարագրաֆ սկսվում է կենսական իրավիճակով/իրավիճակներով և դրանց քննարկմամբ: Բոլոր ենթագլուխներում նման պատմություններից մեկին շնորհված է **հիմնական ենթատեքստ-օրինակի** գործառույթ, որի առնչությամբ և բովանդակության տեսակետից մոտ գտնվող համեմատական օրինակներով կատարվում է աշակերտի նախորդ գիտելիքի ակտիվացումը և նոր գիտելիքի կառուցումը:

Տեսական տեղեկությունները ներկայացված են բազմաբնույթ դիդակտիկ միջոցներով. լուսանկարներով, սխեմաներով, դիագրամներով, ինֆոգրաֆիկայով, ինչը հեշտացնում է ըմբռնումը: Աշակերտի կողմից ինքնուրույն արված եզրահանգումները, ընդհանրացումը և առաջարկված տեղեկությունը նպաստում են հարցի ընկալման և գիտելիքի ամբողջացման գործընթացին: Աշակերտի գրքում տրված են խորագրեր, որոնք կօգնեն նրան կողմնորոշվել, ուղղորդվել գրքում: Ներկայացված ակտիվությունների ամբողջ հավաքածուն, մոդելավորման սցենարները, բանավեճերը, խմբային, թե անհատական աշխատանքները պարունակում են երկընտրանքային խնդիրներ, ինչը աշակերտի քննադատական մտածողությունը և փաստարկների, տարբեր դիրքորոշումների վերաբերյալ խորհելու ունակությունները զարգացնելու լավագույն միջոցն է:

Ավանդաբար, բոլոր ենթագլուխները սկսվում են **միջանկյալ նպատակով, նույն համալիր առաջադրանքով,** և ենթագլխում միավորված պարագրաֆները պարունակում են այդ միջանկյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, ակտիվությունները և լրացուցիչ ռեսուրսները: Համալիր առաջադրանքներին հետևում է աշակերտի համար ինքնագնահատման խորագիրը (պատրաստված է Ազգային ուսումնական պլանի արդյունքներին հասնելու ներառական մակարդակների համաձայն):

Ինչպես աշակերտի, այնպես էլ ուսուցչի գրքում տրված երկու պարտադիր թեմաները ներառում են 4 թիրախային հասկացությանը կողմնորոշված 4 միջանկյալ նպատակ/համալիր առաջադրանք: Նրանցից յուրաքանչյուրի համար մատրիցայում մանրամասն տրված են ակտիվությունները: Օգտագործման համար մատչելի դարձնելու նպատակով մատրիցան սկսվում է տիտղոսաթերթով: Հաջորդող աղյուսակը արտացոլում է թիրախային գիտելիքը/գիտելիքի կառուցվածքը, որը

պետք է ձեռք բերի աշակերտը: Ուսուցիչը հստակորեն տեսնում է կոնկրետ թիրախային հասկացությանն անցնելու համար ենթահասկացությունը և որ ենթահարցն է (հիմնական ենթատեքստ-օրինակը) ընտրված՝ որպես կիզակետ կոնկրետ թիրախային հասկացությանը հասնելու համար:

Որոշելու համար, թե ենթահարցի հետ կապված ինչ պետք է գիտենա աշակերտը, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Սպասումների աղյուսակ 1),** որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի **ամբողջացված** մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և պլանավորելու (II և III սյունակ), այնուհետև ուսանում-ուսուցման ամբողջ գործընթացի մոնիթորինգի համար (III սյունակ) և վերջապես, այն օգտակար կլինի յուրաքանչյուր աշակերտի արդյունքին զարգացնող գնահատական տալու համար (III և IV սյունակ):

Դրան հետևում է միջանկյալ նպատակին հատկացված երկբաղադրիչ բլոկը (**Աղյուսակ 2):** Առաջին բլոկը միջանկյալ նպատակի/համալիր առաջադրանքի կառուցվածքը ներկայացնում է մանրամասնորեն և ակնհայտ, իսկ երկրորդ բլոկը կազմված է համալիր առաջադրանքի պայմանի և դրա կատարման հանձնարարականներից: Հանձնարարականները մանրամասն դուրս են գրված առաջադրանքի կատարման փուլերի և երկրորդ փուլում որպես քայլեր տրված գնահատման չափանիշների համաձայն: Այդ քայլերին հարմարեցված են ռեսուրսները իրենց ակտիվություններով և ուղղորդող հարցերով: Թեմատիկ մատրիցայում բոլոր բաղադրիչները դասավորվում են ակնհայտորեն և ուսուցչի համար հեշտացնում են գործընթացի կազմակերպումը: Որոշ ակտիվությունների կցված են փոքր հանձնարարականներ, որոնք ճշգրտում են հարցը կամ առաջարկում են այլընտրանքային ակտիվություններ:

Բոլոր հիմնական հարցերի (ենթագլխի) վրա աշխատելու համար մատրիցայից հետո առաջակվում է որոշող գնահատման խորագիր (**Աղյուսակ 3),** որը բխում է Ազգային ուսումնական պլանի առարկայական չափորոշչում տրված թեմայի գնահատման ցուցիչներից և դա ընտրել և կիրառել կարող եք ամփոփիչ առաջադրանքների համար, որոնց երաշխավորված պայմանը կցված է յուրաքանչյուր խորագրին: Խորագրի 4 չափանիշներին բաշխված է 6 միավոր, որին ինքնըստինքյան ավելանում է առաջին 4 միավորը (առաջին չորս միավորը, որին դրական արդյունք չի համապատասխանում, խորագիրը չի նկարագրում):

Պարզ է, Դուք մնում եք գործընթացի գլխավոր վարող և ձեր մեկնաբանությունները ավելի ճկունություն կհաղորդեն ուսուցմանը: Նկատի ունեցեք, որ **Ձեր տեսակետներին համապատասխանաբար կարող եք հիմնական ենթատեքստ-օրինակի գործառույթ շնորհել դասագրքում տրված այլ կենսական իրավիճակի և համալիր առաջադրանքի պայմանը նույնպես ձևակերպել դրան հարմարեցված:**

Դասագրքում տեղեկատվական ռեսուրսը առատ է, նշված են լրացուցիչ ռեսուրսների էլեկտրոնային հղումները, առանց որոնց չենք էլ պատկերացնում ուսումնական գործընթացը:

Գրքի հավելվածներում տրված են հիմնական ենթատեքստ-օրինակների տեքստերը և այլ լրացուցիչ ռեսուրսներ:

Մաղթում ենք հաջողություն:

Ողջույն, սիրելի՛ ուսուցիչ:

Տասնմեկերորդ դասարանի «Քաղաքացիություն» առարկայի Աշակերտի դասագրքին համապատասխանող «Ուսուցչի գիրքը» ստեղծվել է ընդհանուր կրթության բարեփոխման շրջանակներում ընթացող գործընթացներում Ձեզ աջակցելու համար:

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլանի համաձայն, միջին աստիճանի տասնմեկերորդ դասարանի համար առաջադրված է երկու թեմա՝ «Ձեռնարկատիրություն և բիզնես» և «Քաղաքականություն և քաղաքական մշակույթ»: Ուսուցչի գիրքը ևս նվիրված է այդ թեմաներին:

Ընդհանուր կրթության Ազգային նպատակները դպրոցին առաջադրում է ժողովրդավարական արժեքներով և ունակություն-հմտություններով կայացած քաղաքացի դաստիարակելու խնդիրը: Իսկ այդպիսի քաղաքացին պետք է անվերապահորեն հասկանա բիզնեսի և քաղաքականության ժամանակակից հայեցակարգը, որովհետև այդ ոլորտներում ստեղծարարները անձամբ քաղաքացիներն են: Առանց ձեռնարկատիրության և բիզնեսի զարգացման չի կարող հասանելի լինել բարեկեցությունը, և պետությունում ամեն տեսակ զարգացման ուղին անցնում է քաղաքականության և քաղաքական մշակույթի միջով: Այդ պատասխանատվությունը ըմբռնելու համար որոշակի գիտելիք և վերլուծության ունակություն է հարկավոր:

Դուք՝ ուսուցիչներդ, դասասենյակում կոնկրետ համալիր առաջադրանքների, կոնկրետ ակտիվությունների, երկընտրանքային իրավիճակների կիրառմամբ պետք է օգնեք աշակերտին հաղթահարել երկարաժամկետ նպատակների հետ կապված գիտելիքը, և համապատասխան ունակություն-հմտություններ պետք է շնորհեք նրան:

Ուսուցչի գիրքը այդ գործընթացը վարելու մեկ տարբերակ է առաջարկում:
Հուսով ենք՝ այն Ձեր սպասումները կարդարացնի:

Շնորհակալություն, որ այս գիրքն եք ընտրել:

Երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլան (առարկայական չափորոշիչ - «Քաղաքացիություն» առարկա)
Ուսուցանվում է շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 72 ժամ

Հասարակական գիտություններ, միջնակարգ աստիճան

գ) Քաղաքացիություն

Ներածություն

Դասընթացը հատկացված է միջնակարգ աստիճանի աշակերտների համար: Դասընթացի շրջանակներում ընդարձակվում և խորանում են բազային աստիճանում քաղաքացիության շրջանակներում ձեռք բերված գիտելիքները:

Չափորոշչում արդյունքների ու թիրախային հասկացությունների տեսքով սահմանված են երկարաժամկետ նպատակները:

Բովանդակությունը նկարագրված է թեմաների (ենթաթեմաների), հարցերի և ենթահասկացությունների տեսքով: Ազգային ուսումնական պլանը սահմանում է պարտադիր թեմաներ: Թեմաների համպատասխան հարցերը ինքը՝ դպրոցն է ընտրում:
Յուրաքանչյուր թեմային կցված են արդյունքներին հասնելու ինդիկատորները՝ ստուգիչները: Նրանք սահմանում են, թե ինչը պետք է գնահատվի ուսանում-ուսուցման գործընթացում: Ինդիկատորները խմբավորված են ըստ թիրախային հասկացությունների:

Աստիճանի արդյունքները
Միջնակարգ աստիճանի չափորոշչում նկարագրված յուրաքանչյուր արդյունքին նախորդում է առջևից կցված ցուցիչը, որը մատնացույց է անում առարկան, ուսուցման փուլը և չափորոշչի արդյունքի համարը, օրինակ՝ «**Քաղ. միջ.ընտր.1»:**

«Քաղ » - ցույց է տալիս առարկան. «Քաղաքացիություն»,
«միջ.» - ցույց է տալիս աստիճանը,
«1» - ցույց է տալիս չափորոշչի արդյունքի համարը:

Քաղաքացիության չափորոշչի արդյունքները միջնակարգ աստիճանում		
Արդյունքների ցուցիչ		**Թիրախային հասկացություն**
	Աշակերտը պետք է կարողանա.	
Քաղ.միջ. 1	Որոշումներ կայացնելիս և համապատասխան գործողությունը կատարելիս՝ հաշվի առնել ամենակարևոր իրավական փաստաթղթերը (այդ թվում՝ Վրաստանի Սահմանադրությունը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Երեխաների իրավունքների կոնվենցիան):	**Հասարակություն** (անձ, անհատ, սոցիալականացում) (Քաղ.միջ. 1,2,4) **Ժողովրդավարություն** (մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարության սկզբունքներ) (Քաղ.միջ.1,2,3,4) **Քաղաքացիական մասնա-կցություն** (Քաղ.միջ. 2,4) **Կայուն զարգացում** (Քաղ.միջ.3)
Քաղ.միջ. 2	Բացահայտել հասարակության համար ակտուալ գլոբալ և լոկալ սոցիալ-քաղաքական խնդիրները և սեփական մասնակցությամբ հոգ տանել դրանք ուղղելու մասին, հաշվի առնելով ժողովրդավարության սկզբունքները:	
Քաղ.միջ. 3	Գործել կայուն զարգացման սկզբունքների ըմբռնումով (այդ թվում՝ գործել առօրյա և արտակարգ (բնական և տեխնոգեն պատճառներով առաջացած) իրավիճակում անվտանգության կանոնները պահպանելով):	
Քաղ.միջ. 4	Հասարակությունում դրական փոփոխություններին ուղղված գաղափարները շահարկել և փաստարկել տարբեր հետաքրքրությունների խմբերի և պետական հաստատությունների հետ համագործակցությամբ:	

Պարտադիր թեմաներ

X դասարան
1. Գլոբալ քաղաքացիություն
2. Իրավական մշակույթ
XI դասարան
3. Արտադրություն և բիզնես
4. Քաղաքականություն և քաղաքական մշակույթ
XII դասարան
5. Վրաստանը և գլոբալիզացիան

Ուսանում-ուսուցում գործընթացում դպրոցները պետք է պահպանեն թեմաների վերևի մասում առաջարկված հերթականությունը (խորհուրդ է տրվում մեկ կիսամյակում մեկ թեմայի ուսուցումը):

6. Գլոբալ տնտեսությունը և Վրաստանը

Պարտադիր թեմաներն ու գնահատման ինդիկատորները կապող աղյուսակներ

Յուրաքանչյուր աղյուսակում տրված է թեմայի վերնագիրը, դրա նկարագրությունը և գնահատման ինդիկատորները, որոնցում ցույց է տրված, թե ինչպես են իրացվում կոնկրետ թեմայի արդյունքները:

XI դասարան

Թեմա 1. Ձեռնարկատիրություն և բիզնես Թեման նախատեսում է կոնկրետ օրինակների և երկընտրանքների միջոցով ձեռնարկատիրության և բիզնեսի գործունեության քննարկումը, բիզնեսի կայունության վրա ներգործող գործոնների (օրինակ՝ մրցակցության, ձեռնարկատիրոջ առջև առկա ռիսկերի և դրանց կանխման ուղիների) վերլուծումը:
Թեմայի շրջանակներում արդյունքի հասնելու ինդիկատորները ըստ թիրախային հասկացությունների. **Հասարակություն -** Աշակերտը պետք է կարողանա. • հիմնավորել հասարակության/բնակչության/սոցիումի վրա ձեռնարկատիրոջ՝ որպես գործատուի, ապրանք/ծառայություն մատուցողի դրական ազդեցությունը: **Ժողովրդավարություն -** Աշակերտը պետք է կարողանա. • մարդու պահանջները և կարիքները կապել նրա տնտեսական իրավունքների հետ, պետության տնտեսական գործառույթների հետ (օրինակ՝ պետության և բիզնեսի միջև հարաբերություն) կապված երկընտրանքները քննարկել ժողովրդավարության սկզբունքների կտրվածքում՝ հենվելով կոնկրետ կենսական օրինակների վրա: **Քաղաքացիական մասնակցություն -** Աշակերտը պետք է կարողանա. • ձեռնարկատիրության կոնկրետ գաղափարները կապակցել փաստաբանության և շահարկման հետ, ընտրել գաղափարին համապատասխան փաստաբանության ձևերի և ռեսուրսների որոնման ուղիները: **Կայուն զարգացում -** Աշակերտը պետք է կարողանա. • տնտեսության հետ կապված հարցերի մասին դատողություն անելիս/ձեռնարկատիրական գործունեությունը պլանավորելիս նկատի ունենալ կայուն զարգացման սկզբունքները:

Թեմա 2. Քաղաքականություն և քաղաքական մշակույթ Թեման նախատեսում է հիմնական քաղաքական գաղափարների, գաղափարախոսությունների և դրանց զարգացման օրինաչափությունների ուսումնասիրումը: Ուշադրությունը կենտրոնանում է միջազգային հարաբերությունների, այն կազմակերպությունների և շարժումների վրա, որոնք նշված քաղաքական գաղափարախոսությունների ներգործության տակ են: Վերլուծության են ենթարկված հիմնական քաղաքական ռեժիմները: Թեմայում քննարկված են քաղաքագետի և պետական գործչի էությունը և դերը հասարակական-քաղաքական կյանքում, առողջ և անառողջ քաղաքական գործընթացները և երևույթները:
Թեմայի շրջանակներում արդյունքի հասնելու ինդիկատորները ըստ թիրախային հասկացությունների. **Հասարակություն -** Աշակերտը պետք է կարողանա. • անհատի վրա տարբեր քաղաքական գաղափարների/գաղափարախոսությունների ազդեցությունը վերլուծել, քաղաքական գործընթացներում քաղաքացու և հասարակության դերը բնութագրել: **Ժողովրդավարություն -** Աշակերտը պետք է կարողանա. • քաղաքական գաղափարախոսությունների և ռեժիմների, տեղական և միջազգային մակարդակով ընթացող քաղաքական գործընթացների, տեղական և միջազգային կազնակերպությունների, կոնկրետ քաղաքագետների գործունեությունը գնահատել ժողովրդավարության սկզբունքների հիման վրա: **Քաղաքացիական մասնակցություն -** Աշակերտը պետք է կարողանա. • տեղական և միջազգային քաղաքական գործընթացներում մասնակցության համար կոնկրետ ոլորտները/գաղափարները հստակեցնել, քաղաքական գործընթացներում քաղաքացիների ընգրկվածության ձևերը վերլուծել: **Կայուն զարգացում -** Աշակերտը պետք է կարողանա. • տեղական և միջազգային քաղաքական գործընթացների մասին դատողություն անելիս՝ նկատի ունենալ կայուն զարգացման սկզբունքները:

ԹԵՄԱ 1. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ

Թեմատիկ մատրիցայի տիտղոսաթերթ

Թեմայի վերնագիրը. «Ձեռնարկատիրություն և բիզնես» **Դասաժամերի քանակը.** 35 ժամ: **Հիմնական ռեսուրսը.** դասագիրք:				
Թիրախային հասկացություններ.	**Հիմնական հարց 1. Ձեռնարկատիրության անձնական և հասարա-կական տեսանկյունները**	**Հիմնական հարց 2. Պետությունը և բիզնեսը**	**Հիմնական հարց 3. Ձեռնարկատերերի պատասխանատվությունը**	**Հիմնական հարց 4. Բիզնեսի կայունությունը**
Հասարակություն	**<u>Ենթահարց.</u>** 1.«Ձեռնարկատիրությունը՝ (անտրեպրենյորությունը) մտածողության տեսակ» 2. «14 տարեկան ձեռնարկատերը» **<u>Ենթահասկացություններ</u>** ❖ Մարդու պահանջ-մունքները և կարիք-ները ✓ Ինքնաակտուալացում			
Ժողովրդավարու-թյուն		**<u>Ենթահարց.</u>** Թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրում» **<u>Ենթահարցեր.</u>** ❖ Մարդու իրավունքներ. ✓ առողջապահության իրավունք, ✓ սպառողի իրավունքներ:		

		❖ Ժողովրդավարության սկզբունքներ Տնտեսական ազատություն		
Քաղաքացիական մասնակցություն			**<u>Ենթահարց.</u>** «Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկ-ված և չհաշվարկված արդյունքները	
			<u>Ենթահասկացություն-ներ.</u> ❖ *Քաղաքացիակա նմասնակցությա ն սանդղակ* ✓ Գործընկերություն **<u>Ենթահասկացություններ.</u>** Կայուն զարգացման նպատակներ ✓ Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ:	
Կայուն զարգացում				**<u>Ենթահարց.</u>** «Փոփոխություններ բիզնեսի կայու-նության ըմբռնման մեջ» **<u>Ենթահասկացություն-ներ.</u>** ❖ Կայուն զարգացման նպատակներ ✓ Կայուն սպառում և արտադրություն

Թեմայի հետ կապված հաստատուն պատկերացումներ

- Ձեռնարկատիրությունը/բիզնեսը մարդու շահերի և պահանջմունքների բավարարման հնարավորություն է, և միևնույն ժամանակ այն ազդեցություն է գործում անձնավորության և հասարակության զարգացման վրա (**Թիրախային հասկացություն. «Հասարակություն»):**
- Ժողովրդավարական հասարակությունում գործող տնտեսական անկախության սկզբունքը ապահովում է բիզնեսի ազատությունը, բայց միևնույն ժամանակ կարող է գործել մարդու իրավունքների վրա (օրինակ՝ սպառողի, առողջության...), որոնց պահպանությունը կատարվում է օրենքների և կանոնակարգերի մակարդակով **(Թիրախային հասկացություն – Ժողովրդավարություն):**
- Պետությունը և հասարակական ռեսուրսները չեն կարող բավարարել սոցիալական հիմնախնդիրների բարելավումը, այդ պատճառով մասնավոր բիզնեսը ստանձնում է սոցիալական պատասխանատվություն և տարբեր կերպ մասնակցում/հոգում հասարակական հիմնախնդիրների կարգավորման մասին **(Թիրախային հասկացություն – Քաղաքացիական մասնակցություն):**
- Կայուն բիզնեսի հայեցակարգը փոփոխվում է և ենթադրում է տնտեսական, էկոլոգիական և սոցիալական գործոնների կարևորության հավասարաչափ ճանաչում այնպես, որ բիզնեսը ռեսուրս - սպառողական տնտեսական մոդելից անցնի շրջաբերական (առանց թափոնների) տնտեսության մոդելի (**Թիրախային հասկացություն - «Կայուն զարգացում»):**

XI դասարանի պարտադիր «Ձեռնարկատիրություն և բիզնես» թեմայի **առաջին** հիմնական հարցն է **«Ձեռնարկատիրության անձնական և հասարակական տեսանկյունները»:** Այս հարցի առնչությամբ աշակերտի նախորդ գիտելիքի ակտիվացումը և նոր գիտելիքի կառուցումը կատարվում է կոնկրետ ենթատեքստ-օրինակներով. «Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ» և «14 տարեկան ձեռնարկատերը», և ըստ բովանդակության նրան մոտ գտնվող օրինակներով.

Հիմնական ենթատեքստ–օրինակ և օրինակներ համեմատության համար	**Ռեսուրսներ**
Հիմնական ենթատեքստ-օրինակներ. «Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ» **(հավելված 1.)** «14 տարեկան ձեռնարկատերը» **(հավելված 2.)**	• Դասագիրք, էջ 21-25 • Դասագիրք, էջ 27 Ուսուցչի գիրք (**հավելված 1, էջ 172)** Տեսանյութ «Գիորգի Շեշաբերիձե - «Դորայի» հիմնադիր»: • tv.ge/video/gaicanit-14-wlis-antrepreneri-romelmac-sharqebisgan-150-000- laris-investicia-miigho-stumari-giorgi-sheshaberidze-doras-damfudznebeli/
Օրինակ՝ համեմատության համար 1	

« Ինչպե՞ս հրեա ժողովուրդը անապատը վերածեց հզոր պետության» Շիմոն Պերեսի ելույթը:	• Դասագիրք, էջ 10
Օրինակ՝ համեմատության համար 2 Հատված Ռոբերտ Կիյոսակիի կողմից հրատարակված գրքից «Աղքատ հայրիկ և հարուստ հայրիկ»:	• Դասագիրք, էջ 19
Օրինակ՝ համեմատության համար 3 Ստվերային բիզնեսը Խորհրդային Միությունում	• Դասագիրք, էջ 37

Պարզաբանում. Նոր գիտելիքի կոնստրուկտիվ կառուցումն ապահովելու համար կարևոր է աշակերտներին առաջարկենք նրանց գիտելիք-փորձին հասանելի այնպիսի օրինակներ (մասնավոր դեպքեր, իրավիճակներ, պատմություններ), որոնց քննարկում-վերլուծումը կօժանդակի թիրախային գիտելիքը (ենթահարցը, ենթահասկացությունները, թիրախային հասկացությունները) ըմբռնելուն և յուրացնելուն: Ենթատեքստ–օրի-նակները ճիշտ այդպիսի օրինակներ կարող ենք անվանել: Այդ պատմությունները պետք է ընտրվեն պարտադիր թեմաների շրջանակներում հստակեցված հիմնական հարցերի համաձայն և պետք է ցույց տան կենսական իրավիճակներ (երկընտրանքներ, էմոցիաներ):

Այստեղ ևեթ ընդգծված նշում ենք, որ ուսուցչի գրքում առաջարկվող հիմնական ենթատեքստ-օրինակները կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, այսինքն՝ կարող եք հիմնական գործառույթը վերագրել դասագրքում ներկայացված մեկ այլ ենթատեքստ-օրինակի և դրա վրա հիմնվելով ձևակերպել համալիր առաջադրանքի պայմանը:

Ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հիմնական ենթատեքստ-օրինակի վերլուծության վրա: Դրա մշակումը կատարվում է խորքային՝ ենթատեքստի, էմոցիոնալ-սոցիալական տեսանկյունները նկատի ունենալով, իսկ համեմատության համար ընտրված օրինակները հիմնականում ֆոնային գիտելիքի դեր են կատարում:

Ենթատեքստ-օրինակի առաջնային մշակման ժամանակ ուսուցիչը ուղղորդող հարցերով, ակտիվություններով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն դետալների վրա, որոնք կապված են մշակվող ենթահասկացության հետ: Օրինակ՝ կոնկրետ դեպքում ենթատեքստ-օրինակի բովանդակության այն մասի վրա ենք ձգտում կենտրոնանալ, որը հանգուցային հարցերում ուղիղ կերպով (ինչու և ինչպես է բիզնեսը/ձեռնարկատիրությունը հնարավորություն ստեղծում անձի և հասարակության ազատ զարգացման համար: Ինչպես ներկայացնեմ այն երկընտրանքները/մարտահրավերները, որոնք ձեռնարկատիրոջ և հասարակության միջև կարող են առաջանալ) արդեն նախանշել ենք:

Թիրախային գիտելիքի որոշման աղյուսակ

Թեմա. Ձեռնարկատիրություն և բիզնես **Հիմնական հարց. Ձեռնարկատիրության անձնական և հասարակական տեսանկյունները** **Հիմնական ենթատեքստ-օրինակներ. «Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ» և «14 տարեկան ձեռնարկատերը»**			
Ենթահարց	**Ենթահասկացություն**		**Թիրախային հասկացություններ**
«Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ» **«14 տարեկան ձեռնարկատերը»** **(Ձեռնարկատիրությունը՝** որպես մարդու պահանջ-մունքների և կարիքների բավարարման հնարավո-ր ություն)	Ինքնաակտուալացում	Մարդու պահանջմունքներ և կարիքներ	Հասարակություն **(Արդյունքներ. 1,2,4)**

Որոշելու համար, թե ինչ պետք է գիտենա աշակերտը ենթահարցի հետ կապված, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Աղյուսակ 1),** որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի ամբողջացված մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է մի քանի փուլում.

ա) նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և ուսանում-ուսուցման գործընթացը պլանավորելու փուլում (**ինչ ակտիվություններ, մեթոդներ, մարտավարություններ պետք է կիրառենք, որպեսզի աշակերտին օգնենք այս սպասումը իրական արդյունքի վերածելու մեջ),**

բ) հաջորդ ուսանում-ուսուցման գործընթացի մոնիթորինգի համար (**ինչպե՞ս է ընթանում գործընթացը, հայտնվեցի՞ն սպասելիքներին համապատասխան նշաններ: Ի՞նչ հարցեր պետք է օգտագործեմ որպես փայտամած),**

գ) ուսանում-ուսուցման գործընթացում և համալիր առաջադրանքը ավարտելու ժամանակ կոնկրետ հետադարձ կապի ձևավորման մեջ **(սպասելիքներից ո՞ր արտահայտությունները հարմար կլինեն աշակերտի արդյունքը նկարագրելու, խրախուսելու, խորհուրդ տալու համար),**

դ) վերջում՝ միջանկյալ և երկարաժամկետ նպատակների վրա աշխատանքը՝ մանկավարժական պրակտիկայի կառուցվածքային ինքնա-գնահատման համար **(իրատեսական սպասելիքները ո՞ր հաստատուն պատկերացման՝ Հաստ. պատկ. կապակցությամբ որոշեցի: Ո՞ր սպասելիքի համար գտա ճիշտ լուծումը ակտիվությունների և մեթոդների տեսքով: Որտե՞ղ պետք է փոխեմ մոտեցումը):**

Աղյուսակ 1

Թիրախային հասկացություն Ենթահարց	**Թիրախային հասկացության կապակցությամբ հաստատուն պատկերացումներ (Հաստ. պատկ.)**	**Սպասելիքներ** <u>**Աշակերտը կարող է.**</u>	**Ուսուցչի մեկնաբանությունը**
Հասարակություն (Արդյունքներ. 1, 2, 4) **«Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ»** **«14 տարեկան ձեռնարկատերը»** **(Ձեռնարկատիրությունը՝** որպես մարդու պահանջ-մունքների և կարիքների բավարարման հնարա-վորություն)	1. Մարդը անձնավորություն է՝ իր արժանիքներով, աշխարհայացքով (գաղա-փարներ, արժեքներ) և ձգտումներով: Նա ունի սեփական անձը ազատ զարգացնելու իրավունք:	Գիորգիի և այլ հայտնի ձեռնարկատերերի օրինակներին հենվելով՝ վերլուծել. ինչպիսի՞ միջավայրն է (այդ թվում՝ բիզնես միջավայրը) մարդուն տալիս սեփական ձգտումները բավարարելու, արժանապատվությունը պաշտպանելու հնարավորություն: Քննարկել՝ ինչպե՞ս գործեց ձեռնարկատիրությունը Գիորգիի անձնական զարգացման, հասարակության զարգացման վրա:	
	2. Մարդն ունի տարբեր (ֆիզիոլոգիական, ան-վտանգության, սոցիա-լական կապերի և այլն) պահանջմունքներ, առանց որոնց բավարարման նա չի կարողանա անհատապես զարգանալ:	Հենվելով քննարկված օրինակների վրա՝ հիմնավորել հետևյալ դրույթները. - Գիորգիին, նաև՝ ուրիշներին իրենց պահանջմունքները և կարիքներն են դրդում սկսել տարբեր գործողություններ/գործունեություն, - անվտանգության զգացումը անհրաժեշտ է մարդու հետագա զարգացման համար, - ձեռնարկատիրությունը պահանջում է անձնական հատկությունների և ունակությունների զարգացում և աճի ինքնաակտուալացման հնարավորություն, - ոչ ժողովրդավարական միջավայրը ձեռնարկատի-րական գործունեություն ցանկացողների մոտ առա-ջացնում է հասարակությունից/պետությունից օտար-վելու զգացում և նվազեցնում է նրանց պատասխանա-տվությունը հասարակության շահերի և կանոնների փոխանակման նկատմամբ:	

	3. Այլ անձանց/սոցիալական խմբերի/ինստիտուցիաների հետ հարաբերությունը օժանդակում է մարդու անձնական զարգացմանը:	Կոնկրետ օրինակների վրա հենվելով՝ նկարագրել ձեռնարկատիրոջ (Ռիդ Հոբմանի պատմության մեջ անվանված ձեռնարկատերերի, Գիորգի Շեշաբերիձեի, «կոմբինատորների») կյանքի ճանապարհը: Վերլուծել, թե որ հասարակական խմբերի և ինստիտուտների հետ էր նա հարաբերություն ունենում/համագործակցում, ինչ ազդեցություն էր գործում այդ գործընթացը ամեն մեկի աշխարհայացքի և անձնական զարգացման վրա:	
	4. Մարդուն սոցիալականացման մեջ օգնում է ասերտիվությունը, սեփական կարծիքը առանց ուրիշին վիրավորելու վստահորեն արտահայտելու ունակությունը:	Քննարկված օրինակների վրա հենվելով՝ վերլուծել, թե որքանով էր ասերտիվությունը հանդիսանում ձեռնարկատերերի գործնական սկզբունք, որքանով էր այդ ունակությունը օգնում նրանց անվանված նպատակներին հասնելու գործում:	

Ստորև տրված միջանկյալ/համալիր առաջադրանքի մատրիցայում **(Աղյուսակ 2)** բերված են համալիր առաջադրանքի պայմանը, գնահատման չափանիշները և իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, ուղղորդող հարցեր և կարճ հանձնարարականներ ուսուցչին):

Աղյուսակ 2

Հարց. «Ձեռնարկատիրության անձնական և հասարակական տեսանկյունները»
Ենթահարց. Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ», «14 տարեկան ձեռնարկատերը» (Ձեռնարկատիրությունը՝ որպես մարդու պահանջմունքների և կարիքների բավարարման հնարավորություն) **Ենթահասկացություններ.** Ինքնաակտուալացում, մարդու պահանջմունքներ և կարիքներ: Թիրախային հասկացություն – **հասարակություն** (Արդյունք. 1, 2, 3, 4)
Հանգուցային հարց - Ինչո՞ւ և ինչպե՞ս է բիզնեսը/ձեռնարկատիրությունը հնարավորություն ստեղծում անձի և հասարակության ազատ զարգացման համար: - Ինչպե՞ս ներկայացնենք **դիմումի տեքստում** այն երկընտրանքները/մարտահրավերները, որոնք կարող են առաջանալ ձեռնարկատիրոջ և հասարակության միջև:
Համալիր առաջադրանք Ծանոթացե՛ք դասագրքում տրված 2 իրավիճակներին՝ «Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ» (էջ 21) և «14 տարեկան ձեռնարկատերը» (էջ 27), որոնցից մեկը վերաբերում է աշխարհում հայտնի մասնավոր ձեռնարկատերերին, իսկ երկրորդը՝ 14 տարեկան դեռահասի ձեռնարկատիրական փորձին: Պատկերացրե՛ք ձեզ Գիորգիի փոխարեն 50-ամյա տարիքում և պատրաստե՛ք **դիմումի տեքստ** (250-300 բառ)՝ ուղղված զավակներին/երիտասարդներին: Տեքստում հեղինակը կխոսի՝ հենվելով սեփական և ուրիշների փորձի վրա: **Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.** • Ինչո՞ւ ձեռնարկատիրությունը վերածվեց մասնավոր ձեռնարկատերերի անձնական զարգացման և ընդհանրապես հասարակության զարգացման հնարավորության: Տարբեր հանգամանքներում ի՞նչ դիմակայություններ կարող են ուղեկցել այս գործընթացին: **(Հաստ. պատկ. 1.2.)** • Ի՞նչ գործոններ և ինչպե՞ս են ազդում ձեռնարկատերերի որոշումների և նրանց հետագա հաջողությունների վրա: Խոսե՛ք կոնկրետ օրինակներով: **(Հաստ. պատկ. 3.)** • Ի՞նչ հատկություններ և ունակություններ պետք է պահպանի և զարգացնի ձեռնարկատերը հասարակության հետ ներդաշնակ համագործակցության համար: (**Հաստ.. պատկ. 4.)**

Թիրախային հասկացության/հասկացությունների կապակցությամբ հաստատուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ՝	**Գնահատման չափանիշներ** Աշակերտը կարող է.	**Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.**
Հասարակություն **1.** Մարդը անձնավորություն է իր աշխարհայացքով (գաղափարներ, արժեքներ) և ձգտումներով: Նա ունի սեփական անհատականությունը ազատ զարգացնելու իրավունք: 2.Մարդն ունի տարբեր (ֆիզիոլոգիական, անվտանգության, սոցիալական կապերի և այլն) պահանջմունքներ, առանց որոնց բավարարման նա չի կարողանա անհատապես զարգանալ: 3. Այլ անձանց/սոցիալական խմբերի/ինստիտուցիաների հետ հարաբերությունը օժանդակում է մարդու անհատական զարգացմանը: 4. Մարդուն սոցիալականացման մեջ օգնում է ասերտիվությունը, սեփական կարծիքը առանց ուրիշին վիրավորելու վստահորեն արտահայտելու ունակությունը:	**Հասարակություն** • Մարդկանց նկատմամբ էմպաթիա դրսևորել, գործոններ բացահայտել, որոնք ազդեցություն են գործում այս կամ այն իրավիճակում մարդու արարքների/որոշումների վրա (**Հաստ. պատկ.1,2),** • վերլուծել գործոնները, որոնք նպաստում են/խանգարում են մարդու սոցիալականացմանը **(Հաստ.պատկ. 3,4):**	• Ինչո՞ւ ձեռնարկատիրությունը վերածվեց ձեռնարկատերերի անձնական և ընդհանրապես հասարակության զարգացման հնարավորության: Տարբեր հանգամանքներում ի՞նչ դիմակայություններ կարող են ուղեկցել այս գործընթացին: (**Հաստ. պատկ.1,2)** • Ձեռնարկատերերի որոշումների և նրանց հետագա հաջողությունների վրա ի՞նչ գործոններ են ազդում և ինչպե՞ս: Խոսե՛ք կոնկրետ օրինակներով: (**Հաստ. պատկ. 3)** • Ի՞նչ հատկություններ և ունակություններ պետք է պահպանի և զարգացնի ձեռնարկատերը հասարակության հետ ներդաշնակ համագործակցության համար (**Հաստ. պատկ. 4.)**

Հանձնարարական ուսուցչին. Այս խորհուրդները դասարանում կիսվելուց հետո, ամփոփման նպատակով կազմակերպեք փոքր բանավեճ և արդարացված պրակտիկայով հստակեցրեք մի քանի կարևոր երաշխավորություն առաջադրանքի արդյունքի վրա աշխատանքի կապակցությամբ:

Հարցերի միջոցով մեկ անգամ կրկին վերստուգեք առաջադրանքի պայմանը բոլորի համար հասկանալի՞ է, թե՞ ոչ:
Հաղորդե՛ք աշակերտներին տեղեկատվություն այն մասին, որ մինչև համալիր առաջադրանքի կատարումը ուսանելի հարցին կտրամադրեք մի քանի դաս, և վերջում բոլորը կունենան կատարված առաջադրանքը դասարանին ներկայացնելու հնարավորություն:

Ուշադրություն:

Համալիր առաջադրանքի վրա աշխատանքը հիմնականում դասարանում, դասերի ժամանակ է ընթանում և միայն բացառիկ դեպքում եք կիրառում տնային առաջադրանքը:

Փուլ II – համալիր առաջադրանքի վրա աշխատանք
Թիրախային հասկացություն.

Ենթահարց. «Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ», «14 տարեկան ձեռնարկատերը» (ձեռնարկատիրությունը՝ որպես մարդու պահանջմունքների և կարիքների բավարարման հնարավորություն), **ենթահասկացություններ,** ինքնաակտուալացում- մարդու պահանջմունքներ և կարիքներ, **թիրախային հասկացություն՝ հասարակություն (Արդյունք. 1,2,3,4)**
Ենթատեքստ-օրինակների առաջնային մշակում

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով (ակտիվությունը Աշակերտի դասագրքում չկա)

- Ուշադրությամբ ծանոթացե՛ք տրված տեքստին՝ «Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ» (էջ 21-25), գրատախտակի վրա գծած եռայուն աղյուսակը գծեք տետրում: Առաջին սյունակը լրացրեք անհատականորեն, նշեք այն ամենը, ինչը հետաքրքիր եք համարում: Այնուհետև ամբողջացրեք զույգի հետ, քննարկեք և երկրորդ սյունակում մտցրեք կարևոր հարցերը, իսկ երրորդ սյունակը լրացրեք շնորհանդեսներից, բանավեճերից և ուսուցչի հետադարձ կապից հետո:

Ինքնուրույն աշխատանք	Խմբային աշխատանք	Համադասարանցիների և ուսուցչի մեկնաբանությունները
1.		Ձեռնարկատերեր դառնում են այն մարդիկ, ովքեր սեփական կամ այլոց կարիքները բավարարելու համար կարող են ստեղծել արտադրանք կամ ծառայություն:
2.		Ձեռնարկատիության համար մատչելի միջավայր, որտեղ մարդու ազատությունը և զարգացման հնարավորությունը պահպանված է: Պահպանված է նաև նրա արժանապատվությունը:
3.		Այլ մարդկանց, ինստիտուցիաների հետ համագործակցությունը ձեռնարկատերերի համար ստեղծում է զարգացման հնարավորություն:
4.		Նրանք ունեն առանձնահատուկ անձնական հատկություններ. համարձակ են, արագորեն արձագանքում են որոշումներին, կարող են ռիսկի դիմել, կարող են իրականացնել ինովացիոն մտահղացումներ:
5.		Ձեռնարկատերերին անհրաժեշտ են այնպիսի սոցիալ-էմոցիոնալ ունակություններ, ինչպիսիք են ասերտիվությունը, հաղորդակցությունը, համագործակցությունը, հակամարտությունները կառավարելու ունակությունը, էմպաթիան, բնավորություն/կամք, նա պետք է սահմանի իր կարիքները այդ ուղղությամբ և հոգա զարգացման մասին:
6.		Ձեռնարկատերերը իրենց գործունեությամբ ստանում են շահույթ և զարգանում են, զարգացնում են նաև հասարակությունը, քանի որ գործատու են, ամրապնդում են տնտեսությունը, օժանդակում են մարդկանց բարեկեցությանը:

Հանձնարարական ուսուցչին. Նախօրոք գրատախտակի կամ մեծ թերթի վրա գծեք աղյուսակ, նաև նախօրոք ունեցեք նշած այն դրույթները, որոնք գիտականորեն հետաքրքիր են և ակտիվությունը ամփոփելու ժամանակ առաջարկեք աշակերտներին: Աշակերտներին կարելի է առաջադրել հարցեր.

- Երբևէ երազե՞լ եք դառնալ հայտնի ձեռնարկատեր: Բացատրեք՝ ինչո՞ւ:
- Ո՞ր ձեռնարկատերերի փոխարեն կցանկանայիք լինել: Ինչո՞ւ:
- Ի՞նչ ճանապարհ հարկ կլիներ անցնել նրա փոխարեն:

- Ճանաչո՞ւմ եք, արդյոք, որևէ ձեռնարկատիրոջ: Ի՞նչ ճանապարհ է անցել նա:
- Ի՞նչ կփոփոխեիք նրա վարքում: Ինչո՞ւ:
- Եթե ձեռնարկատեր լինեիք, ի՞նչ կփոփոխեիք ձեզ համար: Հասարակությա՞ն համար: Ինչո՞ւ:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 28

Ծանոթացե՛ք 27-րդ էջում տրված պատմությանը՝ «14 տարեկան ձեռնարկատերը», տեսանյութին՝ «Գիորգի Շեշաբերիձե - «Դորայի հիմնադիր» tv.ge/video/gaicanit-14-wlis-antrepreneri-romelmac-sharqebisgan-150-000-laris-investicia-miigho-stumari-giorgi-sheshaberidze-doras-damfudznebeli/), ծանոթացե՛ք 14 տարեկան ձեռնարկատիրոջ պատմությանը, որը «Շարքերից» 150 000 լարիի ներդրում ստացավ, նկատի ունենալով Գիորգիի պատմությունը լրացրեք տրված աղյուսակի երկրորդ և երրորդ սյունակները, իսկ չորրորդ սյունակում համապատասխանեցրեք ձեզ հայտնի այլ պատմություններ:

Մասլոուի բուրգի աստիճանները	Հիմնախնդրի նկարագրություն	Օրինակներ սեփական փաստարկներն ամրապնդելու համար	Օրինակներ վրացական միջավայրից համեմատության համար
Սնունդ, ապաստան			
Անվտանգություն			
Պատկանելության զգացում			
Հարգանք/ճանաչում			

Հանձնարարական ուսուցչին. Ենթատեքստ-օրինակներին ծանոթանելու ակտիվությունները ամփոփում ենք այն շեշտադրությամբ, որ մարդու պահանջմունքները և կարիքներն են պայմանավորում դեպի բիզնես և ձեռնարկատիրություն ձգտումը, իսկ ձեռնարկատիրությունն իր հերթին ստեղծում է անձնավորության, հասարակության զարգացման հնարավորություն: Միաժամանակ ձեռնարկատիրոջ որոշումների վրա բազմաթիվ գործոններ են ազդում՝ սկսած առաջնային պահանջմունքներից և ավարտած գլոբալ երևույթներով:

Դուք եք որոշելու՝ հիմնական կարգավիճակով միայն մեկ ենթատեքստ-օրինակ կկիրառեք, թե՞ երկուսը, ինչպես մենք ենք առաջարկում: Մեր մտահղացումն է աշակերտները ձեռնարկատիրությունը տեսնեն մոտ և հեռու ռակուրսով և դրանց համեմատությամբ հստակեցնեն օրի-

նաչափությունները, օրինակ՝ երկու դեպքերում էլ ձեռնարկատիրությունը անձի ինքնաակտուալացման միջոց է, դրական ներգործություն է ունենում նաև հասարակության զարգացման վրա:

Երկու ենթատեքստ-օրինակն էլ աշխատեցնում ենք ենթահարցի՝ ձեռնարկատիրության՝ որպես մարդու պահանջմունքների և կարիքների բավարարման հնարավորության կտրվածքով: Այս ենթահարցը միացնում, միմյանց հետ կապում է թեման, հիմնական հարցը և մյուս կողմից՝ ենթահասկացությունները. ինքնաակտուալացումը (որի հետ միասին ենթադրվում են «Մասլոուի բուրգի» բոլոր մակարդակների պահանջ-ները) և մարդու պահանջմունքները և կարիքները: Իսկ դրանք աշակերտին օգնում են «Հասարակություն» թիրախային հասկացությունը ըմբռնելու մեջ: Ինչ վերաբերում է համեմատության համար օրինակներին, այնտեղ այն ուղղորդող հարցերով անց ենք կացնում զուգահեռներ, որոնք կողմնորոշված են մարդու պահանջմունքների և կարիքների վրա:

- **Քայլ 1.** Ինչո՞ւ ձեռնարկատիրությունը վերածվեց ձեռնարկատերերի անձնական և ընդհանրապես հասարակության զարգացման հնարավորության: Տարբեր հանգամանքներում ի՞նչ դիմակայություններ կարող են ուղեկցել այս գործընթացին: (**Հաստ. պատկ.1,2)**

Ռեսուրս. Դասագիրք, «Ո՞վ է ձեռնարկատեր» (էջ. 9)
Աշակերտի գրքում (էջ 20) **տրված օգտակար ռեսուրսներ.**
Իսրայելի տնտեսությունը https://bit.ly/3D6Xgub

10 երկիր, որոնք Վրաստանից փոքր են, բայց ավելի հաջողակ են https://bit.ly/3Dbr5K2

Բարձրարդյունավետություն ունեցող մարդկանց 7 ունակություն – Ստիվեն Քով https://bit.ly/3DdsPm1
Կյանք 80/20-ի սկզբունքով – Ռիչարդ Կոշ https://bit.ly/3wp0OEg
Անտեսանելի ձեռք. Ձեռնարկատիրություն https://bit.ly/3JbzS2z
Պահանջներ վաճառքի արտադրանքի նկատմամբ https://bit.ly/3DdeaaB

Ակտիվություն. Քննարկե՛ք (էջ 9)
Ծանոթացե՛ք ստորև տրված Շիմոն Պերեսի ելույթի տեքստին և պատասխանե՛ք հարցերին,
Հարցեր.
- Վերհիշե՛ք, ի՞նչ է հոլոքոստը: Որտե՞ղ և ե՞րբ էր գործում այն:

- Ի՞նչ ազդեցություն ունեցավ հոլոքոստը մարդկանց, հասարակական խմբերի, երկրների, մարդկության վրա: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն հրեա ժողովրդի համար:
- Ինչպե՞ս է նկարագրում Շիմոն Պերեսը Իսրայելի վիճակը պետության ստեղծման ժամանակաշրջանում: Ի՞նչ է ցանկանում ասել հեղինակը:
- Ի՞նչը փրկեց աղքատ ռեսուրսներ ունեցող երկիրը, և ինչպե՞ս վերածվեց այն հաջողակ պետության:
- Ի՞նչն է համարում հեղինակը հաջողության գլխավոր գործոն:
- Ինչո՞ւ է մարդը հանդիսանում երկրի գլխավոր հարստությունը:
- Ի՞նչ է հորդորում Շիմոն Պերեսը երիտասարդներին:
- Ինչպե՞ս եք հասկանում ձեռնարկատեր բառի նշանակությունը: Ո՞վ է ձեռնարկատերը, և ի՞նչ գործունեություն է նա ծավալում:
- Որքանո՞վ կարևոր եք համարում այն, որ ձեռնարկատերը գործունեության ոլորտ ընտրելու համար ճիշտ պատկերացում պետք է ունենա սոցիումում գտնվողների պահանջների և կարիքների, նրանց հետաքրքրությունների մասին: Բացատրե՛ք՝ ինչո՞ւ:
- Ձեր կարծիքով, ո՞ր պետական կառավարումն է (ժողովրդավարակա՞ն, թե՞ ոչ ժողովրդավարական) օժանդակում ձեռնարկատիրության, բիզնեսի զարգացմանը: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Կիսո՞ւմ եք այն կարծիքը, որ ձեռնարկատիրության զարգացումը կարող է փրկել աղքատ պետությունը: Ինչպե՞ս, քննարկե՛ք՝ ձեզ հայտնի օրինակներ բերելով:
- Հաջողության հասնելու համար անձնական մոտիվացիայի հետ միասին ձեռնարկատիրոջը որքանո՞վ է անհրաժեշտ այլ հասարակական խմբերի, ինստիտուցիաների հետ համագործակցությունը: Դրա համար նրան ի՞նչ ունակություններ են հարկավոր:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ առնչություն գոյություն ունի ձեռնարկատիրության կամ բիզնեսի զարգացման և հասարակության բարեկեցության միջև (քննարկե՛ք մեր երկրի օրինակով):
- Երազե՞լ եք, արդյոք, ձեռնարկատեր կամ բիզնեսմեն դառնալու մասին:
- Ինչպիսի՞ միջավայր կցանկանայիք ձեր բիզնեսը կամ ձեռնարկատիրությունը սկսելու և զարգացնելու համար:
- Առաջադրանքը կատարելիս՝ ինչպե՞ս կարող եք օգտվել **«Շիմոն Պերեսի ելույթ»**-ից: **Բովանդակա՞յին առումով, դիմելաձևի՞ առումով:**

Հանձնարարական ուսուցչին. Այս պատմությունը կրում է ինչպես նախնական գիտելիքի ակտիվացման, այնպես էլ նոր գիտելիքի կառուցման գործառույթ, քանի որ ուսուցչի համար այն ներկայացնում է դիմելու (ձևի) նմուշ, վերաբերվում է ձեռնարկատիրության, տնտեսության հարցերին: Այս հարցերը նաև աշակերտներին հնարավորություն են տալիս վերհիշելու հոլոքոստը՝ որպես մարդու արժանապատվության, բոլոր իրավունքների խախտման փաստ և կապելու այն նաև տնտեսական ազատության սկզբունքի սահմանափակման հետ:

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, (էջ 12)
Հարց.
Մեկ անգամ կրկին վերանայե՛ք Շիմոն Պերեսի ելույթի տեքստը, համապատասխանեցրեք Մասլոուի բուրգին և սահմանեք. ի՞նչ պահանջ-մունքներ և կարիքներ էին մղում Իսրայելի քաղաքացիներին, երբ սեփական երկրում ձեռնարկատիրական գործունեություն էին սկսում:
Արդյունքի մասին կիսվեք դասարանի հետ:

Ակտիվություն. Աշխատեք խմբերում (էջ 16)

Մասլոուի բուրգի աստիճանները	Հիմնախնդրի նկարագրություն	Օրինակներ սեփական փաստարկներն ամրապնդելու համար
Սնունդ, ապաստան		
Անվտանգություն		
Պատկանելության զգացում		
Հարգանք/ճանաչում		

Առաջին փուլ
Ստեղծե՛ք 4 խումբ՝ 2 խումբը կլինեն ձեռնարկատերեր, 2 խումբը՝ «Հասարակություն»:
«Ձեռնարկատերերի» 2 խումբը կպատրաստի շնորհանդես. «Ձեռնարկատիրությունը հասարակության զարգացման հնարավորություն է, քանզի...»:
«Հասարակության» երկու խմբերը կպատրաստեն շնորհանդես. «Ձեռնարկատիրությունը ձեռներեցի անձնական զարգացման հնարավո-րություն է, քանզի...»:
Բոլոր շնորհանդեսները պետք է պատրաստվեն կոնկրետ օրինակների վկայակոչմամբ:

Երկրորդ փուլ
Շնորհանդեսներից հետո ամբողջ դասարանի մասնակցությամբ անցկացրե՛ք քննարկում հետևյալ հարցերի շուրջ.
- Ի՞նչ օգուտ չի կարող ստանալ հասարակությունը ձեռնարկատիրության թույլ կամ ընդհանրապես զարգացած չլինելու պայմաններում: Ինչո՞ւ:
- Ի՞նչ դիմադրություններ, երկընտրանքներ կարող են գլուխ բարձրացնել ձեռնարկատերերի և հասարակության միջև (քննարկեք ձեզ

հայտնի օրինակների վկայակոչմամբ):

- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է ձեռնարկատիրոջ ունակություններ ունեցող անձի հաջողության հեռանկարը ոչ ժողովրդավարական հասարակությունում: Ինչո՞ւ:

Հանձնարարական ուսուցչին. Ակտիվության նպատակն է աշակերտները հասկանան, թե ինչպիսին է կապը ձեռնարկատերերի զարգացման և անձնավորության ու հասարակության զարգացման միջև, համեմատեն ձեռնարկատիրոջ և հասարակության շահույթը: Ցանկալի է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնեք ձեռնարկատիրության զարգացման ներգործությանը քաղաքացիական հասարակության հզորացման վրա (տնտեսապես ամուր հասարակությունը պաշտպանում է սեփական իրավունքները և հոգում է հասարակական կարիքների մասին, իսկ տնտեսապես թույլ հասարակությունը ավելի հեշտ կառավարելի է):

Ակտիվություն. Աշխատեք խմբերում (էջ 18)

Ծանոթացեք ստորև տրված իրավիճակներին և պատասխանե՛ք հարցերին.

- Որոշե՛ք՝ բիզնեսի ո՞ր ոլորտը և տեսակը կհատկացնեք յուրաքանչյուր իրավիճակին:
- Որքանո՞վ ճիշտ եք գտնում իրավիճակի հերոսների որոշումը: Ի՞նչ ուժեղ կողմ ունի այն, և ինչո՞ւմ են կայանում ռիսկերը:
- Բիզնեսի ո՞ր տեսակը կամ ոլորտն է ձեր խմբի համար գերակայող: Ինչո՞ւ:

Ցափանիշ 2. Ի՞նչ գործոններ և ինչպես են ազդեցություն գործում ձեռնարկատերերի որոշումների և դրանց հետագա հաջողությունների վրա: Խոսե՛ք կոնկրետ օրինակներով (Հաստ. պատկ. 3):

Ակտիվություն. Քննարկեք, էջ 19

Ծանոթացե՛ք քաղվածքին «Աղքատ հայրիկ և հարուստ հայրիկ» գրքից և քննարկեք այն:

Հարցեր.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Կիյոսակին գրքում օգտագործում հարուստ և աղքատ հայրերի փոխաբերությունը:
- Ինչո՞ւ է հեղինակը իր բարձր վարձատրվող հայրիկին անվանում «աղքատ»:
- Հայրերին կարգերի բաժանելով՝ ի՞նչ է ցանկանում ասել հեղինակը:
- Ինչպե՞ս է Կիյոսակին ցույց տալիս, որ, այսպես կոչված, «աղքատ» հայրիկը խոչընդոտում է իր հարստացմանը:
- Ի՞նչ ուղիների են դիմում հայրերը նպատակին հասնելու համար: Նրանցից ո՞րն է նպատակին հասնելու համար բավարարվածություն զգում, ո՞ը՞ը՝ ոչ:
- Համաձա՞յն եք, թե՞ ոչ Ռոբերտ Կիյոսակիի փոխաբերությանը հարուստի և աղքատի մասին: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ձեր կարծիքով, դասագրքի հեղինակները այս քաղվածքը առաջարկելով՝ ինչի՞ մասին են ցանկանում, որ դուք մտածեք:
- Ի՞նչ զուգահեռ կանցկացնեիք Շոթա Ռուսթավելիի և Ռոբերտ Կիյոսակիի մեջբերումների միջև:

«Չեմ կարող»: - Այդ մասին մտածելը ինչի՞ կողմն է դրդում մարդուն:
«Ես դա կկարողանամ»: - Այդ տրամադրվածությունը ինչի՞ կողմն է դրդում:

Հանձնարարական ուսուցչին. Այս ակտիվության ժամանակ նախազգուշացման նպատակով բացատրեք, որ բոլոր հայրերը հարգանքի են արժանի, և հեղինակի նպատակը չի ներկայացնում որևէ հայրիկի մեղադրելը: Նրա նպատակը ընթերցողի մոտ կյանքին, գործունեությանը մոտենալու մասին քննադատական մտածողություն առաջ բերելը և բանավեճն է: Այդ պատճառով բոլորին տալիս ենք սեփական կարծիքը արտահայտելու հնարավորություն, և դատողություն ենք անում ոչ թե հայրերի, այլ նրանց մոտեցումների, վերաբերմունքների մասին:

Ռեսուրս. Դասագիրք, **Ձեռնարկատիրություն՝ անտրեպրենյորություն ,** էջ 21
Աշակերտի գրքում (էջ 39) **տրված օգտակար ռեսուրսներ.**
Վրաստանը գործառույթի որոնման մեջ https://bit.ly/3j0farx
Ստուգի՛ր քո տնտեսական գիտելիքը https://bit.ly/3DeaNzY
Ջոն Ռոքֆելլեր - Առաջին ամերիկացի միլիարդատերը կտա խորհուրդներ՝ ինչպես հարստանալ և դառնալ հաջողակ https://bit.ly/3XTyBkJ
Նապոլեոն Հիլլի մոտիվացիան - «Գիտակցի՛ր դա և փոխի՛ր քո կյանքը» https://bit.ly/3XzR99X
Ստիվ Ջոբսի մոտիվացիան – Ամերիկացի բիզնեսմենի և գյուտարարի ոգեշունչ մեջբերումները https://bit.ly/3DbFkyo
Միլիոնատիրոջ մտածելակերպը/Կյանքում ինչպես հասնել առավելագույնին https://bit.ly/3lNBB4w

Ովքե՞ր են ձեռնարկատերերը՝ անտրեպրենյորները: https://bit.ly/3WAxqp9
Անի Գիգանի – Բարձը https://bit.ly/3XWNBhR
Գիորգի Շեշաբերիձե - Դորա https://bit.ly/3JcUyr0

Ակտիվություն. Աշխատեք խմբերում, էջ 21
Վերահայե՛ք ստորև տրված տեքստը՝ **«Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ»** և քննարկեք.
Հարցեր.

- Ի՞նչ ձգտումներ ունեն ձեռնարկատերերը:
- Ինչպիսի՞ն է շրջակա միջավայրը (մարդու արժանիքների նկատմամբ վերաբերմունքը, կառավարման համակարգը, օրենքները, ինստիտուցիաները, հասարակությունը...), որտեղ հիշատակված ձեռնարկատերերը կարողացան հասնել մեծ հաջողության:
- Ձեր կարծիքով, ոչ ժողովրդավարական պետությունում ի՞նչ դիմադրությունների էին հանդիպում նրանք: Կարո՞ղ եք բերել ձեզ ծանոթ օրինակներ:
- Ձեր կարծիքով, ի՞նչ նկատի ունի հեղինակը, երբ խոսում է օդում ինքնաթիռ կառուցելու ունակության անհրաժեշտության մասին:

- Ի՞նչ հատկություններ և ունակություններ են հարկավոր ձեռնարկատիրոջը:
- Ո՞ր արտահայտությունն եք հիշում, որը ձեռներեցի՝ այլ հասարակական խմբերի առջև պատասխանատվության մասին է մատնացույց անում:
- Ինչո՞ւմ է կայանում դոկտոր Կարոլ Դվեկի հետազոտության եզրակացությունը, և դուք ի՞նչ եք մտածում այդ մոտեցման մասին:
- Ի՞նչ փորձառություն է կիսում հեղինակը ընթերցողի մտածողության մշտական զարգացման կապակցությամբ:
- Հիշո՞ւմ եք, արդյոք, դեպք, երբ դուք կամ ձեր ծանոթները պարտությունը, սխալը վերածել եք առաջընթացի հնարավորության:
- Ո՞ւմ հետ է ձեռնարկատիրոջը հարկ լինում հարաբերություն ունենալ գործունեության ժամանակ, և այդ հարաբերությունները ինչպե՞ս են նպաստում նրա անձնական զարգացմանը:
- Ո՞ր սոցիալ-էմոցիոնալ հատկություններն են անհրաժեշտ ձեռնարկատիրոջը շրջապատում գտնվողների հետ ներդաշնակ հարաբերություն ձևավորելու համար:

Հանձնարարական ուսուցչին. Իրավիճակի քննարկմանը աշակերտների մասնակցությունը մեծացնելու և նրանց վերաբերմունքները ձևավորելու համար ցանկալի է կիրառել լրացուցիչ հարցեր, որոնք տրված չեն դասագրքում.

- Ո՞ր ձեռնարկատիրոջ դերում կցանկանայիք գտնվել և ինչո՞ւ:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ գործոններ ազդեցություն ունեցան նրա հաջողության վրա:
- Նրա անունից ի՞նչ խորհուրդ կտայիք համադասարանցիներին:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 25

Բաժանվե՛ք երեք խմբի: Բաշխե՛ք տեքստի վերջում առաջարկված երեք հանձնարարականներից յուրաքանչյուր խմբին մեկական: Խմբում դատեցե՛ք այդ հանձնարարականի մասին և ձեր դատողության հիման վրա լրացրե՛ք աղյուսակը դասարանին ներկայացնելու համար:

Հանձնարարականներ.

1.Ինչ-որ բան պետք է սովորեք և միևնույն ժամանակ ինչ-որ բան պետք է մոռանաք: Ձեռնարկատիրական տեսակի մտածողությունը, օրինակ՝ արագ որոշումներ կայացնելը կամ հրդեհին ամեն ինչ ոչնչացնելու հնարավորություն տալը հաճախ այն բանի կատարյալ հակադրությունն է, ինչ սովորեցնում են մեզ դպրոցում:

2. Սովորեք ոչ թե միայն տեսությամբ, այլ իսկական պատմություններով: Մարդկանց մեծամասնության համար լավագույն դասը ձեռնարկատերերի կյանքն է: Այնպես որ դա այն դեպքն է, երբ տեսությունը բոլորից լավ հաստատում են պատմությունները:

3. Ամեն օր հոգացեք սովորույթի հաստատման մասին: Ամենակարևորը նորովի մտածողությունն է: Իսկ դրա համար ուրիշներին նույնպես պետք է լսեք, կարդաք և նաև գրեք: Բայց դա բավարար չէ, որպեսզի նորացված մտածողությամբ շարունակեք ապրել, այն բանի համաձայն պետք է գործեք, ինչը հասկացաք:

Հանձնարարական.				
Ձեզ հայտնի կենսական օրինակ, որը այս անձնարարականը արդարացնում է:	Ի՞նչ առավելություն ուներ կոնկրետ իրավիճակում նման մոտեցումը:	Ի՞նչ ռիսկեր էին ուղեկցում դրա իրագործմանը:	Ի՞նչ արդյունք առաջացավ ձեռնարկատիրոջ համար, հասարակության համար:	Ինչպիսի՞ն է մեր հասարակության ընկալունակությունն այս մոտեցման նկատմամբ: Ձեր, ձեր խմբի ընկալունակությո՞ւնը: Ինչո՞ւ:

Հանձնարարական ուսուցչին. Այս ակտիվությունը ծառայում է գիտելիքի բոլոր երեք կատեգորիաների ակտիվացմանը, քանի որ աշակերտներից պահանջում է սովորածը կապակցել սեփական միջավայրին, տեսակավորել տեղեկատվությունը, վերլուծել ներգործություն ունեցող գործոնները, արտահայտել սեփական կարծիքները:

Ակտիվություն. Վերհիշե՛ք, էջ 26

«Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ» (տես՝ էջ 21) տեքստը կիրառելով՝ պատասխանե՛ք հարցերին.

- Թվարկե՛ք երեք բան, ինչը կարևոր համարեցիք և մնաց ձեր հիշողության մեջ:
- Անվանե՛ք այն կարծիքը, որը չեք կիսում/չեք կարող կիսել: Ինչո՞ւ:
- Ո՞ր եզրակացությունը կամ կարծիքն է, որը կյանքում պիտանի կլինի:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 26

Վերանայե՛ք տրված տեղեկատվությունը «14 տարեկան ձեռնարկատերը» տեսանյութը՝«Գիորգի Շեշաբերիձե՝ «Դորա»-ի հիմնադիր». tv.ge/video/gaicanit-14-wlis-antrepreneri-romelmac-sharqebisgan-150-000-laris-investicia-miigho-stumari-giorgi-sheshaberidze-dorasdamfudznebeli/): Սրա հիման վրա դատողություն արե՛ք:

Հարցեր.

- Ի՞նչ ապրումներ է ձեզ մոտ առաջացնում այս պատմությունը:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչը դարձավ 9 տարեկան Գիորգիի մոտ մեկնարկի կայծ:
- Գիորգիի ո՞ր անձնական հատկությունները օժանդակեցին նրա որոշմանը և հաջողությանը:
- Ի՞նչ զուգահեռներ կարող եք անցկացնել «Ձեռնարկատիրությունը՝ մտածողության տեսակ» պատմության հերոսների հետ:
- Ինչպե՞ս արտացոլվեց Գիորգիի բիզնես փորձը նրա անձնական զարգացման վրա (քննարկե՛ք տեսանյութի սյուժեի համաձայն):
- Ինչպե՞ս կանդրադառնա Գիորգիի ձեռնարկատիրական գործունեությունը հասարակության վրա: Ի՞նչ ուժ ունի նրա օրինակը:

- Ի՞նչ տեղի կունենար, եթե Գիորգին համառություն չդրսևորեր և ենթարկվեր մոր նկատողություններին:
- Ի՞նչ տեղի կունենար, եթե խանութում Գիորգիի նկատմամբ անբարեխիղճ վերաբերվեին և դրամ ընդհանրապես չտային:
- Դուք կկարողանայի՞ք 9 տարեկան հասակում Գիորգիի նման որոշում ընդունել: Ինչո՞ւ: Ինչպիսի՞ն կլիներ ձեր ծնողների արձագանքը, եթե նման գործ ձեռնարկեիք:
- Նրա փոխարեն եթե ձեզ պատկերացնեք, ի՞նչը կօժանդակեր կամ կխանգարեր ձեր նման արարքին: Ինչո՞ւ:
- Արդեն հաջողություն ունեցած Գիորգիի նկատմամբ ի՞նչ վերաբերմունք ունի հասարակությունը: Որևէ մեկը նրա գործունեությունը համարո՞ւմ է ամոթալի: Ինչո՞ւ:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կշարունակվի Գիորգիի պատմությունը:
- Ի՞նչ պետք է անի Գիորգին, որպեսզի հաջողությունը անշրջելիորեն շարունակվի:

Հանձնարարական ուսուցչին. Այս պատմությունը աշակերտների համար կարող է ավելի հետաքրքիր և էմոցիաներ առաջացնող դառնալ, քանի որ միջավայրը, տարիքը, մեկնարկային իրավիճակը շատ մոտ է աշակերտներին: Այդ պատճառով էլ տվեք նրանց հնարավորություն քննարկելու, բոլոր անկյուններից դատելու երիտասարդ ձեռնարկատիրոջ անցած և ապագայի ճանապարհը: Հաջորդ ակտիվությունը նույնպես ծառայում է նույն իրավիճակը ըմբռնելուն:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 28
Ստեղծե՛ք խմբեր, պատկերացրե՛ք ձեզ Գիորգիի փոխարեն և երկու տարբերակով պատրաստե՛ք «Խորհուրդներ սկսնակ ձեռնարկատիրոջ համար».

1. Խորհուրդներ 9-10 տարեկան դեռահասներին:

2. Խորհուրդներ չափահաս անձանց:

(Ձեր հայացքներին համապատասխան, անհրաժեշտ տեղում օգտագործեք հետևյալ տերմինները. «բիզնես գաղափար», «հնարավորություններ և ռիսկեր», «հոգատարություն մտածողության զարգացման մասին», «արագ որոշումներ», «թիրախային խմբի կարիքները»):

Հանձնարարական ուսուցչին. Այս ակտիվությունում մեր նպատակը այնպիսի մակրոհասկացության դիտարկումն է, ինչպիսին պատումն է, նարատիվը: Ուշադրությունը կենտրոնացնում ենք այն հարցի վրա, թե ինչ տարբերություն կլինի խորհուրդների երկու տարբերակների միջև: Որտեղ և որքանով նպատակահարմար է կիրառում ճյուղային տերմինները և որտեղ ավելի հասկանալի լեզվով է արտահայտում ասելիքը, որքանով մտածված է բացատրում իր մոտեցումը:

Քայլ 2. Ո՞ր հատկանիշները և ունակությունները պետք է պահպանի և զարգացնի ձեռնարկատերը հասարակության հետ ներդաշնակ համագործակցության համար: (Հաստ. պատկ. 4.)

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 29

Փուլ I

Բաժանվե՛ք չորս խմբի և բաժանե՛ք մեկական քարտ, ծանոթացե՛ք ուշադրությամբ, քննարկե՛ք և լրացրե՛ք աղյուսակը.

Բիզնես գաղափարի անվանումը	Որոշման հեղինակը և դրա բնութա-գրիչները	Կայացած արդյունք	Անձնական և հասարակական շահ	Հաջողության հիմքը (պատահականություն, ճիշտ հաշվարկ, այլ խմբերի հետ համագործակցություն)	Ի՞նչը կարող էր խոչընդոտել այս գաղափարի հաջողու-թյանը

Փուլ II

Աղյուսակները փակցրեք գրատախտակի վրա և խմբերի շնորհանդեսներից հետո տեղեկատվության ամփոփման հիման վրա քննարկեք ամբողջ դասարանով.

- Ի՞նչ ընդհանուր բնութագրիչներ կառանձնացնեիք, ի՞նչ ընդհանրություն ունեն բոլոր չորս ձեռնարկատերերը, ի՞նչն է տարբերակում նրանց:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 32

Քննարկե՛ք ներքևի սյունակներում տրված բնութագրիչները և պատասխանե՛ք հարցերին.

Հարցեր.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է հարկավոր, որպեսզի ֆերմերը դառնա ձեռնարկատեր՝ բնածին հատկություննե՞ր, թե՞ ձեռք բերած գիտելիք և ունակություններ: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ի՞նչ կավելացնեիք, կնվազեցնեիք կամ կփոխարինեիք սխեմայում: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Գնահատե՛ք ձեր անձը այս սխեմայի համաձայն. ո՞ր հատկությունն ունեք: Ո՞րը կցանկանայիք ունենալ: Ինչո՞ւ:

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 36

Պատկերացրե՛ք, որ ունեք **կախարդական մատիտ**, որը ձեր նոր մտահղացումը իրականության կվերածի: Գործի դրե՛ք ձեր երևակայությունը և ստեղծե՛ք արտադրանք, ծառայություն, որը արագորեն կնվաճի շուկան:

Հարցեր.

- Նկարե՛ք ձեր արտադրանքի, ծառայության էսքիզը:
- Նկարագրե՛ք ձեր արտադրանքը, ծառայությունը բառերով:
- Ի՞նչ կարգի ծառայության վրա եք հաշվարկ կատարում:
- Ի՞նչ ռեսուրսներ հարկ կլինի կիրառել:
- Ի՞նչն է հավատ ներշնչում, որ արտադրանքի նկատմամբ կլինի բարձր հետաքրքրություն:
- Ո՞ւմ հետ հարկ կլինի համագործակցել գաղափարը իրականացնելու համար:
- Ի՞նչ օգուտ կստանաք դուք:
- Ի՞նչ շահույթ կստանա հասարակությունը:

  Ներկայացրեք արտադրանքը և հիմնավորե՛ք դրա յուրօրինակությունը և գրավչությունը:

Հանձնարարական ուսուցչին. Աշակերտներին խնդրեք վերհիշել, թե ձեռնարկատիրության ո՞ր խորհուրդը կարելի է կապել իրենց «կախարդական» արտադրանքի հետ և ինչո՞ւ: Առանց անծայրածիր պատկերացումների, երևակայությամբ, անսահմանափակ պատկերացմամբ կարո՞ղ են, արդյոք, ծագել նորարարական՝ ինովացիոն գաղափարներ:

Ակտիվություն, Քննարկե՛ք, էջ 36

Ծանոթացե՛ք «Սա հետաքրքիր է» նյութին, որտեղ տրված է խորհրդային համակարգում ձևավորված, այսպես կոչված, ստվերային տնտեսության նկարագրությունը և քննարկեք այն.

Հարցեր.

- Ի՞նչ ազդեցություն էր գործում խորհրդային համակարգը ձեռնարկատիրության զարգացման վրա: Ինչո՞ւ:
- Հիշո՞ւմ եք, արդյոք, պատմական գործընթացներ, որոնք խորհրդային իշխանության սկզբից ևեթ մեծ վնաս հասցրին մասնավոր սեփականությանը և նախաձեռնողական ձեռնարկատերերին, ֆերմերներին: Ի՞նչ գիտեք «կուլակաթափության» մասին:
- Ինչի՞ վրա էր ծախսվում նախաձեռնողական մարդկանց հնարավորությունների մեծ մասը խորհրդային համակարգում:
- Ի՞նչ ազդեցություն էր գործում «կոմբինատոր» կոչվող մարդկանց, նրանց ընտանիքների վրա համակարգի կողմից կպցրած պիտակը:
- Ի՞նչ էմոցիաներ էին առաջանում մարդկանց մոտ, ովքեր ունեին հանցագործության զգացում, որ իրենք օրինախախտումներով են գործում և վախ, որ դրա համար կպատժվեն:
- Ի՞նչ ազդեցություն էին գործում այդ էմոցիաները նրանց առողջության, հարաբերությունների վրա:

- Տեսնո՞ւմ եք, արդյոք, խորհրդային կարծրատիպերի ազդեցությունը այսօրվա հասարակական կարծիքի վրա, երբ մեր հասարակության բավականին մասը դրսևորում է ագրեսիա հարուստ և բարեկեցիկ կյանք ունեցող մարդկանց նկատմամբ:
- Ինչո՞ւ է դեռևս շարունակվում ֆինանսապես հաջողակ անձնավորության զուգորդումը հանցագործության և անբարեխղճության հետ:
- Ի՞նչ եք կարծում, հարստությունը լա՞վ է, թե՞ վատ: Ինչո՞ւ:
- Ներկա պայմաններում հնարավո՞ր է, արդյոք, հարստություն կուտակել բարեխիղճ ճանապարհով:
- Գիորգի Շեշաբերիձեի և նրա նմանների աշխատանքում, մտածելակերպում կա՞ անբարեխղճության տարր: Հիմնավորե՛ք:
- Ի՞նչ կստանա ամբողջ հասարակությունը, եթե ունենա շատ հարուստ, հաջողակ մարդիկ:
- Որքանո՞վ են հնարավոր տոտալիտար՝ բռնատիրական միջավայրում մարդու ազատ աշխատանքը, որոշումները, զարգացումը: Ինչո՞ւ:

Ռեսուրս. Դասագիրք, **Բիզնես գաղափար**, էջ 40
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 40
Ծանոթացե՛ք ստորև տրված իրավիճակին և պատասխանե՛ք հարցերին.

Հարցեր.
- Ի՞նչ սխալներ թույլ տվեցին աղջիկները:
- Ի՞նչ տեղեկատվություն ունեին կամ չունեին նրանք բիզնես սկսելու համար:
- Որքանո՞վ հմտացած էին նրանք խմորեղեն թխելու գործում:
- Համաձայնո՞ւմ եք մեծամասնության կարծիքին փորձի նշանակության մասին:
- Ի՞նչ խորհուրդ կտայիք նրանց, ովքեր պատրաստվում են առաջին անգամ սկսել բիզնես **(ստարտափեր)**:
- Սննդամթերքների արտադրության վրա նման սահմանափակումները անհրաժեշտ համարո՞ւմ եք, թե՞ ոչ: Ինչո՞ւ:
- Սննդամթերք չհանդիսացող արտադրանքների արտադրության վրա նման սահմանափակումները անհրաժեշտ համարո՞ւմ եք, թե՞ ոչ: Ինչո՞ւ:
- Բիզնեսի ո՞ր իրավական ձևը ընտրեցին աղջիկները:
- Ինչո՞ւ է պետությունը պայքարում փողոցում սննդամթերքների առևտրի դեմ:
- Մտածե՛ք սխեմա, որի համաձայն պետք է գործեին ընկերները, որպեսզի հաջողության հասնեին:
- Ինչպե՞ս եք հասկանում բիզնեսի գաղափարի էությունը:
- Յուրաքանչյուր խումբը թող ներկայացնի տարբեր տեսակի բիզնես գաղափարների մի քանի օրինակ:
- Ձեր կողմից ներկայացրած գաղափարներից ո՞րն է ամենաշահութաբերը այսօրվա պայմաններում:

- Ձեր կարծիքով, ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ այն բանի համար, որ հետաքրքիր և գրավիչ գաղափարը վերածվի շահութաբեր բիզնեսի:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 43
Ծանոթացե՛ք ստորև տրված իրավիճակներին և պատասխանե՛ք հարցերին:

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 45 (**այս ակտիվությունը չենք կատարում այն դեպքում, եթե «Մաթեի պատմությունը» կիրառում ենք՝ որպես ենթատեքստ-օրինակ ամփոփիչ առաջադրանքի համար: Դիտե՛ք մատրիցայի վերջում (էջ. 32):**
Ծանոթացե՛ք Մաթեի գաղափարին, քննարկեք յուրաքանչյուր կետը, համապատասխանաբար ինչին եք համաձայնում, ինչին՝ ոչ: Ի՞նչ խորհուրդ կտաք Մաթեին:

Ակտիվություն. Աշխատեք խմբերում, էջ 46
Ստորև տրված են Կեսոյի 2 բիզնես գաղափարները: Աշխատանքը բաղկացած է 3 մասից, դրանք կատարելու համար կիրառեք վերևում տրված բիզնես գաղափարի վերլուծության ձևը:
1. Նկարագրե՛ք Կեսոյի բիզնես գաղափարները:
2. Նկարագրե՛ք բիզնես գաղափարներ ձեր համայնքի միջավայրի հաշվառմամբ:
3. Մտածե՛ք ձեր բիզնես գաղափարի կամ գաղափարների մասին և պատրաստե՛ք շնորհանդես:

Ակտիվություն. Աշխատեք խմբերում, էջ 49
Անվանե՛ք ձեր կողմերում գործող երեք բիզնես, որոնց համարում եք հաջողակ: Փորձե՛ք ընտրել այն բիզնեսները, որոնք գոնե երեք տարի գոյություն ունեն: Զրուցե՛ք այդ բիզնեսների սեփականատերերի հետ: Օգտագործե՛ք «Բիզնես գաղափարի վերլուծության ձևը»:
Հարցեր.
- Ձեր՝ որպես սպառողների փորձառությունից ելնելով մտածե՛ք՝ ո՞ր արտադրանքները և ծառայությունները չկան շուկայում:
- Ունկնդրե՛ք այլ անձանց: Ի՞նչ արտադրանք կամ ծառայություն նրանք չեն կարողանում ճարել շուկայում:
- Ի՞նչ մեկնաբանություններ են անում նրանք գոյություն ունեցող արտադրանքների և ծառայությունների մասին:
- Դիտարկե՛ք ձեր համայնքը: Ի՞նչ տեսակ բիզնես է արդեն գործում, և ի՞նչ թերություններ գոյություն ունեն:
- Ուշադրությամբ դիտարկեք ձեր համայնքում գոյություն ունեցող հիմնախնդիրները, օրինակ՝ բնապահպանության խնդիրները: Կարող է ձեր բիզնեսը վճռի այդ խնդիրները:
- Կազմե՛ք տարբեր տեսակի բիզնեսների ցուցակ, որոնք ձեր կողմերում գոյություն չունեն:

- Նկատի ունեցեք ձեր սեփական փորձառությունը, ունկնդրեք այլ անձանց (որպես սպառողների) փորձը և ուսումնասիրեք ձեր միջավայրը: Կիրառե՛ք «Հիմնվե՛ք ձեր փորձառության վրա» ձևը:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Նկարագրե՛ք՝ ինչպե՞ս է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը.

- Ինչպե՞ս եք պլանավորում/պլանավորեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ի՞նչ էիք նկատառում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Ունեի՞ք, թե՞ ոչ նախնական պլան առաջադրանքի վրա աշխատանքի համար: Որքանո՞վ այդ պլանը օգնեց աշխատանքի գործընթացում: Անհրաժեշտ էր, արդյոք, նախնական աշխատանքային պլաններում փոփոխություններ մտցնելը: Ինչո՞ւ:
- Ու՞մ հետ և ինչպե՞ս համագործակցեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Հանդիպեցի՞ք, թե՞ոչ տարբերվող կարծիքներ ունեցող մարդկանց: Որքանո՞վ օգնեց այլ մարդկանց հետ համագործակցությունը:
- Կիրառեցի՞ք, թե՞ ոչ տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Ինչո՞ւմ օգնեց տեխնոլոգիաների կիրառումը:
- Ի՞նչ արտադրանք ստեղծեցիք համալիր առաջադրանքի տեսքով:

Բացատրեք՝ ինչ գիտելիք և փորձ ձեռք բերեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:

- Ի՞նչ հարցի է վերաբերում ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ գիտեիք ուսանելի հարցի մասին: Ի՞նչ նոր բան իմացար: Լրացուցիչ ի՞նչ կուզենայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացության հանգեցրեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ինչո՞վ են հաստատվում ձեր կողմից կատարված եզրակացությունները:
- Ու՞մ համար և ինչո՞ւ է ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ միջոցներից օգտվեցիք ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար:/Համալիր առաջադրանքը ավելի լավ կատարելու համար:

Գնահատե՛ք՝ որքանով արգասաբեր և հետաքրքիր էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:

- Գնահատե՛ք՝ որքանով ստացվեց առաջադրանքի կատարումը: Որքանո՞վ այն համընկավ ուսուցչի սպասելիքներին:
- Ի՞նչը կատարեցիք ինքնուրույն: Ինչո՞ւմ անհրաժեշտ եղավ այլոց օգնությունը:
- Ի՞նչ գործոններ նկատի ունեցաք/պետք է նկատի ունենաք այն բանի համար, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լիներ:

• Ձեր կարծիքով, ինչո՞վ և որքանո՞վ է տարբերվում ձեր կողմից կատարված առաջադրանքը համադասարանցիների աշխատանքներից: Ի՞նչ կկատարեիք այլ կերպ, եթե նորից սկսեիք առաջադրանքի վրա աշխատել:

Աղյուսակ 3.
Զարգացնող գնահատականի խորագիր

Դասարան. 11-րդ **Թեմա.** Ձեռնարկատիրություն և բիզնես **Հիմնական հարց.** Ձեռնարկատիրության անձնական և հասարակական տեսանկյունները **Աշակերտ.**		
Գնահատման չափանիշներ	Առավելագույն միավոր	Մեկնաբանություն
Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա. • վերլուծել/հիմնավորել Մաթեի՝ որպես ձեռնարկատիրոջ, գործատուի, ծառայություն մատուցողի դրական ազդեցությունը հասարակության/բնակ-չության/սոցիումի վրա:	1,5	
Ժողովրդավարություն – Աշակերտը պետք է կարողանա. • Մաթեի բիզնես գաղափարը կապակցել իր տնտեսական իրավունքների հետ (ձեռնարկել բիզնես, ստանալ շահույթ...), կոնկրետ կենսական օրինակների վրա հենվելով վերլուծել այն, թե ինչ երկընտրանքներ կարող են առաջանալ Մաթեի՝ ինչպես ձեռնարկատիրոջ և պետության միջև (ժողովրդավարության սկզբունքների կտրվածքով):	1,5	
Քաղաքացիական մասնակցություն – Աշակերտը պետք է կարողանա. • Կապակցել սպասարկման ոլորտում հնարավոր մարտահրավերները և հիմնախնդիրները փաստաբանության և շահարկման հետ, ընտրել գաղա-փարի համապատասխան ձևերի և ռեսուրսների ձեռք բերման ուղիները:	1,5	
• **Կայուն զարգացում** – Աշակերտը պետք է կարողանա. Մաթեի բիզնես գաղափարի հետ կապված հարցերի մասին (օրինակ, թափոնների կառավարում/փաթեթավորման նյութի բազմակի	1,5	

կիրառում/վերաշրջանառում) քննարկելիս նկատի առնի կայուն զարգաց-ման սկզբունքները:		

Որոշող գնահատման առաջարկված խորագիրը հիմնված է առակայական չափորոշչում տրված **թեմայի սահմաններում արդյունքներին հասնելու ինդիկատորներին (թիրախային հասկացությունների համաձայն)** և նախատեսված է ամփոփիչ առաջադրանքի գնահատման համար, ինչը իր հերթին նպատակամղված է հասկացություններին կողմնորոշմամբ թեմայի կամ դրա մասի ամփոփմանը**:**

Ամփոփիչ առաջադրանքի համար խորհուրդ է տրվում ընտրել ենթատեքստ-օրինակ և նախապես տալ աշակերտներին ծանոթանալու/վերլուծելու համար: Նրանք կգիտենան, որ մոտավորապես մեկ շաբաթում իրենք պետք է ամփոփիչ առաջադրանքը կատարեն առաջարկված հարցերի համաձայն, որոնք կապված կլինեն տրված ենթատեքստ-օրինակին: Այս դեպքում ընտրեք ենթատեքստ-օրինակ «Մաթեի գաղափարը» (էջ 45-46), աշակերտը նախապես կծանոթանա դրան: Նշանակված օրը տալիս ենք առաջադրանքի պայմանը.

«Ծանոթացե՛ք Մաթեի գաղափարին» և պատրաստե՛ք եզրակացություն (150-200 բառ), որտեղ կգնահատեք Մաթեի բիզնես գաղափարը:
Աշխատանքում ընդգծված ներկայացրեք.
Այդ բիզնես գաղափարը ինչպես է նպաստում Մաթեի անձնական զարգացմանը և ի՞նչ դրական կամ բացասական ազդեցություն կգործի հասարակության շահերի և պահանջմունքների վրա:
Բիզնես գաղափարում որքանո՞վ են նախատեսված մարդու իրավունքները և ինչպե՞ս են համապատասխանում ժողովրդավարության սկզբունքներին, ի՞նչ երկընտրանքների առաջացման ռիսկ գոյություն ունի պետության և Մաթեի բիզնեսի միջև:
Որքանո՞վ են նախատեսված կայուն զարգացման սկզբունքները և ինչպե՞ս կարելի է այդ սկզբունքների փաստաբանություն կատարել թափոնների կառավարման կապակցությամբ:

Ցուցում. Պատասխանները գրում եք ոչ թե առանձնացված, այլ ամբողջականացնում եք եզրակացության տեքստում:
«Ձեռնարկատիրություն և բիզնես» թեմայի համար **երկրորդ** հիմնական հարցն է **«Պետությունը և բիզնեսը»:** Այս հարցի առնչությամբ աշակերտի նախորդ գիտելիքի ակտիվացում կատարվում է կոնկրետ ենթատեքստ-օրինակով՝ Թղթապանակ. «“Դեղորայքի շեմային գների ներդրում» և բովանդակության առումով դրան մոտ կանգնած օրինակներով.

Հիմնական ենթատեքստ-օրինակ և օրինակներ համեմատության համար	Ռեսուրսներ
Հիմնական ենթատեքստ-օրինակ. Թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրում»	• Դասագիրք, էջ 76-80 • Տեսանյութ. https://bit • «Ուսուցչի գիրք, հ**ավելված 2,** (էջ 175)
Օրինակ համեմատության համար 1. Երկաթգիծը վրացերեն	• Դասագիրք, էջ 83
Օրինակ համեմատության համար 2. Ծրագիր «Արտադրի՛ր Վրաստանում»	• Դասագիրք, էջ 93-94
Օրինակ համեմատության համար 3 «Հիվանդությունների պատճառով ձկան ֆերմաները փակվում են» Տեսայուժե «Ի՞նչ ներուժ ունի ձկնարդյունաբերությունը»:	Դասագիրք, էջ 96 https://www.facebook.com/watch/?v=728147661524377

Պարզաբանում. Նոր գիտելիքի կոնստրուկտիվ կառուցումն ապահովելու համար կարևոր է աշակերտներին առաջարկենք նրանց գիտելիք-փորձին հասանելի այնպիսի օրինակներ (մասնավոր դեպքեր, իրավիճակներ, պատմություններ), որոնց քննարկում-վերլուծումը կօժանդակի նրանց թիրախային գիտելիքը (ենթահարցը, ենթահասկացությունները, թիրախային հասկացությունները) ըմբռնելուն և յուրացնելուն: Ենթատեքստ–օրինակները ճիշտ այդպիսի օրինակներ կարող ենք անվանել: Այդ պատմությունները պետք է ընտրվեն պարտադիր թեմաների շրջանակներում հստակեցված հիմնական հարցերի համաձայն և պետք է ցույց տան կենսական իրավիճակներ (երկընտրանքներ, էմոցիաներ):

Այստեղ ևեթ ընդգծված նշում ենք, որ ուսուցչի գրքում առաջարկվող հիմնական ենթատեքստ-օրինակները կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, այսինքն՝ կարող եք հիմնական գործառույթը վերագրել դասագրքում ներկայացված մեկ այլ ենթատեքստ-օրինակի և դրա վրա հիմնվելով ձևակերպել համալիր առաջադրանքի պայմանը:

Ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հիմնական ենթատեքստ-օրինակի վերլուծության վրա: Դրա մշակումը կատարվում է խորքային՝ ենթատեքստը, էմոցիոնալ-սոցիալական տեսանկյունները նկատի ունենալով, իսկ համեմատության համար ընտրված օրինակները հիմնականում ֆոնային գիտելիքի դեր են կատարում:

Ենթատեքստ-օրինակի առաջնային մշակման ժամանակ ուսուցիչը ուղղորդող հարցերով, ակտիվություններով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն մանրամասնությունների վրա, որոնք մշակվող ենթահասկացությունների, թիրախային հասկացությունների հետ կապի մեջ են: Օրինակ՝ կոնկրետ դեպքում ենթատեքստ - օրինակի այն ծավալի վրա ենք փորձում կենտրոնանալ, որոնք հանգուցային հարցերում էլ (ինչ

գործոններ և ինչու են պայմանավորում պետության միջամտությունը ազատ շուկայի կարգավորման գործում: Ինչպե՞ս պատկերացնել պետության առջև ծառացած երկընտանքները/մարտահրավերները մարդու իրավունքների պաշտպանության պարտականությունների և տնտեսական ազատության սկզբունքի պահպանության կապակցությամբ) որոշված են:

Աղյուսակ թիրախային գիտելիքի սահմանման համար

Թեմա. Ձեռնարկատիրություն և բիզնես **Հիմնական հարց.** Պետությունը և բիզնեսը **Հիմնական ենթատեքստ-օրինակ.** թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրում»			
Թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրումը» (որպես պետության առջև մարդու իրավունքների պաշտպանության և տնտեսական ազատության սկզբունքի ապահովման միջև ծագած երկընտրանքի օրինակ):			
	Առողջության իրավունք, Սպառման իրավունքներ, Տնտեսական ազատություն:	Մարդու իրավունքներ Ժողովրդավարության սկզբունքներ	Ժողովրդավարություն (Արդյունք. 1,2,3,4)

Որոշելու համար, թե ինչ պետք է գիտենա աշակերտը ենթահարցի հետ կապված, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Աղյուսակ 1),** որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի ամբողջացված մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է մի քանի փուլում.

ա) նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և ուսանում-ուսուցման գործընթացը պլանավորելու փուլում (**ինչ ակտիվություններ, մեթոդներ, մարտավարություններ պետք է կիրառենք, որպեսզի աշակերտին օգնենք այս սպասումը իրական արդյունքի վերածելու մեջ),**

բ) հաջորդ ուսանում-ուսուցման գործընթացի մոնիթորինգի համար (**ինչպե՞ս է ընթանում գործընթացը, հայտնվեցի՞ն սպասելիքներին համապատասխան նշաններ: Ի՞նչ հարցեր պետք է օգտագործեմ որպես փայտամած),**

գ) ուսանում-ուսուցման գործընթացում և համալիր առաջադրանքը ավարտելու ժամանակ կոնկրետ հետադարձ կապի ձևավորման մեջ **(սպասելիքներից ո՞ր արտահայտությունները հարմար կլինեն աշակերտի արդյունքը նկարագրելու, խրախուսելու, խորհուրդ տալու համար),**

դ) վերջում՝ միջանկյալ և երկարաժամկետ նպատակների վրա աշխատանքը՝ մանկավարժական պրակտիկայի կառուցվածքային ինքնա-գնահատման համար **(իրատեսական սպասելիքները ո՞ր հաստատուն պատկերացման՝ Հաստ. պատկ. կապակցությամբ որոշեցի: Ո՞ր սպասելիքի համար գտա ճիշտ լուծումը ակտիվությունների և մեթոդների տեսքով: Որտե՞ղ պետք է փոխեմ մոտեցումը):**

Աղյուսակ 1.

Թիրախային հասկացություն Ենթահարց	Թիրախային հասկացության հետ կապված հաստատուն պատկերացումներ	Սպասելիքներ Աշակերտը պետք է կարողանա.	Ուսուցչի մեկնաբանություն Աշակերտը կարողացավ.
Ժողովրդավարություն (Արդյունքներ. 1,2,3,4) **Թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրումը»** (որպես պետության առջև մարդու իրավունքների պաշտպանության և տնտեսական ազատության սկզբունքի ապահովման միջև առաջացած երկընտրանքի օրինակ):	1. Մարդն ունի իրավունքներ և ազատություններ, որոնց պաշտպանությունն ապահովում են տեղական օրենսդրությունը և միջազգային համաձայնությունները:	Խիխրիկաձեների օրինակով քննարկեք դեղագործական շուկայում ստեղծված իրավիճակը (դեղորայքին անհասանելիությունը), որքանով է սահմանափակվում նրանց առողջապահության իրավունքը և սպառողի իրավունքը: Բացահայտեք բովանդակային նմանություն-տարբերությունը ենթատեքստ-օրինակի և այլ օրինակների միջև:	
	2. Ժողովրդավարական պետությունում մարդու իրավունքների պաշտպանությունը գլխավոր արժեքն է:	Վերլուծել՝ ինչ օբյեկտիվ հանգամանքներ են պարտադրում պետությանը կատարելու քայլեր գների կարգավորելու համար: Բացատրել կողմերի կողմից հիմնախնդրի տարբերվող մեկնաբանությամբ ընկալումը և ցուցադրելու պատճառները: Գնահատել անվանված փաստարկների ուժեղ և թույլ կողմերը:	
	3. Ժողովրդավարական պետության գործունեության համար անհրաժեշտ է ժողովրդավարական սկզբունքների *(օրինակ, հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն,*	Քննարկեք պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանության և տնտեսական ազատության սկզբունքի ապահովման միջև առաջացած երկընտրանքի մասին: Վերլուծեք, ինչը	

	արդարացի ընտրություններ) պահպանումը:	պայմանավորեց օրենսդրական փոփոխությունները, և դրանցում ինչպես են արտացոլված ժողովրդավարության սկզբունքների (տնտեսական ազատության) պահանջները:	

Միջանկյալ/համալիր առաջադրանքի մատրիցայում (**Աղյուսակ 2.) տրված է համալիր առաջադրանքի պայմանը, գնահատման չափանիշները և իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, ուղղորդող հարցեր և համառոտ հանձնարարականներ ուսուցիչների համար):**

Աղյուսակ 2.

Հարց. Պետությունը և բիզնեսը
Ենթահարց. Թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրումը» (որպես պետության առջև մարդու իրավունքների պաշտպանության և տնտեսական ազատության սկզբունքի ապահովման միջև առաջացած երկընտրանքի օրինակ): **Ենթահասկացություններ.** Առողջապահության իրավունք, սպառողի իրավունքներ, **մարդու իրավունքներ.** տնտեսական ազատություն – **ժողովրդավարության սկզբունքներ, թիրախային հասկացություն, ժողովրդավարություն (Արդյունք. 1,2,3,4)**
Հանգուցային հարցեր – Ի՞նչ գործոններ են պայմանավորում և ինչո՞ւ է պետությունը միջամտում ազատ շուկայի կարգավորման գործում: - Ինչպե՞ս ներկայացնեմ **հոդվածում** պետության առջև առկա երկընտրանքները/մարտահրավերները մարդու իրավունքների պաշտպանության պարտականության և տնտեսական ազատության սկզբունքի պահպանության կապակցությամբ:
Համալիր առաջադրանք Պատկերացրեք, որ խմբագրությանը փոխանցեցին թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրում» (Էջ 76-80): Թղթապանակում կա. ✓ խմբագրությունում մուտքագրված 2 նամակ, ✓ քաղվածքներ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից», ✓ պաշտոնական տեղեկատվություն, ✓ փորձագետների մեկնաբանություններ, ✓ օրենքում մտցված փոփոխությունների հղումը:

Այս փաստաթղթերը վերաբերում են տարբեր դիրքորոշումներից դիտած մեկ գործընթացին՝ պետության կողմից դեղերի գների շեմի հաստատմանը: Ձեր խնդիրն է ուսումնասիրել հարցը, վերլուծել պետության կողմից բիզնեսի գործերին միջամտության արդարացիությունը և ձեր դիրքորոշումը ընթերցողին ներկայացնել փաստարկված հոդվածի (250-300 բառ) տեսքով:

Հոդվածում/հոդվածը ներկայացնելիս ընդգծված ցույց տվեք.

- Ինչպե՞ս է արտացոլվում մարդու իրավունքների վրա դեղորայքի գնաճը և մատչելիության նվազումը: Ավելի կոնկրետ, ո՞ր իրավունքի պաշտպանությունն է կասկածի տակ ընկնում: (Քննարկե՛ք ծերունիների նամակը ձեզ հայտնի այլ պատմությունների օրինակի վրա: **(Հաստ.պատկ. 1.)**
- Որքանո՞վ է դեղերի գների վերին շեմի հաստատումը հատում տնտեսական ազատության սկզբունքը, և ի՞նչ ռիսկեր է ստեղծում դեղագործական բիզնեսին: (Կապե՛ք խմբագրությանը հասցեագրված նամակներին): **(Հաստ.պատկ. 2.3.)**
- Ինչո՞ւմն է կայանում պետության առջև ծառացած երկընտրանքը, և որքանո՞վ են արդարացված պետության կողմից կատարված քայլերը մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության տեսակետից: **(Հաստ.պատկ. 1.2.3.)**

Թիրախային հասկացության/հասկացություն-ների հետ կապված հաստատուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, **որ՝**	**Գնահատման չափանիշ** **<u>Աշակերտը կարող է.</u>**	**Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.**

Ժողովրդավարություն **1.** Մարդն ունի իրավունքներ և ազատություններ, որոնց պաշտպանությունն ապահովում են տեղական օրենսդրությունը և միջազգային համաձայնությունները: **2.** Ժողովրդավարական պետությունում մարդու իրավունքների պաշտպանությունը գլխավոր արժեքն է: 3. Ժողովրդավարական պետության գործունեության համար անհրաժեշտ է ժողովրդավարական սկզբունքների (օրինակ, հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, արդարացի ընտրություններ) պահպանումը:	**Ժողովրդավարություն** • Կենսական իրավիճակները/քննարկվող օրինակները կապել մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքների մասին գիտելիքին **(Հաստ. պատկ. 1.3.)** • Հստակեցնել երկընտրանքները, որոնք տարբեր իրավիճակներում կապվում են մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության հետ **(Հաստ. պատկ. 2.3.)**	• Ինչպե՞ս կարտացոլվի մարդու իրավունքների վրա դեղերի գների աճը և մատչելիության սահմանափակումը: Կոնկրետ ո՞ր իրավունքի պաշտպանվածությունն է հայտնվում կասկածի տակ: Քննարկե՛ք տարեցների նամակի, ձեզ հայտնի այլ պատմությունների օրինակով **(Հաստ. պատկ. 1.)** • Որքանո՞վ է դեղերի գների վերին շեմի ներդրումը հատում տնտեսական ազատության սկզբունքը և ի՞նչ ռիսկեր է ստեղծում դեղագործական բիզնեսին: (Կապե՛ք խմբագրությանը հասցեագրված նամակներին): **(Հաստ.պատկ. 2.3.)** • Ինչո՞ւմն է կայանում պետության առջև առկա երկընտրանքը, և որքանո՞վ արդարացված են պետության քայլերը մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության տեսակետից: **(Հաստ. պատկ. 1.2.3.)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլեր (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I – Ծանոթացում համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրսներ/քննարկվելիք ենթատեքստ-օրինակ.

Ակտիվություն. Քննարկեք (այս ակտիվությունը աշակերտի գրքում չունենք)

Խնդրեք աշակերտներին լրացնել ստորև տրված աղյուսակը իրենց հայտնի կենսական մարտահրավերների և նմուշի

համապատասխան գրառումներով.

Կենսական օրինակ	**Դեղատանը գտնվող այլ քաղաքացու կողմից սպասվող արձագանք**			
	Վատ վերաբերմունք	**Սովորական վերաբերմունք**	**Առանձնահատուկ լավ վերաբերմունք**	**Հարց**
1. Իրավիճակ դեղատանը. Շնչառության խնդիր ունեցող քաղաքացին «Աէրոզոլ» գնելու համար մտնում է դեղատուն, բայց չի կարողանում գնել, որովհետև նրան ասացին, որ դեղամիջոցը թանկացել է: Դժգոհ քաղաքացին ներվայնացավ, շնչառությունը ավելի ծանրացավ, մարդկանց հերթում խառնաշփոթ առաջացավ:	Արտահայտում է իր զայրույթը վատ վիճակում գտնվողի նկատմամբ:	Արտահայտում է կարեկցանք, թեև ոչնչով չի կարող օգնել և շարունակում է իր ճանապարհը:	Հետաքրքրվում է վատ վիճակում գտնվողի խնդրով և հնարավորության սահմաններում օգնում է նրան (ավելացնում է գումարին...) խնդիրը կարգավորելու մեջ:	Որքանով է պարտավոր մարդը օգնել նեղության մեջ գտնվող բոլոր անծանոթ մարդկանց:
2.				

- Նման իրավիճակում (**Կենսական օրինակ 1.**) դուք ինչպե՞ս կվարվեիք: Ինչո՞ւ:
- Կարո՞ղ եք, արդյոք, մտածել նման կենսական օրինակներ, որոնք կտան երկընտրանքները/հակադրությունները հստակեցնելու հնարավորություն:

Հանձնարարական ուսուցչին. Քանի որ այս ակտիվությունը Աշակերտի դասագրքում չկա, ցանկալի է, որ աղյուսակը նախօրոք լինի պատրաստված գրատախտակի կամ մեծ թերթի վրա կամ էկրանի վրա բացեք:

Աղյուսակը լրացնելուց և վերլուծելուց հետո աշակերտներին ծանոթացրեք համալիր առաջադրանքի պայմանին, որի համաձայն նրանք նույն ոճով պետք է վերլուծեն պետության քայլերի օրինական լինելը դեղագործական շուկայում առաջացած երկընտրանքի կապակցությամբ:

Ռեսուրս 1. Դասագիրք, **II գլուխ: Պետություն և բիզնես**: Համալիր առաջադրանքի պայման, էջ 52
Ռեսուրս 2. ա) Ինչպե՞ս ստեղծենք հոդված,
բ) Ինչպե՞ս է գրվում հոդվածը. https://www.living-democracy.com/ge/textbooks/volume-3/part-3/unit-7/student-handout-6/

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.

- Ի՞նչ է իրենից ներկայացնում հոդվածը: Ուրիշ ժամանակ աշխատե՞լ եք այս արտադրանքի վրա: Ինչո՞ւմ դժվարացաք, ի՞նչն էր ավելի հեշտ:
- Ի՞նչ նպատակ է արտահայտում հոդվածը: Ի՞նչ արդյունքի կարող եք հասնել հոդվածի միջոցով:
- Ինչպե՞ս կպլանավորեք ձեր հոդվածի բովանդակությունը:
- Ինչպիսի՞ կառուցվածք կունենա հոդվածը:
- Դուք ի՞նչ նշանի համաձայն եք ընտրում հոդվածը ընթերցելու համար:
- Ի՞նչ պետք է նկատի ունենաք, որպեսզի ձեր մեդիաարտադրանքը ավելի շատ հետաքրքրություն առաջացնի: Հավաստիորեն ընկալվի:
- Անհրաժեշտ կլինի՞, արդյոք, հոդվածի սկզբնական տարբերակը կարդալ-ուղղումներ մտցնել:
- Ինչպիսի՞ վերնագիր կընտրեք:
- Ի՞նչ կարելի է օգտագործել հոդվածը տեսողական նյութով ձևավորելու համար:

Համալիր առաջադրանք

- **Ձեր բառերով ձևակերպեք, ինչի՞ն է վերաբերվում այսօր տրված առաջադրանքը, որի վրա մի քանի օրվա ընթացքում պետք է աշխատեք:**
- **Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք ուրիշ ժամանակ կատարե՞լ եք, արդյոք:**

Ուշադրություն:
Համալիր առաջադրանքի վրա աշխատանքը հիմնականում ընթանում է դասաժամին և միայն բացառիկ դեպքում ենք կիրառում տնային առաջադրանքը:

Փուլ II -Համալիր առաջադրանքի վրա աշխատանք
<u>Թիրախային գիտելիք.</u>
Ենթահարց – Թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրում» (որպես պետության առջև մարդու իրավունքների և

տնտեսական ազատության սկզբունքի միջև առաջացած երկընտրանքի օրինակ),
ենթահասկացություններ. Առողջապահության իրավունք, սպառողի իրավունքներ, **մարդու իրավունքներ.** տնտեսական ազատություն – **ժողովրդավարության սկզբունքներ,**
թիրախային հասկացություն – ժողովրդավարություն: (Արդյունք. 1,2,3,4)

Ենթատեքստ-օրինակների առաջնային մշակում
Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով (Ակտիվությունը Աշակերտի դասագրքում չկա)

Ուշադրությամբ ծանոթացե՛ք տրված տեղեկատվություններին. Թղթապանակ. «Դեղորայքի շեմային գների ներդրում», (էջ 76-80): Գրատախտակի վրա տրված եռայունակ աղյուսակը գծեք տետրում: Առաջին սյունակը լրացրեք ինքնուրույն, նշեք ամեն ինչ, ինչը հետաքրքիր եք համարում: Այնուհետև զույգերում ամբողջացրեք, քննարկեք և երկրորդ սյունակում մտցրեք զույգում հստակեցրած կարևոր հարցերը, իսկ երրորդ սյունակը լրացրեք շնորհանդեսներից և բանավեճից հետո:

Ինքնուրույն աշխատանք	**Զույգում աշխատանք**	**Համադասարանցիների և ուսուցչի մեկնաբանությունները**
1.		Գների կարգավորման գործում պետության միջամտությունը նշանակում է, որ պետությունը չի գործում ժողովրդավարության սկզբունքներից մեկի՝ «Տնտեսության ազատությանը» համապատասխան:
2.		Դեղամիջոցների գների բարձրացումը, երբ երկրում նվազագույն աշխատավարձը և կենսաթոշակը շատ ցածր են և մեծ է սոցիալական անպաշտպանների քանակը, դեղերի թանկությունը (անմատչելիությունը) ուղղակիորեն սահմանափակում է մարդկանց մի մասի առողջության, կյանքի, ինչպես նաև սպառողի իրավունքը:
3.		Տարբեր հասարակական խմբեր տարբեր կերպ են գնահատում իրավիճակը, սպառողները գների թանկացումը ընկալում են անարդարացի և՝ որպես իրենց իրավունքների խախտում:
4.		Դեղագործական բիզնեսի ներկայացուցիչների կարծիքով, պետությունը խախտում է ժողովրդավարության սկզբունքը, երբ գների վրա սահմանում է վերին շեմ, քանի որ ազատ շուկայում գները կարգավորում է ինքը՝ շուկան:
5.		Պետությունը պետք է գործընթացին միջամտի խնդիրը կարգավորելու համար, բայց այդ միջամտությունը պետք է ունենա իրավական հիմք:

	6.		Այդ մոտեցումը պահանջում է փոխել քաղաքականությունը, այսինքն՝ փոփոխություններ մտցնել օրենքում, ինչը բանավեճով է ընթանում, քանի որ մի բան է գների վրա շեմի հաստատումը և երկրորդը՝ խախտման դեպքում, առանց դատարանի, պատժամիջոցների գործարկումը:

Հանձնարարական ուսուցչին. Նախապես գծե՛ք աղյուսակ գրատախտակի կամ մեծ թերթի վրա, ինչպես նաև նախապես պետք է նշած ունենաք այն դրույթները, որոնք գիտականորեն հետաքրքիր են և ակտիվությունը ամփոփելուց հետո դուք կառաջարկեք աշակերտներին:

Ակտիվություն. Սիմուլյացիա **(Ակտիվությունը Աշակերտի դասագրքում չկա),-** պատկերացրեք ձեզ թղթապանակում նկարագրված իրավիճակներից մեկի մասնակից և ձեր դիրքորոշումը պատմեք, թե ինչ է կատարվում դեղագործական ցանցում:

1.**Խիխրիկաձեներից մեկը,** որին բժիշկը դեղ է նշանակել և թանկ լինելու պատճառով չի կարողացել գնել:
2. Դեղագործական ասոցիացիայի լիդեր, որը պաշտպանում է ասոցիացիայի անդամների շահերը:
3. Խորհրդարանի անդամ, որը ձայն է տվել օրենքի փոփոխությանը:
4.Դեղատների ցանցի սեփականատեր, որին գների խախտման պատճառով տուգանել են:
5. Իրավապաշտպան, պաշտպանում է սպառողի իրավունքները:

Քայլ 1. Ինչպե՞ս է արտացոլվում մարդու իրավունքների վրա դեղերի գների բարձրացումը և մատչելիության կրճատումը: Կոնկրետորեն ո՞ր իրավունքի պաշտպանվածությունն է կասկածի տակ հայտնվում: Քննարկեք ծերերի նամակի, ձեզ հայտնի այլ պատմությունների օրինակով: (Հաստ. պատկ. 1.)
Ռեսուրս. Դասագիրք, Բիզնեսի իրավական միջավայրը, էջ 53
Աշակերտի գրքում (էջ 67) **տրված օգտակար ռեսուրսներ.**

- Ի՞նչ է ՍՊԸ-ն, և ո՞վ է անհատ ձեռնարկատերը. https://bit.ly/3Y9pWuu
- Ո՞վ է բոլորից շատ արտադրում. https://bit.ly/3RpGJaC
- ՍՊԸ, թե՞ անհատ ձեռնարկատեր. https://bit.ly/3DTZtJZ
- Եկամտի աղբյուր – ձեռնարկատիրական գործունեություն. https://bit.

Ակտիվություն. Քննարկեք, էջ 53
Ծանոթացե՛ք ստորև առաջարկված ««**Համքարություն»** տեքստին և պատասխանե՛ք հարցերին.

Հարցեր.

- Ձեր կարծիքով, ձեռնարկատիրոջը համանմա՞ն է վարպետը, թե՞ ոչ:
- Ի՞նչ նշանով են միավորվում վարպետները, արհեստավորները:
- Ի՞նչ հատկություններով էին աչքի ընկնում համքարությունները:
- Ներկա ժամանակաշրջանի ձեռնարկատիրոջ և ձեռնարկատիրության ո՞ր կանոններն էին սահմանում և պաշտպանում համքարները:
- Ո՞վ էր հորինում համքարության կանոնները, աշկերտներ մեծացնելու փուլերը և ձևերը:
- Ժողովրդավարական մոտեցման ի՞նչ նշաններ կանվանեիք համքարային կանոններից:
- Ի՞նչ նպատակով էին մարդիկ իրենց զավակներին բերում համքարության: Որքանո՞վ գնահատված էր վարպետի մասնագիտությունը հասարակությունում:
- Ձեռնարկատիրական գործունեությունից բացի ի՞նչ գործառույթներ էին յուրացնում համքարները:
- Ի՞նչ դեր էր կատարում բարեգործությունը համքարության մեջ: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ:
- Ինչո՞ւ էր ցարական իշխանությունը հակադրվում համքարության զարգացմանը:
- Ինչպե՞ս էր զարգացած մրցակցությունը համքարությունում:
- Ճակատագրական պահերին ի՞նչ վերաբերմունք էր համքարների և պետության միջև:
- Ինչպիսի՞ն է այդ վերաբերմունքը ձեռնարկատերերի և պետության միջև այսօր: Ի՞նչ դեր են կատարում ձեռնարկատերերն այսօր հասարակության, պետության կյանքում:

Հանձնարարական ուսուցչին. Այս ակտիվությունը նպատակամղված է նախնական գիտելիքի ակտիվացմանը, կանոնների ձևակերպմանը և պետության, հասարակության ու բիզնեսի միջև հարաբերության պատմական նախապայմանների ըմբռնմանը: Կարելի է ուշադրությունը կենտրոնացնել քաղաքացիների ազատության, համերաշխության որակի կապին բիզնեսի զարգացման, պրոֆեսիոնալ միավորումների ստեղծման հետ:

Ակտիվություն. Աշխատեք խմբերում, էջ 65
Ստեղծեք 4 խումբ, բաշխե՛ք իրավիճակները դրանց բովանդակության, բիզնեսի կազմակերպչական ձևերի մասին տրված տեղեկատվության (տես՝ էջ 60) և ձեր երևակայության հիման վրա, նկատի առնելով ստորև տրված հարցերը, պատրաստեք շնորհանդես.

Հարցեր.
- Ձեռնարկատիրության ո՞ր իրավական ձևն է ձեր կողմից ընտրված իրավիճակում:

- Ձեր կարծիքով, բիզնեսի ընտրված ձևը որքանո՞վ մատչելի է այդպիսի գործունեության համար: Ինչո՞ւ:
- Հստակեցրե՛ք բիզնեսի այդ ձևի ուժեղ և թույլ կողմերը:
- Ի՞նչ խորհուրդներ կուղղեք հիմնադիրներին նրանց ռիսկերը կրճատելու համար:
- Ինչպե՞ս պետք է գործեն հիմնադիրները, որպեսզի պարզերես կատարեն օրենսդրական նորմերը, որոնք պետությունը սահմանել է նրանց համար:

Ակտիվություն. Քննարկեք, էջ 67
Հարցեր.
- Ի՞նչ եք կարծում, դեղագործական բիզնեսում բիզնեսի կազմակերպման համանման ձևը կիրառվե՞լ է, թե՞ ոչ: Բերե՛ք օրինակ:

Ռեսուրս. Դասագիրք, Ձեռնարկության գրանցում, էջ 68
Ակտիվություն. Քննարկեք էջ 68 **(այս ակտիվությունը չենք կատարում այն դեպքում, եթե «Չիզքեյքեր» պատմությունը կկիրառեք՝ որպես ենթատեքստ-օրինակ ամփոփիչ առաջադրանքի համար: Տեսե՛ք այս մատրիցայի վերջում):**

Ծանոթացե՛ք ստորև զետեղված պատմությանը **«Չիզքեյքեր»-ի** մասին և պատասխանե՛ք հարցերին.
Հարցեր.
- Ե՞րբ սկսեց սյուժեի հերոսը մտածել ձեռնարկատիրության, բիզնեսի մասին:
- Սկզբում ի՞նչ գաղափարներ ուներ աղջիկը:
- Ի՞նչ հարցում էր նրան օգնում իրավաբանական կրթությունը:
- Նրա՝ որպես ձեռնարկատեր ձևավորման գործում ի՞նչ դեր խաղաց խնայողություն կատարելու սովորությունը:
- Աղջիկը առաջին հերթին ո՞ր բիզնես գաղափարի մասին մտածեց և ի՞նչ պլանավորեց:
- Ի՞նչը խանգարեց առաջին երազանքը իրականացնելու հարցում:
- Նման գաղափարը ինչպե՞ս հանրահայտ դարձավ մեր երկրում:
- Ձեր կարծիքով, աջակցության դեպքում հաջողությամբ կզարգանա՞ր սյուժեի հերոսի առաջին բիզնես գաղափարը:
- Ո՞րն էր աղջկա համար իր երազանքի գաղափարն իրականացնելու առաջին քայլը:
- Ինչպե՞ս Վեկոն դրամ ձեռք բերեց բիզնես սկսելու համար:
- Ի՞նչ դեր ունեցավ հարազատների քննադատությունը բիզնես ռիսկը սեփական անձի վրա վերցնելու հարցում:
- Ինչպե՞ս իրականացրեց Վեկոն երեխա ժամանակից չիզքեյքերի հրուշակեղենի խանութ ստեղծելու երազանքը:
- Գրանցվելու համար բիզնեսի ո՞ր ձևը ընտրեցին գործընկերները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ:

- Ի՞նչ հետազոտություն անցկացրեց նա: Գաղափարը իրականացնելու համար ո՞ր գործընկերոջը գտավ:
- Սկզբում ո՞վ էր կատարում ցրիչի դերը: Ինչո՞ւ:
- Ինչո՞ւ գործընկերները որոշեցին աշխատել առցանց հայեցակարգով:
- Ի՞նչն էր ձեռնարկատերերի գլխավոր խնդիրը:
- Ինչպիսի՞ ազդեցություն գործեց քովիդ համաճարակը Վեկոյի բիզնեսի և ընդհանրապես բիզնեսների վրա:
- Որտե՞ղ սկսեցին աղջիկները չիզքեյքերներ արտադրել:
- Ինչպե՞ս ընկերները մեծացրին առևտուրը (ի՞նչ սեգմենտներ յուրացրին):
- Ներկայումս ի՞նչ մարտահրավերներ ունի »չիզքեյքերը»:
- Ինչպե՞ս կբնութագրեք Վեկոյի ձեռնարկատիրական հատկությունները: Նրա գործընկերների հատկանիշները:
- Ձեր կարծիքով, ի՞նչ գործոնների պատճառով «չիզքեյքերի» արտադրությունը ձեռք բերեց հաջողություն մինչև համաճարակը, համաճարակի ժամանակ և համաճարակից հետո:

Ակտիվություն. Աշխատեք խմբերում, էջ 73

Բաժանվե՛ք խմբերի, յուրաքանչյուր խումբը կազմի ձեռնարկության նախագիծ ալգորիթմի համաձայն: Աշխատանքն ավարտելուց հետո կատարեք շնորհանդես:

Ակտիվություն. Քննարկեք, էջ 75

Հարցեր.

- Թվարկե՛ք հինգ համատիրություն, որոնց արտադրանքից օգտվում է ձեր ընտանիքը:
- Եթե հնարավորություն ունենաք, ձեռնարկատիրության ո՞ր իրավական ձևին կշնորհեիք գերապատվությունը և ինչո՞ւ:
- Ի՞նչ նշանակալից տարբերություն կարող եք գտնել այն ձևերի միջև, որոնք գործում են սպասարկման ոլորտում (օր.՝ Գեղեցկության սրահ) և այն ֆիրմաների միջև, որոնք գործում են արտադրության ոլորտում (օր.՝ դեղագործական ձեռնարկություն):
- Որոշե՛ք, ո՞ր տիպի ֆիրմային են բնութագրական հետևյալ յուրահատկությունները.
  - ✓ ազատ գործելու ունակությունը,
  - ✓ շատ մարդկանց գրավելու ունակությունը,
  - ✓ ուժեղ տնտեսական խթանը,
  - ✓ մեծ կապիտալ ծախսերը,
  - ✓ ռիսկը մրցակիցների դեմ պայքարի ժամանակ:

- Թվարկե՛ք Վրաստանում հայտնի առևտրական նշանները (հատուկ պատկեր կամ խորհրդանիշ, որի միջոցով ճանաչելի է դրա արտադրության ֆիրման):
- Վերհիշե՛ք աշխարհում հայտնի բիզնեսմեններին: Ի՞նչը պայմանավորեց նրանց հանրահայտ լինելը:

Հանձնարարական ուսուցչին. Այս պարագրաֆի հետ կապված բոլոր ակտիվությունների նպատակն է աշակերտների նախնական գիտելիքի ակտիվացումը ձեռնարկատիրության և բիզնեսում գործող կանոնների մասին, այն մասին, որ բացի շուկայի կանոններից, նրանք պետք է կիսվեն և պաշտպանեն տեղական և միջազգային իրավական նորմերը, հարգեն սպառողի իրավունքները:

Ռեսուրս. Դասագիրք. **Պետությունը միշտ աչալուրջ է, էջ 76**
Աշակերտի գրքում (էջ 95) **տրված օգտակար ռեսուրսներ.**

- Փոքր բիզնես https://www.youtube.com/watch?v=u13pYkFSxuU&t=37s
- Միկրո բիզնեսը ինչպես համարենք համամասնակցություն «Արտադրի՛ր Վրաստանում» 30 հազար լարիանոց դրամաշնորհին՝ https://www.youtube.com/watch?v=qEf8h28C7Dk&t=1s
- Մրցակցության պաշտպանություն https://www.youtube.com/watch?v=zSuFaHsAx9E&t=14s
- Մենաշնորհ ազատ շուկայի պայմաններում https://www.youtube.com/watch?v=EbTYomV9fjM
- Սպառողի իրավունքների պաշտպանություն https://www.youtube.com/watch?v=V9emfQf7jAw
- Զբաղվածների պաշտպանության սկզբունքները https://www.youtube.com/watch?v=r_Nutw4F1ug&list=PLpxJ9mSV7w21AA8xCgq6Aum3LBiccAH2I&index=27
- Զբաղվածների պաշտպանություն Վրաստանում https://www.youtube.com/watch?v=jmVJ6xLjzsg&list=PLpxJ9mSV7w21AA8xCgq6Aum3LBiccAH2I&index=30
- Տեսայուժե «Ի՞նչ ներուժ ունի ձկնարդյունաբերությունը: https://bit.ly/3Ht56Qa

Ակտիվություն. Աշխատեք զույգերով (էջ 74)

Ծանոթացե՛ք ստորև տրված թղթապանակին (էջ 76-80), Ուսուցչի գրքում – Հավելված 2 (էջ175) ամբողջությամբ, այդ թվում՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» ստորև տրված հոդվածներին: Պատասխանե՛ք առաջադրված **հարցերին.**

- Ձեր կարծիքով, ո՞ր հոդվածի/հոդվածների պաշտպանության պարտականությունը ծառացավ պետության առջև դեղորայքի թանկացման և անհասանելիության պայմաններում: Պատասխանը կոնկրետացրե՛ք օրինակի համաձայն:
- Վերհիշե՛ք մարդու իրավունքների հռչակագրի այդ հոդվածի կամ հոդվածների (տես՝ էջ 78) խախտման ձեզ հայտնի օրինակներ (կյանքից, մեդիայից, գրական ստեղծագործություններից): Պատասխանը հիմնավորե՛ք,

- Ձեր կարծիքով, ո՞ր հոդվածը կամ հոդվածներն է պարտավոր պաշտպանել պետությունը՝ հաշվի առնելով ձեռնարկատերերի դիրքորոշումը: Քննարկե՛ք օրինակի համաձայն:
- Վերհիշե՛ք այդ հոդվածի խախտման այլ համանման օրինակներ (ֆիլմից, գրական ստեղծագործությունից): Պատասխանը հիմնավորե՛ք:

Հանձնարարական ուսուցչին. Եթե մինչև այժմ վարած ակտիվությունները ներկայացնում էին նախնական գիտելիքի ակտիվացումը և նախապատրաստում էին հիմնական ենթատեքստ-օրինակի վրա աշխատելու համար, ապա այս ակտիվությունը արդեն ուղղակի կապի մեջ է համալիր առաջադրանքի, առաջին չափանշի և հաջորդ չափանշի հետ: Այդ պատճառով դրա վրա աշխատանքին, բանավեճին նշանակալից ժամանակ ենք հատկացնում և բացի Աշակերտի գրքում տրված հարցերից, ամփոփման ժամանակ հատկապես հարցնում ենք՝ **ի՞նչ զուգահեռներ կանցկացնեիք մեր կողմից մինչև այժմ անցած իրավիճակների հետ:** Փորձում ենք կապել հիմնական ենթատեքստ-օրինակը այլ՝ մինչ այդ արդեն անցած ենթատեքստ-օրինակների, ակտիվությունների հետ (օրինակ՝ առաջին ակտիվությունը «Դեղատանը ստեղծված իրավիճակին, «Համքարության թեմային...), իսկ աշակերտներին հիշեցնում ենք՝ մտածել ստացած տեղեկատվություններից և եզրակացություններից ինչը օգտակար կլինի համալիր առաջադրանքը ինքնուրույն կատարելու ժամանակ:

Քայլ 2. Որքանո՞վ է խախտում տնտեսական ազատության սկզբունքը՝ դեղամիջոցների վերին շեմի սահմանումը, և ի՞նչ ռիսկեր է ստեղծում դեղագործական բիզնեսին: (Կապեք խմբագրությունում ստացված նամակներին) (Հաստ. պատկ. 2.3.)

Ակտիվություն. Աշխատեք զույգերով (էջ. 81)
Վերլուծե՛ք՝ ժողովրդավարության ո՞ր սկզբունքն է պաշտպանված/խախտվում.
ա) դեղերի ոչ մատչելի գների դեպքում,
բ) առողջապահության մատչելիության դեպքում,
գ) պետության կողմից դեղորայքի շեմային գներ ներդնելու դեպքում,
դ) գնախախտումների համար ձեռնարկատերերի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելով:

Տրված աղյուսակը փոխադրեք տետրում կամ թերթի վրա և ինքնուրույն լրացրեք, այնուհետև կիսվե՛ք միմյանց հետ, քննարկե՛ք փաստարկներով:

Ժողովրդավարության սկզբունքներ	Դեղամիջոցների անմատչելի գներ սահմանելով	Առողջապահության համարան մատչելի գներ սահմանելով	Դեղորայքի շեմային գների ներդրումը	Գների խախտումների վրա առանց դատարանի պատժամիջոցներ սահմանելով

Հավասարություն				
Օրենքի գերակայություն				
Քաղաքացիական մասնակ-ցություն/ինկլյուզիվություն				
Իշխանության բաշխում				
Թափանցիկություն և հաշ-վետվություն				
Արդարացի ընտրություններ				
Ոչ բռնի մեթոդներով գործո-ղություն				
Հանդուրժողականություն				
Բազմակուսակցականություն				
Տնտեսական ազատություն				

Ակտիվություն. Աշխատեք խմբերում, էջ 82

Ստեղծե՛ք 4 խումբ. առաջինը՝ օրենսդիրների, երկրորդը՝ գործադիր իշխանության, երրորդը՝ դեղագործական ընկերությունների առաջնորդների, չորրորդը՝ սպառողների:

Եվս մեկ անգամ վերանայե՛ք **թղթապանակում** տրված տեղեկատվությունը և հարցերի հիման վրա պատրաստե՛ք շնորհանդես, որը, ելնելով ձեր խմբի դիրքորոշումից, կներկայացնի իրավիճակը:

Հարցեր.

- Ի՞նչը առաջացրեց այս փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը և այդ նորույթը համարո՞ւմ եք արդարացի: Ինչո՞ւ:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կհետևի այդ փոփոխությանը:
- Օրենքում փոփոխությունների իրականացումը ընկալո՞ւմ եք, թե՞ ոչ որպես պետության կողմից միջամտություն ազատ շուկայի կանոններում: Բացատրե՛ք՝ ինչո՞ւ:
- Որքանո՞վ ժողովրդավարական եք համարում պետության կողմից գների վրա շեմի սահմանումը: Պատժամիջոցների սահմանո՞ւմը: Հիմնավորե՛ք ձեր դիրքորոշումը:
- Ի՞նչ վնասի և ի՞նչ օգուտի սպասում ունի կոնկրետ ձեր խումբը այդ փոփոխություններից: Ի՞նչ վնաս կամ օգուտ կստանան այլ խմբերը:

- Դուք ինչպե՞ս կկարգավորեիք այդ խնդիրը:

Հանձնարարական ուսուցչին. Կարելի է շնորհանդեսներ ներկայացնելու համար կիրառել դերերով խաղը, որտեղ յուրաքանչյուր խումբն իր դիրքորոշումը կներկայացնի Սահմանադրական դատարանին: Նման դեպքում ցանկալի է նախնական գիտելիքն ակտիվացնել իրավական մշակույթի և իշխանության բաշխման հարցերով:

Ակտիվություն. Աշխատեք խմբերում, էջ 82

Ծանոթացեք ստորև տրված տեքստին՝ «Վրաստանի երկաթգիծ» և «Փոխադրող», և պատասխանեք **հարցերին.**

- Ի՞նչ խնդրի առջև հայտնվեց ՍՊԸ «Բեռնափոխադրումներ»-ը:
- Ինչպե՞ս են կարողանում ընկերությունները (այս դեպքում՝ «Վրաստանի երկաթգիծը») գործել օրենքի դեմ:
- Օրենքի առկայությունը կարո՞ղ է համարվել մրցակցության պահպանության երաշխիք:
- Ձեր կարծիքով, ի՞նչ նպատակով գոյություն ունի մրցակցության գործադիր մարմին, ի՞նչ դեր է ստանձնել նա օրենքի գործադրման գործընթացում:
- Ի՞նչ դեր կատարեց մրցակցության ազգային գործակալությունը երկու իրավաբանական անձանց միջև ծագած կոնֆլիկտում:
- Ինչպե՞ս կընթանային երևույթները, եթե այս մարմինը չլիներ կամ չկատարեր իր պարտականությունը:
- Համեմատե՛ք այդ կոնֆլիկտը գլխավոր ենթատեքստ-օրինակի՝ «Դեղորայքի շեմային գների ներդրում» թղթապանակի իրավիճակի հետ: Դեղամիջոցների վրա գների շեմ ներառելու մասին իրավիճակին: Ի՞նչ ընդհանուր կամ տարբերվող բնութագրիչներ ունեն այդ հակամարտությունները:

Հանձնարարական ուսուցչին. Վերջին հարցի համեմատության համար կարելի է կիրառել T դիագրամը, **դեղագործական շուկայում ստեղծված հակամարտության բնութագրիչները.** սա վեճ է սպառողների և բիզնեսի միջև, որի կարգավորման պարտականությունը կրում է պետությունը: Քաղաքականությունը փոփոխվում է, օրենքները և նորմերը փոփոխվում են, ձևավորվում են գործադրման լծակներ, գոյություն ունի բիզնեսի և պետության միջև հակամարտության առաջացման ռիսկ, միացած են իշխանության բոլոր երեք ճյուղերը: «Վրաստանի երկաթգիծ»-ի և «Փոխադրող»-ի իրավիճակում հակամարտություն գոյություն ունի 2 իրավաբանական անձանց միջև, քաղաքականությունը, օրենքները, լծակները գործում են այս հակամարտությունը կարգավորելու համար, գոյություն ունի պետական մարմին, որը այս հակամարտության պատասխանատուն է, այսինքն՝ տարբերությունը և՛ մասշտաբներում է, և՛ որոշման ուղիներում:

Ակտիվություն. Քննարկեք, էջ 87

Ծանոթացե՛ք ստորև տրված իրավիճակին և պատասխանե՛ք հարցերին.

- Որքանո՞վ արդարացված է ձեռնարկատիրոջ բողոքը:

- Ի՞նչ արդյունքներ կբերի ձեռնարկատիրոջը բրդի ներկրման վրա սահմանափակում հաստատելը:
- Սահմանափակում հաստատելը ի՞նչ արդյունքներ կբերի պետությանը, որն այս դեպքում սպառողի դերում է:
- Ո՞ր փաստարկը կլինի արդարացված պետության կողմից ձեռնարկատիրոջ խնդրանքի մերժման դեպքում:
- Ի՞նչ եք կարծում, մրցակցությունը կմարի՞, թե՞ պետությունը շուկան կզոհի ինքնակարգավորման համար:
- Որքանո՞վ մրցակցային են Վրաստանի տնտեսությունը ամբողջությամբ կամ ձեր կողմից ընտրված առանձին սեկտորը:

Ռեսուրս. Աշակերտների պատմած պատմություններ
Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 89
- Վերհիշե՛ք՝ որքանո՞վ պաշտպանված է մրցակցությունը Վրաստանում:
- Ինչպե՞ս են պաշտպանված սպառողի իրավունքները մեր երկրում:
- Գիտե՞ք, արդյոք, այնպիսի դեպք, երբ պետության միջամտության արդյունքում գների վերահսկման մասին համաձայնություններ տեղի չունեցան կամ նվազեցին:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 91
- Հայտնի է, որ պետական օրենսդրությունը խոչընդոտում է մի ֆիրմայի կողմից այլ ֆիրմային նեղություն պատճառելը: Ի՞նչ եք կարծում, մրցակցության այդպիսի պաշտպանությունը չի՞ տանում, արդյոք, մինչև ազատ մրցակցության սահմանափակում:

Հանձնարարական ուսուցչին. Այս հարցի մասին կարծիքներ հայտնելուց հետո դասարանը բաժանեք 2 խմբի, բաժանե՛ք տրված իրավիճակները շնորհանդես պատրաստելու համար: Առաջարկե՛ք կատարելիք առաջադրանքի կառուցվածքի համաձայն, իրենք բաժանվեն ենթախմբերի և բաժանեն աշխատանքը:

ԻՐԱՎԻՃԱԿ 1
Պաշտպանենք ձեռնարկատերերին և սպառողներին:
Բաժանվե՛ք երկու խմբի, մի խումբը կազմի ձեռնարկատերերի պաշտպանության օրենսգիրքը, երկրորդը՝ սպառողների պաշտպանության օրենսգիրքը: Պատրաստե՛ք շնորհանդես: Աշխատելու համար տրվում է 15 րոպե:

- Վերջնական տարբերակները գրատախտակի վրա իրար կողքի փակցրեք: Շնորհանդեսից հետո նշեք երկու օրենսգրքերի ընդհանուր հոդվածները:
- Քննարկե՛ք՝ ինչո՞ւ այս օրենսգրքերում հայտնվեցին ընդհանուր հարցեր:

ԻՐԱՎԻՃԱԿ 2

Մրցակցություն և ձեռնարկատերեր

Ֆիրմաները հաճախ պահանջում են մրցակցության օրենսդրական սահմանափակում: Օրինակ՝ անցյալ դարի 90-ական թվականներին Ֆրանսիայում տարբեր սեգմենտների վաճառողները լրատվամիջոցներով հետաքրքիր պահանջներ էին բարձրաձայնում և կառավարությունից պահանջում էին աջակցություն: Առաջարկում ենք քաղվածքներ որոշ պահանջներից: Քննարկե՛ք յուրաքանչյուր պահանջը և դատողությո՛ւն արեք:

- Ինչպիսի՞ արդյունքներ կհետևեին ձեռնարկատերերի պահանջների բավարարմանը կառավարության կողմից աջակցության դեպքում՝
  ա) կարճաժամկետ ժամանակաշրջանում,
  բ) երկարաժամկետ ժամանակաշրջանում:

Պահանջ 1: «...Հինգ տարվա ընթացքում, բոլոր սանտեխնիկները, յուրաքանչյուր ուսումնական կիսամյակում ընդհանուր ֆիզիկայի և հիդրավլիկայի քննություն պետք է հանձնեն, միայն դրանից հետո նրանց կտրվի աշխատելու լիցենզիա՝ թույլատրագիր»:

Պահանջ 2: «...Նորաբաց սպասարկման կենտրոնի սեփականատեր պարոն Դավիթը մամլո ասուլիսում հայտարարեց, որ պետությունից պահանջում է ոլորտի կարգավորում: «Պետք է սահմանափակվի այն **դիլետանտների** ազատությունը, ովքեր իրենց բակապաններ և տնային հավաքարարներ են կոչում և բնակչությանը ծառայություն են մատուցում ցածր գներով», – հայտարարեց նա և բոլոր այնպիսի անձանց նկատմամբ, ովքեր նման գործ կատարում և ծառայության կետում հաշվառված չեն, կառավարությունից պահանջեց հետաքննություն սկսել և սահմանել վարչական պատիժ»:

Պահանջ 3. Տնտեսագետների մի մասը ապացուցում է, որ «օրենքը, որը սահմանափակում է մրցակցին, սահմանափակում է նաև մրցակցությունը»: Ի՞նչ հիմք ունեն նրանք այդպիսի հայտարարություն անելու համար:

Ակտիվություն, Քննարկեք, էջ 92

Սպառողի իրավունքների պաշտպանությունը և վստահություն վաստակելը օգտակար է նաև ընկերության համար, քանի որ սպառողը ընտրությունը կատարում է այդպիսի ֆիրմաների օգտին:

- Թվարկե՛ք այն վրացական ընկերությունները և արտադրանքները, որոնք ձեռք են բերել սպառողի առանձնահատուկ վստահությունը:

- Համաձա՞յն եք, թե՞ ոչ տնտեսագետների շրջանում տարածված հետևյալ կարծիքին. որպեսզի պահպանենք մրցունակ տնտեսական համակարգը, հարկավոր են այնպիսի օրենքներ ուժեղ ֆիրմաների գործողությունների դեմ, որոնք արգելում են ծախսերը ավելի ցածր գնով վաճառել:

Քայլ 3. Ինչումն է կայանում պետության առջև առկա երկընտրանքը, և որքանով են արդարացված պետության քայլերը մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության տեսակետից: (Հաստ. պատկ. 1.2.3.)
Ռեսուրս. Դասագիրք, Ինչպե՞ս պետք է գործի պետությունը, էջ 96
Աշակերտի գրքում (էջ 104) **տրված օգտակար ռեսուրսներ.**
Տեսանյութ. «Ի՞նչ ներուժ ունի ձկնարդյունաբերությունը». https://www.facebook.com/watch/?v=728147661524377
Վրաստանի Մրցակցության ազգային գործակալության պաշտոնական էջ.https://bit.ly/3HTff an

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 96
Ծանոթացե՛ք ստորև տրված իրավիճակին **«Հիվանդությունների պատճառով ձկան ֆերմաները փակվում են» իրավիճակին և «Ի՞նչ ներուժ ունի ձկնարդյունաբերությունը»** տեսասյուժեին. https://www.facebook.com/watch/?v=728147661524377

Հարցեր.

- Դուրս գրե՛ք, ի՞նչ հիմնախնդիրներ կարգավորելու մասին է խնդրում ձեռնարկատերը պետությունից:
- Ձեր կարծիքով, որքանո՞վ արդարացի են այդ պահանջները: Ինչո՞ւ:

Մշակված օրինակի՝«Հիվանդությունների պատճառով ձկան ֆերմաները փակվում են» և տեսասյուժեի «Ի՞նչ ներուժ ունի ձկնարդյունաբերությունը» նյութի վրա հենվելով՝ պատրաստե՛ք շնորհանդես:

Հարցեր.
- Բիզնեսի զարգացման համար մատչելի միջավայրի ստեղծումը որքանո՞վ է հանդիսանում պետության պարտականություն:
- Ինչպե՞ս է վերահսկում պետությունը ձեռներեցի արտադրանքի որակը: Առանց վստահելի լաբորատորիայի հնարավո՞ր է եզրահանգումներ կատարելը:
- Պարտավո՞ր է, թե՞ ոչ պետությունը ճյուղի զարգացման նպատակով կատարել քայլեր որակյալ լաբորատորիա ստեղծելու համար:
- Ո՞ր հիմնախնդիրները պետք է կարողանան կարգավորել ձեռնարկատերերը սեփական ուժերով, ուժերի համախմբմամբ: Ինչո՞ւ:
- Դուք ի՞նչ խորհուրդ կտայիք ձկան ֆերմաների սեփականատերերին:
  Ինչպե՞ս կարելի է այս վիճակը կապել մեր համալիր առաջադրանքի իրավիճակի հետ:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում (էջ 98)

Հարցեր.

- Հասարակական քաղաքականության հարցերից ընտրեք մեկը, ձեզ համար ամենահետաքրքիր հարցը,
- ձեր կողմից ընտրված հարցի շուրջը մշակեք այնպիսի հասարակական քաղաքականություն (օրենք, դրույթ կամ պետական ծրագիր), որը արձագանքում է հիմնախնդրին,
- որոշե՛ք, թե որ նպատակի (նպատակների) աջակցությանն է ձգտում ձեր կողմից մշակված մոտեցումը և բացատրե՛ք ինչ ազդեցություն կգործի այն այլ նպատակի (նպատակների) հասնելու վրա,
- որոշե՛ք, թե ինչ տնտեսական համակարգում կարելի է մշակված այս մոտեցումը իրականացնել և ինչո՞ւ: Տնտեսական համակարգի ո՞ր տեսակն է (հրամայական կամ շուկայական) ավելի շատ համապատասխանում այս քաղաքականությունը կյանքում անցկացնելուն,
- խմբերը պատրաստում են շնորհանդես և միմյանց հետ փոխանակում են կարծիքները:

Հասարակական քաղաքականության հարցեր.

1.Բոլոր քաղաքացիներին պետությունը պետք է ապահովի անվճար շտապ բժշկական սպասարկմամբ:
2.Հասարակական կուտակման տեղերում ծխելը պետք է արգելվի:
3.Վրացական հավկիթ արտադրողների պաշտպանության նպատակով ներկրված հավկիթի վրա սակագինը պետք է բարձրացվի:

Ակտիվություն. Քննարկեք՛, էջ 99

Հարցեր.

- Բացատրե՛ք՝ ինչպես կարելի է սահմանադրության նախաբանը գործադրել շուկայական տնտեսությունում պետության միջամտությունը հիմնավորելու համար, (օրինակ՝օրենք՝ նվազագույն աշխատավարձի մասին, սոցիալական պաշտպանություն, գործազրկության փոխհատուցում, անվտանգության կանոնների պաշտպանություն):
- Ինչպես է պաշտպանում ձեռներեցներին սահմանադրության ստորև տրված 9-րդ հոդվածը:
- Կապակցե՛ք սահմանադրության քաղվածքները «Դեղորայքի շեմային գների ներդրում» ակտիվության հետ, (էջ 76-80):
- Ձեր կարծիքով, հնարավո՞ր է, թե՞ ոչ հասնել լրիվ տնտեսական ազատության:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 100

- Որքանո՞վ մեծ պետք է լինի պետության դերը մեր տնտեսությունում՝ անսահմանափա՞կ, թե՞ սահմանափակ: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Կարդացե՛ք քարտերի վրա նկարագրված տարբեր անձնական և սոցիալական նպատակները:
- Որքանո՞վ են օգնում կամ որքանո՞վ են վնաս հասցնում պետական ծրագրերը մարդկանց և ողջ երկրին այն նպատակի կատարմամբ, որը ձեր քարտի վրա է նկարագրված:
- Անվանե՛ք ձեր քարտի վրա նկարագրված ծրագրերի դրական և բացասական կողմերը:

«Առևտրական» քարտեր

1.Նպատակ. ջինսերի վաճառք Հնարավոր է տարբեր ոճերի, մակնիշների, գնի և որակի ջինսեր գնել, որոնք վաճառում են տարբեր խանութներ:	**2. Նպատակ. ջինսերի վաճառք** Հնարավոր է միայն մեկ ոճի ջինսեր գնել, որոնք թողարկված են պետական ձեռնարկության կողմից: Արտադրության քվոտաները սահմանել են պետական պլանավորողները: Հաճախ ջինսեր խանութներում չեն ճարվում: Միայն սև շուկայում է՝ բարձր գներով:
3. Նպատակ. մաքուր օդ Արտադրական ընկերությունները պետք է կրճատեն աղտոտումը կամ տուգանքներ վճարեն:	**4. Նպատակ. մաքուր օդ** Պետական գործիչները ձեռնարկությանը հանձնարարում են արտադրանքի թողարկման բարձր ծավալ, ինչը առաջ է բերում աղ-տոտում, բայց հետո օդի որակի բարելավման համար քննարկում են արտադրությունը կրճատելու մասին:
5. Նպատակ. մաքուր ջուր Պետությունը վաճառում է աղտոտման իրավունքը և տալիս է թույլատրագիր՝ լիցենզիա: Ֆիրմաները թույլատրագիր գնում են այն դեպքում, եթե թույլատրագիր գնելը ավելի էժան է նստում, քան չաղտոտելու համար ծախսերը:	**6. Նպատակ. մաքուր ջուր** Աղտոտման վերահսկման միջոցառումները անց են կացվում միայն այն ժամանակ, եթե աղտոտման կրճատումը պետական գործիչների և պլանավորողների համար ավելի կարևոր նպատակ է, քան պետական ձեռնարկության կողմից ավելի շատ ապրանք թողարկելը և ծառայություն մատուցելն է:

	7. Նպատակ. արժեզրկման զսպում Կենտրոնական բանկը բարձրացնում է տոկոսադրույքը, երբ ուզում է արժեզրկումը կրճատել:	**8. Նպատակ. արժեզրկման զսպում** Ապրանքի և ծառայության վրա պաշտոնական գները սահմանում են պետական պլանավորողները և սովորաբար պաշտոնական գների մակարդակի վրա արժեզրկում գոյություն չունի:
	9. Նպատակ. ընկերության մրցունակության պահպանում Որոշ ընկերություններ ազատում են աշխատուժին այն նպատակով, որ կրճատեն արտադրանքի գինը և բարձրացնեն արտադրողականությունը, որպեսզի մրցակցեն ներքին և արտասահմանյան ֆիրմաների հետ:	**10. Նպատակ. ընկերության մրցունակության պահպանում** Կրճատումը (աշխատող ուժի ազատումը) խոչընդոտում է պետական պլանավորման նպատակին (գործազրկության վերացումը): Միջազգային առևտուրը սահմանափակում են, որպեսզի աջակցեն ազգային ինքնապահովմանը և բացառեն մրցակցությունը արտասահմանյան ֆիրմաների կողմից:
	11. Նպատակ. լավ մայրուղիների վրա քայլել Նոր ճանապարներ են կառուցվում և հարկավճարումներով հաջողվում է դրանք լավ վիճակում պահել:	**12. Նպատակ. լավ մայրուղիների վրա քայլել** Պետական պլանավորողները հատկացնում են որոշակի ռեսուրսներ ճանապարհներ կառուցելու և վերանորոգելու համար, իսկ այլ ռեսուրսներ՝ պետական ֆիրմաներում ապրանք թողարկելու և ծառայություններ մատուցելու համար:
	13. Նպատակ. փոխադրվել ավելի մեծ տուն Անհատները կարող են գնել, վաճառել կամ վարձակալել տուն, հողակտոր կամ բնակարան:	**14. Նպատակ. փոխադրվել ավելի մեծ տուն** Պետությունը կառուցում է բնակարաններ և դրանք ընտանիքներին առաջարկում է այնպիսի չափանիշների վրա հենվելով, ինչպիսիք են. ընտանիքի անդամների թիվը և բնակարանի հերթում գտնվելու տևողությունը: Անհատներն իրավունք չունեն գնեն կամ վաճառեն տները, բնակարանները կամ հողակտորները:
	15. Նպատակ. քոլեջ ընդունվել և երկրաբանություն սովորել Անհատները կարող են ցանկացած քոլեջ կամ համալսարան ընդունվել և առարկաներ ընտրել: Ուսանողները պետք է վճարեն ուսման վարձ:	**16. Նպատակ. քոլեջ ընդունվել և երկրաբանություն սովորել** Պետական պլանավորողները որոշում են՝ ով որ առարկան պետք է սովորի: Կառավարությունը վճարում է ուսումնարան ընդունված ուսանողների ուսման վարձը:
	17. Նպատակ. նոր բիզնես սկսել Ձեռնարկատերերը կարող են գնել, վարձակալել և կազմակերպել ռեսուրսները նոր բիզնես սկսելու համար:	**18. Նպատակ. նոր բիզնես սկսել** Պետական սեփականությունում եղած մեծ գործարանները արտադրում են արտադրանքի մեծ մասը: Պետական

		պլանավորողները որոշում են՝ կառուցե՞լ, թե՞ ոչ նոր գործարաններ և ստեղծե՞լ, արդյոք, նոր ֆիրմաներ:
	19. Նպատակ. աղքատների և ծերերի մասին հոգատարություն Հարկային եկամուտները օգտագործվում են տարբեր օգնությունների, բժշկական և սոցիալական ապահովագրու-թյունների ապահովման համար: Շատ աշխատողներ ունեն մասնավոր թոշակ կամ խնայողություն:	**20. Նպատակ. աղքատների և ծերերի մասին հոգատարություն** Պետության կողմից երաշխավորված են բոլոր քաղաքացիների բժշկական օգնությունը, թոշակը և բնակության տարածքը:
	21. Նպատակ. լավ աշխատանք Ցանկության դեպքում՝ ծառայության ընտրության և փոփոխման ազատություն: Լավ աշխատանքը գնահատվում է բարձր աշխատավարձով և այլ շահույթներով, որոշ մարդիկ ուրիշներից ավելի են վաստակում:	**22. Նպատակ. լավ աշխատանք** Մարդկանց տարբեր աշխատանքներում միատեսակ, պետական պլանավորողների կողմից սահմանված աշխատավարձ են վճարում: Առանց պետության թույլտվության սահմանափակ է նոր աշխատանքի, նոր բնակության վայրի և այլնի ընտրության ազատությունը:
	23. Նպատակ. Գործազրկությունից խուսափել 4-5% գործազրկությունը համարվում է լրիվ զբաղվածություն, քանզի աշխատողները փոխում են աշխատանքը: Պետության տնտեսական քաղաքականությունը ուղղված է գործազրկությունը վերացնելուն:	**24. Նպատակ. գործազրկությունից խուսափել:** Բոլորը զբաղված են, այդ պատճառով պաշտոնապես գործազրկություն գոյություն չունի: Որոշ աշխատանքներ պահպանված են նաև այն ժամանակ, երբ դրանք գրեթե ոչինչ բերող է, միայն թե բոլորը զբաղված լինեն:
	25. Նպատակ. Տնտեսական աճի խթանում Պետությունը տնտեսական քաղաքականություն կիրառում է տարեցտարի կայուն տնտեսական աճի պահպանության համար: Ներդրումների մեծամասնությունը կատարվում են նոր գործարաններում, մեքենա-սարքավորանքներում և տեխնոլոգիաներում և հաստատված են անձնական խնայողությունների վրա հիմնադրված մասնավոր ձևերով:	**26. Նպատակ. Տնտեսական աճի խթանում** Պետական պլանավորողները սահմանում են ներդրումների մակարդակը և պետական կազմակերպությունները պետք է հասնեն այդ նպատակներին: Ներդրումները ֆինանսավորվում են պլանավորողների կողմից արտադրության միջոցներում ավելի ռեսուրսների ներդրմամբ և սպառողական ապրանքի արտադրության համար նվազ ռեսուրսների կիրառմամբ:
	27. Նպատակ. Քաղաքացիների համապատասխան բժշկական սպասարկում	**28. Նպատակ. Քաղաքացիների համապատասխան բժշկական սպասարկում:**

	Շուկայական գնով առողջապահությունը և բուժումը հասանելի է նրանց համար, ովքեր կարող են վճարել: Բոլոր անհատները չեն կարողանում ստանալ բժշկական օգնություն մասնավոր ֆիրմաներից:	Ապահովված է բժշկական օգնությունը, բայց մեծ հերթեր են որոշ տեսակի բուժման և ծառայության համար:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 104
Օգտվե՛ք պետության տնտեսական գործառույթների ինֆոգրաֆիկայից և դրա վրա հենվելով քննարկե՛ք **«Առևտրական»** քարտերի մասին:
Հարցեր.

- Ո՞ր նպատակի կատարմանն է (են) ծառայում կամ չի (չեն) կարող ծառայել պետության տնտեսական գործառույթը (գործառույթները): Ինչպե՞ս է նպատակը հասանելի:
- Ի՞նչ դրական և բացասական դեր է կատարում պետությունը տարբեր տնտեսական համակարգերում:
- Ընտրե՛ք պետության գործառույթներից մեկը: Նկարագրե՛ք՝ ինչպես է կատարվում այն շուկայական տնտեսությունում:
- Ի՞նչ ազդեցություն կգործեր այս կամ այն պետական ծրագրի կատարումը ձեզ վրա:
- Քննարկե՛ք պետության տնտեսական դերը կոնկրետ իրավիճակներում.
    - ✓ Իշխանության իրավասությունն է օգնություն ցուցաբերել Թբիլիսիի կառավարությանը օդանավակայանների և այլ նման տրանսպորտային օբյեկտների շինարարությունում:
    - ✓ «Մասնավոր սեփականության, մրցակցության և շահույթ ստանալու մոտիվի պաշտպանությունը պետության կողմից հավասարության, արդյունավետության և գների կայունության պահպանման լավագույն ուղին է»:
    - ✓ Քաղաքապետարանը միջոցներ չպետք է ծախսի պուրակների և զբոսայգիների շինարարության և շահագործման վրա: Դա մասնավոր բիզնեսի գործն է: Համաձայնո՞ւմ եք, թե՞ ոչ այդ առաջարկությանը: Պարզաբանե՛ք ձեր պատասխանը:

Ակտիվություն. Մոդելավորում, էջ 105
Խաղանք «Սամահա»

Փոքր խմբերում՝ տրիադներում (եռյակներում) անցկացրեք փոխունկնդրման 3 փուլ: Յուրաքանչյուր փուլը տևում է 5 րոպե: Հանգամանորեն ընթերցե՛ք այս **հրահանգները.**

1. Բաժանվե՛ք եռյակների: Ամրացրե՛ք ամրակներ. A, B, C:

Բաժանե՛ք դերերը. **A** – հռետոր, **B** – ունկնդիր, **C**- արբիտր:

2. A հռետորը ընտրում է ստորև տրված թեմաների թվարկությունից (էջ 104) որևէ մի թեմա և խոսում է հարցի մասին, արտահայտում է տեսակետներ, ուշադրությունը կենտրոնացնում է կարևոր հարցերի վրա:

B ունկնդիրը ուշադրությամբ լսում է A-ին և այնուհետև տրիադայում՝ եռյակում, իր բառերով կրկնում է լսածը, ամփոփում է հռետորի պատմածը և կայացնում է եզրակացություն: Անհասկանալիության դեպքում հռետորն իրավունք ունի դադարեցնել նրա պատմածը և ուղղել:

C արբիտրը հետևում է, որպեսզի ունկնդիրը հռետորի պատմածից որևէ բան բաց չթողնի կամ չխեղաթյուրի այն, ոչինչ չավելացնի կամ մեկնաբանություն չկատարի: Այնուհետև կրկնության համար 10-միավորանոց սանդղակի վրա ունկնդրին միավոր է գրում:

Խաղի ընթացքում յուրաքանչյուր մասնակից 3 անգամ փոխում է դերը:

II փուլում B մասնակիցը դառնում է հռետոր - ընտրում է թեման և քննարկում է, C մասնակիցը ունկնդիր է, իսկ A մասնակիցը՝ արբիտր:

Հաջորդ փուլում դերերը կրկին փոփոխվում են և ամեն ինչ կրկնվում է:

Փուլ	Հռետոր	Ունկնդիր	Արբիտր
I	A	C	B
II	B	A	C
III	C	B	A

Հիշե՛ք:

- Յուրաքանչյուր փուլում միայն հռետորն է ընտրում թեման:
- Տրիադայում՝ եռյակում, մեկ անգամ ընտրված թեմայի կրկնությունը անթույլատրելի է:
- Յուրաքանչյուր փուլը 5-րոպեանոց է:
- Հռետորը թեման պետք է տեսաբանի ծավալուն: Անթույլատրելի է միայն մի քանի ընդհանուր պարբերություններով սահմանափակվելը:
- Ուսուցիչը կնախազգուշացնի փուլի մեկնարկի և ավարտի մասին:

Պատրաստվե՛ք խմբային աշխատանքի ավարտի և դասարանի արդյունքների քննարկումից հետո ունկնդիրների կարգից լավագույնները պետք է կարճատև շնորհանդեսում այն թեման ամփոփեն, որից խումբը բարձր գնահատական ստացավ: Այս անգամ միավոր նշանակում է ուսուցիչը:

Գնահատական ստանում է ինչպես ունկնդիրը, այնպես էլ իր փուլի հռետորը և արբիտրը:

Օգնե՛ք միմյանց բարձր գնահատական ստանալու մեջ:

Հրահանգ հռետորների համար.

- կարդացե՛ք թեմաների թվարկությունը,
- ընտրե՛ք ցանկալի թեման,
- պատմելիս ձայնի ելևէջներով առանձնացրե՛ք հիմնական հարցերը,
- ասվածը հիմնավորե՛ք օրինակներով:

Քննարկվելիք թեմաներ.

- օրենքի գերակայություն երկրի տնտեսությունում,
- բնապահպանություն՝ կառավարության տնտեսական գործառույթ,
- արդարացիություն, օրինականություն և հաշվետվություն բիզնեսում,
- շահույթ ստանալու խթաններ,
- ինչո՞ւ է պետությունը պաշտպանում մրցակցությունը,
- ի՞նչ է նշանակում տնտեսական արդարացիություն,
- արդյունավետ իրավական ձևեր փոքր բիզնեսի համար,
- իրական վիճակ Վրաստանի շուկայում,
- շուկայում ֆիրմաների համագոյակցության պայմաններ,
- մրցակցության նշանակությունը ձեռնարկատիրության/բիզնեսի զարգացման համար,
- որքանով պաշտպանված են սպառողների իրավունքները Վրաստանում:

Խաղի ավարտից հետո քննարկե՛ք.

- Որքանո՞վ լավ էիք ունկնդրում:
- Յուրաքանչյուրիդ համար ի՞նչն էր դժվար հռետորի բառերը այլ բառերով շրջաբանելիս:
- Եղա՞վ, արդյոք, դեպք, երբ ունկնդրողը հարցի մասին հռետորից ավելի տեղեկատվություն ուներ: Դժվա՞ր էր նման դեպքում խաղի կանոնները պահպանել, չարտահայտել սեփական կարծիքները:
- Ձեր ո՞ր ունակությունները ցույց տվեց խաղը:
- Որքանո՞վ ճիշտ եզրակացություններ կատարեց B մասնակիցը A-ի պատմածից:

Հանձնարարական ուսուցչին. Ինչ վերաբերում է ակտիվությունների ամփոփմանը, կրկին հարցնում ենք աշակերտներին՝ ի՞նչ արտադրանք են մտադիր պատրաստել, մնացե՞լ են, արդյոք, անպատասխան հարցեր, որոնք հետևում են նրանց համալիր առաջադրանքների ներկայացմանը և հետադարձ կապին, դրանում օգնում է սկզբից եթե մշակված զարգացնող գնահատման վերլուծական խորագիրը:
Մոդելավորման ակտիվությունը իրականացնում կամ չեք իրականացնում ձեր ժամանակի բյուջեին համապատասխան:
Ակտիվություններն ավարտելուց հետո կրկին ուշադրությունը կենտրոնացնում եք համալիր առաջադրանքով կատարված արտադրանքի բնութագրիչների վրա և աշակերտներին տալիս եք մինչև շնորհանդեսը իրենց հետաքրքրող հարցերը ներկայացնելու հնարավորություն:
Շնորհանդեսից հետո կիրառում ենք նաև աշակերտների **ինքնագնահատման խորագիրը,** որը երկրորդ գլխի վերջում (էջ 108) է տրված:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Նկարագրե՛ք՝ ինչպե՞ս է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը.

- Ինչպե՞ս եք պլանավորում/պլանավորեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ի՞նչ էիք նկատառում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Ունեի՞ք, թե՞ ոչ նախնական պլան առաջադրանքի վրա աշխատանքի համար: Որքանո՞վ այդ պլանը օգնեց աշխատանքի գործընթացում: Անհրաժեշտ էր, արդյոք, նախնական աշխատանքային պլաններում փոփոխություններ մտցնելը: Ինչո՞ւ:
- Ու՞մ հետ և ինչպե՞ս համագործակցեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Հանդիպեցի՞ք, թե՞ոչ տարբերվող կարծիքներ ունեցող մարդկանց: Որքանո՞վ օգնեց այլ մարդկանց հետ համագործակցությունը:
- Կիրառեցի՞ք, թե՞ ոչ տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Ինչո՞ւմ օգնեց տեխնոլոգիաների կիրառումը:
- Ի՞նչ արտադրանք ստեղծեցիք համալիր առաջադրանքի տեսքով:

Բացատրեք՝ ինչ գիտելիք և փորձ ձեռք բերեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:

- Ի՞նչ հարցի է վերաբերում ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ գիտեիր ուսանելի հարցի մասին: Ի՞նչ նոր բան իմացար: Լրացուցիչ ի՞նչ կուզենայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացության հանգեցրեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ինչո՞վ են հաստատվում ձեր կողմից կատարված եզրակացությունները:
- Ու՞մ համար և ինչո՞ւ է ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը օգտակար և հետաքրքիր:

- Ի՞նչ միջոցներից օգտվեցիք ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար:/Համալիր առաջադրանքը ավելի լավ կատարելու համար:

Գնահատե՛ք՝ որքանով արդյունավետ և հետաքրքիր էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:

- Գնահատե՛ք՝ որքանով ստացվեց առաջադրանքի կատարումը: Որքանո՞վ այն համընկավ ուսուցչի սպասելիքներին:
- Ի՞նչը կատարեցիք ինքնուրույն: Ինչո՞ւմ անհրաժեշտ եղավ այլոց օգնությունը:
- Ի՞նչ գործոններ նկատի ունեցաք/պետք է նկատի ունենաք այն բանի համար, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լիներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ և որքանո՞վ է տարբերվում ձեր կողմից կատարված առաջադրանքը համադասարանցիների աշխատանքներից:

Ի՞նչ կկատարեիք այլ կերպ, եթե նորից սկսեիք առաջադրանքի վրա աշխատել:

Աղյուսակ 3

Որոշող գնահատականի խորագիր

Թեմա. Ձեռնարկատիրություն և բիզնես **Հիմնական հարց** – Պետություն և բիզնես (ենթատեքստ-օրինակ՝ «Չիզքեյքեր», էջ 69-71) **Աշակերտ.**		
Գնահատման չափանիշներ	**Առավելագույն միավոր**	**Մեկնաբանություն**
Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա. • հիմնավորել Վեկոյի անձնական զարգացման (գաղափարներ, կրթություն, շուկայի մշտադիտարկում) հետքերով իր՝ որպես ձեռնարկատիրոջ, դրական ազդեցությունը ընտանիքի/աշխատակիցների/սպառողների, գործընկերների/հասարակության վրա:	1,5	
Ժողովրդավարություն – Աշակերտը պետք է կարողանա. • Վեկոյի իրավաբանական կրթությունը կապել սեփական տնտեսական իրավունքները և պարտականությունները ավելի լավ ըմբռնելու և համապատասխանաբար բիզնեսի օրինական ձևավորման/զարգացման հետ: Վեկոյի օրինակով քննարկել, թե ինչպես է հնարավոր պետության և բիզնեսի միջև հարաբերություններում կանխարգելել	1,5	

դիմադրությունները/երկընտրանքները (բիզնեսի գրանցում, հարկերի վճարում, արտադրանքի որակի մասին հոգածություն...):		
Քաղաքացիական մասնակցություն – Աշակերտը պետք է կարողանա. • կապակցել Վեկոյի բիզնեսը հասարակական հիմնախնդիրների նկատմամբ սոցիալական պատասխանատվության կիսման հետ (կանանց ուժեղացում, անապաստան կենդանիների մասին հոգածություն), գնահատել ձեռնարկատիրոջ հնարավորությունները սեփական բիզնես գաղափարների փաստաբանության և ռեսուրսների ձեռք բերման-ընտրության տեսանկյունով:	**1,5**	
Կայուն զարգացում – Աշակերտը պետք է կարողանա. • վերլուծել՝ չիզքեյքերների բիզնեսը գաղափարում և նաև հետո որքանո՞վ էին նկատառված կայուն զարգացման սկզբունքները:	**1,5**	

Որոշող գնահատման առաջարկված խորագիրը հիմնված է առակայական չափորոշչում տրված **թեմայի սահմաններում արդյունքներին հասնելու ինդիկատորներին (թիրախային հասկացությունների համաձայն)** և նախատեսված է ամփոփիչ առաջադրանքի գնահատման համար, ինչը իր հերթին նպատակամղված է հասկացություններին կողմնորոշմամբ թեմայի կամ դրա մասի ամփոփմանը**:**

Ամփոփիչ առաջադրանքի համար խորհուրդ է տրվում ընտրել ենթատեքստ-օրինակ և նախապես տալ աշակերտներին ծանոթանալու/վերլուծելու համար: Նրանք կգիտենան, որ մոտավորապես մեկ շաբաթում իրենք պետք է ամփոփիչ առաջադրանքը կատարեն առաջարկված հարցերի համաձայն, որոնք կապված կլինեն տրված ենթատեքստ-օրինակին:

Այս դեպքում ընտրե՛ք ենթատեքստ-օրինակ «Չիզքեյքերը» (էջ 69-71), աշակերտը նախապես ծանոթացել է դրան: Նշանակված օրը հանձնարարում ենք առաջադրանքի պայմանը.
«Ծանոթացեք «Չիզքեյքերի» պատմությանը և պատրաստե՛ք փաստարկված էսսե (150-200 բառ). «Ինչո՞ւ է հաջողակ չիզքեյքերի բիզնեսը»:

Աշխատանքում ընդգծված ներկայացրեք.

- Ինչպե՞ս է զարգանում Վեկոն անհատապես ձեռնարկատիրության գործընթացում և ի՞նչ դրական ազդեցություն ունի նրա գործը շրջապատում գտնվողների/սոցիումի/հասարակության վրա:
- Ինչպե՞ս և ինչո՞ւ է Վեկոն նկատի առնում սեփական և ուրիշների տնտեսական և այլ իրավունքները և պարտականությունները: Որքանո՞վ կարելի է սկզբից ևեթ խուսափել հակասությունից պետության և բիզնեսի միջև (Վեկոյի բիզնեսի օրինակով):

- Ինչպե՞ս է կիսում Վեկոյի բիզնեսը սոցիալական պատասխանատվությունը: Ինչպե՞ս կգնահատեք Վեկոյի հնարավորությունը բիզնես գաղափարի փաստաբանություն անելու և համապատասխան ռեսուրսներ ձեռք բերելու հարցում:
- Վերլուծե՛ք, չիզքեյքերի բիզնեսում ինչպե՞ս են նախատեսված կայուն զարգացման սկզբունքները:

Ցուցում. Պատասխանները գրում եք ոչ թե առանձնացված, այլ էսսեի տեքստում ինտեգրված ձևով:

«Ձեռնարկատիրություն և բիզնես» պարտադիր թեմայի **երրորդ** հարցն է **«Ձեռնարկատերերի պատասխանատվությունը»:** Այս հարցի առնչությամբ աշակերտի նախնական գիտելիքի ակտիվացումը կատարվում է հիմնական ենթատեքստ-օրինակով՝ **«Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները»** և բովանդակությամբ դրան մոտ գտնվող օրինակներով.

Հիմնական ենթատեքստ-օրինակ և օրինակներ համեմատության համար	**Ռեսուրսներ**
Հիմնական ենթատեքստ-օրինակ «Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները»	• **Դասագիրք, էջ 111** Ուսուցչի գիրք, հավելված 3, էջ 180
Օրինակ համեմատության համար 1. Սոցիալական ձեռնարկություն 6-ի պատմությունը	• **Դասագիրք, էջ 117-120**
Օրինակ համեմատության համար 2. Վրացի բարերարարների պատմություններ	• **Դասագիրք, էջ 130-135**
Օրինակ համեմատության համար 3. «Նեստլե»-ն Հնդկաստանում	• **Դասագիրք, էջ 143**

Պարզաբանում. Նոր գիտելիքի կոնստրուկտիվ կառուցումն ապահովելու համար կարևոր է աշակերտներին առաջարկենք նրանց գիտելիք-փորձին հասանելի այնպիսի օրինակներ (մասնավոր դեպքեր, իրավիճակներ, պատմություններ), որոնց քննարկում-վերլուծումը կօժանդակի նրանց թիրախային գիտելիքը (ենթահարցը, ենթահասկացությունները, թիրախային հասկացությունները) ըմբռնելուն և յուրացնելուն: Ենթատեքստ–օրինակները ճիշտ այդպիսի օրինակներ կարող ենք անվանել: Այդ պատմությունները պետք է ընտրվեն պարտադիր թեմաների շրջանակներում հստակեցված հիմնական հարցերի համաձայն և պետք է ցույց տան կենսական իրավիճակներ (երկընտրանքներ, էմոցիաներ):

Այստեղ ևեթ ընդգծված նշում ենք, որ ուսուցչի գրքում առաջարկվող հիմնական ենթատեքստ-օրինակները կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, այսինքն՝ կարող եք հիմնական գործառույթը վերագրել դասագրքում ներկայացված մեկ այլ ենթատեքստ-օրինակի և դրա վրա հիմնվելով ձևակերպել համալիր առաջադրանքի պայմանը:

Ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հիմնական ենթատեքստ-օրինակի վերլուծության վրա: Դրա մշակումը կատարվում է խորքային՝ ենթատեքստը, էմոցիոնալ-սոցիալական տեսանկյունները նկատի ունենալով, իսկ համեմատության համար ընտրված օրինակները հիմնականում ֆոնային գիտելիքի դեր են կատարում:

Ենթատեքստ-օրինակի առաջնային մշակման ժամանակ ուսուցիչը ուղղորդող հարցերով, ակտիվություններով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն մանրամասնությունների վրա, որոնք մշակվող ենթահասկացությունների, թիրախային հասկացությունների հետ կապի մեջ են: Օրինակ՝ կոնկրետ դեպքում ենթատեքստ - օրինակի այն ծավալի վրա ենք փորձում կենտրոնանալ, որոնք հանգուցային հարցերում էլ (ինչ գործոններ և ինչու են պայմանավորում պետության միջամտությունը ազատ շուկայի կարգավորման գործում: Ինչպե՞ս պատկերացնել պետության առջև ծառացած երկընտանքները/մարտահրավերները մարդու իրավունքների պաշտպանության պարտականությունների և տնտեսական ազատության սկզբունքի պահպանության կապակցությամբ) որոշված են:

<u>Աղյուսակ /թիրախային գիտելիքի որոշման համար</u>

Թեմա Ձեռնարկատիրություն և բիզնես **Հիմնական հարց** – Ձեռնարկատերերի պատասխանատվություն **Հիմնական ենթատեքստ-օրինակ** -«Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները			
Ենթահարց	**Ենթահասկացություններ**		**Թիրախային հասկացություն**
„Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները (Որպես գործընկերություն ընտանեկան բռնության զոհերի վերապատրաստման և զբաղվածության համար)	Գործընկերություն	Քաղաքացիական մասնակցության սանդղակ	**Քաղաքացիական մասնակցություն (Արդյունքներ. 2.4)**
	Արժանապատիվ աշխատանք և տնեսական աճ	Կայուն զարգացման նպատակներ	**Կայուն զարգացում (Արդյունք. 3)**

Որոշելու համար, թե ինչ պետք է գիտենա աշակերտը ենթահարցի հետ կապված, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Աղյուսակ 1),** որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային

ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի ամբողջացված մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է մի քանի փուլում.

ա) նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և ուսանում-ուսուցման գործընթացը պլանավորելու փուլում (**ինչ ակտիվություններ, մեթոդներ, մարտավարություններ պետք է կիրառենք, որպեսզի աշակերտին օգնենք այս սպասումը իրական արդյունքի վերածելու մեջ),**

բ) հաջորդ ուսանում-ուսուցման գործընթացի մոնիթորինգի համար (**ինչպե՞ս է ընթանում գործընթացը, հայտնվեցի՞ն սպասելիքներին համապատասխան նշաններ: Ի՞նչ հարցեր պետք է օգտագործեմ որպես փայտամած),**

գ) ուսանում-ուսուցման գործընթացում և համալիր առաջադրանքը ավարտելու ժամանակ կոնկրետ հետադարձ կապի ձևավորման մեջ **(սպասելիքներից ո՞ր արտահայտությունները հարմար կլինեն աշակերտի արդյունքը նկարագրելու, խրախուսելու, խորհուրդ տալու համար),**

դ) վերջում՝ միջանկյալ և երկարաժամկետ նպատակների վրա աշխատանքը՝ մանկավարժական պրակտիկայի կառուցվածքային ինքնագնահատման համար **(իրատեսական սպասելիքները ո՞ր հաստատուն պատկերացման՝ Հաստ. պատկ. կապակցությամբ որոշեցի: Ո՞ր սպասելիքի համար գտա ճիշտ լուծումը ակտիվությունների և մեթոդների տեսքով: Որտե՞ղ պետք է փոխեմ մոտեցումը):**

Թիրախային հասկացություն Ենթահարց	**Թիրախային հասկացության հետ կապված հաստատուն պատկերացումներ**	**Սպասելիքներ** <u>**Աշակերտը կարող է.**</u>	**Ուսուցչի մեկնաբանություն Աշակերտը կարողացավ.**
Քաղաքացիական մասնակցություն (Արդյունքներ. 2.4.) **«Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները** (Որպես գործընկեր ընտանեկան բռնության զոհերի վերապատրաստ-	1.Ժողովրդավարական պետությունում ցանկացած մարդ կարող է ազդեցություն գործել երկրի սոցիալ և քաղաքական կյանքի վրա:	«Փենովանիի» օրինակին հենվելով նկարագրել սոցիալական ձեռնարկատիրությունը՝ որպես քաղաքացիական մասնակցության ձև/արարք, որի գլխավոր նպատակը բռնության զոհ կանանց մասնագիտական պատրաստումը, զբաղվածությունն է, իսկ բիզնեսը (շահույթը) միջոց է այս սոցիալական հիմնախնդիրը նվազեցնելու համար:	
	2. Ակտիվ քաղաքացիները տարբեր ճանապարհներով (սոցիալական նախագծերի պլանավորման իրականացմամբ, կամավորական գործունեությամբ, փաստաբանությամբ, շահարկությամբ) հոգում են հասարակական հիմնախնդիրների	Ոչ կառավարական կազմակերպության այս նախագիծը քննարկել՝ որպես քաղաքացիական մասնակցության սանդղակի գործընկերության համապատասխան աստիճան, որքանով էլ բռնության զոհ կանանց զբաղվածության և աջակցության նախագծի համար անհրաժեշտ են տարբեր պետական, հասարակական և բիզնես	

ման և զբաղվածության համար) **Կայուն զարգացում** (Արդյունք. 3) **«Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունք-ները** (որպես գործընկեր ընտանեկան բռնության զոհերի վերապատրաստման և զբաղվածության համար)	կարգավորման մասին: Այդ ժամանակ նրանք համագործակցում են միմյանց հետ, հասարակական ինստիտուտների, ոչ կառավարական կազմակերպությունների, պետական կառույցների հետ:	կազմակերպությունների աջակցությունը և նրանց հետ համագործակցությունը: Ստեղծել սոցիալական ձեռնարկատիրություն՝ որպես գործընկերություն սոցիալական հիմնախնդիրների կարգավորման համար:	
	3.Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնության գործողությունները:	Գնահատել սոցիալական ձեռնարկատիրության, որպես ոչ բռնի ուղիով ձեռք բերված ինստիտուցիաների աջակցության էություն և նշանակություն սոցիալական խնդիրների կարգավորման հարցում:	
	1.Ռեսուրսներն օգտագործելիս կարևոր է հասարակության հետաքրքրությունների և ապագա հեռանկարի նկատառումը:	Բացատրել «Փենովանի» ձեռնարկության նշանակությունը այնտեղ աշխատող կանանց և նրանց զավակների ապագայի հեռանկարների նկատառումով:	
	2. Լոկալ արարքներին ուղեկցում են գլոբալ արդյունքները (օրինակ՝ շրջակա միջավայրի մասին հոգածությունը մի հայացքով աննշան արարքներից, օրինակ՝ աղբը գետին չգցելուց, պոլիէթիլենային տոպրակներից հրաժարվելուց է սկսվում):	Հստակեցնել «Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները» լոկալ և գլոբալ սոցիալական հիմնախնդիրների կայուն նվազեցման մեջ:	

Ստորև տրված միջանկյալ/համալիր առաջադրանքի մատրիցայում **(Աղյուսակ 2.)** տրված են համալիր առաջադրանքի պայմանը, գնահատման չափանիշները և իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, ուղղորդող հարցեր և կարճ հանձնարարականներ ուսուցչին):

Աղյուսակ 2.

Հարց. Ձեռնարկատերերի պատասխանատվություն
Ենթահարց. «Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները» (որպես գործընկերություն ընտանեկան բռնության զոհերի վերապատրաստման և զբաղվածության համար) **Ենթահասկացություններ.** *Գործընկերություն՝ քաղաքացիական մասնակցության սանդղակ,* **Թիրախային հասկացություն – քաղաքացիական մասնակցություն (Արդյունք. 2, 4)** **Ենթահարց. «**Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները» (որպես գործընկերություն ընտանեկան բռնության զոհերի վերապատրաստման և զբաղվածության համար) **Ենթահասկացություններ.** Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ. կայուն զարգացման նպատակներ **Թիրախային հասկացություն. Կայուն զարգացում (Արդյունք. 3)**
Հանգուցային հարց - Ինչո՞ւ կարող ենք սոցիալական ձեռնարկատիրությունը քննարկել որպես իրական քաղաքացիական մասնակցություն: - Ինչպե՞ս ցույց տանք **գովազդային բուկլետում, թե** ինչո՞ւ է կոնկրետ սոցիալական ձեռնարկությունը սոցիալական փոփոխությունների գործակալ:
Համալիր առաջադրանք Ծանոթացե՛ք «Փենովանի» սոցիալական ձեռնարկության պատմությանը, այլ տեղեկատվությունների և կոնկրետ պատմությանը և ուրիշ օրինակներ նկատի ունենալով պատրաստե՛ք գովազդային բուկլետ. «Փենովանի» ձեռնարկությունը՝ սոցիալական փոփոխությունների գործակալ: **Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.** • Ո՞ր սոցիալական հիմնախնդրի կարգավորումն է ներկայացնում «Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքների առաքելությունը: Որքանո՞վ ճիշտ են սահմանված այս հիմնախնդիրն առաջացնող պատճառները և դրանց նշանակությունը: **(Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 1.)** • Վերլուծե՛ք սոցիալական հիմնախնդրի կարգավորման ընտրած ուղու արդարացիությունը և սոցիալական ձեռնարկատիրությունը՝ որպես մասնակցության սանդղակի աստիճան «Փենովանիի» օրինակով: **(Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 2.3.)** • Ինչպե՞ս են «Փենովանի» ձեռնարկության գործունեությունում նախատեսված կայուն զարգացման սկզբունքները: Քննարկե՛ք կոնկրետ ուղղությունների համաձայն: **(Կայուն զարգացում, Հաստ.. պատկ. 1.2.)**

Թիրախային հասկացության/հասկացությունների կապակցությամբ հաստատուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ՝	**Գնահատման չափանիշներ** Աշակերտը կարող է.	**Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.**
Քաղաքացիական մասնակցություն 1. Ժողովրդավարական պետությունում ցանկացած մարդ կարող է ազդեցություն գործել երկրի սոցիալական և քաղաքական կյանքի վրա: 2.Ակտիվ քաղաքացիները տարբեր ճանապարհներով (սոցիալական նախագծերի պլանավորման իրականացմամբ, կամավորական գործունեությամբ, փաստաբանությամբ, շահարկմամբ) հոգում են հասարակական հիմնախնդիրների կարգավորման մասին: Այդ ժամանակ նրանք համագործակցում են միմյանց հետ, հասարակական ինստիտուտների, ոչ կառավարական կազմակերպությունների, պետական կառույցների հետ: 3. Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնության գործողությունները: **Կայուն զարգացում** 1. Ռեսուրսներն օգտագործելիս կարևոր է հասարակության հետաքրքրությունների և ապագա հեռանկարի նկատառումը: 2. Լոկալ արարքներին ուղեկցում են գլոբալ արդյունքները (օրինակ՝ շրջակա միջավայրի մասին հոգածությունը մի հայացքով աննշան	**Քաղաքացիական մասնակցություն.** • Վերլուծել սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ առաջացնող պատճառները, գնահատել դրանց նշանակությունը (Հաստ. պատկ. 1), • արտահայտել կարծիքներ՝ որպես քննարկման առարկա ընտրված սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների լուծման ուղիների մասին, քննարկելիս կիրառել քաղաքացիական մասնակցության ձևերի հետ կապված գիտելիք: **(Հաստ. պատկ. 2.3.)** **Կայուն զարգացում.** • Լոկալ արարքների հետ գլոբալ արդյունքների կապակցում: **(Հաստ. պատկ. 1.2.)**	• Ո՞ր սոցիալական հիմնախնդրի կարգավորումն է ներկայացնում սոցիալական ձեռնարկություն «Փենովանիի» առաքելությունը: Որքանո՞վ ճիշտ են սահմանված այս հիմնախնդիրն առաջացնող պատճառները և դրանց նշանակությունը: **(Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 1.):** • Վերլուծե՛ք սոցիալական հիմնախնդրի կարգավորման ընտրած ուղու արդարացիությունը և սոցիալական ձեռնարկատիրությունը՝ որպես մասնակցության սանդղակի աստիճանը «Փենովանիի» օրինակով: **(Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 2.3.)** • Ինչպե՞ս են նախատեսված «Փենովանի» ձեռնարկության գործունեությունում կայուն զարգացման սկզբունքները: Քննարկե՛ք կոնկրետ ուղղությունների համաձայն: (**Կայուն զարգացում, Հաստ.. պատկ. 1.2.)**

արարքներից, օրինակ՝ աղբը գետին չգցելուց, պոլիէթիլենային տոպրակներից հրաժարվելուց է սկսվում):		

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I – Ծանոթացում համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրս 1. Դասագիրք, **III գլուխ: Ձեռնարկատերերի պատասխանատվություն,** համալիր առաջադրանքի պայման, էջ 110

Ռեսուրս 2. Բուկլետի ստեղծման ծրագիր https://www.youtube.com/watch?v=ysS3Cq9AseI

Ռեսուրս 3. Դասագիրք, Գովազդ, էջ 160

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.

- Ի՞նչ է բուկլետը: Դուք երբևէ ստեղծե՞լ եք:
- Ի՞նչ բաղադրիչներից է կազմված այն: (**Տեքստ, տեսողական նյութ):**
- Ինչպիսի՞ն է դրա կառուցվածքը: (**Վերնագիր, նախաբան, ենթահարցեր, հիմնական տեղեկատվություն, եզրակացություն...):**
- Ի՞նչ նպատակ է արտահայտում գովազդային բուկլետը ընդհանո՞ւր առմամբ, կոնկրե՞տ դեպքում): (Ընդհանրապես՝ արտադրանքի, ծառայության հանրայնացումը, այս դեպքում կարող է նա ունենալ նաև սոցիալական գովազդի գործառույթ, քանի որ ձեռնարկությունը կողմնորոշված է հասարակության համար նշանակալից սոցիալական կարիքների կարգավորմանը):
- Ինչպե՞ս կարելի է պատրաստել բուկլետ (տպագիր, էլեկտրոնային):

Հանձնարարական ուսուցչին. Բիզնես գովազդի պատճառների, ձևերի և միջոցների վրա աշխատել ձեզ հարկ կլինի նաև երկրորդ փուլում, նկատի ունենք մատնանշված ռեսուրս 3-ը: Այդ մասին հաղորդեք աշակերտներին տեղեկատվություն և բացատրեք, որ այդ ժամանակ ավելի լավ գլուխ կհանեն համալիր առաջադրանքի արտադրանքի պատրաստման մանրուքներում:

Համալիր առաջադրանք

- Ձեր բառերով ձևակերպեք, ինչին է վերաբերվում այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատեք մի քանի օրվա ընթացքում:
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք ուրիշ ժամանակ կատարե՞լ եք, արդյոք:

Ուշադրություն:

Համալիր առաջադրանքի վրա աշխատանքը հիմնականում ընթանում է դասաժամին և միայն բացառիկ դեպքում ենք կիրառում տնային առաջադրանքը:

Փուլ II -Համալիր առաջադրանքի վրա աշխատանք
Թիրախային գիտելիք.

Ենթահարց - «Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները» (որպես գործընկերություն ընտանեկան բռնության զոհերի վերապատրաստման և զբաղվածության համար)
Ենթահասկացություններ. *Գործընկերություն՝ քաղաքացիական մասնակցության սանդղակ,*

Թիրախային հասկացություն, – քաղաքացիական մասնակցություն (Արդյունք. 2, 4)
Ենթահարց. «Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները» (որպես գործընկերություն ընտանեկան բռնության զոհերի վերապատրաստման և զբաղվածության համար)
Ենթահասկացություններ. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ, կայուն զարգացման նպատակներ,

Թիրախային հասկացություն, կայուն զարգացում **(Արդյունք 3)**
Ենթատեքստ-օրինակների առաջնային մշակում

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 111
Առաջին փուլ
Ծանոթացե՛ք «Փենովանի» սոցիալական ձեռնարկության պատմությանը, այլ տեղեկատվությունների և կոնկրետ պատմությանը և ուրիշ օրինակներ նկատի ունենալով լրացրե՛ք տրված աղյուսակի առաջին սյունակը. գրառե՛ք, ի՞նչ էր ձեզ համար հետաքրքիր, կարևոր, նոր, ի՞նչ հարցեր առաջացան:

Երկրորդ փուլ
Կազմե՛ք խմբեր, փոխանակե՛ք ձեր կարծիքները և հարցերը միմյանց հետ, խմբում կրկին քննարկեք տրված տեքստերը և երկրորդ սյունակում մտցրե՛ք խմբում արտահայտված ձեզ համար հետաքրքիր, կարևոր կարծիքները, հարցերը, որոնց պատասխանը ձեզ հետաքրքրում է:

Երրորդ փուլ

Խմբերի շնորհանդեսի և բանավեճի ժամանակ ուշադրությամբ լսե՛ք համադասարանցիներին, ուսուցիչների հետադարձ կապը և երրորդ սյունակում մտցրե՛ք ձեզ համար հետաքրքիր կարծիքները:

Անհատական գրառումներ	**Խմբային գրառումներ**	**Գրառումներ դասարանային բանավեճից և ուսուցչի հետադարձ կապից**
1. Ստեղծեց փուռ, որտեղ կանայք համեղ արտադրանք են պատրաստում և լավ վաճառում են:	Փուռը ստեղծվեց բռնության զոհ կանանց զբաղվածության համար, որպեսզի նրանք կարողանան իրենց և իրենց երեխաներին պահել-մեծացնել:	Ոչ կառավարական կազմակերպությունը ընտանիքում բռնության զոհ կանանց համար, որոնք չունեին մասնագիտություն, աշխատանք, ստեղծեց ձեռնարկություն, կանանց նախ մասնագիտություն սովորեցրին, հետո աշխատանքի ընդունեցին և արժանապատիվ աշխատանքի հնարավորություն տվեցին:
2.		Սոցիալական ձեռնարկատիրությունը դա սովորական բիզնես չէ, որի գլխավոր նպատակը շահույթն է: Դա սոցիալական հիմնախնդիրների կարգավորմանը կողմնորոշված նախագիծ է, որի գլխավոր նպատակը հասարակական խնդիրների նվազեցումն է:
3.		Այսպիսի նախագծերի իրականացման համար քաղաքացիական ակտիվիստները համագործակցում են պետական և հասարակական կառույցների, միմյանց, միջազգային կազմակերպությունների հետ, որպեսզի միասնաբար գտնեն ռեսուրսներ:
4.		Սոցիալական ձեռնարկության արդյունքները դժվար հաշվելի են, որովհետև ոչ-ոք չգիտի, թե ինչպիսի բռնությունից, որքան արցունքներից ու վիրավորանքներից են խուսափել բենեֆիցիարները, կամ ինչ գին ունի այս խաղաղությունը:
5.		Հաճախ վաղ ամուսնությունը վեր է ածվում ընտանեկան բռնության նախապայմանի, քանի որ վաղ ամուսնացածների համար սահմանափակվում է կրթություն, մասնագիտություն ստանալու իրավունքը:

6.		Ամենագլխավորը այն հանգամանքն է «Փենովանի»-ում, որ կանայք ձեռք բերեցին մասնագիտություն և արժանապատվորեն աշխատում են, ինչը աջակցում է նրանց տնտեսապես ամրապնդվելուն:

Հանձնարարական ուսուցչին. Աղյուսակում տրված է օրինակ՝ որպես նմուշ, այսինքն՝ դրա համաձայն ինչպես կկարողանան աշակերտները ինքնուրույն կամ խմբովի կազմել էական հարցերը սոցիալական ձեռնարկության առաքելությունից, նպատակներից և արդյունքներից, կորոշվի նաև ձեր հետադարձ կապի անհրաժեշտությունը: Ամփոփումը պետք է կատարվի այն տեսակետով, որ սոցիալական ձեռնարկատերերը հոգում են հիմնախնդիրն առաջացնող պատճառների նվազեցման մասին: Նրանց համար շահույթը գլխավոր նպատակը չի ներկայացնում, այդ շահույթը ընկալվում է միայն որպես սոցիալական հիմնախնդիրները կարգավորելու միջոց:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 115
Վերևում տրված հիմնական ենթատեքստ-օրինակի և ձեր նախորդ տեղեկատվության վրա հենվելով՝ պատասխանե՛ք **հարցերին.**

- Ձեր բառերով փորձե՛ք ձևակերպել սոցիալական ձեռնարկատիրության պարզաբանումը: Համեմատե՛ք ձեզ հայտնի ձեռնարկատիրական գործունեության որևէ օրինակի հետ:
- Ի՞նչ սոցիալական հիմնախնդրի է կողմնորոշված «Փենովանի» սոցիալական ձեռնարկությունը:
- «Սոցիալական» անվանումից ելնելով, ի՞նչ հիմնական առաքելություն, նպատակ ունի այս ձեռնարկությունը:
- Վերհիշե՛ք, ի՞նչ է նշանակում սոցիալական պետություն: Ո՞ւմ պարտականությունն է սոցիալական հիմնախնդիրների մասին հոգատարությունը:
- Ի՞նչ եք կարծում, սոցիալական ձեռնարկատիրությունը պատկանո՞ւմ է քաղաքացիական մասնակցության ձևին:
- Սոցիալական ձեռնարկության միջոցով ի՞նչ ազդեցություն է գործում քաղաքացիական հասարակությունն այս խնդիրների վրա: Ո՞ւմ հետ և ինչպե՞ս է համագործակցում քաղաքացիական սեկտորը (փորձե՛ք նկարագրել գործածելով «գործընկերություն» բառը):
- Վերհիշե՛ք քաղաքացիական մասնակցության սանդղակը: Ձեզ համար ո՞ր սանդղակի հետ է ասոցացվում սոցիալական ձեռնարկատիրությունը: Հիմնավորե՛ք՝ ինչու:

Քաղաքացիական մասնակցության սանդղակ	
Իշխանության վերահսկողություն	Իրական քաղաքացիական մասնակցություն
Իշխանության դելեգիրացում	
Գործընկերություն	

Հրաժեշտ	Խորհրդանշական մասնակցություն
Խորհրդակցում	
Տեղեկացվածություն	
Թերապիա	Մասնակցություն չունենալ
Մանիպուլյացիա (ձեռնածություն անել)	

- Ի՞նչ կապ եք տեսնում «Փենովանի» ձեռնարկության գործունեությունում և կայուն զարգացման նպատակների միջև: Պատասխանը հիմնավորե՛ք:



Աշկտիվություն.
Աշխատե՛ք զույգերով, էջ 116

Ստեղծե՛ք խմբեր, հիշե՛ք արտահայտությունը՝ «Մտածի՛ր գլոբալ, գործի՛ր լոկալ»: Ուշադրությամբ դիտե՛ք **տրված աղյուսակը, որը ներկայացնում է կայուն զարգացման հիմնական տեսանկյունները.**
Հարցեր.

- Ո՞ր տեսանկյունների հետ է կապվում «Փենովանի» սոցիալական ձեռնարկության գործունեությունը:
- Անվանե՛ք լոկալ արարք և գլոբալ հիմնախնդիր, որին այն ուղղված է:
- Ո՞ր գոլբալ նպատակներին է արձագանքում կոնկրետ այդ ձեռնարկության գործունեությունը:
- Բացատրե՛ք՝ ինչո՞ւ եք այդպես կարծում: Հիմնավորե՛ք փաստարկներով:

Քայլ 1. Ո՞ր սոցիալական հիմնախնդրի կարգավորումն է ներկայացնում «Փենովանի» սոցիալական ձեռնարկության առաքելությունը: Որքանո՞վ ճիշտ են սահմանված այս հիմնախնդիրն առաջացնող պատճառները և դրանց նշանակությունը: (Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 1.)

Ռեսուրս. Դասագիրք, Սոցիալական ձեռնարկատիրություն, էջ 111
Աշակերտի գրքում (էջ 129) **տրված օգտակար ռեսուրսներ.**
Սոցիալական ձեռնարկատիրություն. http://geo Economics.ge/?p=13544
Ի՞նչ է սոցիալական ձեռնարկատիրությունը. https://www.youtube.com/watch?v=xInCVNQQWgg&t=50s
Ի՞նչ է սոցիալական ձեռնարկատիրությունը. https://bit.ly/3lHaCXW
Վրացական սոցիալական ձեռնարկություններ. https://bit.ly/3lLFkiG
Նորոր «Գիտելիքի սրճարան». Սոցիալական ձեռնարկություն Ծնորիում. https://bit.ly/3xmNKj4
Սոցիալական ձեռնարկություն. «Սայլակների արտադրամաս». https://bit.ly/3Kb6Iku
Ի՞նչ է սոցիալական ձեռնարկությունը. https://bit.ly/3Sfrh19
Ի՞նչ է սոցիալական ձեռնարկատիրությունը. What Does Social Entrepre- neurship Mean https://bit.ly/3xvlsmF

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ. 116

Ստորև տրված է տեղեկատվություն մի քանի ձեռնարկությունների մասին, որոնք բնութագրվում են յուրահատուկ առանձնահատկություններով:

Ստեղծե՛ք խմբեր, բաժանե՛ք մեկական ձեռարկություն և պատասխանե՛ք **հարցերին.**

- Ի՞նչ նպատակ և առաքելություն ունի ձեռնարկությունը, ինչի՞ համար է հատկացված, ովքե՞ր են զբաղվածները:
- Ձեր կարծիքով, այդ ձեռնարկության գործունեությունը որքանո՞վ է կապվում կայուն զարգացման նպատակների հետ: Կոնկրետ ո՞ր նպատակին և ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Ի՞նչ ընդհանուր հատկանիշներ ունի այս արտադրությունը «Փենովանի» ձեռնարկության հետ:
- Ի՞նչ նմանություն/տարբերություն գոյություն ունի ձեռնարկության և սոցիալական ձեռնարկության միջև:
- Ո՞ր հասարակական խմբի շահերի մասին է հոգում այս ձեռնարկությունը:
- Դրա գործունեությունը կապեք վերևում քննարկված մասնակցության սամդղակի աստիճանների և կայուն զարգացման տեսանկյունների հետ:
- Համընկնո՞ւմ է, արդյոք, գրքում տրված սոցիալական ձեռնարկության երկու բացատրության բովանդակությունը ձեր պատկերացման հետ: Ի՞նչ կավելացնեք/կփոփոխեք:

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 123
Գրքում տրված տեղեկատվության հիման վրա կազմեք պարզ սխեմա, որը կներկայացնի սոցիալական ձեռնարկատիրության հիմնական ակտորներին (քաղաքացիական սեկտոր, բիզնես, զբաղվածներ, նպատային խումբ, օգտատերեր, հասարակություն...) և դրանց միջև առնչությունները: Սխեմային կցեք սոցիալական ձեռնարկատիրության էությունն արտացոլող 2-3 կարգախոս:

Հանձնարարական ուսուցչին. Այստեղ կեթ առաջարկում ենք սխեմայի և կարգախոսների պարզ նմուշներ.
Սոցիալական ձեռնարկություն_հոգատարության ձեռնարկություն: Սոցիալական փոփոխությունների գործակալ: Հոգատարություն՝ կատարելով:



Քայլ 2. Վերլուծե՛ք սոցիալական հիմնախնդրի կարգավորման ընտրած ուղու արդարացիությունը և սոցիալական ձեռնարկատիրությունը՝ որպես մասնակցության սանդղակի աստիճան՝ «Փենովանիի» օրինակով: **(Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 2.3.)**

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 126
Սոցիալական ձեռնարկատիրության հետազոտողները առանձնացնում են սոցիալական ձեռնարկատիրության էական բնութագրիչները: Այդ բնութագրիչները տրված են աղյուսակ 1-ում (էջ 126-127): Համապատասխանեցրե՛ք յուրաքանչյուրին գործողությունների օրինակներ «Փենովանի» ձեռնարկության և ստորև տրված երեք ձեռնարկությունների գործունեությունից:

	Սոցիալական ձեռնարկության համապատասխան գործողության օրինակ

Հասարակական սեկտորում սոցիալական ձեռնարարկատերերը **փոփո---խությունների գործակալների** դեր են կատարում.	**«Փենովանի» ձեռնարկություն**	**Պայուսակների ձեռնարկություն**	**«Specialisterne» ընկերություն**	**«NextDrop» ընկերություն**
Սոցիալական շահույթի ստեղծման և պահպանման (և ոչ թե անձնական շահույթ ստանալու) առաքելության նախանշմամբ:	(Օրինակ. բռնության զոհ կանանց սոցիա-լականացում և զբաղ-վածություն)			
Առաքելության կատարման համար նոր հնարավորությունների հայտնա-բերմամբ և կիրառմամբ:				
Ինովացիաների, հարմարվածության և ուսանելու անընդհատ գործընթացին ընդգրկվածությամբ:				
Եղած ռեսուրսներով, առանց իրենց սահմանափակելու, համարձակ գործունեությամբ:				
Նպատակային խմբերի և ստացած արդյունքների նկատմամբ բարձր պատասխանատվության ցուցա-դրությամբ:				

Հանձնարարական ուսուցչին. Կատարված ակտիվությունը ամփոփելու համար խնդրե՛ք աշակերտներին մտածել այն մասին, թե «Փենովանի», նաև այլ սոցիալական ձեռնարկությունների իրավիճակը քաղաքացիական մասնակցության սանդղակի ո՞ր աստիճանին է ասոցացվում և ինչո՞ւ: Համեմատություն կատարե՛ք նաև այս առնչությամբ:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 128

- Ծանոթացե՛ք ստորև տրված իրավիճակին և պատասխանե՛ք հարցերին.
- Ի՞նչ գործարարություն է վարում Լելան իր գյուղում:
- Ի՞նչ գործարարություն սկսեց Լելան վարդեր վաճառելուց ստացած եկամուտներով:
- Ինչո՞վ է տարբերվում նրա գործունեությունը ձեռնարկատիրական ստանդարտ գործունեությունից:
- Ինչի՞ համար է ծախսում Լելան ստացած եկամուտը/շահույթը:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակին է համապատասխանում Լելայի գործարարությունը:
- Ի՞նչը պետք է դրդի մարդուն/մարդկանց, որպեսզի մեկ գործունեությամբ ստացած շահույթը ներդնի/ներդնեն մյուս՝ ոչ շահութաբեր գործունեության մեջ:
- Ձեր կարծիքով Լելայի գործարարությունը որքանո՞վ է երկարաժամկետ: Ի՞նչ է նրա երկարատևության երաշխիքը:
- Ձեր համայնքում սոցիալական ձեռնարկատիրության հետ կապված ի՞նչ մտահոգացում ունեք/առաջացավ:
- Ինչպե՞ս կօգնի այդ գաղափարի իրականացումը ձեր համայնքի անդամներին:
- Եթե դուք ընդունեիք պետական որոշումներ, ինչպե՞ս կգործեիք, ի՞նչ արտոնություններ կսահմանեիք սոցիալական ձեռնարկությունների համար:

Ռեսուրս. Դասագիրք, Սոցիալական ձեռնարկատիրությո՞ւն, թե՞ բարեգործություն, էջ՝ 130

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 130

Կազմե՛ք 3 խումբ, բաժանե՛ք ստորև տրված մեկական պատմություն, ծանոթացե՛ք Դավիթ Սարաջիշվիլիի, Զուբալաշվիլի եղբայրների և Թիֆլիսի բարեգործական-կրթական ընկերության մասին պատմությանը և պատասխանե՛ք **հարցերին.**

- Ձեր կարծիքով, ներկայացված պատմական անձը/անձինք ո՞ր բնագավառում էին գործում:
- Ազատ շուկայում ի՞նչ է ներկայացնում գլխավոր նպատակը:
- Շահույթ ստանալը սոցիալական ձեռնարկատիրությունում նպատա՞կ է, թե՞ միջոց: Բացատրե՛ք՝ ինչո՞ւ:
- Անձնական գործածությունից (կամ անձնական ծախսերից) և բիզնեսում ներդնելուց բացի ինչի՞ վրա էր ծախսվում այդ մարդկանց շահույթը:
- Այն ժամանակի կամ թեկուզ ժամանակակից ձեռներեցներից բոլո՞ր էին բարեգործություն կատարում: Բացատրե՛ք՝ ինչո՞ւ:

- Ձեր կարծիքով, ի՞նչն է մղում մարդկանց բարեգործություն կատարելու: Ի՞նչն էր կոնկրետ հաջողակ ձեռնարկատիրոջը մղում մեծ բարեգործություն կատարելու:
- Ձեր կարծիքով, անձնական բավարարվածության զգացումը բարեգործության շարժի՞չ ուժն է, թե՞ ոչ:
- Ինչի՞ն էր ուղղված նրանց բարեգործությունը: Անվանե՛ք կոնկրետ օրինակ, իսկ այնուհետև վերլուծե՛ք, նրանք անվանված սոցիալական հիմնախնդիրները բացահայտելու-կրճատելո՞ւ, թե՞ այդ հիմնախնդիրների պատճառները արմատախիլ անելու մասին էին հոգում:
- Հիշե՛ք քաղաքացիական մասնակցության ձևերը, մասնակցության սանդղակի աստիճանները՝ ձեր կարծիքով, նրանցից ո՞րի հետ է ասոցացվում բարեգործությունը, ինչո՞ւ:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 136
Ծանոթացե՛ք ստորև տրված տեսական նյութին և վիճակագրությանը, վերհիշե՛ք բարեգործության մասին նախորդ պատմությունները, հստակեցրե՛ք բնորոշիչները, որոնց գործադրմամբ սոցիալական ձեռնարկատիրության և բարեգործության համեմատության համար կազմե՛ք «Վեննի դիագրամ» և այն ներկայացրեք դասարանին:

Ակտիվություն. Քննարկեք, էջ 136
Անցկացրե՛ք բանավեճ հետևյալ **հարցերի մասին.**
- Բոլոր լավ ձեռնարկատերերը կարո՞ղ են դառնալ սոցիալական ձեռնարկատեր: Ինչո՞ւ:
- Բոլոր սոցիալական ձեռնարկատերերը հաջողա՞կ են բիզնեսում: Ինչո՞ւ:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 138

Ստեղծե՛ք 4 խումբ, յուրաքանչյուր խումբը որոշելու է սոցիալական այն հիմնախնդիրը, որը անհանգստացնում է իրենց համայնքին, հստակեցնելու է այդ հիմնախնդիրն առաջացնող պատճառները և դրանք նախատեսելով՝ պլանավորելու է սոցիալական ձեռնարկատիրության գործարկումը: Որոշելու է դրա սոցիալական առաքելությունը, հնարավորությունները և ռիսկերն ու արդյունքը, որին ցանկանում եք հասնել:

Քայլ 3. Ինչպե՞ս են նախատեսված «Փենովանի» ձեռնարկության գործունեությունում կայուն զարգացման սկզբունքները: Քննարկե՛ք կոնկրետ ուղղությունների համաձայն: (Կայուն զարգացում, Հաստ. պատկ. 1.2.)

Ռեսուրս. Դասագիրք, Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, էջ 139

Աշակերտի գրքում (էջ 150) **տրված օգտակար ռեսուրսներ.**
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության տեղեկատվական հաբ. www.csrgeorgia.com
Պրո Բոնո Վրաստան. https://bit.ly/3Y1gk5t

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 139 **(այս ակտիվությունը չեք կատարում այն դեպքում, եթե կիրառում եք «Չիզքեյքերի» պատմությունը,՝ որպես ենթատեքստ-օրինակ ամփոփիչ առաջադրանքի համար: Դիտե՛ք այս մատրիցայի վերջում, էջ 84):**
Ծանոթացե՛ք ստորև տրված հոդվածին՝ «Մոլորակը փրկելու համար «Պատագոնիայի» սեփականատերը օտարում է իր ընկերությունը» և պատասխանե՛ք **հարցերին**.

- Որքանո՞վ է ընկերության նոր ռազմավարությունը համապատասխանում սոցիալական ձեռնարկատիրությանը:
- Ձեր կարծիքով, ի՞նչը պայմանավորեց ընկերության սեփականատիրոջ՝ շահույթի վեկտորը փոխելու նոր գաղափարը:
- Որքանո՞վ կօգնի ընկերության գործունեությունը կլիմայի փոփոխությունների դադարեցմանը: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր ամաչում ընկերության սեփականատերն իր ֆինանսական վիճակից:
- Ինչո՞ւ էր ձեռներեցը հակագովազդում սեփական արտադրանքը:
- Ձեր կարծիքով, հասարակությունը վստահո՞ւմ է նման մարտավարությանը: Ինչո՞ւ:
- Ի՞նչ միջոցներով է մտադիր ընկերության հիմնադիրը փրկել մոլորակը:
- Ի՞նչ եք կարծում, նոր մարտավարությունից հետո բարձրացա՞վ, թե՞ նվազեց բրենդ արտադրանքի նկատմամբ սպառողի պահանջարկը:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 142
Որպես CSR-ի օրինակ կարող ենք բերել «Nestle» (Նեստլե) ընկերության գործունեությունը Հնդկաստանում: «Nestle» ընկերությունը աշխարհի 84 երկրներում ունի 456 գործարան և թողարկում է տարբեր արտադրանքներ: Դրանց թվում են. նորածին երեխաների սնունդը, Նեսկաֆեն, Նեսքուիքը, Նաթսը, Մագիի ապուրները և այլն: Ծանոթացե՛ք այս պատմությանը և պատասխանե՛ք **հարցերին.**

- Ի՞նչը դարձավ ընկերության համար Հնդկաստանում բիզնես սկսելու հիմք:
- Ի՞նչ մարտավարություն իրականացրեց ընկերությունը ձեռնարկությունը աշխատեցնելու համար:
- Ընկերությունը լրացուցիչ ներդրումներ պահանջող կոնկրետ ի՞նչ քայլեր է ձեռնարկել:
- Ընկերության որոշո՞ւմը, արդյոք, սոցիալական պատասխանատվության օրինակ էր:
- Ի՞նչ շահույթ ուներ ընկերությունը Մոզայում:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 146
Բաժանվե՛ք խմբերի, յուրաքանչյուր խմբում քննարկե՛ք բոլոր իրավիճակները և ստորև տրված հարցերի կիրառմամբ դասարանի հետ միասին քննարկե՛ք դրանք:
Հարցեր.

- Ինչո՞վ են միմյանց նման ստորև տրված ընկերությունների պատմությունները:
- Այդ ընկերությունները սոցիալական ձեռնարկությո՞ւն են, թե՞ ոչ: Ինչո՞ւ: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ի՞նչ տարբերություն հայտնաբերեցիք այդ ընկերությունների և սոցիալական ձեռնարկությունների միջև:
- Հոգալով սեփական աշխատակիցների մասին, միաժամանակ ընկերությունը հոգո՞ւմ է, արդյոք, սոցիալական հիմնախնդիրների մասին: Սեփական հեղինակությա՞ն մասին:
- Լսե՞լ եք, արդյոք, աշխարհում, Վրաստանում այլ ընկերությունների նկատմամբ նման կախվածության մասին:
- Ի՞նչը տեսաք ավելի շատ՝ ընկերության սեփականատերե՞րի, թե՞ աշխատակիցների քաղաքացիական դիրքորոշումը:
- Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ ընկերությունը քաղաքացիական ակտիվության համար ամսվա ընթացքում թեկուզ մեկ օր աշխատավարձը վճարելով աշխատակցին ազատի աշխատանքից:
- Ի՞նչ երաշխիք գոյություն ունի, որ աշխատակիցները իրավամբ կզբաղվեն կամավորական գործունեությամբ: Կամ ինչպե՞ս կարելի է կատարված աշխատանքը ստուգել:
- Ո՞ր ընկերության մարտավարությունը ավելի հավանեցի՞ք և ինչո՞ւ:
- Մարդկանց՝ առանց նախորդող պատմության աշխատանքի ընդունելն ինչո՞ւ համարվեց սոցիալական աջակցություն:
- Համարո՞ւմ եք, թե՞ ոչ, որ դա խրախուսում է նախնական մեղադրյալներին և փորձառություն չունեցող մարդկանց այն դեպքում, երբ մարդկանց մեծամասնությունը ողջ կյանքի ընթացքում փորձառություն է ձեռք բերում և դրական երաշխավորագրեր է հավաքում:
- Ո՞ր ընկերությունը կհամարեիք՝ որպես լավ քաղաքացի: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Եթե դուք լինեք ձեռնարկության/ընկերության ղեկավար, ստորև առաջարկածներից ինչպիսի՞ մարտավարություն կընտրեք կամ ո՞ր նոր մարտավարությունը կկիրառե՛ք նման սոցիալական պատասխանատվություն իրականացնելու համար: Ինչո՞ւ:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 150

Վերևում տրված կանանց ուժեղացման յոթ սկզբունքի համաձայն պատասխանե՛ք հարցերին.

- Ինչո՞ւ է հարկավոր, որ կինը տնտեսապես ուժեղ լինի և ոչ ոքից կախում չունենա:

- Ի՞նչ կարող է անել կինն այդ նպատակով: Որևէ արտակարգ նախապատրաստություն անհրաժե՞շտ է, որպեսզի սեփական գործը ձեռնարկի, թե՞ գլխավորը ցանկություն և ձգտում ունենալն է:
- Կանանց ուժեղացման 7 սկզբունքներից ո՞րն եք համարում ավելի կարևոր: Ի՞նչ կավելացնեիք: Ի՞նչը կհանեիք:

Ռեսուրս. Դասագիրք, Ձեռնարկատիրոջ ընդլայնված պարտականությունը (ՁԸՊ), էջ 151
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 151
Բաժանվե՛ք խմբերի հետևյալ նշանով. սպառող, ձեռնարկատեր, կառավարության անդամ, անչափահաս աշակերտ, չափահաս քաղաքացի:
Ստորև տրված է թափոնների կառավարումն (**վերամշակումը**) արտացոլող լուսանկար: Կազմե՛ք փոքրիկ պատմվածք լուսանկարի համաձայն: Քննարկե՛ք պատմվածքը վերևում բաշխված դերերի համաձայն և պատասխանե՛ք հարցերին.
Հարցեր.
- Վերհիշե՛ք վերամշակման ամենատարածված տեսակները:
- Դրանցից ո՞րը կարող է կատարել աշակերտը: Անձամբ դո՞ւք:
- Ինչպե՞ս կբնութագրեիք վերամշակումը կայուն զարգացման նպատակներին հասնելու գործում:
- Ի՞նչ կփոխանակեիք կամ կփոփոխեիք ելնելով ձեր դերից:
- Ի՞նչ խորհուրդ կտայիք մյուս խմբերին ավելի լավին հասնելու տեսակետից:
- Ի՞նչ տեսակի նյութերի վերամշակմանը ավելի շատ ուշադրություն կհատկացնեիք:
- Վերամշակման գործընթացում ո՞ւմ դերն եք համարում վճռական: Ինչո՞ւ:
- Ո՞ւմ չպետք է վերաբերվի վերամշակման գործընթացը: Ինչո՞ւ:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակին/նպատակներին է արձագանքում այս ակտիվությունը:

Ակտիվություն. Հիշե՛ք:

Հանձնարարական ուսուցչին. Հիշեցրե՛ք աշակերտներին արդեն կատարած խմբային աշխատանքը (116-րդ էջի վրա), որտեղ իրենք որոշեցին, թե որ գլոբալ նպատակին էր արձագանքում «Փենովանիի» գործունեությունը: Հուսով ենք աշակերտները իրենք կկայացնեն ճիշտ որոշում, որ «Փենովանիի» գործունեությունը արձագանքում է հասարակական տեսանկյուններին և կապի մեջ է «Արժանապատիվ զբաղվածություն և տնտեսական ամրապնդում» նպատակի հետ, սակայն նաև սերտ կապի մեջ է գենդերային հավասարության հետ:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 159

«Քաղաքացիություն» առարկան դասավանդելու ընթացքում հեղինակները միշտ ընդգծված առանձնացնում են կայուն զարգացման նպատակները: Այդ 17 նպատակների կապակցությամբ բազմաթիվ օրինակներ, իրավիճակներ քննարկեցինք, շատ անգամ բանավեճ և վիճաբանություններ անցկացրինք: Ձեր շրջանում, հավանաբար, մի մասը ձեռնարկատեր և բիզնեսմեն կդառնա, ընդ որում՝ շատ հաջողակ: Դասարանի մյուս մասը հնարավոր է ընդհանրապես հեռու լինի ձեռնարկատիրությունից, բիզնեսից:

Հարցեր.

- Ձեր կարծիքով, հապա ինչո՞ւ են հեղինակները առաջարկում սոցիալական ձեռնարկատիրության, ձեռնարկատիրոջ ընդլայնված պատասխանատվության կամ սոցիալական կորպորատիվ պատասխանատվության հարցերին ծանոթանալ և ըմբռնել դրանք: Ի՞նչ նպատակի է ծառայում այն:
- Ծանոթացե՛ք ստորև տրված իրավիճակին, պատկերացրեք, որ ճիշտ դուք եք իրավիճակի հերոսները՝ գրասենյակի աշխատակիցները, և ի՞նչ կարող եք անել կայուն զարգացման նպատակների իրականացման համար ձեր աշխատասենյակից:

Ռեսուրս. Դասագիրք, Գովազդ, էջ 160
Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 160
Հարցեր.

- Վերհիշե՛ք գովազդը, որին վերջին ժամանակներում դուք ուշադրություն եք դարձրել, ինչի՞ն էր վերաբերում, ի՞նչ էր առաջարկում: Ինչո՞ւ մյուս գովազդներից ընտրեցիք այն: Որտե՞ղ ծանոթացաք այդ գովազդին:
- Անվանե՛ք այն արտադրանքը, որի գովազդին բոլորից ավելի հաճախակի եք հանդիպում: Ի՞նչ ազդեցություն է գործում այն ձեզ վրա:
- Ի՞նչ եք կարծում, ինչի՞ համար է ստեղծվում գովազդը:
- Ինչո՞ւ են ընկերությունները գումարներ ծախսում գովազդի վրա:
- Անվանե՛ք ապրանք կամ ծառայություն, որը գովազդի ազդեցությամբ եք ձեռք բերել: Ի՞նչն է ձեզ մղել այն ձեռք բերելու որոշմանը:
- Արդարացա՞վ ձեր պատկերացումը գովազդով ձեռք բերած արտադրանքի մասին:
- Ստորև տրված է երկու կոմիքս գովազդի մասին:
- Ընտրե՛ք մեկ արտադրանք կամ սպասարկում և բարձրաձայնե՛ք կոմիքսի հերոսների գովազդային տեքստը:
- Այսօր գոյություն ունի՞ այդպիսի գովազդ: Դուք ո՞ր տիպի գովազդին եք առավելություն շնորհում:
- Որտե՞ղ եք գովազդներ տեսնում բոլորից ավելի հաճախակի:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 162

Բաժանվե՛ք խմբերի և քվեարկության կարգով ընտրե՛ք ձեր խմբի համար հետաքրքիր արտադրանքը՝ ապրանք կամ սպասարկում, և մտածե՛ք գովազդ՝ սպառողին գրավելու նպատակով:

- Մտածե՛ք, ձեզ ի՞նչ անհրաժեշտ կլինի կիրառել: Ի՞նչ պետք է նկատի ունենաք գովազդային արտադրանք ստեղծելիս:
- Ինչպե՞ս կկատարի իր նպատակը ձեր խմբի կողմից ստեղծված գովազդը:
- Ո՞ր բաղադրիչը կաշխատի սպառողին գրավելու համար:

Ինչպե՞ս են նախատեսված

- արտադրանքի որակը,
- մոդայի միտումները,
- մատչելի արժողությունը,
- նպատակային խմբի տարի՞քը
- ի՞նչ է ձեր գովազդում առանձնահատուկ, բնօրինակային:

Ներկայացրե՛ք ձեր գովազդը դասարանում և լսե՛ք միմյանց գնահատականները:

Ակտիվություն. Մոդելավորում. էջ 164

Ո՞ւմ կհասնի պարգևը:

Պատկերացրե՛ք, որ դուք առևտրական ընկերության ներկայացուցիչ եք և մտադիր եք կարևոր գործարար գործարք կնքել: Ստացած գումարը շտապ կարգով անհրաժեշտ է ընկերությանը: Հաճախորդը տատանվում է, հայտարարում է, որ լավ պետք է մտածի: Ժամանակն անցնում է, իսկ նա չի կարողանում որոշում ընդունել:

Ընկերության ղեկավարը աշխատակիցներին հանձնարարում է ապրանքի մասին այնպիսի գովազդ պատրաստել, որպեսզի գնորդը շտապ կարգով այն գնելու որոշում ընդունի: Այն աշխատակիցը, որը հանձնարարությունը հաջողությամբ կկատարի, ղեկավարը խոստանում է որպես պարգև տալ գումարի 2%-ը: Դա բավականին պատկառելի գումար է:

Խորհե՛ք, դուք ի՞նչ կմտածեիք, ինչպե՞ս կլուծեիք այդ հիմնախնդիրը:

Բաժանե՛ք դերերը.

- Մեկը կկատարի սպառողի դերը, որը դժվարանում է որոշում ընդունել:

- Հինգ աշակերտներ կներկայացնեն ընկերությունը: Յուրաքանչյուրը անկախ մտածում է մարտավարության մասին, որով պետք է ազդի սպառողի վրա, որպեսզի վերջինս գնելու որոշում ընդունի:

Խաղացե՛ք հավաստիացման տեսարան: Յուրաքանչյուր մասնակից 2 րոպեի ընթացքում անկախորեն ձգտում է սպառողին համոզել, չնայած նախորդ փուլում այլ խաղացողի հետ ստացած արդյունքին:
Դասարանի մնացած աշակերտները դիտում են ներկայացվող տեսարանները:
Ամփոփե՛ք բանավեճով. Ի՞նչը լավ գործեց: Ինչո՞ւ:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 164
Հարցեր.

- Ինչպե՞ս կբացատրե՛ք այն բիզնեսմենների մարտավարությունը, որոնք գովազդում մեծ գումարներ են վճարում, իսկ գները պահպանում են մրցակիցների մակարդակին:
- Բացատրե՛ք, ինչո՞ւ եք երկար ժամանակ հիշում այն գովազդները, որոնք չեք հավանում:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 165
Իմ արտադրանքի/ծառայության գովազդը
Մտածե՛ք ձեր արտադրանքի/ծառայության համառոտ, երկրոպեանոց գովազդ՝ սպառողներ գրավելու նպատակով: Խմբերում պատրաստե՛ք գովազդային պաստառ և շնորհանդես: Աշխատելու համար ունեք 10 րոպե:
Զմոռանա՛ք, ձեր գովազդը պետք է արձագանքի ժամանակի պահանջներին, արտադրանքի/ծառայության այնպիսի հատկություններին, որոնք ուժեղ տպավորություն կգործեն գովազդը ստացողի վրա: Կարծիքը լակոնիկ արտահայտեք, որպեսզի գովազդը ձանձրալի, հոգնեցնող չլինի:
Բաց չթողնե՛ք.

- արտադրանքի/ծառայության անվանումը,
- արտադրանքի/ծառայության բնութագրիչ նշանները,
- արտադրանքի/ծառայության ձեռք բերման պայմանները, նորությունները, մրցակիցներից տարբերող լրացուցիչ ծառայությունը:
- Էլի ի՞նչ կավելացնեք:

Շնորհանդեսն ավարտելուց հետո վերլուծեք.
1.Գովազդի ո՞ր բաղադրիչը գործածեցիք (տեքստային, գեղարվեստական, հումոր, սյուժե, երաժշտություն, գրաֆիկա, անիմացիա):
2. Ի՞նչ կփոխեիք գովազդում: Դրվագը խաղալուց հետո ի՞նչը ձեզ թվաց ոչ արդյունավետ: Արդյունավե՞տ:
3. Կարողունակ սպառողին շահագրգռող որևէ տեղեկատվություն, արդյոք, չէ՞ր պակասում ներկայացված գովազդին:

Առաջադրանք Ընտրե՛ք ստորև տեղադրված գովազդներից որևէ մեկի հղումը (որը առավելապես հավանեցիք) և բացատրեք.

- Ի՞նչ չափանիշներով գնահատեցիք ընտրված գովազդը:
- Առաջացա՞վ ձեզ մոտ, արդյոք, գովազդային արտադրանքը ձեռք բերելու ցանկություն:
- Որքանո՞վ լավատեսական է գովազդը:
- Ո՞ր տարիքային խմբի վրա է հաշվարկված գովազդը:
- Գովազդի տարածման ո՞ր ձևը կընտրեիք:
- Արտադրանքի ո՞ր ուժեղ կողմի վրա է շեշտը դնում գովազդի հեղինակը:
- Ի՞նչ կավելացնեիք գովազդային հոլովակում կամ ի՞նչ կհանեիք:

https://bit.ly/3S734Kk
https://bit.ly/3EcBXYM
https://bit.ly/3lLIvH8
https://bit.ly/3Egmirm
https://bit.ly/3Kk3R8T
https://bit.ly/3k3GJAV
https://bit.ly/3YGkno1

Հանձնարարական ուսուցչին. Այս պարագրաֆում տրված ակտիվություններից ժամանակի սղության դեպքում կարող եք ընտրել 1-2 ակտիվություն, որոնք աշակերտներին կօգնեն գովազդը հասկանալու մեջ: Այդ փորձը նրանց պետք կգա համալիր առաջադրանքը՝ «Գովազդային բուկլետը» պատրաստելիս, ինչի վրա լավ կլինի նրանց ուշադրությունը կենտրոնացնել: Այս պարագրաֆում գովազդի մասին տրված տեղեկատվությունը հիմնականում կապված է կոմերցիոն գովազդին: Դա կարող եք կիրառել որպես սոցիալական գովազդի բնութագրիչները ընդգծելու համար օրինակ չծառայող, քանի որ դրանց պատրաստման արտադրանքը՝ բուկլետը պետք է պատկանի ճիշտ սոցիալական գովազդին: Դրանում ընդգծված պետք է լինի հասարակական օգուտը, ինչը «Փենովանի» սոցիալական ձեռնարկությունը բերում է հասարակության համար, երբ այն ձգտում է փոփոխել իր բենեֆիցիարների (աշխատողների) դրությունը:
Ամփոփման համար մեկ անգամ կրկին հարցնում եք աշակերտներին, թե ինչ արտադրանք են մտադիր պատրաստել, անպատասխան հարցեր մնացե՞լ են, թե՞ ոչ, ինչին հետևում է նրանց կողմից համալիր առաջադրանքները ներկայացնելը և հետադարձ կապը: Դրանում օգնում է սկզբից ևեթ մշակած զարգացնող գնահատման անալիտիկ խորագիրը:
Նաև օգտագործում ենք աշակերտների ինքնագնահատման խորագիրը (էջ 166), որը տրված է առաջին գլխի վերջում:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Նկարագրե՛ք՝ ինչպե՞ս է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը.

- Ինչպե՞ս եք պլանավորում/պլանավորեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ի՞նչ էիք նկատառում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Ունեի՞ք, թե՞ ոչ նախնական պլան առաջադրանքի վրա աշխատանքի համար: Որքանո՞վ այդ պլանը օգնեց աշխատանքի գործընթացում: Անհրաժեշտ էր, արդյոք, նախնական աշխատանքային պլաններում փոփոխություններ մտցնելը: Ինչո՞ւ:
- Ու՞մ հետ և ինչպե՞ս համագործակցեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Հանդիպեցի՞ք, թե՞ոչ տարբերվող կարծիքներ ունեցող մարդկանց: Որքանո՞վ օգնեց այլ մարդկանց հետ համագործակցությունը:
- Կիրառեցի՞ք, թե՞ ոչ տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Ինչո՞ւմ օգնեց տեխնոլոգիաների կիրառումը:
- Ի՞նչ արտադրանք ստեղծեցիք համալիր առաջադրանքի տեսքով:

Բացատրեք՝ ինչ գիտելիք և փորձ ձեռք բերեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:

- Ի՞նչ հարցի է վերաբերում ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ գիտեիր ուսանելի հարցի մասին: Ի՞նչ նոր բան իմացար: Լրացուցիչ ի՞նչ կուզենայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացության հանգեցրեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ինչո՞վ են հաստատվում ձեր կողմից կատարված եզրակացությունները:
- Ու՞մ համար և ինչո՞ւ է ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ միջոցներից օգտվեցիք ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար:/Համալիր առաջադրանքը ավելի լավ կատարելու համար:

Գնահատե՛ք՝ որքանով արդյունավետ և հետաքրքիր էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:

- Գնահատե՛ք՝ որքանով ստացվեց առաջադրանքի կատարումը: Որքանո՞վ այն համընկավ ուսուցչի սպասելիքներին:
- Ի՞նչը կատարեցիք ինքնուրույն: Ինչո՞ւմ անհրաժեշտ եղավ այլոց օգնությունը:
- Ի՞նչ գործոններ նկատի ունեցաք/պետք է նկատի ունենաք այն բանի համար, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լիներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ և որքանո՞վ է տարբերվում ձեր կողմից կատարված առաջադրանքը համադասարանցիների աշխատանքներից:

Ի՞նչ կկատարեիք այլ կերպ, եթե նորից սկսեիք առաջադրանքի վրա աշխատել:

Ուշադրություն: III և IV գլուխներում տրված հարցերի համար («Ձեռնարկատերերի պատասխանատվությունը» և «Բիզնեսի կայունությունը») պատրաստված է միասնական որոշող գնահատման խորագիր և մի ամփոփիչ առաջադրանքի պայման, որը չորրորդ մատրիցայի վերջում (էջ 100) է տեղադրված: Հանձնարարականի համաձայն, ամփոփիչ առաջադրանքը կարող է պարունակել մեկ կամ երկու հարց, որպեսզի չկորչի կոնկրետությունը:
«Ձեռնարկատիրություն և բիզնես» թեմայի համար **չորրորդ** հիմնական հարցն է **«Բիզնեսի կայունությունը»:** Այս հարցի կապակցությամբ աշակերտի նախնական գիտելիքի ակտիվացումը տեղի է ունենում «Փոփոխություններ բիզնեսի կայունության ըմբռնման մեջ» կոնկրետ տեղեկատվությամբ և բովանդակությամբ դրան մոտ գտնվող օրինակներով:

Հիմնական ենթատեքստ-օրինակ և օրինակներ համեմատության համար	Ռեսուրսներ
Հիմնական ենթատեքստ-օրինակ. «Փոփոխություններ բիզնեսի կայունության ըմբռնման մեջ»	• Դասագիրք, էջ 170 Ուսուցչի գիրք, **Հավելված 4 (էջ 183)**
Օրինակ համեմատության համար 1. Նիկայի իրավիճակը	• Դասագիրք, էջ 174
Օրինակ համեմատության համար 2. Բիզնեսի կայունության վրա գործող փաստարկներ	• Դասագիրք, էջ 180
Օրինակ համեմատության համար 3. Նանոյի և Մեգիի իրավիճակը (որպես վերամշակվող տնտեսության օրինակ)	• Դասագիրք, էջ 198

Պարզաբանում. Նոր գիտելիքի կոնստրուկտիվ կառուցումն ապահովելու համար կարևոր է աշակերտներին առաջարկենք նրանց գիտելիք-փորձին հասանելի այնպիսի օրինակներ (մասնավոր դեպքեր, իրավիճակներ, պատմություններ), որոնց քննարկում-վերլուծումը կօժանդակի նրանց թիրախային գիտելիքը (ենթահարցը, ենթահասկացությունները, թիրախային հասկացությունները) ըմբռնելուն և յուրացնելուն: Ենթատեքստ–օրինակները ճիշտ այդպիսի օրինակներ կարող ենք անվանել: Այդ պատմությունները պետք է ընտրվեն պարտադիր թեմաների շրջանակներում հստակեցված հիմնական հարցերի համաձայն և պետք է ցույց տան կենսական իրավիճակներ (երկընտրանքներ, էմոցիաներ):

Այստեղ ևեթ ընդգծված նշում ենք, որ ուսուցչի գրքում առաջարկվող հիմնական ենթատեքստ-օրինակները կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, այսինքն՝ կարող եք հիմնական գործառույթը վերագրել դասագրքում ներկայացված մեկ այլ ենթատեքստ-օրինակի և դրա վրա հիմնվելով ձևակերպել համալիր առաջադրանքի պայմանը:

Ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հիմնական ենթատեքստ-օրինակի վերլուծության վրա: Դրա մշակումը կատարվում է խորքային՝ ենթատեքստը, էմոցիոնալ-սոցիալական տեսանկյունները նկատի ունենալով, իսկ համեմատության համար ընտրված օրինակները հիմնականում ֆոնային գիտելիքի դեր են կատարում:

Ենթատեքստ-օրինակի առաջնային մշակման ժամանակ ուսուցիչը ուղղորդող հարցերով, ակտիվություններով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն մանրամասնությունների վրա, որոնք մշակվող ենթահասկացությունների, թիրախային հասկացությունների հետ կապի մեջ են: Օրինակ՝ կոնկրետ դեպքում ենթատեքստ - օրինակի այն ծավալի վրա ենք փորձում կենտրոնանալ, որոնք հանգուցային հարցերում էլ (ինչ գործոններ և ինչու են պայմանավորում պետության միջամտությունը ազատ շուկայի կարգավորման գործում: Ինչպե՞ս պատկերացնել պետության առջև ծառացած երկընտանքները/մարտահրավերները մարդու իրավունքների պաշտպանության պարտականությունների և տնտեսական ազատության սկզբունքի պահպանության կապակցությամբ) որոշված են:

<u>Աղյուսակ թիրախային գիտելիքի որոշման համար</u>

Թեմա. Ձեռնարկատիրություն և բիզնես **Հիմնական հարց.** Բիզնեսի կայունություն **Հիմնական ենթատեքստ-օրինակ.** փոփոխություններ բիզնեսի կայունության ըմբռնման մեջ			
Ենթահարց	**Ենթահասկացություններ**		**Թիրախային հասկացություն**
Փոփոխություններ բիզնեսի կայունության ըմբռնման մեջ	**Կայուն սպառում և արտադրություն**	**Կայուն զարգացման նպատակները**	**Կայուն զարգացում (Արդյունք 3)**

Որոշելու համար, թե ինչ պետք է գիտենա աշակերտը ենթահարցի հետ կապված, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Աղյուսակ 1),** որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի ամբողջացված մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է մի քանի փուլում.

ա) նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և ուսանում-ուսուցման գործընթացը պլանավորելու փուլում (**ինչ ակտիվություններ, մեթոդներ, մարտավարություններ պետք է կիրառենք, որպեսզի աշակերտին օգնենք այս սպասումը իրական արդյունքի վերածելու մեջ),**

բ) հաջորդ ուսանում-ուսուցման գործընթացի մոնիթորինգի համար (**ինչպե՞ս է ընթանում գործընթացը, հայտնվեցի՞ն սպասելիքներին համապատասխան նշաններ: Ի՞նչ հարցեր պետք է օգտագործեմ որպես փայտամած),**

գ) ուսանում-ուսուցման գործընթացում և համալիր առաջադրանքը ավարտելու ժամանակ կոնկրետ հետադարձ կապի ձևավորման մեջ **(սպասելիքներից ո՞ր արտահայտությունները հարմար կլինեն աշակերտի արդյունքը նկարագրելու, խրախուսելու, խորհուրդ տալու համար),**

դ) վերջում՝ միջանկյալ և երկարաժամկետ նպատակների վրա աշխատանքը՝ մանկավարժական պրակտիկայի կառուցվածքային ինքնագնահատման համար **(իրատեսական սպասելիքները ո՞ր հաստատուն պատկերացման՝ Հաստ. պատկ. կապակցությամբ որոշեցի: Ո՞ր սպասելիքի համար գտա ճիշտ լուծումը ակտիվությունների և մեթոդների տեսքով: Որտե՞ղ պետք է փոխեմ մոտեցումը):**

Աղյուսակ 1.
Զարգացնող գնահատման խորագիր

Թիրախային հասկացություն Ենթահարց	**Թիրախային հասկացության հետ կապված հաստատուն պատկերացումներ**	**Սպասելիքներ** <u>**Աշակերտը պետք է կարողանա**</u>**.**	**Ուսուցչի մեկնաբանություն Աշակերտը կարողացավ.**
Կայուն զարգացում (Արդյունք. 3) **Կայուն բիզնեսի հայեցակարգ**	**1.** Ռեսուրսներն օգտագործելիս կարևոր է նկատի ունենալ հասարակության շահերը և ապագայի հեռանկարը:	Կապակցել կահույքի IKEA ընկերության կայունությունը հասարակության սոցիալական, տնտեսական և էկոլոգիական շահերի հետ՝ ռեսուրսների օգտագործման, վերամշակման ծառայության մասին հարցերը քննարկելիս նկատի ունենալով ապագայի հեռանկարը: Դրսևորել նման և տարբերվող բնութագրիչներ քննարկված և նման բնական ենթատեքստ-օրինակների միջև:	

	2. Լոկալ արարքներին ուղեկցում են գլոբալ արդյունքներ, օրինակ՝ շրջակա միջավայրի մասին հոգածությունը, մի հայացքով աննշան արարքներով է սկսվում (օր. աղբը գետնին չգցել, պոլիէթիլենային տոպրակից հրաժարվել):	Կապակցել բիզնեսի, մասնավորապես՝ կահույքի IKEA ընկերության կայունության հայեցակարգերի փոփոխությունը ռեսուրս-սպառողական կախվածության, բնության նկատմամբ հոգածության և պատասխանատու կախվածության վերաբերմունքով: Վերլուծել՝ երբ և ինչպես կարելի է ձեռք բերած գիտելիքը գործադրել սեփական և հասարակական շահույթի համար:	

Ստորև, միջանկյալ/համալիր առաջադրանքի մատրիցայում (**Աղյուսակ 2.) տրված են համալիր առաջադրանքի պայմանը, գնահատման** չափանիշները և իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, ուղղորդող հարցեր և համառոտ հանձնարարականներ ուսուցիչներին):

Աղյուսակ 2

Հարց – Կայուն բիզնես **Ենթահարց -Փոփոխություններ բիզնեսի կայունության ըմբռնման մեջ, ենթահասկացություններ –** կայուն սպառում և արտադրություն, կայուն զարգացման նպատակները – **թիրախային հասկացություն – կայուն զարգացում (Արդյունք. 3)**
Հանգուցային հարց. Ինչո՞ւ է փոխում IKEA-ն կայուն բիզնեսի հայեցակարգը և ռեսուրս-օգտագործման կախվածությունը փոխարինում է վերամշակելի տնտեսության մոտեցմամբ: Իմ **բիզնես պլանով և մեկնաբանություններով** ինչպես ցույց տամ համադասարանցիներին, թե յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ լոկալ մոտեցումը շրջակա միջավայրի նկատմամբ ինչպես է պայմանավորում գլոբալ արդյունքները:
Համալիր առաջադրանքի պայման Ծանոթացե՛ք ստորև տրված տեղեկատվությանը՝ «Փոփոխություններ բիզնեսի կայունության ըմբռնման մեջ», հստակեցրեք չափանիշները, որոնց պաշտպանությունը անհրաժեշտ եք համարում կայուն բիզնեսի համար և դրանց նկատառումով կազմեք ձեր բիզնես-պլանը, պլանին մեկնաբանությունների տեսքով կցեք ձեր պարզաբանումները և սպասելիքները: **Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.** • Ինչպե՞ս է համապատասխանում ձեր պլանը հասարակության շահերին և ապագայի հեռանկարին: Ինչո՞ւ առավելություն շնորհեցիք այս հայեցակարգին: **(Հաստ. պատկ. 1)**

- Ձեր կողմից ներկայացված պլանը (ռեսուրս, արտադրանք, տեխնոլոգիա, թափոնների կառավարում, զբաղվածների նկատմամբ հոգածություն...) որքանո՞վ է պատասխանում կայուն զարգացման հիմնական տեսանկյուններին: Բացատրե՛ք կոնկրետորեն: **(Հաստ. պատկ. 1)**

Թիրախային հասկացության/հասկացությունների կապակցությամբ հաստատուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ՝	**Գնահատման չափանիշներ** Աշակերտը կարող է.	**Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.**
Կայուն զարգացում 3. Ռեսուրսներն օգտագործելիս կարևոր է նկատի ունենալ հասարակության շահերը և ապագայի հեռանկարը: 4.Լոկալ արարքներին ուղեկցում են գլոբալ արդյունքները (օրինակ՝ շրջակա միջավայրի մասին հոգածությունը մի հայացքով աննշան արարքներից, օրինակ՝ աղբը գետին չգցելուց, պոլիէթիլենային տոպրակներից հրաժարվելուց է սկսվում):	**Կայուն զարգացում.** Լոկալ արարքները կապակցել գլոբալ արդյունքների հետ **(Հաստ. պատկ. 1.2):**	• Ինչպե՞ս է ձեր պլանը համապատասխանում հասարակության շահերին և ապագայի հեռանկարին: Ինչո՞ւ շնորհեցիք առավելություն այս հայեցակարգին: **(Հաստ. պատկ. 1.)** • Ձեր կողմից ներկայացված պլանը (ռեսուրս, արտադրանք, տեխնոլոգիա, թափոնների կառավարում, զբաղվածների նկատմամբ հոգածություն...) որքանո՞վ է պատասխանում կայուն զարգացման հիմնական տեսանկյուններին: Բացատրե՛ք կոնկրետորեն: **(Հաստ. պատկ. 2)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ – Համալիր առաջադրանի պայմանին ծանոթացում

Ռեսուրս 1. Դասագիրք, IVգլուխ: **Կայուն բիզնես**, Համալիր առաջադրանքի պայման, էջ 168

Ռեսուրս 2. Դասագիրք, Բիզնեսի պլանավորում, էջ 198

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.

- Ի՞նչ է բիզնես-պլանը: Երբևէ աշխատե՞լ եք, արդյոք, այդ արտադրանքի վրա: Ի՞նչ հարցում դժվարացաք: Ի՞նչն էր ավելի հեշտ:
- Ի՞նչ նպատակ էր դրված բիզնես-պլանում: Ի՞նչ արդյունքի կարող եք հասնել դրա միջոցով:

- Ինչպե՞ս կպլանավորե՛ք ձեր բիզնեսը: Ի՞նչ չափանիշներ նկատի կունենաք: Ինչո՞ւ:
- Ինչպիսի՞ կառուցվածք կունենա բիզնես պլանը մեկնաբանություններով:
- Ի՞նչ պետք է նկատի ունենաք, որպեսզի ձեր բիզնես պլանը գնահատվի որպես շրջակա միջավայրի համար վստահելի և բարյացակամ:
- Անհրաժե՞շտ կլինի, թե՞ ոչ բիզնես պլանի և մեկնաբանությունների սկզբնական տարբերակը կարդալ-ուղղել:
- Ի՞նչ կարելի կիրառել բիզնես-պլանի վիզուալ ձևավորման համար:

<u>Համալիր առաջադրանք</u>

- Ձեր բառերով ձևակերպեք՝ ինչի՞ն է վերաբերվում այսօր տրված առաջադրանքը, որի վրա մի քանի դասի ընթացքում պետք է աշխատեք:
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք այլ ժամանակ կատարե՞լ եք, արդյոք:

Ուշադրություն:

Համալիր առաջադրանքի վրա աշխատանքը հիմնականում դասարանում, դասերի ժամանակ է ընթանում և միայն բացառիկ դեպքում եք կիրառում տնային առաջադրանքը:

II փուլ – համալիր առաջադրանքի վրա աշխատանք

Թիրախային գիտելիք.

Ենթահարց -Փոփոխություններ բիզնեսի կայունության ըմբռնման մեջ, Ենթահասկացություններ – Կայուն սպառում և արտադրություն, Կայուն զարգացման նպատակներ – **Թիրախային գիտելիք** -Կայուն զարգացում **(Արդյունք. 3)**

Ենթատեքստ-օրինակների առաջնային մշակում

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 169

Առաջին փուլ

Միասին ծանոթացեք ստորև տրված տեղեկատվությանը՝ **«Փոփոխություններ բիզնեսի կայունության ըմբռնման մեջ»** և լրացրե՛ք աղյուսակի առաջին սյունակը. գրառե՛ք, ի՞նչն էր ձեզ համար հետաքրքիր, կարևոր, նոր, ի՞նչ հարցեր առաջացան: Ինչպե՞ս կկապակցեք այս տեղեկատվությունը նախորդ գլխում քննարկված հարցերին:

Երկրորդ փուլ

Աշխատե՛ք զույգերով, շնորհանդեսի և բանավեճի ժամանակ ուշադրությամբ ունկնդրեք համադասարանցիներին և երկրորդ սյունակում նշեք՝ ի՞նչ էական տեղեկատվություն ստացաք, ունկնդրածից ձեր զույգընկերոջ համար ի՞նչն էր հետաքրքիր, կարևոր, հարցեր, որոնց պատասխանը չկարողացաք ստանալ:

Երրորդ փուլ

Երրորդ սյունակում մտցնում եք արդեն այն տեղեկատվությունը, որը ուսուցչի հետադարձ կապից, մեկ անգամ կրկին տեքստը վերա-նայելուց և դրա ըմբռնումից հետո կհստակեցնեք: **Զույգի գրառումներ**	**Դասարանային բանավեճի գրառումներ**	**Ուսուցչի հետադարձ կապից, տեքստը մեկ անգամ ևս վերանայելուց և ըմբռնելուց հետո արված գրառումներ**
1.		IKEA-ն շրջանառու տնտեսության մոդելով է աշխատում, ինչը մեծացնում է նրա ֆինանսական արդյունավետությունը:
2.		Առանց թափոնների աշխատանքը կապվում է «Զրոյական թափոններ աղբից» մոտեցմանը, այսինքն՝ տեղի է ունենում թափոնների կրկնակի կիրառում:
3.		Ընկերությունը որպես գործընկեր ընտրում է այնպիսի մատակարարողների, որոնք նաև բնության նկատմամբ Ուսուցչի հետադարձ կապից, տեքստը մեկ անգամ ևս վերանայելուց և ըմբռնելուց հետո արված գրառումները հոգատար վերաբերմունք են դրսևորում:
4.		Ապագան պատկանում է բիզնեսին, որը պլանավորում է շահույթի առավելագույն սահմանը էկոլոգիական և սոցիալական սկզբունքների նախատեսմամբ:
5.		Սկզբնական փուլ – շահույթի առավելագույն աճ և միաժամանակ տնտեսական, էկոլոգիական և հասարակական հնարավորությունների և ռիսկերի կառավարում:
6.		Երկրորդ փուլ - տնտեսական, էկոլոգիական և սոցիալական նպատակների հավասար նշանակությամբ ընկալումը, այսինքն՝ ընկերության կոնկրետ դիրքորոշումը կամ ծառայության աշխատանքը ոչ թե կայուն զարգացման

		ուղղությամբ է, այլ բոլոր ծառայությունները, թե դեպարտամենտները սեփական նպատակները իրականացնում են կայուն զարգացմանը ինտեգրմամբ:
7.		Շրջանառու տնտեսության մոդելի սկիզբը միայն մի քանի հարցերում է նկատվում:

Հանձնարարական ուսուցչին. Ցանկալի է իրենք՝ աշակերտները հստակեցնեն կայուն բիզնեսի հայեցակարգի զարգացման աստիճանները, այդ թվում՝ նմանություն-տարբերությունը, անցկացնեն զուգահեռներ նրանց հայտնի, թեկուզև նախորդ գլխում անցած բիզնես պատմությունների հետ: Եթե աշակերտների պատասխաններում դա չի հստակեցված, կիրառեք արդարացված պրակտիկա և հետադարձ ձևաչափում առաջարկեք աստիճանների սխեման, որի վրա արտացոլված է հայեցակարգերի զարգացման գործընթացը: Կարելի է նաև կիրառել Վեննի դիագրամը համեմատության համար:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 172

Ստեղծե՛ք 4 խումբ, բաժանե՛ք գլոբալ նպատակների մեկական ուղղություն և «Փոփոխություններ՝ բիզնեսի կայունությունը ըմբռնելու մեջ» տեղեկատվության հիման վրա քննարկեք.

Հարցեր.

- Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ կայուն բիզնեսի նկարագրած հայեցակարգերը ձեր խմբին բաժին ընկած տեսանկյունների վրա և ինչպե՞ս:
- Ո՞ր հայեցակարգն է ձեզ համար կարևոր և ինչպե՞ս եք պատկերացնում դրա իրականացման ուղիները:
- Ձևակերպե՛ք չափանիշներ, որոնք հարմար կլինեն կայուն զարգացման հիմնական տեսանկյունների (ձեր ուղղության) հետ բիզնես գործունեության համապատասխանությունը գնահատելու համար:
- Ինչպե՞ս կգնահատեք IKEA ընկերության գործունեությունը այդ չափանիշների համաձայն: Անվանե՛ք փաստարկներ:
- Կապակցե՛ք IKEA ընկերության լոկալ գործողությունները գլոբալային արդյունքներին, ապացուցե՛ք կոնկրետ օրինակներով:
- Վերհիշե՛ք, դասագրքից ընտրե՛ք որևէ բիզնես պատմություն և կիրառե՛ք ձեր չափանիշները դրանց կայունությունը գնահատելու համար: Հիմնավորե՛ք ձեր կարծիքները:
- Կապակցե՛ք ընտրված ընկերության լոկալ գործողությունները գլոբալ արդյունքների հետ, ապացուցե՛ք կոնկրետ օրինակներով:
- Ձեր կարծիքով, ի՞նչ պետք է փոփոխվի, ամրապնդվի, պահպանվի այդ ընկերություններում, որպեսզի դրանց գործունեությունը համապատասխանի կայուն զարգացման հիմնական տեսանկյուններին:
- Հնարավո՞ր է, թե՞ ոչ շուկայում հաստատվի այն ընկերությունը, որը միայն գլոբալ սոցիալական նպատակների հաշվարոումով է պլանավորում իր գործունեությունը և ի նկատի չի առնում ազատ շուկայի սկզբունքները: Ինչո՞ւ:

Խմբերից յուրաքանչյուրը պատրաստում է շնորհանդես, մշակված չափանիշները նախապես տեղափոխում է առանձին աշխատանքային թերթերի վրա, որոնք կփակցվեն դասասենյակում և կստեղծեն «Բիզնես պլանի չափանիշների բանկ», հնարավոր կլինի այն լրացնել և մոդիֆիկացնել:



Քայլ 1. Ինչպե՞ս է համապատասխանում ձեր պլանը հասարակության շահերին և ապագայի հեռանկարին: Ինչո՞ւ առավելությունը շնորհեցիք այս հայեցակարգին: **(Հաստ. պատկ. 1)**

Ռեսուրս. Ի՞նչ է տեղի ունենում իրական շուկայում: էջ 169

Աշակերտի գրքում (էջ 179) տրված օգտակար ռեսուրսներ.

Իմացի՛ր ավելին շուկայի վերլուծության մասին. https://bit.ly/3DAbnZ8

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 174

Հարցեր.

- Ի՞նչ է տեղի ունենում իրական շուկայում, երբ մի քանի վաճառող միևնույն ապրանքն են վաճառում:

- Ի՞նչ է տեղի ունենում իրական շուկայում, երբ բազմաթիվ վաճառողներ միատեսակ ապրանք են վաճառում:
- Ի՞նչ է տեղի ունենում շուկայում, երբ գնորդների քանակը շատ փոքրաթիվ է:
- Երևի լսել եք այսպիսի արտահայտություն «Շուկան թողեց (շուկայից հեռացավ)», գիտե՞ք, արդյոք ի՞նչ ի նկատի ունի այս արտահայտությունը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ պայմաններ են ստիպում ձեռնարկատիրոջը հեռանալ շուկայից:
- Ձեռնարկատերերի մի մասը կարծում է, որքան ավելի ապրանք դուրս բերի շուկա, այնքան ավելի շատ շահույթ կկարողանա ստանալ: Ի՞նչ եք կարծում, այդպիսի տրամաբանությամբ աշխատանքը նրանց համար ապահովո՞ւմ է կայուն հաջողություն:
- Ի՞նչ եք կարծում, բոլոր բիզնեսները, որոնք շուկայում պահպանում են կայունություն, կայուն բիզնե՞ս են (դատողության մեջ օգտագործե՛ք ձեր կողմից մշակված չափանիշները):
- Ծանոթացե՛ք իրավիճակին և օգնեք Նիկային հասկանալ բիզնեսի անհաջողության բոլոր հնարավոր պատճառները.

✓ վատ տեղադրություն,
✓ ոչ արդյունավետ սպասարկում,
✓ վատ աշխատանքային պայմաններ,
✓ ցածր որակի ապրանք,
✓ բարձր գներ,
✓ բազմաթիվ մրցակիցներ,
✓ գովազդի բացակայություն,
✓ ոչ պոպուլյար, ժամանակի պահանջներից ետ մնացած ապրանք և այլն:

Ձեր գնահատումների մասին կատարե՛ք մեկնաբանություն:

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, էջ 178
Գծագրի վրա ցույց է տրված մի շուկայում գործող հինգ խոշոր ընկերություն: Դրանցից ամենամեծ բաժինն ունի CC ընկերությունը, այն 40%-ի է հավասար: CC ընկերությունը շուկայի լիդերն է:



- Ո՞ր ընկերությունն ունի ամենափոքր բաժինը:
- Ինչպե՞ս պետք է գործի այդ ընկերությունը, որպեսզի կարողանա իր բաժինը մեծացնել:
- Ինչպե՞ս կփոփոխվի CC ընկերության իրավիճակը շուկայում, եթե BA ընկերությունը կարողանա իր բաժինը 10%-ով մեծացնել:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարելի է շուկայում լիդերության հասնել:
- Ի՞նչ ազդեցություն է գործում շուկայի վրա, ընկերության իրավիճակի վրա այս ընկերության կախվածությունը կայուն զարգացման սկզբունքներից: Ինչո՞ւ:

Ռեսուրս. Դասագիրք, «Բիզնեսի կայունության վրա ազդող գործոններ, էջ 180
Ակտիվություն, Քննարկե՛ք. էջ 180
Շուկայում երկարատև մնում է այն ձեռնարկությունը, որը սպառողի կարիքներին արագորեն արձագանքելու ունակություն ունի: Քննարկե՛ք ստորև տրված իրավիճակը և պատասխանե՛ք **հարցերին**.

- Ի՞նչ եք կարծում, բիզնեսի հաջողության համար այդ պայմանը բավարա՞ր է: Պատասխանը հիմնավորե՛ք գործոններով:
- Ձեր կարծիքով, ի՞նչ մոտիվներով են ղեկավարվում ձեռնարկատերերը «Իրավիճակում» նկարագրված որոշումը ընդունելու ժամանակ:
- Ուրիշ ի՞նչ պատճառներ են գործում ներդրումային մակարդակի վրա:
- Պատասխանները համեմատե՛ք ստորև տրված բիզնեսի կայունության վրա ազդող գործոնների սխեմայի հետ:
- Ձեր կարծիքով, ի՞նչ ազդեցություն է գործում Վրաստանում բիզնեսի զարգացման վրա.
  ա) Վրաստանի այսօրվա ներքին իրավիճակը,
  բ) միջազգային իրավիճակը,

գ) պետական որոշումները,

դ) հարաբերությունը հարևան երկրների հետ,

ե) սպառողի առաջնահերթությունների փոփոխությունը,

զ) ինչպես են «պայքարում» մրցակից ձեռնարկությունները միմյանց հետ Վրաստանում:

Ստուգե՛ք ձեզ հայտնի օրինակներով:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 183

Ծանոթացե՛ք և բաշխե՛ք ստորև տրված իրավիճակները, պատասխանե՛ք հարցերին:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 185

Վերլուծե՛ք՝ ինչպե՞ս են արտացոլվում բիզնեսի վրա գործող գործոնները սպառողների վրա: Գծե՛ք սխեմա, պատրաստե՛ք շնորհանդես:

Հանձնարարական ուսուցչին. Բիզնեսի իրավիճակի վրա ազդող գործոնների ակտիվությունները ամփոփելիս աշակերտներին խնդրեք կապակցել այդ գործոնները կայուն զարգացման նպատակներին, մասնավորապես «Կայուն սպառում և արտադրություն» նպատակին և պատասխանել հարցերին.

Հարցեր.

- Հնարավոր համարո՞ւմ եք, թե՞ ոչ բիզնեսի հաջողությունը այս նպատակը նկատի ունենալով:
- Ինչպե՞ս կարող է արտացոլվել այս նպատակը բիզնես պլանում:
- Ձեր կարծիքով, ի՞նչ նշանակություն ունի այն, որ բիզնեսը սկզբում վնաս չհասցնի շրջակա միջավայրին և հետո՝ «հետքը» վերացնելու համար չծախսի ռեսուրսներ:
- Կապվո՞ւմ է, թե՞ ոչ այդպիսի կանխարգելումը սպառողի, նրա բարեկեցության հետ: Անձամբ ձեռնարկատերերի, նրանց ընտանիքների բարեկեցությա՞նը:
- Ի՞նչ երկընտրանքներ կարող են առաջանալ բիզնեսի համար «Կայուն սպառում և արտադրություն» սկզբունքը նկատի ունենալու դեպքում:
- Ձեր կարծիքով, պետք է զիջի՞, թե՞ ոչ բիզնեսը այս նպատակին հասնելու համար: Ինչո՞ւ:
- Ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի այդպիսի մոտեցումը ամենօրյա իրականության վերածվի:
- Ինչպե՞ս նկատի կունենաք այս բանավեճը ձեր բիզնես-պլանում:

Ակտիվություն. Քննարկե՛ք խմբերում, էջ 185

- Բաժանվե՛ք 4 խմբի: Նորից բաժանե՛ք վերևում տրված (էջ 167) կայուն զարգացման հիմնական տեսանկյունների աղյուսակի մեկական ուղղություն, ծանոթացե՛ք «Սա հետաքրքիր է» (էջ 180) տեղեկատվությանը և ապրանքի փաթեթավորման հարցը վերլուծե՛ք ձեր տեսանկյուններին համապատասխան::

Հարցեր.

- Ի՞նչ կապ եք տեսնում ապրանքի փաթեթավորման և ձեր խմբի կողմից մշակվող տեսանկյունների միջև:
- Ի՞նչ խորհուրդներ կտայիք բիզնես սեկտորին ապրանքի փաթեթավորման կապակցությամբ:
- Ի՞նչ չափանիշներ կավելացնեիք «Բիզնես պլանի չափանիշների բանկին»:

Հանձնարարական ուսուցչին. Շնորհանդեսները ամփոփելու արդյունքում հստակեցված չափանիշները աշակերտները ավելացնում են «Չափանիշների բանկի» թերթի վրա:

Ակտիվություն. Մոդելավորում, Վարում ենք «Աթինաթի» ընկերությունը, **էջ 188**

Աշխատե՛ք խմբերում

Կազմե՛ք բիզնեսի ներկա և ապագա իրավիճակի մասին առավելագույն տեղեկատվություն հաղորդող աղյուսակ և բոլոր առկա տվյալների համաձայն լրացրե՛ք այն: Յուրաքանչյուր բիզնեսի համար սահմանե՛ք.

- շուկայի միտումները,
- կայունության պայմանները,
- արտադրանքի որակը,
- զարգացման հեռանկարը:

Իրավիճակի վերլուծության ժամանակ **չմոռանաք**, որ դուք պետք է կարողանաք կանխագուշակել «Աթինաթի» ընկերության զարգացումը (պետք է որոշեք ընկերության ապագան): Դրա համար լավ ուսումնասիրեք տրված տեղեկատվությունը: Խմբերում աշխատանքի ժամանակը 20 րոպե է, յուրաքանչյուր խմբին շնորհանդեսի համար տրվում է 5 րոպե:

Լավագույն արդյունք ստանալու համար աշխատեք «Մտավոր գրոհի» մեթոդով.

- Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է արտահայտի ցանկացած կարծիք այդ հարցի կապակցությամբ,
- կարծիքները փոխադրեք թերթի վրա,
- մի՛ քննադատե՛ք ոչ մի գաղափար,
- վերջում հանրագումարե՛ք գաղափարները և պատրաստե՛ք շնորհանդես,
- շնորհանդեսն ավարտելուց հետո 1-2 րոպե տրամադրեք ընդդիմախոսների հարցերի պատասխաններին:

«Աթինաթի» ընկերություն

«Աթինաթի» ընկերությունը բաղկացած է 3 բիզնես միավորներից: Ձեր խնդիրն է.

- ծանոթանալ դրանց մասին տվյալներին,
- վերլուծել ընկերության յուրաքանչյուր բիզնեսը և սահմանել դրանց ապագան,
- որոշե՛լ, կկարողանա՞ ընկերությունը շուկայում գոյությունը շարունակել: Բացատրե՛ք, ինչո՞ւ եք այդպես կարծում: Եթե գտնում եք, որ բիզնեսի վիճակը բարդ է, անվանե՛ք իրավիճակը շտկելու պլան և պատրաստե՛ք պլանի շնորհանդես:

Տեղեկատվություն «Աթինաթի» ընկերության մասին

Ծանոթացե՛ք «Աթինաթի» ընկերության մասին երևակայական տեղեկատվությանը.

Սահմանափակ պատասխանատվության ընկերություն «Աթինաթի»-ն բաղկացած է 3 բիզնես միավորներից: Դրանք են.

1. զովացուցիչ ոչ ալկոհոլային ընկերություն «Սիխարուլին»,
2. սրճի պատրաստման ձեռնարկություն «Գեռարաբիկան»,
3. արագ սննդի ռեստորանների ցանց «Պրինցեսան»:

«Սիխարուլին» նոր ձեռնարկություն է, շուկայում նրա բաժինը մեծ չէ, բայց երկու ամիս առաջ անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համաձայն, հարցմանը մասնակցածների 60%-ը իրենց հայտնի որակյալ ոչ ալկոհոլային ըմպելիքներից առաջինը, ճիշտ «Սիխարուլին» անվանեց: «Սիխարուլին» արդեն 5 անուն ոչ ալկոհոլային ըմպելիք է թողարկում:

«Գեռարաբիկան» սրճի փաթեթավորման միջին չափի ձեռնարկություն է: Դրա արտադրանքը տարիների ընթացքում հանրահայտ էր Վրաստանի շուկայում, սակայն վերջին երկու տարվա ընթացքում հաճախակի դարձան դեպքերը, երբ ձեռնարկությունը որակը չկարողացավ ապահովել: Մեկ ամիս առաջ առևտրական ցանցից ձեռնարկությանը ետ վերադարձվեց մեծ քանակության խոտանված արտադրանք: Ղեկավարությունը որոշեց արտադրանքը ենթարկել երկրորդային վերամշակման և իրավիճակը շտկել, բայց բավականին ցածր որակի սրճի չմշակված արտադրաքանակները, աշխատողների անփութության պատճառով, երկրորդ անգամ հայտնվեցին առևտրական ցանցում, ինչը գնորդների և խանութի սեփականատերերի դժգոհությունը առաջ բերեց: Պետական սանիտարական ծառայությունն այս փաստով հետաքրքրվեց և հետազոտություն սկսեց, թե ինչպես է գործում խոտանված սուրճը սպառողների առողջության վրա: Մինչև հետազոտության արդյունքների հրապարակումը արտադրությունը դադարեցրեց աշխատանքը: Մենեջերները գտնում են, որ խուճապի մատնվելու հիմք չկա և արտադրանքի որակի բարելավումը հնարավոր է, քանի որ ինչպես սարքերը, այնպես էլ ռեսուրսները միանգամայն նոր են: Այդ պատճառով լավագույն մասնագետների օգնությամբ հիմնախնդիրը կլուծվի:

«Պրինցեսան» մի քանի տարի առաջ սկսեց գործել մեկ ռեստորանից: Այն ժամանակ Վրաստանում նման սպասարկման առաջարկը նորություն էր: Չնայած շատ հետևորդներ հայտնվեցին, շուկայում նրա տեղը հաստատված է, հաջողության պատճառը մենեջերը համարում է

խոհարարների լավագույն թիմը: Ռեստորանը հումքի որակի, ժամանակին մատակարարման և մատուցման հետ կապված հիմնախնդիրներ երբեք չի ունեցել:
«Պրինցեսան» ցանցը ընդարձակում է պահանջարկի աճին զուգահեռաբար. տարեկան մայրաքաղաքում կամ Վրաստանի որևէ տարածաշրջանային կենտրոնում մեկ նոր օբյեկտ է բացվում: Վերլուծաբանների կանխագուշակությամբ՝ 3-5 տարի հետո շուկայի մեծացման թափը 4-6 անգամ կկրճատվի, իսկ մրցակցության ինտենսիվությունը կպահպանվի կամ աճը կշարունակի:

Քայլ 2 – Ձեր կողմից անվանված պլանը (ռեսուրս, արտադրանք, տեխնոլոգիա, թափոնների կառավարում, զբաղվածների մասին հոգածություն...) որքանո՞վ է պատասխանում կայուն զարգացման հիմնական տեսանկյուններին: Բացատրե՛ք կոնկրետորեն**: (Հաստ. պատկ. 2)**

Ռեսուրս. Դասագիրք, Մրցակցություն և շուկա, էջ 191
Աշակերտի գիրքում (էջ 197) **տրված օգտակար ռեսուրսներ.**
Մրցակցություն. https://bit.ly/3HQKsL1
Մենաշնորհ ազատ շուկայի պայմաններում. https://bit.ly/3kTo2Qk

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 191
Բաժանե՛ք ստորև տրված իրավիճակները և պատասխանե՛ք **հարցերին.**

ԻՐԱՎԻՃԱԿ 1

- Պարոն Գիորգին գտնում է, որ շուկան կակաոյի միագույն արտադրանքով է հագեցած, այդ պատճառով նա կարող է պատեհ առիթից օգտվել և ռիսկային ձեռնարկում պլանավորել, շուկային տարբեր բույսերի սերմից պատրաստված նորարարական, կակաո պարունակող արտադրանքներ առաջարկել: Դրանց արտադրությունը Գիորգին սկսեց մեկ ամիս առաջ: Փորձարկվող արտադրանքը շատ ավելի բուրավետ և համեղ ստացվեց, քան բնօրինակը: Սկսնակ ձեռնարկատերը որոշեց շուկան նվաճել:

Հարցեր.

- Իրատեսական համարո՞ւմ եք այս նպատակի իրականացումը:
- Ի՞նչն է յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ հաջողության գաղտնիքը:
- Օգնե՛ք պ-ն Գիորգիին գաղափարը դարձնել իրականություն: Այդ նպատակով խմբերում այնպիսի գործնական պլան պատրաստե՛ք, որի փուլային իրականացումից հետո պ-ն Գիորգին կկարողանա մրցակիցներին հաղթել:
- Կարո՞ղ է ձեռնարկատերը նախապես որոշել, թե որքանով է ապրանքի կամ սպասարկման իր կողմից առաջարկված որակը ապահովում արտադրանքի մրցունակությունը:

- Ինչպե՞ս պետք է գործի բիզնեսը շուկայում իր գոյությունը երկարաձգելու համար:
- Պլանի շնորհանդեսից հետո տվեք հանձնարարականներ (առնվազն՝ 3 հանձնարարական) պ-ն Գիորգիին՝ ո՞ր դեպքում նրա համար կհեշտանա մրցակիցներին պարտության մատնելը:

ԻՐԱՎԻՃԱԿ 2

Պատկերացրե՛ք, որ ձեր ընկերությունը (ընտրե՛ք անուն) վաճառում է աշակերտական պայուսակներ: Ուսումնական տարվա սկզբին բոլոր աշակերտները պայուսակ ձեռք բերեցին, իսկ ձեզ մոտ մեծ քանակությամբ իրացնելու ենթակա ապրանք մնաց:

Հարցեր.

- Մտածե՛ք, ձեր շրջանում պայուսակները վաճառելու նպատակով ի՞նչ միջոցների կդիմեիք:
- Ի՞նչն է շուկայում արտադրանքի երկարատև գոյությանը նպաստող գործոնը:
- Կազմե՛ք ընկերության գործունեության պլան և պատրաստե՛ք շնորհանդես:
- Հիշե՛ք, որ շնորհանդեսի համար խումբն ունի 5 անդամ:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 195

Ինչպե՞ս մուտք գործենք շուկա:

Խմբավորվե՛ք հնգյակներով, ընտրե՛ք ձեզ հետաքրքիր բիզնեսը: Որոշե՛ք գործնական շուկան: Ձեր խնդիրն է հաստատվել այդ շուկայում: Դրա համար անհրաժեշտ կլինի մրցակիցների մասին տեղեկատվություն հավաքել: Պարզաբանեք՝

Հարցեր.

- Ո՞ր շուկաներն են իշխում այդ շուկայում:
- Ո՞ր թույլ և ուժեղ կողմերն ունեն մրցակիցների արտադրանքները և ծառայությունները:
- Որքանո՞վ արդյունավետ են արտադրանքի առաջարկության ձևերը սպառողի համար:
- Ի՞նչ թերություններ նկատեցիք նրանց գործունեությունում:
- Մտածե՛ք, ինչպե՞ս կարող եք այդ թերությունները վերացնել:
- Պատրատե՛ք շնորհանդես: Շնորհանդեսի համար յուրաքանչյուր խումբն ունի 5 րոպե:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 197

Ստեղծե՛ք խմբեր և, նկատի ունենալով շուկայում մրցակցության ասպեկտները, մշակե՛ք չափանիշներ, որոնք դուք անպայման հաշվի կառնեք մրցակցությանը դիմակայող բիզնես պլանավորելիս:

Ռեսուրս. Դասագիրք, Բիզնեսի պլանավորում, էջ 198

Աշակերտի գիրքում (էջ 205) **տրված օգտակար ռեսուրսներ.**

- Ինչպե՞ս կազմենք բիզնես պլան https://bit.ly/3S0kiJu
- 10 հաջողակ բիզնես, որոնք սկսվեցին փոքր ավտոտնակում https://bit.ly/3XqOrT9
- Ձեզ հարկավոր է բիզնես պլա՞ն վարկ վերցնելու համար https://bit.ly/3HSWRwU
- Ի՞նչ է բիզնես պլանը, և ի՞նչ տեղեկատվություն պետք է ներառնի փաստաթուղթը https://bit.ly/3DXFWbd
- Այն, ինչը դպրոցում չեն սովորեցնում. Ինչո՞ւ են հարկավոր հարուստ մարդիկ https://bit.ly/3YhuT4Z
- Միլիոնդոլարանոց գաղափարներ https://bit.ly/3jVevIv
- Ինչպե՞ս սկսենք բիզնես: Այն ամենը, ինչը պետք է գիտենաք: https://bit.ly/3XqEBAR
- Ինչպե՞ս գրենք բիզնես պլան https://bit.ly/40MMKSV
- Ի՞նչ է բիզնես-պլանը, և ի՞նչ տեղեկատվություն պետք է պարունակի փաստաթուղթը https://bit.ly/3Yp6uun
- Ի՞նչ է HACCP https://bit.ly/3IkhraM

Ակտիվություն. Քննարկեք, էջ 198

Ծանոթացե՛ք ստորև տրված իրավիճակին և պատասխանե՛ք **հարցերին.**

- Ո՞ր հիմնական փուլերը կարելի է առանձնացնել գործարար կազմակերպության ձևավորման գործընթացում:
- Ի՞նչ է բիզնեսի պլանը, և ինչո՞ւ է այն անհրաժեշտ նոր բիզնեսի հիմնադրման համար:
- Ո՞ւմ և ի՞նչ նպատակով է հարկավոր բիզնեսի պլանում ներկայացված տեղեկատվությունը:
- Մտածե՛ք չորս հարց, որոնք ֆիրմային կօգնեն իր բնութագրության մեջ:
- Ընտրե՛ք արտադրության որևէ ձև և դասագրքում առաջարկված աղյուսակի (էջ 197) համաձայն, որոշեք մեկ ամսվա հավանական ծախսերը:

Վերլուծեք.

- Ո՞ր հարցերի պատասխանը պետք է գիտենաք, որպեսզի մեկ ամսվա բյուջեն ճիշտ որոշեք:
- Կարելի՞ է, արդյոք, նախապես որոշել բիզնեսի հաջողությունը, եթե չունենաք տեղեկատվություն հավանական եկամուտների մասին:
- Կոնկրետ ձեռնարկատիրական գործունեության քննարկման հիման վրա թվարկե՛ք շահույթի մեծացման և ծախսերի կրճատման գործոնները:
- Ինչպիսի՞ն է ձեռնարկատիրոջ դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման մեջ:
- Ձեռնարկատերը, արդյոք, պատասխանատո՞ւ է այն մարդկանց ճակատագրի համար, ովքեր աշխատում են իր ձեռնարկությունում: Պատասխանը հիմնավորե՛ք:

Հանձնարարական ուսուցչին. Այս պարագրաֆում առաջարկված տեղեկատվությունը և ակտիվությունները համալիր առաջադրանքի արգասիքի հետ ուղիղ կապի մեջ են և կարելի է հետադարձ կապի ժամանակ աշակերտներին խնդրել մեկ անգամ կրկին հիշել բիզնես պլանի

կառուցվածքը, դրա բնութագրիչները, որոնք օգտակար կլինեն առաջադրանքը կատարելու ժամանակ: Ցանկալի է կրկին ակտիվացնել ուղղորդող հարցերը, որոնք տրված են մատրիցայում համալիր առաջադրանքի վրա աշխատանքի առաջին փուլում:

Ռեսուրս. Դասագիրք, Ուսումնասիրենք շուկան, էջ 206
Ակտիվություն, Քննարկե՛ք, էջ 206
Հարցեր.

- Ինչպե՞ս եք հասկանում **շուկայի հետազոտությունը:**
- Ի՞նչ տեղեկատվության պետք է տիրապետի ձեռնարկատերը, որպեսզի իրավունք ունենա համարձակորեն հայտարարել. «Ես այս շուկան ճանաչում եմ»:
- Ինչո՞ւ հաջողակ սրճարանը չի դադարեցնում նորույթներ առաջարկել և հավելյալ ծախսեր անելը, եթե գիտի, որ այդ նորույթները մրցակիցները շատ արագ կընդօրինակեն:
- Ինչպե՞ս են կարողանում նորարարական ընկերությունները այնպիսի նորույթներ մտածել և առաջարկել, որոնք արժանանում են սպառողի հավանությանը:
- Ինչո՞ւ բոլոր ընկերությունները չեն ձգտում անձամբ լինել նորույթի մեկնարկողներ:

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 207
Անվանե՛ք բիզնեսի այնպիսի ոլորտ, որտեղ ցանկություն կունենայիք գործարարություն սկսել՝ որպես անհատ ձեռնարկատեր, և որին մեծ ֆինանսավորում անհրաժեշտ չէ: Գաղափարներից ընտրե՛ք երեքը, որոնք բոլորից լավ եք ճանաչում: Բաժանվե՛ք 3 խմբի: Յուրաքանչյուր խումբը պետք է հետազոտի մեկական շուկա:
Սահմանե՛ք բիզնեսին բնութագրական բոլոր նշանները.

- ճյուղում գործող ձեռնարկությունների քանակը,
- ապրանքի տեսակները,
- ճյուղ մտնելու պարզությունը, մրցակիցները,
- ինչպիսի՞ միջավայրում պետք է գործեք,
- ծախսերի մակարդակը,
- ապրանքի (ծառայության) գինը,
- շուկայում հաստատվելու մարտավարությունը,
- հիմնադրվելուց հետո որքա՞ն ժամանակում կհասնեք հաջողության,
- բիզնես ձեռնարկելու հավանական բյուջեն:

Պատրաստե՛ք փաստարկների շնորհանդես.
ա) Ինչո՞ւ է շահավետ այդ գործունեությունը սկսելը:
բ) Ինչո՞ւ չարժի այդ գործունեությունը սկսել:

Ակտիվություն. Քննարկե՛ք, էջ 213
Հարցեր.

- Բնութագրե՛ք ձեր ընտանիքին՝ որպես սպառողի:
- Բնութագրե՛ք ձեր ընկերոջը՝ որպես սպառողի:
- Ինչպիսի՞ սպառող եք դուք ինքներդ: Օրինակ, ձեզ անհրաժեշտ ապրանքը ձեռք բերելու քանի՞ աղբյուր գոյություն ունի: Ի՞նչ հաճախականությամբ եք հագուստ գնում:
- Հագուստ գնելիս ի՞նչն է ձեզ համար կարևոր (ընտրե՛ք երեք ամենակարևոր հատկանիշները).

ա) գույնը,
բ) հարմարավետությունը,
գ) դիմացկունությունը,
դ) գործվածքը,
ե) գինը,
զ) հազվագյուտ լինելը,
է) մակնիշը, աքսեսուարները,
ը) բրենդը,
թ) մոդայիկ լինելը,
ժ) օգտագործման տևողությունը,
ի) հասակակիցների շրջանում հանրահայտությունը:

- Ի՞նչ բնութագրիչներ պետք է ունենա ապրանքը (հագուստը, կոշիկը, աքսեսուարները...), որպեսզի հետաքրքրի ձեր հասակակիցներին՝ որպես սպառողների:

Ռեսուրս. Դասագիրք, Բիզնեսի ֆինանսավորում, **էջ 214**
Աշակերտի գրքում (էջ 217) տրված օգտակար ռեսուրսներ.
_Ճանապարհ դեպի ֆինանսական անկախություն_Բոդո Շեֆեր, Մաս 2 https://bit.ly/3iXAKgy

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 214
Ծանոթացե՛ք իրավիճակին և քննարկե՛ք տրված հարցերի համաձայն.

- Ի՞նչ հարցեր կառաջադրե՛ք ձեր ընկերոջը մինչև կհամաձայնեք փոխառություն տալու մասին:
- Ի՞նչ դեպքում կհամաձայնեք որպես փոխառություն գումար տալ:
- Ի՞նչ պայմաններ կառաջադրեք փոխառուին:
- Փոխառություն տալուց հրաժարվելու դեպքում ի՞նչ խորհուրդ կտայիք ընկերոջը՝ որտեղ փնտրի հավելյալ ֆինանսավորման աղբյուր:
- Աշխատանքն ավարտելուց հետո համադասարանցիներին ծանոթացրեք ձեր խմբի աշխատանքին և տարբեր խմբերի աշխատանքներում նշեք նման պատասխանները:
- Կունենա՞ն, արդյոք, նույն կամ նման հարցեր բանկի աշխատակիցները, եթե ձեր ընկերը որոշի վարկ վերցնել բանկից:

ԻՐԱՎԻՃԱԿ 1
Ձեր ընկերը մտադիր է իր սեփական ձեռնարկությունը բացել: Մի օր եկավ ձեզ մոտ և հայտնեց, որ միջոցները չեն բավարարում սարքավորանք գնելու համար և ձեր ծննդյան օրը նվեր ստացած խնայողությունը՝ 1000 լարի, խնդրեց իրեն տալ որպես փոխառություն:
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, էջ 217
Բաժանվե՛ք խմբերի: Դո՛ւրս գրեք պայմանները, որոնք, ձեր կարծիքով, ձեռնարկատերը պետք է բավարարի, որպեսզի բանկը համոզված լինի, որ վարկը չի յուրացվի և վարկառուն կլինի փոխառությունը պատվով վճարող:
Պատրաստե՛ք շնորհանդես: Աշխատանքի համար տրված է 10 րոպե ժամանակ:
Աշխատանքի վերջնական տարբերակը պահեք մինչև հաջորդ դասաժամը, երբ դուք որևէ բանկի տեղեկատվական բուկլետի միջոցով կծանոթանաք փոխառության պահանջներին:

- Համեմատե՛ք ձեր պահանջները բանկի պահանջների հետ, ո՞ր հարցերը նկատի չեք ունեցել:
- Դուք եթե սեփական ձեռնարկություն բացելու գաղափար ունենաք, ինչպե՞ս կֆինանսավորեիք:
- Ֆինանսավորման այդ ձևը ընտրեցիք այն պատճառով, որ իրական հնարավորություն հայտնվե՞ց, թե՞ այն պատճառով, որ գերապատվությունը ֆինանսավորման այս աղբյուրին եք շնորհում:

Հանձնարարական ուսուցչին. Աշակերտներին խնդրե՛ք մտածել՝ վերջին ակտիվություններից ինչ կավելացնեն չափանիշների բանկին: Վերջում նրանց հետ միասին վերանայեք մշակված «Բիզնես պլանի չափանիշների բանկը», վերլուծե՛ք, համեմատե՛ք ներկայացված չափանիշները, խմբավորե՛ք, կատարե՛ք դրանց մոդելավորում:
Քննարկե՛ք՝ վերջնականապես ընտրված չափանիշները որքանով են ապահովում ձեր բիզնես պլանի համապատասխանությունը կայուն բիզնեսի սկզբունքներին:

Ամփոփման համար մեկ անգամ կրկին հարցրեք աշակերտներին, թե ինչ արտադրանք են մտադիր պատրաստել, արդյոք, մնացի՞ն անպատասխան հարցեր: Ինչ վերաբերում նրանց կողմից համալիր առաջադրանքը ներկայացնելուն և հետադարձ կապին, դրանում կօգնի սկզբից ևեթ մշակված զարգացնող գնահատման անալիտիկ խորագիրը:
Դրա հետ միասին կիրառում ենք նաև աշակերտների ինքնագնահատման խորագիրը (էջ 218), որը տրված է առաջին գլխի վերջում:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Նկարագրե՛ք՝ ինչպե՞ս է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը.

- Ինչպե՞ս եք պլանավորում/պլանավորեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ի՞նչ էիք նկատառում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Ունեի՞ք, թե՞ ոչ նախնական պլան առաջադրանքի վրա աշխատանքի համար: Որքանո՞վ այդ պլանը օգնեց աշխատանքի գործընթացում: Անհրաժեշտ էր, արդյոք, նախնական աշխատանքային պլաններում փոփոխություններ մտցնելը: Ինչո՞ւ:
- Ու՞մ հետ և ինչպե՞ս համագործակցեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Հանդիպեցի՞ք, թե՞ոչ տարբերվող կարծիքներ ունեցող մարդկանց: Որքանո՞վ օգնեց այլ մարդկանց հետ համագործակցությունը:
- Կիրառեցի՞ք, թե՞ ոչ տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Ինչո՞ւմ օգնեց տեխնոլոգիաների կիրառումը:
- Ի՞նչ արտադրանք ստեղծեցիք համալիր առաջադրանքի տեսքով:

Բացատրեք՝ ինչ գիտելիք և փորձ ձեռք բերեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:

- Ի՞նչ հարցի է վերաբերում ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ գիտեիր ուսանելի հարցի մասին: Ի՞նչ նոր բան իմացար: Լրացուցիչ ի՞նչ կուզենայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացության հանգեցրեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ինչո՞վ են հաստատվում ձեր կողմից կատարված եզրակացությունները:
- Ու՞մ համար և ինչո՞ւ է ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ միջոցներից օգտվեցիք ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար:/Համալիր առաջադրանքը ավելի լավ կատարելու համար:

Գնահատե՛ք՝ որքանով արդասաբեր և հետաքրքիր էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:

- Գնահատե՛ք՝ որքանով ստացվեց առաջադրանքի կատարումը: Որքանո՞վ այն համընկավ ուսուցչի սպասելիքներին:
- Ի՞նչը կատարեցիք ինքնուրույն: Ինչո՞ւմ անհրաժեշտ եղավ այլոց օգնությունը:

- Ի՞նչ գործոններ նկատի ունեցաք/պետք է նկատի ունենաք այն բանի համար, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լիներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ և որքանո՞վ է տարբերվում ձեր կողմից կատարված առաջադրանքը համադասարանցիների աշխատանքներից:

Ի՞նչ կկատարեիք այլ կերպ, եթե նորից սկսեիք առաջադրանքի վրա աշխատել:

Աղյուսակ 3

Որոշող գնահատման խորագիր

Թեմա . **Ձեռնարկատիրություն և բիզնես** **Հիմնական հարց. Ձեռնարկատերերի պատասխանատվություն, բիզնեսի կայունություն, «Մոլորակը փրկելու համար «Պատագոնիայի», սեփականատերը օտարում է իր ընկերությունը» էջ 139-141)** **Աշակերտ**		
Գնահատման չափանիշ	**Առավելագույն միավոր**	**Մեկնաբանություն**
Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա. • Հիմնավորել Իվոն Չուինարդի՝ որպես ձեռնարկատիրոջ, գործատուի, հարկավճարի դրական ազդեցությունը հասարակության, սոցիումի վրա, վերլուծել, թե «Պատագոնիայի» սեփականատիրոջ նոր որոշումը ինչ կփոխի հասարակության, սոցիումի վրա ազդեցության տեսակետից:	**1,5**	
Ժողովրդավարություն- Աշակերտը պետք է կարողանա. • Կապել Չուինարդի սկզբնական պահանջմունքը և կարիքները (հատուկ համազգեստ) իր տնտեսական իրավունքի (վարել բիզնես, ստանալ շահույթ, կատարել բարեգործություն, օտարել գույքը...) պարտականության հետ (պետությանը վճարել հարկեր, որոշումները համապատասխանեցնել իրավական նորմերին, ժողովրդավարության սկզբունքներին):	**1,5**	
Քաղաքացիական մասնակցություն- Աշակերտը պետք է կարողանա. • Քննարկել՝ ինչու որոշեց Չուինարդին ստանձնել սոցիալական պատասխանատվություն կլիմայի փոփոխությունները կրճատելու	**1,5**	

նպատակով, և նույնիսկ մեկ անգամյա բարեգործության համար գումար չհատկացրեց, այլ «բաժնետեր դարձրեց երկրագնդին»: Գնահատել ընտրված ճանապարհի արդարացիությունը:		
Կայուն զարգացում- Աշակերտը պետք է կարողանա. • Քննարկել, թե «Պատագոնիայի» զարգացման տարբեր փուլերում որքանով էին նախատեսված կայուն զարգացման սկզբունքները և ինչ փոփոխվեց այդ ուղղությամբ վերջին փուլում:	**1,5**	

Որոշող գնահատման առաջարկված խորագիրը հիմնված է առակայական չափորոշչում տրված **թեմայի սահմաններում արդյունքներին հասնելու ինդիկատորներին (թիրախային հասկացությունների համաձայն)** և նախատեսված է ամփոփիչ առաջադրանքի գնահատման համար, ինչը իր հերթին նպատակամղված է հասկացություններին կողմնորոշմամբ թեմայի կամ դրա մասի ամփոփմանը**:**

Ամփոփիչ առաջադրանքի համար խորհուրդ է տրվում ընտրել ենթատեքստ-օրինակ և նախապես տալ աշակերներին ծանոթանալու/վերլուծելու համար: Նրանք կգիտենան, որ մոտավորապես մեկ շաբաթում իրենք պետք է ամփոփիչ առաջադրանքը կատարեն առաջարկված հարցերի համաձայն, որոնք կապված կլինեն տրված ենթատեքստ-օրինակին:

Այս դեպքում ընտրեք «Մոլորակի փրկության համար «Պատագոնիայի» սեփականատերը սեփական ընկերությունն է օտարում» ենթատեքստ-օրինակը (էջ 139-141), աշակերտը նախապես ծանոթացել է դրան: Նշանակված օրը տալիս եք առաջադրանքի պայմանը.

«Ծանոթացե՛ք «Մոլորակի փրկության համար «Պատագոնիայի» սեփականատերը սեփական ընկերությունն է օտարում» տեղեկատվությանը (էջ 139-141) և պատրաստե՛ք փաստարկված էսսե (150-200 բառ). ինչո՞ւ օտարեց Չուինարդին «Պատագոնիան»:

Աշխատանքում ընդգծված ներկայացրեք.

- Ինչի՞ վրա հիմնվեց Չուինարդիի բիզնես գաղափարը, և ի՞նչ ազդեցություն ունեցավ «Պատագոնիան»՝ որպես բիզնես: Ի՞նչ կփոխի նոր որոշումն այդ տեսակետից:
- Ինչպե՞ս էր «Պատագոնիան» ձեռնարկատիրության տարբեր փուլերում նախատեսում սեփական իրավունքները և պարտականությունները և ի՞նչ վերաբերմունք ուներ պետության, ժողովրդավարության սկզբունքների նկատմամբ (տնտեսական ազատություն, օրենքի գերակայություն): Ինչպե՞ս է վարվում նոր որոշումների պայմաններում երկընտրանքներից խուսափելու համար:

- Ինչի՞ վրա հիմնվեց Չուինարդիի նոր որոշումը, ի՞նչը դրդեց նրան ստանձնել սոցիալական պատասխանատվություն: Ինչո՞ւ ձեռնարկատերը հիմնախնդիրը կարգավորելու համար ընտրեց մեկանգամյա ռեսուրսի (բարեգործության տեսքով) տրամադրումը, «երկրագնդի համար բաժինը կիսելը»:
- Ձեռնարկատիրության տարբեր փուլերում ինչպե՞ս էր նախատեսում «Պատագոնիան» կայուն զարգացման սկզբունքները: Ի՞նչ փոխեց այդ առնչությամբ վերջին որոշումը:

Ցուցում. Պատասխանները գրում եք ոչ թե առանձնացված, այլ ամբողջացված տեսքով, ինտեգրելով էսսեի տեքստում:

Հանձնարարական ուսուցչին. Այս գլխում տրված է երեք որոշող գնահատման խորագիր և ամփոփիչ առաջադրանքի հարցաշար: Երրորդ ամփոփիչ առաջադրանքը և խորագիրը պարունակում են վերջին երկու հարցը (III և IV գլուխը): Այս երեք ամփոփիչ առաջադրանքներից կարող եք ընտրել՝ որ և քանի ամփոփիչ առաջադրանք կատարեն աշակերտները առաջին կիսամյակում կամ ընդհանրապես պատրաստեք ամփոփիչ առաջադրանքի ձեր տարբերակները:

Թեմա 2. Քաղաքականություն և քաղաքական մշակույթ
Թեմատիկ մատրիցայի տիտղոսաթերթ

Թեմայի վերնագիրը. Քաղաքականություն և քաղաքական մշակույթ **Դասաժամերի ենթադրական քանակը.** 35 ժամ **Հիմնական ռեսուրս.** Դասագիրք «Սիդի» հրատարակչություն				
Թիրախային հասկացություններ	**Հիմնական հարց 1 Քաղաքական գործընթաց**	**Հիմնական հարց 2 Քաղաքական գաղափարախոսություններ և ռեժիմներ**	**Հիմնական հարց 3 Կայուն քաղաքականություն**	**Հիմնական հարց 4 Քաղաքացիական մասնակցություն քաղաքականությունում**
Հասարակություն	Ենթահարց. ❖ **Ուինսթոն Չերչիլ - քաղաքական առաջնորդ** Ենթահասկացություններ ❖ **Գաղափար (Ամբողջացնող գաղափար), բնույթ/կամք**			

Ժողովրդավարություն		Ենթահարց. ❖ **Արխիվային լրաբեր» №2. 2008 թ. Վրաստանի Ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն** (Միխեիլ Ջավախիշվիլիի գործը) Ենթահասկացություններ. ❖ Մարդու իրավունքներ – **Անձնական անձեռնմխելիության իրավունք, արդարադատ դատարանի իրավունք** ❖ Ժողովրդավարության սկզբունքները – **օրենքի գերակայություն, իշխանության բաշխում**		
Քաղաքացիական մասնակցություն				Ենթահարց. ❖ **«Մարդ, որը ժամանակից առաջ անցավ»** (Նիկո Նիկոլաձե) Ենթահասկացություններ. ❖ **Ընտրություններ, մասնակցության սանդուղք**
Կայուն զարգացում			Ենթահարց. ❖ **2022 թվականին բրիտանական**	

			«Գարդիան» թեր-թում հրապարակ-ված հոդված Ենթահասկացություն. ❖ **Կայուն զարգաց-ման նպատակ 17**	

Թեմայի հետ կապված հաստատուն պատկերացումներ

- Անհատները քաղաքականության ակտիվ սուբյեկտներ են: Նրանց անձնական հատկությունները, արժանիքները, ունակությունները, մարդ-կանց և խմբերի հետ հարաբերությունները որոշում են երկրների և համաշխարհային քաղաքականությունը (**թիրախային հասկացություն՝ «Հասարակություն**),
- Քաղաքական գործունեությունը մարդու իրավունքների պաշտպանությանը կողմնորոշված և ժողովրդավարության սկզբունքների պաշտպանությամբ է իրականացվում (**թիրախային հասկացություն՝ «ժողովրդավարություն»):**
- Քաղաքականությունում մասնակցության բազմաթիվ ճանապարհներ գոյություն ունեն (ընտրություններ, հանրաքվե, մանիֆեստացիա և այլն), դրա հետ միասին քաղաքականությունում մասնակցությունը բացառում է բռնության արարքները/(**թիրախային հասկացություն – «Քաղաքացիական մասնակցություն»),**
- Քաղաքականություն իրականացվում է կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների հաշվառումով (**թիրախային հասկացություն - «Կայուն զարգացում»):**

XI դասարանի պարտադիր թեմայի՝ «Քաղաքականությունը և քաղաքական մշակույթը», առաջին հիմնական հարցը «**Քաղաքական գործընթացն»** է: Այս հարցի առնչությամբ աշակերտի նախնական գիտելիքի ակտիվացումը և նոր գիտելիքի կառուցումը կատարվում է Ուինսթոն Չերչիլի քաղաքական կենսագրության քննարկմամբ և դրան մոտ կանգնած օրինակներով.

Հիմնական քեյս և օրինակներ համեմատության համար	**Ռեսուրսներ**
Հիմնական քեյս. Ուինսթոն Չերչիլ	• Դասագիրք, II մաս, էջ 7-10 • Ուսուցչի գիրք, Հավելված 5, էջ 186
Օրինակ՝ համեմատության համար 1.	• Դասագիրք, II մաս, էջ 21-22

Քրիստին Լազարդ: Ուրսուլա ֆոն դեր Լեյեն	
Օրինակ՝ համեմատության համար 2. Նահանգապետի ընտրություններ	• Դասագիրք, II մաս, էջ 29-33
Օրինակ՝ համեմատության համար 3. Վալերիա Նովոդվորսկայա	• Դասագիրք, II մաս, էջ 36-37

Հիշեցնենք.

Նոր գիտելիքի կոնստրուկտիվ կառուցումն ապահովելու համար կարևոր է աշակերտներին առաջարկենք նրանց գիտելիք-փորձին հասանելի այնպիսի օրինակներ (մասնավոր դեպքեր, իրավիճակներ, պատմություններ), որոնց քննարկում-վերլուծումը կօժանդակի նրանց թիրախային գիտելիքը (ենթահարցը, ենթահասկացությունները, թիրախային հասկացությունները) ըմբռնելուն և յուրացնելուն: Ենթատեքստ–օրինակները ճիշտ այդպիսի օրինակներ կարող ենք անվանել: Այդ պատմությունները պետք է ընտրվեն պարտադիր թեմաների շրջանակներում հստակեցված հիմնական հարցերի համաձայն և պետք է ցույց տան կենսական իրավիճակներ (երկընտրանքներ, էմոցիաներ):

Այստեղ ևեթ ընդգծված նշում ենք, որ ուսուցչի գրքում առաջարկվող հիմնական ենթատեքստ-օրինակները կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, այսինքն՝ կարող եք հիմնական գործառույթը վերագրել դասագրքում ներկայացված մեկ այլ ենթատեքստ-օրինակի և դրա վրա հիմնվելով ձևակերպել համալիր առաջադրանքի պայմանը:

Ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հիմնական ենթատեքստ-օրինակի վերլուծության վրա: Դրա մշակումը կատարվում է խորքային՝ ենթատեքստը, էմոցիոնալ-սոցիալական տեսանկյունները նկատի ունենալով, իսկ համեմատության համար ընտրված օրինակները հիմնականում ֆոնային գիտելիքի դեր են կատարում:

Ենթատեքստ-օրինակի առաջնային մշակման ժամանակ ուսուցիչը ուղղորդող հարցերով, ակտիվություններով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն մանրամասնությունների վրա, որոնք մշակվող ենթահասկացությունների, թիրախային հասկացությունների հետ կապի մեջ են: Օրինակ՝ կոնկրետ դեպքում ենթատեքստ - օրինակի այն ծավալի վրա ենք փորձում կենտրոնանալ, որոնք հանգուցային հարցերում էլ (ինչ գործոններ և ինչու են պայմանավորում պետության միջամտությունը ազատ շուկայի կարգավորման գործում: Ինչպե՞ս պատկերացնել պետության առջև ծառացած երկընտանքները/մարտահրավերները մարդու իրավունքների պաշտպանության պարտականությունների և տնտեսական ազատության սկզբունքի պահպանության կապակցությամբ) որոշված են

Աղյուսակ թիրախային գիտելիքի որոշման համար

Թեմա – Քաղաքականություն և քաղաքական մշակույթ	

Հիմնական հարց – Քաղաքական գործընթաց **Հիմնական ենթատեքստ-օրինակ** - Ուինսթոն Չերչիլ՝ քաղաքական առաջնորդ			
Ենթահարց	**Ենթահասկացություններ**		**Թիրախային հասկացություն**
Ուինսթոն Չերչիլ՝ քաղաքական առաջնորդ	Գաղափար (Ամբողջացնող գաղափար)	Բնավորություն/կամք	**Հասարակություն,(Արդյունքներ 1, 2, 4)**

Որոշելու համար, թե ինչ պետք է գիտենա աշակերտը ենթահարցի հետ կապված, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Աղյուսակ 1),** որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի ամբողջացված մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է մի քանի փուլում.

ա) նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և ուսանում-ուսուցման գործընթացը պլանավորելու փուլում (**ինչ ակտիվություններ, մեթոդներ, մարտավարություններ պետք է կիրառենք, որպեսզի աշակերտին օգնենք այս սպասումը իրական արդյունքի վերածելու մեջ),**

բ) հաջորդ ուսանում-ուսուցման գործընթացի մոնիթորինգի համար (**ինչպե՞ս է ընթանում գործընթացը, հայտնվեցի՞ն սպասելիքներին համապատասխան նշաններ: Ի՞նչ հարցեր պետք է օգտագործեմ որպես փայտամած),**

գ) ուսանում-ուսուցման գործընթացում և համալիր առաջադրանքը ավարտելու ժամանակ կոնկրետ հետադարձ կապի ձևավորման մեջ **(սպասելիքներից ո՞ր արտահայտությունները հարմար կլինեն աշակերտի արդյունքը նկարագրելու, խրախուսելու, խորհուրդ տալու համար),**

դ) վերջում՝ միջանկյալ և երկարաժամկետ նպատակների վրա աշխատանքը՝ մանկավարժական պրակտիկայի կառուցվածքային ինքնա-գնահատման համար **(իրատեսական սպասելիքները ո՞ր հաստատուն պատկերացման՝ Հաստ. պատկ. կապակցությամբ որոշեցի: Ո՞ր սպասելիքի համար գտա ճիշտ լուծումը ակտիվությունների և մեթոդների տեսքով: Որտե՞ղ պետք է փոխեմ մոտեցումը):**

Աղյուսակ 1.

Թիրախային հասկացություն Ենթահարց	**Թիրախային հասկացության կապակցությամբ Հաստ. պատկերացումներ**	**Սպասելիքներ** Աշակերտը կարող է.	**Ուսուցչի մեկնաբանությունը**

Հասարակություն (Արդյունքներ. 1, 2, 4) **Ուինսթոն Չերչիլ՝** քաղաքական առաջնորդ	1. Մարդը անձնավորություն է՝ իր արժանիքներով, աշխարհայացքով (գաղափարներ, արժեքներ) և ձգտումներով: Նա ունի սեփական անձը ազատ զարգացնելու իրավունք:	Չերչիլի և այլոց (Քրիստին Լագարդ, Ուրսուլա ֆոն դեր Լեյեն, Վալերիա Նովոդվորսկայա) օրինակին հենվելով քննարկել հաջողակ քաղաքագետին անհրաժեշտ/կարևոր անձնական հատկանիշները:	
	2. Մարդն ունի տարբեր (ֆիզիոլոգիական, անվտանգության, սոցիալական կապերի և այլն) պահանջմունքներ, առանց որոնց բավարարման նա չի կարողանա անհատապես զարգանալ:	Չերչիլի և դասագրքում տրված այլ քաղաքագետների (Քրիստին Լագարդ, Ուրսուլա ֆոն դեր Լեյեն, Վալերիա Նովոդվորսկայա) գործունեության վերլուծության հիման վրա քննարկել, թե ինչ մոտիվներ են ոգեշնչում քաղաքականության ակտորներին, ինչու է քաղաքա-կանությունում գտնվելը անձնական զարգացման ճանապարհներից մեկը:	
	3. Այլ անձանց/սոցիալական խմբերի/ինստիտուցիաների հետ հարաբերությունը օժանդակում է մարդու անձնական զարգացմանը:	Չերչիլի և դասագրքում տրված այլ քաղաքագետների (Քրիստին Լագարդ, Ուրսուլա ֆոն դեր Լեյեն Վալերիա Նովոդվորսկայա) օրինակներին հենվելով՝ նկարագրել, վերլուծել, թե որ հասարակական խմբերի և ինստիտուցիաների հետ է քաղաքագետներին հարկ լինում հարաբերակցել/համագործակցել, ինչ ազդեցու-թյուն էր գործում համագործակցության այս գործընթացը նրանց աշխարհայացքի և անձնական զարգացման վրա:	
	4. Մարդուն սոցիալականացման մեջ օգնում է ասերտիվությունը, սեփական կարծիքը առանց ուրիշին վիրավո-րելու վստահորեն արտահայտելու ունակությունը:	Չերչիլի և այլոց (Քրիստին Լագարդ, Ուրսուլա ֆոն դեր Լեյեն, Վալերիա Նովոդվորսկայա) օրինակին հենվելով քննարկել՝ որքանով է ասերտիվիզմը քաղաքական առաջնորդների գործնական սկզբունք, որքանով է այդ ունակությունը օգնում նրանց առաջադրված նպատակներին հասնելու գործում:	

Ստորև տրված միջանկյալ/համալիր առաջադրանքի մատրիցայում **(Աղյուսակ 2.)** բերված են համալիր առաջադրանքի պայմանը, գնահատման չափանիշները և իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, ուղղորդող հարցեր և կարճ հանձնարարականներ ուսուցչին):

Աղյուսակ 2.

Հարց. Քաղաքական գործընթաց		
Ենթահարց. Ուինսթոն Չերչիլ՝ քաղաքական առաջնորդ: **Ենթահասկացություններ –** գաղափար (ամբողջացնող գաղափար), բնավորություն/կամք, **թիրախային հասկացություն- Հասարակություն (Արդյունք. 1, 2, 4)**		
Հանգուցային հարց - Ինչո՞ւ և ինչպե՞ս է անձի բնավորությունը/կամքը պայմանավորում հաջողակ քաղաքական գործունեությունը: - Ինչպե՞ս աշխատանքում ներկայացնել այն երկընտրանքները/մարտահրավերները, որոնց առջև կանգնած են քաղաքագետները:		
Համալիր առաջադրանք Ծանոթացե՛ք XX դարի հայտնի քաղաքագետ Ուինսթոն Չերչիլի մասին աղբյուրում տրված տեղեկատվությանը (II մաս, էջ 7-10), համեմատե՛ք նրա գործունեությունը դասագրքում տրված այլ քաղաքագետների գործունեության հետ. Քրիստին Լագարդ (II մաս, էջ 21), Ուրսուլա ֆոն դեր Լեյեն (II մաս, էջ 22), Վալերիա Նովոդվորսկայա (II մաս, էջ 36-37): Գրե՛ք **էսսե,** որտեղ քաղաքագետների անձնական հատկանիշների և գործունեության վերլուծության հիման վրա կքննարկե՛ք քաղաքական առաջնորդի դերը լոկալ/գլոբալ հասարակական հիմնախնդիրների կարգավորման գործում: Ուշադրությունը կենտրոնացրե՛ք քաղաքական առաջնորդի հատկանիշների և կամքի՝ որպես գաղափարները կյանքի կոչելու նախապայմանների վրա: **Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.** • Ի՞նչ հատկանիշների, արժանիքների կրող պետք է լինի հաջողակ քաղաքական գործիչը: **(Հասարակություն: Հաստ. պատկ. 1.)** • Ո՞ր հասարակական կարիքների մասին են հոգում (ըստ օրինակների) քաղաքական գործիչները: **(Հասարակություն: Հաստ. պատկ. 2.)** • Ի՞նչ գործոններ են աջակցում քաղաքագետի կողմից սեփական գաղափարների իրականացմանը, տարբեր հասարակական խմբերի հետ հարաբերությանը: **(Հասարակություն: Հաստ.. պատկ. 4.)**		
Թիրախային հասկացության/հասկացությունների կապակցությամբ հաստատուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ՝	**Գնահատման չափանիշներ** Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.
Հասարակություն	**Հասարակություն**	**Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի**

1.Մարդը անձնավորություն է, իր սեփական աշխարհայացքով (գաղափարներ, արժեքներ) և ձգտումներով: 2.Նա ունի սեփական անձը ազատ զարգացնելու իրավունք: 3.Մարդն ունի տարբեր (ֆիզիոլոգիական, անվտանգության, սոցիալական կապերի և այլն) պահանջմունքներ, առանց որոնց բավարարման նա չի կարողանա անհատապես զարգանալ: 3. Այլ անձանց/սոցիալական խմբերի/ինստիտուցիաների հետ հարաբերությունը օժանդակում է մարդու անձնական զարգացմանը: 4.Մարդուն սոցիալականացման մեջ օգնում է ասերտիվությունը, սեփական կարծիքը առանց ուրիշին վիրավորելու վստահորեն արտահայտելու ունակությունը:	• Մարդկանց նկատմամբ էմպաթիա դրսևորել, գործոններ բացահայտել, որոնք ազդեցություն են գործում այս կամ այն իրավիճակում մարդու արարքների/որոշումների վրա, **(Հաստ. պատկ.1,2)** • վերլուծել գործոնները, որոնք նպաստում են/խանգարում են մարդու սոցիալականացմանը: **(Հաստ.պատկ. 3,4)**	**ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.** • Ի՞նչ հատկանիշների, արժանիքների կրող պետք է լինի հաջողակ քաղաքական առաջնորդը: **(Հասարակություն: Հաստ. պատկ. 1.)** • Ո՞ր հասարակական կարիքների մասին են հոգում (ըստ օրինակների) քաղաքական առաջնորդները: **(Հասարակություն: Հաստ. պատկ. 2.)** • Ի՞նչ գործոններ են աջակցում քաղաքագետի կողմից սեփական գաղափարների իրականացմանը, տարբեր հասարակական խմբերի հետ հարաբերությանը: **(Հասարակություն: Հաստ.. պատկ. 3. 4.)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I – Ծանոթացում համալիր առաջադրանի պայմանին

Ռեսուրս. Դասագիրք, **II թեմա: I գլուխ. Քաղաքական գործընթաց,** Համալիր առաջադրանքի պայման, II մաս, էջ 6

<u>Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.</u>

- Ուինսթոն Չերչիլի քաղաքական գործունեությունը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ հատկանիշներ պետք է ունենա քաղաքագետը:
- Ի՞նչ է էսսեի նպատակը: Ի՞նչ է էսսե:
- Վերհիշել, ինչպիսի՞ն է էսսեի կառուցվածքը:

- Ի՞նչ ռեսուրսներ անհրաժեշտ կլինեն:
- Ինչպե՞ս գրել լավ էսսե:
- Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնել էսսեի վրա աշխատելու ժամանակ:
- Ձեր բառերով ձևակերպեք՝ ինչի՞ն է վերաբերվում առաջադրանքը:
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք ուրի՞շ ժամանակ կատարե՞լ եք, արդյոք:

Հանձնարարական ուսուցչին.
Հարցերի միջոցով մեկ անգամ կրկին վերստուգեք, առաջադրանքի պայմանը բոլորի համար հասկանալի՞ է, թե՞ ոչ:
Հաղորդե՛ք աշակերտներին տեղեկատվություն այն մասին, որ մինչև համալիր առաջադրանքի կատարումը ուսանելի հարցին կտրամադրեք մի քանի դաս, և վերջում բոլորը կունենան կատարված առաջադրանքը դասարանին ներկայացնելու հնարավորություն:

Ուշադրություն:
Համալիր առաջադրանքի վրա աշխատանքը հիմնականում դասարանում, դասերի ժամանակ է ընթանում և միայն բացառիկ դեպքում եք կիրառում տնային առաջադրանքը:

Փուլ II – Համալիր առաջադրանքի վրա աշխատանք
<u>Թիրախային հասկացություն.</u>
Ենթահարց. «Ուինսթոն Չերչիլ՝ քաղաքական առաջնորդ, **ենթահասկացություններ –** գաղափար (ամբողջացնող գաղափար), բնավորություն/կամք, **Թիրախային հասկացություն- Հասարակություն (Արդյունք. 1, 2, 3, 4)**
Ենթատեքստ-օրինակների առաջնային մշակում

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով: II մաս, էջ 11
Ուշադրությամբ ծանոթացե՛ք 8-10 էջերին զետեղված տեքստին՝ «Ուինսթոն Չերչիլ» և լրացրե՛ք աղյուսակը:

- Թվարկած էմոցիոնալ-սոցիալական ունակություններից որի՞ն էր տիրապետում Չերչիլը:
- Այդ ունակությունների տիրապետումը որքանո՞վ պայմանավորեց նրա հաջողակ քաղաքական գործունեությունը: Ձեր կարծիքը հիմնավորե՛ք:

Էմոցիոնալ-սոցիալական ունակություններ	Հիմնավորե՛ք՝ այդ ունակությունները որքանո՞վ էին օգնում Չերչիլին անվանված նպատակներին հասնելու գործում

Հաղորդակցություն	
Կոլաբորացիա	
Էթիկա	
Պատասխանատվություն	
Էմպաթիա	
Բնավորություն/կամք	
Հիմնախնդրի կառավարում	

Հանձնարարական ուսուցչին.

Ինքներդ կարող եք որոշել, թե որ ենթատեքստ-օրինակը կկիրառեք: Մեր խնդիրն այն է, որ աշակերտները ըմբռնեն, որ քաղաքական առաջնորդ լինելը անձի ինքնաակտուալացման միջոց է, ինչը դրական ներգործություն է ունենում նաև հասարակության զարգացման վրա:

Ենթատեքստ-օրինակով մշակում ենք ենթահարցը՝ «Ուինսթոն Չերչիլը՝ քաղաքական առաջնորդ»: Այս ենթահարցը մի կողմից միացնում, միմյանց հետ կապում է թեման, հիմնական հարցը, և մյուս կողմից՝ ենթահասկացությունները՝ գաղափարը (ամբողջացնող գաղափարը), բնավորությունը, կամքը, որոնք ծառայում են «Հասարակություն» թիրախային հասկացությունը ըմբռնելու համար: Ինչ վերաբերում է օրինակների համեմատությանը, այստեղ նույնպես ուղղորդող հարցերով անց ենք կացնում զուգահեռներ:

Չափանիշ 1. Ի՞նչ հատկանիշների, արժանիքների կրող պետք է լինի հաջողակ քաղաքական գործիչը: **(Հաստ. պատկ. 1.)**

Ռեսուրս. Ուինսթոն Չերչիլ, **դասագիրք. II մաս, էջ 7-10**

Ակտիվություն 1. Աշխատե՛ք խմբերում, ծանոթացե՛ք տեքստին և պատասխանե՛ք հարցերին:

Հարցեր.

- Ինչպե՞ս կբնութագրեիք Ուինսթոն Չերչիլին՝ որպես քաղաքագետի: Ի՞նչ հատկանիշներ ուներ նա:
- Գլոբալ և լոկալ սոցիալ-քաղաքական ի՞նչ հիմնախնդիրների ծանոթացաք:
- Կոնկրետորեն ի՞նչ ազդեցություն գործեցին այս քաղաքագետները սեփական երկրի և գլոբալ քաղաքականության վրա: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ինչո՞ւ էր ձգտում Ուինսթոն Չերչիլը Եվրամիություն ստեղծել: Ո՞ր գլոբալ երևույթն էր դրա նախապայմանը:
- Չերչիլի համար ի՞նչն էր հանդիսանում Եվրամիություն ստեղծելու գլխավոր խնդիրը:
- Ի՞նչն էր Չերչիլի՝ որպես քաղաքագետի գլխավոր ձեռքբերումը: Ինչպե՞ս կգնահատեիք այդ ձեռքբերումները ժամանակակից տեսանկյունից:

- Քաղաքագետի ուժեղ լինելը որքանո՞վ է պայմանավորված նրա անձնական հատկանիշներով, շրջակա միջավայրով և մրցակիցներով: Ինչպե՞ս ազդեց Չերչիլի գործունեությունը հասարակության յուրաքանչյուր անդամի վրա:
- Համեմատե՛ք Չերչիլի և այլ քաղաքագետների (օր.՝ Քրիստին Լագարդի, Ուրսուլա ֆոն դեր Լեյենի) գործունեությունը: Ի՞նչ նմանություն/տարբերություն կառանձնացնեիք:
- Մի քանի՞ տասնյակ տարի է անցել Չերչիլի գործունեությունից, և նրա քաղաքական գործունեության վերլուծությունը, համեմատությունը տարբեր այլ քաղաքագետների հետ, չի դադարում: Ձեր կարծիքով, ինչո՞ւ:

Ռեսուրս. Ընդդիմադիր սըր Ուինսթոն Չերչիլ, **դասագիրք, II մաս, էջ 38-39**
Ակտիվություն. Քննարկե՛ք
- Վերհիշե՛ք Չերչիլի պատմությունը: Ինչո՞ւ կարող է զարմանք առաջացնել Չերչիլի ընդդիմադիր լինելը իր կյանքի վերջին շրջանում:
- Ինչո՞ւ էր այն ժամանակի մեդիան Չերչիլին անվանում «մեծ քաղաքագետ, ջենթլմեն և ասպետ»:
- Ինչո՞ւմ է արտահայտվում ջենթլմենությունը քաղաքականությունում: Կենցաղո՞ւմ:
- Ի՞նչ հատկանիշներ կառանձնացեիք Չերչիլի բնավորությունից: Ինչո՞ւ են այդ հատկանիշները կարևոր քաղաքագետի համար:

Ռեսուրս. Դասագիրք, II մաս, էջ 23
Ակտիվություն. Քննարկե՛ք
Աշակերտի գրքում (II մաս, էջ 43) **տրված օգտակար ռեսուրսները.**
Ինչո՞ւ էր Սոկրատեսը ատում ժողովրդավարությունը. https://bit.ly/3jWo2iz
Ժողովրդավարություն/democracy: https://bit.ly/3YvhF4T

Հարցեր.
- Քաղաքական թատրոնի մասնակիցների 3 խմբից ո՞ր մոդելին է պատկանում ստորև տրված իրավիճակի կերպարը:
- Ձեր կարծիքով, ո՞վ է շահագրգռված նման հանրահավաք կազմակերպելու հարցում:
- Խաղաղության պահպանման նպատակով կազմակերպված հանրահավաքում այսպիսի մարդկանց ելույթները որքանո՞վ են նպաստում քաղաքական հարցերի կարգավորմանը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ էր այդ հանրահավաքի նպատակը: Ինչպիսի՞ խումբ էր հավաքված ակցիային:
- Երբևէ լսե՞լ եք այնպիսի ակցիաների՝ բողոքի գործողությունների մասին, երբ մասնակիցները չգիտեն՝ ինչի՞ դեմ են բողոքում կամ ինչի՞ն կամ ո՞ւմ են աջակցում:

- Որքանո՞վ է ժողովրդավարության սկզբունքներին համապատասխանում նման հանրահավաքներ անցկացնելը: Դուք հաճա՞խ եք ցուցաբերում հասարակական ակտիվություն:
- Պատրաստվո՞ւմ եք, թե՞ ոչ այն բանին, որ քաղաքի, հայրենիքի ճակատագրի համար ստանձնեք պատասխանատվություն:
- Նկատի ունենալով ձեր տարիքը, դուք ո՞վ եք քաղաքական թատրոնում: Ո՞վ էր Ուինսթոն Չերչիլը քաղաքական թատրոնուում: Վալերիան Նովոդվորսկայա՞ն:

Չափանիշ 2. Ո՞ր հասարակական կարիքների մասին են հոգում (օրինակների համաձայն) քաղաքական առաջնորդները: **(Հաստ. պատկ. 2)**

Ռեսուրս. Վալերիա Նովոդվորսկայայի համառոտ կենսագրությունը. **դասագիրք, II մաս, էջ 36-37**
Ակտիվություն 1. Քննարկե՛ք. ծանոթացե՛ք տեքստին և պատասխանե՛ք հարցերին.
Հարցեր.

- Ո՞ր քաղաքական ակտիվությունը կառանձնացնեիք լրագրողի գործունեությունից: Ինչո՞ւ:
- Համարո՞ւմ եք, թե՞ ոչ Նովոդվորսկայային ընդդիմադիր բոլոր իշխանություններում:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ արժանացավ նա Վրաստանի քաղաքացիության շնորհման:
- Ի՞նչ եք կարծում, Նովոդվորսկայայի նման մարդկանց մեծաթիվ քանակը կարո՞ղ է իշխանության ոչ ժողովրդավարական որոշումները փոփոխել:
- Որքանո՞վ նշանակալից էր հայտնի լրագրողի գործունեությունը տեղական և համաշխարհային քաղաքականության համար:
- Ի՞նչ գիտեք աշխարհում հայտնի ընդդիմադիրների մասին: Վրաստանում գործող դիսիդենտների՝ այլախոհների՞ մասին: Ի՞նչն է միավորում նրանց պայքարը:
- Նրա ամբողջ գործունեությունը կապված էր պետական հաստատությունների դեմ պայքարի հետ: Հասարակությունում ո՞ր առաջադիմական փոփոխություններին կողմնորոշված գաղափարներն էր շահարկում (լոբբիացնում) և պաշտպանում Վալերիա Նովոդվորսկայա՞ն: Չերչի՞լը:
- Ո՞ր հասարակական կարիքներին էր կողմնորոշված նրա և ձեզ արդեն ծանոթ քաղաքագետների (Չերչիլ, Քրիստին Լագարդ, Ուրսուլա ֆոն դեր Լեյեն) գործունեությունը: Առանձնացրեք նմանությունը-տարբերությունը:

Ռեսուրս 2. Դասագիրք, II մաս, էջ 11
Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, ստորև տրված են հասարակական կյանքի տարբեր ոլորտներ: Համապատասխանեցրե՛ք յուրաքանչյուր ոլորտին աղյուսակի աջ սյունակից համապատասխան գործունեությունը:

Քաղաքական	Ներառում է սոցիալական խմբերի փոխհարաբերությունները հասարակությունում, առողջության պահպանությունը, սոցիալական ապահովումը:

Տնտեսական ոլորտ	Կապված է գիտության, կրթության, մշակույթի, կրոնի, արվեստի հետ:
Սոցիալական ոլորտ	Ապահովում է կարգապահությունը հասարակությունում, արձակում է կանոններ և հետևում է դրանց կատարմանը:
Հոգևոր	Ներառում է ապրանքի և սպասարկման թողարկումը, վարումը, սպասարկումը և բաշխումը:

- Աղյուսակի առաջին սյունակում թվարկած ոլորտներից որի՞ վրա են շեշտադրությունը կատարում Չերչիլը, Նովոդվորսկայան, Ուրսուլա ֆոն դեր Լեյենը, Քրիստին Լագարդը:
- Ինչո՞վ են միմյաց նման/տարբեր թվարկած քաղաքագետների գործունեությունները:

Ռեսուրս. Դասագիրք, II մաս, էջ 12
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում
Հարցեր.

- Ինչո՞ւ առաջացավ վեճ տեղացի և օտարերկրյա հրահանգիչների միջև:
- Տեղացիների ի՞նչ կարիքներ են հատվում օրինակներում:
- Ինչպե՞ս կգնահատեիք տեղացիների կողմից վեճը լուծելու ընտրված ձևը:
- Ինչո՞ւ է կարևոր ասերտիվության ունակությունը անհատների և խմբերի հարաբերության ժամանակ:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ոստիկանությունը չի արձագանքում օտարերկրյա հրահանգիչների դիմումին:
- Ի՞նչ կառաջարկեիք Վրաստանի իշխանությանը այդ ուղղությամբ: Անհրաժե՞շտ է, թե՞ ոչ պետության կողմից լրացուցիչ կարգավորումներ սահմանել:
- Ի՞նչ կարգավորումներ կառաջարկեիք օրենսդիրներին այդ ուղղությամբ:
- Կարո՞ղ է արդյոք անվտանգության նպատակով պարապլանով թռիչքն արգելելը ելք լինել:
- Ի՞նչ շահերով ղեկավարվեց պետությունը արգելք ներդնելով:
- Ի՞նչ վերաբերմունք է պետության և անհատի (այս դեպքում՝ հրահանգիչների և պետության) միջև:
- Նշված հարցը քաղաքական հա՞րց, թե՞ տնտեսական ոլորտի մաս եք համարում:
- Ինչպե՞ս պետք է գործի պետությունը, որպեսզի հիմնախնդրի բոլոր մասնակիցները ճիշտ սահմանեն իրենց իրավունքը և պարտականությունը այս կոնկրետ դեպքում:
- Կոնֆլիկտային իրավիճակը կապակցեք նախորդ ակտիվության ժամանակ քննարկված հասարակական կյանքի ոլորտներին:
- Ո՞ր ոլորտին կհատկացնեիք այդ կոնֆլիկտը: Հիմնավորե՛ք: Ի՞նչ դեր ունեն քաղաքագետները այդ վեճի լուծման գործում:

Ռեսուրս. Դասագիրք, II մաս, էջ 7-10, 21-22, 36-37:
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում: Բաժանվե՛ք հինգ խմբի և լրացրե՛ք աղյուսակը: Առանձնացրե՛ք քաղաքական առաջնորդների գործունեության ոլորտները և գրանցե՛ք համապատասխան սյունակում: Բանավեճից հետո հանրագումարե՛ք ձեր աշխատանքները և ստեղծե՛ք հագեցած վերջնական տարբերակը:

	Քաղաքական	Տնտեսական	Սոցիալական	Հոգևոր	Կոնկրետ օրինակների հիման վրա քննարկել նրանց գործունեության կարևորությունը:
Ուինսթոն Չերչիլ					
Քրիստին Լագարդ					
Ուրսուլա ֆոն դեր Լեյեն					
Վալերիա Նովոդվորսկայա					

Հարցեր.
- Ո՞ր ոլորտում էին գործում/են գործում թվարկած անձինք:
- Ի՞նչ հասարակական կարիքների մասին են հոգում նրանք:
- Ինչո՞վ է նմանվում/տարբերվում նրանց գործունեությունը:

Չափանիշ 3. Ի՞նչ գործոններ են նպաստում քաղաքագետի կողմից սեփական գաղափարների իրականացմանը, տարբեր հասարակական խմբերի հետ հարաբերությանը: (Հաստ. պատկ.3.)

Ռեսուրս. Նահանգապետի ընտրություններ,**դասագիրք, II մաս, էջ 29-33**
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում:
Հարցեր.
- Ի՞նչ առավելություն ուներ Մարկ Տվենը այլ թեկնածուների համեմատությամբ:
- Ինչո՞ւ էր նա տատանվում ընտրություններին մասնակցելու հարցում: Ձեր կարծիքով, ովքե՞ր էին Մարկ Տվենի նկատմամբ մեղադրանքների ընթացակարգի հեղինակները:
- Ինչո՞ւ հեղինակը վերջնականապես չկիսեց տատիկի կարծիքը: Տատիկի կարծիքը չկիսելու պատճառով նա սխա՞լ թույլ տվե՞ց, թե՞ ոչ:

- Ի՞նչ կեղծ տեղեկատվություններ տարածեցին լրատվամիջոցները Մարկ Տվենի մասին:
- Ինչպե՞ս կգնահատեք թեկնածուի վարկաբեկման նպատակով կազմակերպված ընթացակարգը:
- Ինչպե՞ս կգնահատե՛ք Մարկ Տվենի անձնատուր լինելը: Ի՞նչ պետք է աներ նա: Ինչպե՞ս կվարվեին ձեզ հայտնի քաղաքագետները:
- Ի՞նչ տեղի կունենար նրանց հետ, օրինակ՝ եթե նրանք նույնպես կողքի քաշվեին:
- Լավ մարդ լինե՞լը, արդյոք, լավ քաղաքագետ է նշանակում: Ի՞նչն է նրանց տարբերակում միմյանցից:
- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն պետք է լինեն քաղաքական պայքարի կանոնները ընտրությունների ժամանակ:
- Ինչպե՞ս պետք է վարվի իշխանությունը նման դեպքերում: Ինչպիսի՞ն պետք է լինի առողջ ընդդիմությունը:
- Ինչպե՞ս կպարզաբանեիք քաղաքական էթիկան: Այս պատմությունում գոյություն ունի՞, արդյոք, քաղաքական էթիկայի նշույլ:
- Ի՞նչ խորհուրդ կտայիք Մարկ Տվենին՝ որպես քաղաքագետի:
- Ի՞նչ էր ցանկանում ասել Մարկ Տվենը այս մանրապատումով:
- Ինչո՞ւ է նկարագրում նա բոլոր դետալները մանրամասնորեն: Ինչպե՞ս եք պատկերացնում, ի՞նչ շարունակություն ունեցավ այս պատմությունը: Ինչպե՞ս կվարվեիք նման իրավիճակում, եթե թեկնածու լինեիք:
- Ձեր կարծիքով Մարկ Տվենի փոխարեն ինչպե՞ս կվարվեին Չերչիլը, Նովոդվորսկայան, Քրիստին Լագարդը:

Ռեսուրս. Դասագիրք, II մաս, էջ 34
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում:
Հարցեր.
- Որոշե՛ք ծաղրանկարի բովանդակությունը:
- Ի՞նչ է ծաղրանկարի հիմնական գաղափարը:
- Ո՞ր երևակայական միջոցներով է հեղինակը նկարագրում իր գաղափարը:
- Ո՞ր քաղաքական իրավիճակը կարող է համապատասխանել ծաղրանկարին:
- Ի՞նչ նշանակություն և նպատակ ունի այս ծաղրանկարը:
- Ինչի՞ դեմ է այս ծաղրանկարը:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Նկարագրե՛ք՝ ինչպե՞ս է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը.

- Ինչպե՞ս եք պլանավորում/պլանավորեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ի՞նչ էիք նկատառում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Ունեի՞ք, թե՞ ոչ նախնական պլան առաջադրանքի վրա աշխատանքի համար: Որքանո՞վ այդ պլանը օգնեց աշխատանքի գործընթացում: Անհրաժեշտ էր, արդյոք, նախնական աշխատանքային պլաններում փոփոխություններ մտցնելը: Ինչո՞ւ:
- Ու՞մ հետ և ինչպե՞ս համագործակցեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Հանդիպեցի՞ք, թե՞ոչ տարբերվող կարծիքներ ունեցող մարդկանց: Որքանո՞վ օգնեց այլ մարդկանց հետ համագործակցությունը:
- Կիրառեցի՞ք, թե՞ ոչ տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Ինչո՞ւմ օգնեց տեխնոլոգիաների կիրառումը:
- Ի՞նչ արտադրանք ստեղծեցիք համալիր առաջադրանքի տեսքով:

Բացատրեք՝ ինչ գիտելիք և փորձ ձեռք բերեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:

- Ի՞նչ հարցի է վերաբերում ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ գիտեիր ուսանելի հարցի մասին: Ի՞նչ նոր բան իմացար: Լրացուցիչ ի՞նչ կուզենայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացության հանգեցրեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ինչո՞վ են հաստատվում ձեր կողմից կատարված եզրակացությունները:
- Ու՞մ համար և ինչո՞ւ է ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ միջոցներից օգտվեցիք ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար:/Համալիր առաջադրանքը ավելի լավ կատարելու համար:

Գնահատե՛ք՝ որքանով արդյունավետ և հետաքրքիր էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:

- Գնահատե՛ք՝ որքանով ստացվեց առաջադրանքի կատարումը: Որքանո՞վ այն համընկավ ուսուցչի սպասելիքներին:
- Ի՞նչը կատարեցիք ինքնուրույն: Ինչո՞ւմ անհրաժեշտ եղավ այլոց օգնությունը:
- Ի՞նչ գործոններ նկատի ունեցաք/պետք է նկատի ունենաք այն բանի համար, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լիներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ և որքանո՞վ է տարբերվում ձեր կողմից կատարված առաջադրանքը համադասարանցիների աշխատանքներից:

Ի՞նչ կկատարեիք այլ կերպ, եթե նորից սկսեիք առաջադրանքի վրա աշխատել:

Զարգացնող գնահատման խորագիր

Աղյուսակ 3

Դասարան. 11-րդ

Թեմա. «Քաղաքականություն և քաղաքական մշակույթ» **Հիմնական հարց.** Քաղաքական գործընթաց **Աշակերտ.**		
Գնահատման չափանիշ	Առավելագույն միավոր	Մեկնաբանություն
Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա. հստակեցնել անձնական հատկանիշը, որը սահմանեց Վալերիա Նովոդվորսկայայի քաղաքական, լրագրողական գործունեությունը: Բնութագրել քաղաքական գործընթացներում Վալերիա Նովոդվորսկայայի դերը: Այն գործոնները հստակեցնել, որով Վալերիա Նովոդվորսկայան աջակցեց/խոչընդոտեց քաղաքական մշակույթի արմատավորմանը:	1,5	
Ժողովրդավարություն – Աշակերտը պետք է կարողանա. Վալերիա Նովոդվորսկայայի հասարակական-քաղաքական գործունեությունը գնահատել մարդու իրավունքների մասին հոգածության և ժողովրդավարության սկզբունքների հիման վրա:	1,5	
Քաղաքացիական մասնակցություն – Աշակերտը պետք է կարողանա. վերլուծել քաղաքական-հասարակական գործընթացներում Վալերիա Նովոդվորսկայայի ընդգրկվածության ձևերը, քննարկել ընդգրկվածության այս կամ այն ձևի արդյունավետության մասին:	1,5	
Կայուն զարգացում – Աշակերտը պետք է կարողանա. վերլուծել Վալերիա Նովոդվորսկայայի գործունեության արդյունքները տեղական և համաշխարհային քաղաքականության համար:	1,5	

Որոշող գնահատման առաջարկված խորագիրը հիմնված է առակայական չափորոշչում տրված **թեմայի սահմաններում արդյունքներին հասնելու ինդիկատորներին (թիրախային հասկացությունների համաձայն)** և նախատեսված է ամփոփիչ առաջադրանքի գնահատման համար, ինչը իր հերթին նպատակամղված է հասկացություններին կողմնորոշմամբ թեմայի կամ դրա մասի ամփոփմանը**:**

Ամփոփիչ առաջադրանքի համար խորհուրդ է տրվում ընտրել ենթատեքստ-օրինակ և նախապես տալ աշակերտներին ծանոթանալու/վերլուծելու համար: Նրանք կգիտենան, որ մոտավորապես մեկ շաբաթում իրենք պետք է ամփոփիչ առաջադրանքը կատարեն առաջարկված հարցերի համաձայն, որոնք կապված կլինեն տրված ենթատեքստ-օրինակին:

Տվյալ դեպքում ընտրում ենք «Վալերիա Նովոդվորսկայա» ենթատեքստ-օրինակը (էջ 250), աշակերտին հանձնարարում եք առաջադրանք՝ ծանոթանալ «Վալերիա Նովոդվորսկայա» տեքստի հետ: Տեքստի վերլուծության հիման վրա ստեղծել քաղաքական ակտորի գրավոր դիմանկարը (150-200 բառ) տրված չափանիշների նկատառումով:

Աշխատանքում ընդգծված ներկայացրե՛ք.

- ✓ անձնական հատկանիշները, որոնք որոշում են Վալերիա Նովոդվորսկայայի դերը քաղաքական գործընթացներում,
- ✓ մարդու իրավունքները և ժողովրդավարության սկզբունքները, որոնց արմատավորման համար պայքարում էր Վալերիա Նովոդվորսկայան,
- ✓ մասնակցության ո՞ր ձևերն էր գործադրում Վալերիա Նովոդվորսկայան քաղաքական գործընթացների վրա ազդեցության համար,
- ✓ ի՞նչ արդյունքներ հետևեցին Վալերիա Նովոդվորսկայայի գործունեությանը լոկալ և գլոբալ մակարդակով:

XI դասարանի պարտադիր թեմայի (Քաղաքականություն և քաղաքական մշակույթ) երկրորդ հիմնական հարցն է **«Քաղաքական գաղափարախոսությունները և ռեժիմները»:**
Այս հարցի առնչությամբ աշակերտի նախնական գիտելիքի ակտիվացումը և նոր գիտելիքի կառուցումը կատարվում է «Արխիվային լրաբեր» (№ 2. 2008 թ., Վրաստանի Ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն, «Միխեիլ Ջավախիշվիլիի գործը» ենթատեքստ-օրինակով և բովանդակային առումով դրան մոտ կանգնած օրինակներով:

Հիմնական քեյս և օրինակներ համեմատության համար	**Ռեսուրսներ**
Հիմնական քեյս. «Արխիվային լրաբեր» №2. 2008 թ.Վրաստանի ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն	**Դասագիրք, II մաս, էջ 70-75** • Ուսուցչի գիրք, Հավելված 6 (էջ 189)
Օրինակ՝ համեմատության համար 1. Սոցիալիզմի նոր գույները – ամերիկյան քաղաքականությունում սոցիալիստական գաղափարներ են հատվում	• Դասագիրք, II մաս, էջ 47-50

Օրինակ՝ համեմատության համար 2. Ռենյայի օրագիրը	• Դասագիրք, II մաս, էջ 57-59
Օրինակ՝ համեմատության համար 3. Խոտագույն մարդը	• Դասագիրք, II մաս, էջ 61-63

Պարզաբանում. Նոր գիտելիքի կոնստրուկտիվ կառուցումն ապահովելու համար կարևոր է աշակերտներին առաջարկենք նրանց գիտելիք-փորձին հասանելի այնպիսի օրինակներ (մասնավոր դեպքեր, իրավիճակներ, պատմություններ), որոնց քննարկում-վերլուծումը կօժանդակի նրանց թիրախային գիտելիքը (ենթահարցը, ենթահասկացությունները, թիրախային հասկացությունները) ըմբռնելուն և յուրացնելուն: Ենթատեքստ–օրինակները ճիշտ այդպիսի օրինակներ կարող ենք անվանել: Այդ պատմությունները պետք է ընտրվեն պարտադիր թեմաների շրջանակներում հստակեցված հիմնական հարցերի համաձայն և պետք է ցույց տան կենսական իրավիճակներ (երկընտրանքներ, էմոցիաներ):

Այստեղ ևեթ ընդգծված նշում ենք, որ ուսուցչի գրքում առաջարկվող հիմնական ենթատեքստ-օրինակները կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, այսինքն՝ կարող եք հիմնական գործառույթը վերագրել դասագրքում ներկայացված մեկ այլ ենթատեքստ-օրինակի և դրա վրա հիմնվելով ձևակերպել համալիր առաջադրանքի պայմանը:

Ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հիմնական ենթատեքստ-օրինակի վերլուծության վրա: Դրա մշակումը կատարվում է խորքային՝ ենթատեքստը, էմոցիոնալ-սոցիալական տեսանկյունները նկատի ունենալով, իսկ համեմատության համար ընտրված օրինակները հիմնականում ֆոնային գիտելիքի դեր են կատարում:

Ենթատեքստ-օրինակի առաջնային մշակման ժամանակ ուսուցիչը ուղղորդող հարցերով, ակտիվություններով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն մանրամասնությունների վրա, որոնք մշակվող ենթահասկացությունների, թիրախային հասկացությունների հետ կապի մեջ են: Օրինակ՝ կոնկրետ դեպքում ենթատեքստ - օրինակի այն ծավալի վրա ենք փորձում կենտրոնանալ, որոնք հանգուցային հարցերում էլ (ինչ գործոններ և ինչու են պայմանավորում պետության միջամտությունը ազատ շուկայի կարգավորման գործում: Ինչպե՞ս պատկերացնել պետության առջև ծառացած երկընտանքները/մարտահրավերները մարդու իրավունքների պաշտպանության պարտականությունների և տնտեսական ազատության սկզբունքի պահպանության կապակցությամբ) որոշված են:

<u>Աղյուսակ թիրախային գիտելիքի որոշման համար</u>

Թեմա – Քաղաքականություն և քաղաքական մշակույթ **Հիմնական հարց – Քաղաքական գաղափարախոսություններ և ռեժիմներ**

Հիմնական ենթատեքստ-օրինակ - «Արխիվային լրաբեր» №2. 2008 թ. Վրաստանի ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն»			
Ենթահարց	**Ենթահասկացություններ**		**Թիրախային հասկացություն**
«Արխիվային լրաբեր» №2. 2008 թ. Վրաստանի ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն» (Միխեիլ Ջավախիշվիլիի գործը)	Մարդու իրավունքներ **Անձնական անձեռնմխելիության իրավունք** **Արդարադատ դատարանի իրավունք**	Ժողովրդավարության սկզբունքներ**–օրենքի գերակայություն, իշխանության բաշխում**	**Ժողովրդավարություն** (Արդյունքներ. 1,2,3,4)

Որոշելու համար, թե ինչ պետք է գիտենա աշակերտը ենթահարցի հետ կապված, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Աղյուսակ 1),** որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի ամբողջացված մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է մի քանի փուլում.

ա) նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և ուսանում-ուսուցման գործընթացը պլանավորելու փուլում (**ինչ ակտիվություններ, մեթոդներ, մարտավարություններ պետք է կիրառենք, որպեսզի աշակերտին օգնենք այս սպասումը իրական արդյունքի վերածելու մեջ),**

բ) հաջորդ ուսանում-ուսուցման գործընթացի մոնիթորինգի համար (**ինչպե՞ս է ընթանում գործընթացը, հայտնվեցի՞ն սպասելիքներին համապատասխան նշաններ: Ի՞նչ հարցեր պետք է օգտագործեմ որպես փայտամած),**

գ) ուսանում-ուսուցման գործընթացում և համալիր առաջադրանքը ավարտելու ժամանակ կոնկրետ հետադարձ կապի ձևավորման մեջ **(սպասելիքներից ո՞ր արտահայտությունները հարմար կլինեն աշակերտի արդյունքը նկարագրելու, խրախուսելու, խորհուրդ տալու համար),**

դ) վերջում՝ միջանկյալ և երկարաժամկետ նպատակների վրա աշխատանքը՝ մանկավարժական պրակտիկայի կառուցվածքային ինքնագնահատման համար **(իրատեսական սպասելիքները ո՞ր հաստատուն պատկերացման՝ Հաստ. պատկ. կապակցությամբ որոշեցի: Ո՞ր սպասելիքի համար գտա ճիշտ լուծումը ակտիվությունների և մեթոդների տեսքով: Որտե՞ղ պետք է փոխեմ մոտեցումը):**

Աղյուսակ 1.

Թիրախային հասկացություն **Ենթահարց**	**Թիրախային հասկացության հետ կապված հաստատուն պատկերացումներ**	**Սպասելիքներ** **Աշակերտը կարող է.**	**Ուսուցչի մեկնաբանություն**
Ժողովրդավարություն (Արդյունքներ. 1,2,3,4)	1. Մարդն ունի իրավունքներ և ազատություններ, որոնց պաշտպանությունն ապահովում են	Միխեիլ Ջավախիշվիլիի, Ռենյայի օրինակով քննարկել մարդու ո՞ր	

	տեղական օրենսդրությունը և միջազգային համաձայնությունները,	իրավունքներն էին խախտվում ԽՍՀՄ-ում և ֆաշիստական Գերմանիայում:	
«Արխիվային լրաբեր» №2. 2008 թ. Վրաստանի ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն (Միխեիլ Ջավախիշվիլիի գործը)	2. Ժողովրդավարական պետությունում մարդու իրավունքների պաշտպանությունը գլխավոր արժեքն է:	Քննարկել որքանով են մարդու իրավունքները ներկայացնում կարևորագույն արժեք կոմունիստական և ֆաշիստական ռեժիմի պայմաններում: Մարդու ո՞ր իրավունքների վրա է շեշտադրություն կատարում կոմունիզմը, սոցիալիզմը, լիբերալիզմը, պահպանողականությունը, ֆաշիզմը: Համեմատել կոմունիզմը և ֆաշիզմը՝ նկատի ունենալով մարդու հիմնարար իրավունքների առնչությամբ նրանց դիրքորոշումը: Համեմատել տոտալիտար գաղափարախոսությունները՝ նկատի ունենալով տոտալիտար գաղափարախոսությունները լիբերալիզմի, պահպանողականության, մարդու հիմնարար իրավունքների առնչությամբ՝ նկատի ունենալով նրանց դիրքորոշումը:	
	3.Ժողովրդավարական պետության գործունեության համար անհրաժեշտ է ժողովրդավարական սկզբունքների *(օրինակ՝ հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն,*	Միխեիլ Ջավախիշվիլիի գործի օրինակի վրա հենվելով քննարկել՝ որքանով էին պաշտպանված ԽՍՀՄ-ում ժողովրդավարության սկզբունքները (իշխանության բաշխում, արդարադատ դատարան)	

	արդարացի ընտրություններ) պահպանումը:		

Ստորև տրված միջանկյալ/համալիր առաջադրանքի մատրիցայում (**Աղյուսակ 2.**) տրված են համալիր առաջադրանքի պայմանը, գնահատման չափանիշները և իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, ուղղորդող հարցեր և համառոտ հանձնարարականներ ուսուցչին):

Աղյուսակ 2.

Հարց. Քաղաքական գաղափարախոսություններ և ռեժիմներ
Ենթահարց. «Արխիվային մոամբե» №2. 2008 թ. Վրաստանի ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն» (Միխեիլ Ջավախիշվիլիի գործը) **Ենթահասկացություններ –** Մարդու իրավունքներ **– անձնական անձեռնմխելիության իրավունք, արդարադատ դատարանի իրավունք:** Ժողովրդավարության սկզբունքներ – **օրենքի գերակայություն, իշխանության բաշխում: Թիրախային հասկացություն – ժողովրդավարություն (Արդյունք. 1,2,3,4,)**
Հանգուցային հարց - Ինչպիսի՞ն է մարդկանց իրավական դրությունը տոտալիտար ռեժիմների պայմաններում:
Համալիր առաջադրանք Ծանոթացե՛ք տեքստին «Արխիվային մոամբե» №2. 2008 թ. Վրաստանի ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն (II մաս, էջ 70-75) և օրինակներին. Ռենյայի օրագիրը (II մաս, էջ 57-59), Խոտագույն մարդը (II մաս, էջ 62-63) համեմատության համար: Գրե՛ք **փաստարկված էսսե,** (բառերի քանակը 250-300), որտեղ աղբյուրների վրա հենվելով կվերլուծեք, թե ինչ մարտահրավերների առջև են կանգնած մարդիկ ոչ ժողովրդավարական (տոտալիտար) ռեժիմների պայմաններում: Ինչպիսի՞ն է նրանց իրավական դրությունը: Ուշադրությունը կենտրոնացրե՛ք այն բանի վրա, թե ոչ ժողովրդավարական ռեժիմի պայմաններում ինչպե՞ս են խախտվում օրենքի գերակայության, իշխանության բաշխման և ժողովրդավարական պետության գործունեության համար անհրաժեշտ այլ սկզբունքները: **Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.** • Ինչպե՞ս են խախտվում մարդու իրավունքները ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի պայմաններում: Ո՞ր իրավունքների անտեսում է տեղի ունենում: Պատասխանե՛ք Ջավախիշվիլիի և դասագրքում ներկայացված ռեժիմի այլ զոհերի օրինակով: **(Ժողովրդավարություն, Հաստ. պատկ. 1.2.)**

- Միխեիլ Ջավախիշվիլիի «գործի» օրինակով, որքանո՞վ էին պաշտպանված Խորհրդային Միությունում իշխանության բաշխման, օրենքի գերակայության և ժողովրդավարության այլ սկզբունքները: (**Ժողովրդավարություն, Հաստ. պատկ. 3**)

Թիրախային հասկացության/հասկացությունների կապակցությամբ հաստատուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ՝	**Գնահատման չափանիշներ** Աշակերտը կարող է.	Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.
1. Մարդն ունի իրավունքներ և ազատություններ, որոնց պաշտպանությունը ապահովում են տեղական օրենսդրությունը և միջազգային համաձայնությունները, 2. Ժողովրդավարական պետությունում մարդու իրավունքների պաշտպանությունը կարևորագույն արժեքն է, 3. Ժողովդավարական պետության գործունեության համար անհրաժեշտ է ժողովրդավարության սկզբունքների (*օրինակ, հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, արդարացի ընտրություններ)* պահպանումը:	**Ժողովրդավարություն.** • կենսական իրավիճակները/քննարկվելիք օրինակները կապակցել մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքների մասին գիտելիքին **(Հաստ. պատկ. 1.3)** • հստակեցնել երկընտրանքները, որոնք տարբեր իրավիճակներում մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքների պահպանության հետ են կապված **(Հաստ.. պատկ. 2.3.)**	• Ինչպե՞ս են խախտվում մարդու իրավունքները ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի պայմաններում: Ո՞ր իրավունքների անտեսում է տեղի ունենում: Պատասխանե՛ք Միխեիլ Ջավախիշվիլիի և դասագրքում տրված ռեժիմի այլ զոհերի օրինակով, **(Ժողովրդավարություն, Հաստ. պատկ. 1.2.)** • Միխեիլ Ջավախիշվիլիի «գործի» օրինակով, որքանո՞վ էին Խորհրդային Միությունում պահպանված իշխանության բաշխման, օրենքի գերակայության և ժողովրդավարության այլ սկզբունքները: **(Ժողովրդավարություն, Հաստ. պատկ. 3)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I – Ծանոթացում համալիր առաջադրանի պայմանին

Ռեսուրս. Դասագիրք, **II թեմա: II գլուխ: Քաղաքական գաղափարախոսություններ և ռեժիմներ,** Համալիր առաջադրանքի պայման, դասագիրք, էջ 129

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.

- Ինչպե՞ս եք հասկանում քաղաքական գաղափարախոսությունը, քաղաքական ռեժիմը:
- Ո՞ր քաղաքական գաղափարախոսությունների, ռեժիմների մասին եք լսել:
- Ի՞նչ առնչություն է քաղաքական գաղափարախոսության և ռեժիմի միջև:
- Ի՞նչ է էսսեի նպատակը: Ի՞նչ է էսսեն:
- Վերհիշիր, ինչպիսի՞ն է էսսեի կառուցվածքը:
- Ի՞նչ ռեսուրսներ անհրաժեշտ կլինեն:
- Ինչպե՞ս գրել լավ էսսե:
- Ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնել էսսեի վրա աշխատելու ժամանակ:
- Ձեր բառերով ձևակերպեք՝ ինչի՞ն է վերաբերվում այսօր հանձնարարված առաջադրանքը, որի վրա մի քանի դասի ընթացքում պետք է աշխատեք:
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք ուրի՞շ ժամանակ կատարե՞լ եք, արդյոք:

Հանձնարարական ուսուցչին.

Հարցերի միջոցով մեկ անգամ կրկին համոզվեք, որ առաջադրանքի պայմանը բոլորի համար հասկանալի է:

Հաղորդե՛ք աշակերտներին տեղեկատվություն այն մասին, որ մինչև համալիր առաջադրանքի կատարումը ուսանելի հարցին տրամադրելու եք մի քանի դաս և վերջում բոլորը կունենան կատարված աշխատանքը դասարանին ներկայացնելու հնարավորություն:

Ուշադրություն:

Համալիր առաջադրանքի վրա աշխատանքը հիմնականում դասարանում, դասերի ժամանակ է ընթանում և միայն բացառիկ դեպքում եք կիրառում տնային առաջադրանքը:

Փուլ II – Համալիր առաջադրանքի վրա աշխատանք

Թիրախային հասկացություն.

Ենթահարց. «Արխիվային մոամբե» №2. 2008 թ. Վրաստանի ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն» (Միխեիլ Ջավախիշվիլիի գործը)

Ենթահասկացություններ – Մարդու իրավունքներ – անձնական անձեռնմխելիության իրավունք, արդարադատ դատարանի իրավունք: Ժողովրդավարության սկզբունքներ – օրենքի գերակայություն, իշխանության բաշխում:

Թիրախային հասկացություն – ժողովրդավարություն (Արդյունք. 1,2,3,4,)

Ենթատեքստ-օրինակների առաջնային մշակում

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, II մաս, էջ 75

- ✓ Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը. «Արխիվային լրաբեր», II մաս, էջ 70-75:
- ✓ Վրաստանի Սահմանադրությամբ երաշխավորված ո՞ր իրավունքը/իրավունքները խախտվեցին Միխեիլ Ջավախիշվիլիի նկատմամբ: Ձեր կարծիքը հիմնավորե՛ք տեքստի վրա հենվելով:

Իրավունքներ	**Այո/Ոչ**	**Հիմնավորումը տեքստից**
Հոդված 9. Մարդու արժանապատվության անխախտելիություն		
Հոդված 10. Կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքներ		
Հոդված 11. Հավասարության իրավունք		
Հոդված 12. Անձնի ազատ զարգացման իրավունք		
Հոդված 13. Մարդու ազատություն		
Հոդված 14. Տեղաշարժվելու ազատություն		
Հոդված 15. Անձնական և ընտանեկան կյանքի, անձնական տարածքի և հաղորդակցության անձեռնմխելիության իրավունքներ		
Հոդված 16.Կրոնի, դավանանքի և խղճի ազատություններ		
Հոդված 20,. Ստեղծագործելու ազատություն, մշակութային ժառանգություն		
Հոդված 28. Առողջության պահպանության իրավունքը		
Հոդված 31. Դատավարական իրավունքները		

Հափանիշ 1. Ինչպե՞ս են խախտվում մարդու իրավունքները ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի պայմաններում: Ո՞ր իրավունքներն են անտեսվում: Քննարկե՛ք Միխեիլ Ջավախիշվիլիի և դասագրքում ներկայացված ռեժիմի այլ զոհերի օրինակով:

Ռեսուրս. «Արխիվային լրաբեր», **դասագիրք, II մաս, էջ 70-75**

Աշակերտի գրքում (II մաս, էջ 60) **տրված օգտակար ռեսուրսներ.**
Քաղաքական գաղափարախոսություններ https://bit.ly/3lAkIdc
Ինչպե՞ս հասկանանք քաղաքակությունը (ձախեր, աջեր). https://bit.ly/3k6K5TG
Ակտիվություն. Քննարկե՛ք, Ծանոթացե՛ք ստորև տրված տեքստին և պատասխանե՛ք հարցերին.

Հարցեր.

- Բնութագրե՛ք Միխեիլ Ջավախիշվիլիի ժամանակաշրջանի Վրաստանի քաղաքական և սոցիալական վիճակը:
- Ինչպե՞ս կբնութագրեի՛ք հոդվածում նկարագրված արդարադատության համակարգը:
- Ի՞նչ մեթոդների կիրառմամբ էր խորհրդային ռեժիմը հարկադրում անմեղ մարդկանց և նրանց մատնիչներին խոստովանական ցուցմունք տալ:
- Ինչպե՞ս էր պայքարում խորհրդային ռեժիմը ֆաշիստական ռեժիմի դեմ վրաց հասարակական գործիչներին մեղավոր հայտարարելով:
- Իրականում ի՞նչ էր այդ իբր թե պայքարի իրական պատճառը:
- Ո՞ր գաղափարախոսությանն էր հենվում խորհրդային ռեժիմը:
- Խորհրդային Միությունը տոտալիտա՞ր, թե՞ ավտորիտար պետություն էր:
- Մարդու ո՞ր իրավունքները և ժողովրդավարության ո՞ր սկզբունքներն են խախտվում քննարկված օրինակներում:

Ռեսուրս. «Սոցիալիզմի նոր գույները – ամերիկյան քաղաքականությունում սոցիալիստական գաղափարները հատվում են» դասագիրք, II մաս, էջ 47-50

Ակտիվություն. Քննարկե՛ք. Ծանոթացե՛ք ստորև տրված տեքստին և պատասխանե՛ք հարցերին.
Հարցեր.

- Ի՞նչ գիտեք սոցիալիզմի մասին:
- Տեքստի համաձայն, ի՞նչ տպավորություն ստեղծվեց ձեզ մոտ սոցիալիզմի՝ որպես գաղափարախոսության մասին:
- Ի՞նչ գիտեք կապիտալիզմի մասին:
- Ի՞նչ գործոններով է պայմանավորված ԱՄՆ-ում սոցիալիզմի կողմնակից մարդկանց թվաքանակի աճը:
- Տեքստի համաձայն, ի՞նչ տպավորություն ստեղծվեց ձեզ մոտ ամերիկյան քաղաքականության մասին:
- Ինչպիսի՞ն է որոշ քաղաքագետների և քաղաքացիների աճող մասի վերաբերմունքը սոցիալիզմի նկատմամբ:
- Ի՞նչ պատճառներով են հակվում շարքային մարդիկ դեպի սոցիալիզմը:
- Մարդու իրավունքներից ձեզ հայտնի ո՞ր իրավունքի վրա է հենվում սոցիալիզմը՝ որպես գաղափարախոսություն:

- Ի՞նչ պատճառներով է ասոցացվում սոցիալիզմը կոմունիզմի հետ: Ի՞նչով է տարբերում սոցիալիզմը և կոմունիզմից:
- Ի՞նչ ընդհանուր և տարբերակող նշաններ ունեն սոցիալիզմը և ձեզ ծանոթ այլ գաղափարախոսությունները:

Ռեսուրսներ.

- **«Սոցիալիզմի նոր զույները – ամերիկյան քաղաքականությունում սոցիալիստական գաղափարները հատվում են»** դասագիրք, **II մաս, էջ 47-50**
- Լիբերալիզմ, պահպանողականություն: **Դասագիրք, II մաս, էջ 51**
- Կոմունիզմ: **Դասագիրք, էջ 55:** Արխիվային լրաբեր: **Դասագիրք, II մաս, էջ 70-75**
- Ֆաշիզմ: **Դասագիրք, II մաս, էջ 56: Ռենյայի օրագիրը/համակենտրոնացման ճամբարի պահակը/** դասագիրք, **II մաս, էջ 59-60**

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում: Ծանոթացե՛ք ռեսուրսներին և լրացրե՛ք աղյուսակը

Գաղափարախոսություններ	Բովանդակային բնութագրիչներ	Օրինակներ պատմությունից և արդիականությունից
Սոցիալիզմ		
Լիբերալիզմ		
Պահպանողականություն		
Կոմունիզմ		
Ֆաշիզմ		

Հարցեր.

- Որո՞նք են վերևում թվարկած գաղափարախոսությունների գլխավոր արժեքները:
- Ինչպե՞ս եք հասկանում հավասարության նշանակությունը. լիբերալիզմ, սոցիալիզմ, պահպանողանություն: Ձեզ համար ո՞ր նշանակությունն է ավելի ընդունելի:
- Կոմունիզմին բնութագրական սոցիալական հավասարության գաղափարը կարո՞ղ է, արդյոք, ընկալվել որպես իրավունքների խախտում լիբերալիզմի հեռանկարից ելնելով: Հիմնավորե՛ք կարծիքը:
- Դասավորե՛ք գաղափարախոսությունները ծայրագույն ձախերից մինչև ծայրագույն աջերը:
- Ի՞նչ մեթոդների գործադրմամբ էր խորհրդային ռեժիմը հարկադրում անմեղ մարդկանց և նրանց ծածուկ լսողներին խոստովանական ցուցմունք տալ: Ի՞նչ երկընտրանքների առջև էին կանգնած ռեժիմի զոհերը:
- Ինչպե՞ս էր պայքարում խորհրդային ռեժիմը ֆաշիստական ռեժիմի դեմ վրաց հասարակական գործիչներին մեղադրյալ հայտարարելով:
- Իրականում ի՞նչ էր այդ իբր թե պայքարի իրական պատճառը:
- Ո՞ր գաղափարախոսության վրա էր հիմնվում խորհրդային ռեժիմը:

- Խորհրդային Միությունը տոտալիտա՞ր պետություն էր, թե՞ ավտորիտա՞ր:
- Մարդու ո՞ր իրավունքները և ժողովրդավարության ո՞ր սկզբունքներն են խախտվում քննարկված օրինակում:
- Ինչո՞վ են նմանվում/տարբերվում միմյանցից ֆաշիզմի և կոմունիզմի զոհերի պատմությունները:
- Ինչո՞ւ է մինչև օրս նշանակալից հոլոքոստին մասնակցած անձանց բացահայտելը և պատժելը:
- Ո՞ր քաղաքական ռեժիմի մասին է խոսվում այս պատմություններում: Տեքստին հենվելով, բնութագրե՛ք այն գաղափարախոսությունները, որոնց վրա հիմնվում են այդ ռեժիմները:
- Ի՞նչ ընդհանուր և տարբերվող նշաններ ունեն ֆաշիզմը և կոմունիզմը:

Ռեսուրս. Սոցիալ-ժողովրդավարություն, դ**ասագիրք, II մաս, էջ 53**
Ակտիվություն. Քննարկե՛ք
Հարցեր.
- Սոցիալ-ժողովրդավարությունը աջ, ձախ, թե՞ ցենտրիստական գաղափարախոսության վրա է հիմնվում:
- Ինչպե՞ս եք հասկանում էվոլյուցիոն բարեփոխությունը:
- Ի՞նչ նմանություն-տարբերություն է սոցիալ-ժողովրդավարների և սոցիալիստների միջև:
- Մարդու ո՞ր իրավունքների վրա են շեշտադրություն կատարում սոցիալ-ժողովրդավարները:

Ռեսուրս. Քաղաքական գաղափարախոսությունը վրացերեն, դ**ասագիրք, II մաս, էջ 55-56**
Ակտիվություն. Քննարկե՛ք
Հարցեր.
- Ինչպե՞ս պետք է կառավարվի ժամանակակից քաղաքական կուսակցությունը. գաղափարախոսության համաձա՞յն, թե՞ միանձնյա՝ առաջնորդի կողմից:
- Տեքստի համաձայն, ինչի՞ց է կախված կուսակցության կենսունակությունը:
- Ի՞նչ հիմնական սկզբունքների վրա պետք է լինի հիմնված ժամանակակից քաղաքական կուսակցությունը:
- Ինչպե՞ս կբացատրեք առաջնորդի և կուսակցության միջև շղթայվածության պատճառը:
- Վրաց իրականությունում որքանո՞վ է առաջնորդի նկատմամբ համակրանքը որոշում կուսակցության նկատմամբ աջակցությունը: Ի՞նչ սպառալիքներ է ներառում նշված մոտեցումը:

Չափանիշ 2. Միխեիլ Ջավախիշվիլիի «գործի» օրինակով քննարկեք՝ որքանո՞վ էին Խորհրդային Միությունում պաշտպանված իշխանության բաշխման, օրենքի գերակայության և ժողովրդավարության այլ և այլ սկզբունքները: (**Ժողովրդավարություն: Հաստ. պատկ. 3)**

Ռեսուրս. Ժողովրդավարության նշաններ: **Դասագիրք, II մաս, էջ 55**
Ակտիվություն. Քննարկե՛ք

Ռեժիմի բնութագրիչներ	**Ժողովրդավարական** **Պաշտպանված է/պաշտպանված չէ**	**Ոչ ժողովրդավարական** **Կարծիքը հիմնավորիր տեքստից**
Օրենքի գերակայություն		
Իշխանության բաշխում		
Իշխանության օրինականություն		
Մարդու իրավունքներ		

Հարցեր.
- Ինչպե՞ս և ինչո՞ւ են խախտվում ժողովրդավարության սկզբունքները տոտալիտար պետությունում:
- Ի՞նչ նմանություն/տարբերություն է Միխեիլ Զավախիշվիլիի «գործի» և Ռենյայի օրագրում նկարագրված իրավիճակների միջև:
- Քննարկե՛ք՝ հենվելով Միխեիլ Զավախիշվիլիի և Ռենյայի օրինակների վրա՝ ի՞նչ արդյունք կհետևի պետության անսահմանափակ իշխանությանը:
- Ի՞նչ միջոցներ գոյություն ունեն պետության իշխանության վերահսկողության համար: Որքանո՞վ է հնարավոր այդ միջոցներից օգտվելը տոտալիտար ռեժիմի պայմաններում:

Ռեսուրս.
Խոտագույն մարդը/Բալենու քաղաքը: Առակ, դ**ասագիրք, II մաս, էջ 62-63**
Ակտիվություն. Քննարկե՛ք: Բաժանվե՛ք խմբերի: Նախնական գիտելիքի կիրառմամբ՝ յուրաքանչյուր խմբում ընթերցե՛ք և իմաստավորե՛ք ստորև տրված հատվածը.
1) Գուրամ Դոչանաշվիլիի «Առաջին հանդերձանք» ստեղծագործությունից և 2) առակը, պատասխանե՛ք հարցերին.
Հարցեր.
- Ինչպե՞ս են այս քաղաքում ընդունում որոշում՝ կապված անձնավորության հետ: Որքանո՞վ պաշտպանված է մարդու արժանապատվությունն այս քաղաքում:
- Ինչպե՞ս կբնութագրեի՛ք խոտագույն տղամարդուն:
- Ինչո՞ւ է ձգտում կերպարը վրանի բնակիչներին ուղղել տալ իրենց սխալները:

- Ինչո՞ւ էր խոտագույն մարդը համարում, որ իր քաղաքի հասարակությունը ամբոխի վերածվեց: Ձեր կարծիքով, ինչո՞վ է տարբերվում հասարակությունը ամբոխից:
- Ինչո՞ւ համաքաղաքացիները քաղաքից վտարեցին խոտագույն տղամարդուն:
- Ինչո՞ւ վրանաբնակները չեն հավանում արժանապատիվ մարդուն: Ո՞ր մի գաղափարին են ծառայում վրանաբնակները:
- Ինչո՞ւ են վախենում վրանաբնակները խոտագույն տղամարդուց: Ի՞նչ կլիներ, եթե այդպիսի տղամարդիկ շատ լինեին:
- Ո՞ր գաղափարախոսության առաջնորդի հետ է ներդաշնակվում մեծ վրանաբնակը, որն ունի անվերապահ որոշումներ կայացնելու իրավունք, և նրան հասարակությունը երկրպագում է:
- Ինչպիսի՞ քաղաքացի է խոտագույն տղամարդը:
- Որքանո՞վ նման է ԽՍՀՄ-ին «Վրանաբնակների երկիրը»: Կարծիքը հիմնավորե՛ք:
- Միխեիլ Զավախիշվիլին նման էր, արդյոք, խոտագույն տղամարդուն: Կարծիքը հիմնավորե՛ք:
- Ինչի՞ մասին է պատմում այս առակը:
- Ի՞նչ է ենթադրում դաժան իշխանությունը: Ինչո՞ւ է այն մահից ավելի վատը:
- Ի՞նչ եզրակացություն կայացրեց այս պատմությունից Կոնֆուցիոսը: Դուք ի՞նչ եզրակացություն կարող եք կատարել այս պատմությունից:
- Չնայած բացարձակապես տարբեր պատմական ժամանակաշրջաններին, աշխարհագրական դիրքին և քաղաքական իրավիճակին, ի՞նչ նմանություն կա այս 2 պատմությունների միջև:
- Ինչպիսի՞ ռեժիմներ է բնութագրում աղբյուրներում նկարագրված իրավիճակը: Ինչպիսի՞ն է, ինչի՞ց է կախված անձի ճակատագիրը նման ռեժիմ ունեցող պետությունում:

Հարցեր.

Ռեսուրս. Վաժա Փշավելայի կարծիքը: **Դասագիրք, II մաս, էջ 69:** Շինդլերի ցուցակը: **Դասագիրք, II մաս, էջ 82**

Ակտիվություն. Քննարկե՛ք: Համեմատե՛ք աղբյուրներում տրված անձանց տիպերը

Աշակերտի գրքում (II մաս, էջ 69) **տրված օգտակար ռեսուրսներ.**

Գուրամ Պետրիաշվիլի - «Թախծոտ ծաղրածուի պատմությունը»:

Նաիրա Գելաշվիլի - «Ուղևորվում եմ Մադրիդ»:

Քաղաքական գաղափարախոսություններ և ռեժիմներ. https://bit.ly/3k22ykq

Հարցեր.

- Համաձա՞յն եք, թե՞ ոչ հեղինակի կարծիքին:
- Ինչպե՞ս է հիմնավորում Վաժա Փշավելան, ինչո՞ւ չի պայքարում անգրագետ մարդը ազատություն ձեռք բերելու համար:

- Ձեր կարծիքով, այս հիմնավորումը միայն կրթություն չունեցողների՞ն է վերաբերվում:
- Ի՞նչ կարծիք ունի հեղինակը հանդուրժող հասարակության նկատմամբ: Ի՞նչ վնաս է հասցնում այսպիսի հասարակությունը ինքն իրեն:
- Բնութագրե՛ք խոտագույն ունեցողին, Շինդլերի մարդուն Վաժա Փշավելայի (դասագիրք, II մաս, էջ 69) տեսակետից:
- Ո՞ր քաղաքական ռեժիմն է նկարագրված նամակում: Ի՞նչ վերաբերմունք է ցուցաբերում հեղինակը այդ ռեժիմի նկատմամբ, այն հասարակության նկատմամբ, որին հանդուրժում է հասարակությունը: Ի՞նչ է ցանկանում ասել հեղինակը այս նամակի համաձայն:
- Որքանո՞վ ակտուալ է նման իրավիճակն այսօր մեր երկրում, աշխարհում:
- Ինչպե՞ս կարող է մի մարդը («Խոտագույն մարդը», Շինդլերի օրինակով) պայքարել ռեժիմի դեմ:
- Ի՞նչ դեր ունեն անհատները ռեժիմի դեմ պայքարում:
- Ոչ ժողովրդավարական ռեժիմների դեմ հնարավո՞ր է, թե՞ ոչ պայքարը ոչ բռնի մեթոդներով: Քննարկե՛ք՝ ինչպե՞ս:

Ռեսուրս. Նացիստ լիդերների ժառանգները - ինչպե՞ս ընթացավ անգութ մարդասպանների զավակների կյանքը, դ**ասագիրք, II մաս, էջ 79:**
Ակտիվություն. Քննարկե՛ք
Հարցեր.
- Ի՞նչ է հոդվածի գլխավոր ուղերձը:
- Պատասխանատո՞ւ է, արդյոք, որդին կամ թոռը իր նախնիների կողմից կատարված հանցագործության համար:
- Ինչո՞վ կարող են սերունդները վարձահատույց լինել իրենց նախնիների համար:
- Եթե այլ տեղեկատվություն չունենաք, միայն այս պատմվածքից ի՞նչ տպավորություն կստեղծվի ձեզ մոտ ֆաշիզմի մասին:
- Վերհիշե՛ք պատմությունից՝ ինչպե՞ս Հիտլերը հասավ իշխանության: Ո՞վ չխանգարեց նրան միանձնյա բռնակալ կառավարչի վերածվելու մեջ:
- Համեմատե՛ք Շինդլերի և Հիոսի կյանքի ուղիները:

Ռեսուրս. Քաղաքական ռեժիմների տեսակները, **դասագիրք, II մաս, էջ 82-83**
Ակտիվություն. Համապատասխանեցրե՛ք քաղաքական ռեժիմի նշանները ռեժիմի տեսակներին
Հարցեր.
- Ի՞նչ է նշանակում քաղաքական ռեժիմ տերմինը:
- Ինչպիսի՞ն են քաղաքական ռեժիմների հիմնական տիպերը:
- Ի՞նչ բնութագրիչներ ունի տոտալիտար ռեժիմը:
- Համեմատե՛ք տոտալիտար և ավտորիտար ռեժիմները:

- Որո՞նք են հիմնական քաղաքական ռեժիմները: Ինչպե՞ս է ապահովվում իշխանության վերահսկողությունը ժողովրդավարության պայմաններում:

Ռեսուրսներ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
Ակտիվություն. Քննարկե՛ք: Վերլուծե՛ք՝ ժողովրդավարության ո՞ր սկզբունքն է խախտվում վերևում քննարկված օրինակներում:
գ) Նացիստական Գերմանիայում, դ) Խորհրդային Միությունում

Ժողովրդավարության սկզբունք	**Խորհրդային Միություն**	**Նացիստական Գերմանիա**	**Բերեք օրինակ**
Հավասարություն			
Օրենքի գերակայություն			
Քաղաքացիական մասնակցություն/ինկլյուզիվություն			
Իշխանության բաշխում			
Թափանցիկություն և հաշվետվություն			
Արդարացի ընտրություններ			
Ոչ բռնի մեթոդներով գործողություն			
Հանդուրժողականություն			
Բազմակուսակցականություն			
Տնտեսական ազատություն			

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Նկարագրե՛ք՝ ինչպե՞ս է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը.
- Ինչպե՞ս եք պլանավորում/պլանավորեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ի՞նչ էիք նկատառում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Ունեի՞ք, թե՞ ոչ նախնական պլան առաջադրանքի վրա աշխատանքի համար: Որքանո՞վ այդ պլանը օգնեց աշխատանքի գործընթացում: Անհրաժեշտ էր, արդյոք, նախնական աշխատանքային պլաններում փոփոխություններ մտցնելը: Ինչո՞ւ:

- Ու՞մ հետ և ինչպե՞ս համագործակցեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Հանդիպեցի՞ք, թե՞ ոչ տարբերվող կարծիքներ ունեցող մարդկանց: Որքանո՞վ օգնեց այլ մարդկանց հետ համագործակցությունը:
- Կիրառեցի՞ք, թե՞ ոչ տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Ինչո՞ւմ օգնեց տեխնոլոգիաների կիրառումը:
- Ի՞նչ արտադրանք ստեղծեցիք համալիր առաջադրանքի տեսքով:

Բացատրեք՝ ինչ գիտելիք և փորձ ձեռք բերեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:

- Ի՞նչ հարցի է վերաբերում ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ գիտեիր ուսանելի հարցի մասին: Ի՞նչ նոր բան իմացար: Լրացուցիչ ի՞նչ կուզենայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացության հանգեցրեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ինչո՞վ են հաստատվում ձեր կողմից կատարված եզրակացությունները:
- Ու՞մ համար և ինչո՞ւ է ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ միջոցներից օգտվեցիք ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար:/Համալիր առաջադրանքը ավելի լավ կատարելու համար:

Գնահատե՛ք՝ որքանով արդյունավետ և հետաքրքիր էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:

- Գնահատե՛ք՝ որքանով ստացվեց առաջադրանքի կատարումը: Որքանո՞վ այն համընկավ ուսուցչի սպասելիքներին:
- Ի՞նչը կատարեցիք ինքնուրույն: Ինչո՞ւմ անհրաժեշտ եղավ այլոց օգնությունը:
- Ի՞նչ գործոններ նկատի ունեցաք/պետք է նկատի ունենաք այն բանի համար, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լիներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ և որքանո՞վ է տարբերվում ձեր կողմից կատարված առաջադրանքը համադասարանցիների աշխատանքներից:

Ի՞նչ կկատարեիք այլ կերպ, եթե նորից սկսեիք առաջադրանքի վրա աշխատել:

Որոշող գնահատման խորագիր **Աղյուսակ 3.**

Դասարան. XI **Թեմա.** «Քաղաքականություն և քաղաքական մշակույթ» **Հիմնական հարց.** Քաղաքական գաղափարախոսություններ և ռեժիմներ **Աշակերտ.**		
Գնահատման չափանիշ	Առավելագույն միավոր	Մեկնաբանություն

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա. վերլուծել Ռենյայի օրագրի գործող անձանց վրա նացիստական ռեժիմի ազդեցությունը:	1,5	
Ժողովրդավարություն – Աշակերտը պետք է կարողանա. Ռենյայի օրագրում նկարագրված երևույթների համաձայն, նացիստական ռեժիմը գնահատել ժողովրդավարության սկզբունքների հիման վրա, մարդու իրավական վիճակի համաձայն:	1,5	
Քաղաքացիական մասնակցություն – Աշակերտը պետք է կարողանա. նացիստական ռեժիմի պայմաններում քաղաքական գործընթացներում քաղաքացիների ընդգրկման համար գաղափարները հստակեցնել, քաղաքական գործընթացներին մասնակցության հնարավորությունը վերլուծել:	1,5	
Կայուն զարգացում – Աշակերտը պետք է կարողանա. գործոնները վերլուծել (օր.՝ տոտալիտար ռեժիմի առկայություն, պատերազմ), որոնք խոչընդոտում են օրագրում նկարագրված քաղաքական ռեժիմի պայմաններում նկատի առնված կայուն զարգացման սկզբունքներին:	1,5	

Որոշող գնահատման առաջարկված խորագիրը հիմնված է առակայական չափորոշչում տրված **թեմայի սահմաններում արդյունքներին հասնելու ինդիկատորներին (թիրախային հասկացությունների համաձայն)** և նախատեսված է ամփոփիչ առաջադրանքի գնահատման համար, ինչը իր հերթին նպատակամղված է հասկացություններին կողմնորոշմամբ թեմայի կամ դրա մասի ամփոփմանը**:**

Ամփոփիչ առաջադրանքի համար խորհուրդ է տրվում ընտրել ենթատեքստ-օրինակ և նախապես տալ աշակերտներին ծանոթանալու/վերլուծելու համար: Նրանք կգիտենան, որ մոտավորապես մեկ շաբաթում իրենք պետք է ամփոփիչ առաջադրանքը կատարեն առաջարկված հարցերի համաձայն, որոնք կապված կլինեն տրված ենթատեքստ-օրինակին:

Տվյալ դեպքում ընտրեք «Ռենյայի օրագիրը» (II մաս, էջ 57-60) ենթատեքստ-օրինակը, աշակերտին հանձնարարում եք առաջադրանք՝ ծանոթանալ «Ռենյայի օրագիրը» տեքստին: Տեքստի վերլուծության հիման վրա գրե՛ք նացիստական ռեժիմի համառոտ (200-250 բառ) բնութագիրը:

Աշխատանքում ընդգծված ներկայացրե՛ք.

- Ի՞նչ կարիքներ չկարողացան բավարարել Ռենյայի օրագրի գործող անձինք նացիստական ռեժիմի պայմաններում:
- Ինչպե՞ս էին անտեսված ժողովրդավարության սկզբունքները և խախտված մարդու իրավունքները նացիստների կողմից:
- Որքանո՞վ էր հնարավոր տոտալիտար ռեժիմի պայմաններում քաղաքացիական մասնակցության ձեզ հայտնի ձևերի կիրառումը:

- Կայուն զարգացման ո՞ր սկզբունքներն էին հատկապես անտեսված Ռենյայի օրագրում նկարագրված իրադարձությունների ժամանակ:

XI դասարանի պարտադիր թեմայի (Քաղաքականություն և քաղաքական մշակույթ) երրորդ հիմնական հարցն է «**Կայուն քաղաքականությունը»:** Այս հարցի առնչությամբ աշակերտի նախնական գիտելիքի ակտիվացումը և նոր գիտելիքի կառուցումը կատարվում է 2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդվածով և բովանդակային առումով դրան մոտ կանգնած օրինակներով.

Հիմնական քեյս և օրինակներ համեմատության համար	**Ռեսուրսներ**
Հիմնական քեյս. 2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդված	• Դասագիրք, II մաս, էջ 87-93 • Ուսուցչի գիրք, Հավելված 7, էջ 194)
Օրինակ՝ համեմատության համար 1. Ի՞նչ են կատարում երկրները կայուն ապագա ստեղծելու համար	• Դասագիրք, II մաս, էջ 97
Օրինակ՝ համեմատության համար 2. «Գրամին բանկը» Բանգլադեշում	• Դասագիրք, II մաս, էջ 99
Օրինակ՝ համեմատության համար 3. 1-ը դեկտեմբերի – Կոստա Ռիկայում բանակի չեղարկման օր	• Դասագիրք, II մաս, էջ 100
Օրինակ՝ համեմատության համար 4. Անտառի նշանակությունը Գաբոնում	• Դասագիրք, II մաս, էջ 101
Օրինակ՝ համեմատության համար 5. Իսլանդիան և գեոջերմային էներգիան	• Դասագիրք, II մաս, էջ 102
Օրինակ՝ համեմատության համար 6. Ֆրայբուրգ՝ ապագայի քաղաք	• Դասագիրք, II մաս, էջ 103

Պարզաբանում. Նոր գիտելիքի կոնստրուկտիվ կառուցումն ապահովելու համար կարևոր է աշակերտներին առաջարկենք նրանց գիտելիք-փորձին հասանելի այնպիսի օրինակներ (մասնավոր դեպքեր, իրավիճակներ, պատմություններ), որոնց քննարկում-վերլուծումը կօժանդակի նրանց թիրախային գիտելիքը (ենթահարցը, ենթահասկացությունները, թիրախային հասկացությունները) ըմբռնելուն և յուրացնելուն: Ենթատեքստ–օրինակները ճիշտ այդպիսի օրինակներ կարող ենք անվանել: Այդ պատմությունները պետք է ընտրվեն պարտադիր թեմաների շրջանակներում հստակեցված հիմնական հարցերի համաձայն և պետք է ցույց տան կենսական իրավիճակներ (երկընտրանքներ, էմոցիաներ):

Այստեղ ևեթ ընդգծված նշում ենք, որ ուսուցչի գրքում առաջարկվող հիմնական ենթատեքստ-օրինակները կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, այսինքն՝ կարող եք հիմնական գործառույթը վերագրել դասագրքում ներկայացված մեկ այլ ենթատեքստ-օրինակի և դրա վրա հիմնվելով ձևակերպել համալիր առաջադրանքի պայմանը:

Ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հիմնական ենթատեքստ-օրինակի վերլուծության վրա: Դրա մշակումը կատարվում է խորքային՝ ենթատեքստը, էմոցիոնալ-սոցիալական տեսանկյունները նկատի ունենալով, իսկ համեմատության համար ընտրված օրինակները հիմնականում ֆոնային գիտելիքի դեր են կատարում:

Ենթատեքստ-օրինակի առաջնային մշակման ժամանակ ուսուցիչը ուղղորդող հարցերով, ակտիվություններով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն մանրամասնությունների վրա, որոնք մշակվող ենթահասկացությունների, թիրախային հասկացությունների հետ կապի մեջ են: Օրինակ՝ կոնկրետ դեպքում ենթատեքստ - օրինակի այն ծավալի վրա ենք փորձում կենտրոնանալ, որոնք հանգուցային հարցերում էլ (ինչ գործոններ և ինչու են պայմանավորում պետության միջամտությունը ազատ շուկայի կարգավորման գործում: Ինչպե՞ս պատկերացնել պետության առջև ծառացած երկընտանքները/մարտահրավերները մարդու իրավունքների պաշտպանության պարտականությունների և տնտեսական ազատության սկզբունքի պահպանության կապակցությամբ) որոշված են:

Աղյուսակ թիրախային գիտելիքի որոշման համար

Թեմա – Քաղաքականություն և քաղաքական մշակույթ **Հիմնական հարց** – **Կայուն քաղաքականություն** **Հիմնական քեյս** - 2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդված		
Ենթահարց	**Ենթահասկացություն**	**Թիրախային հասկացություն**
2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդված	Գործընկերություն նպատակներին հասնելու համար	**Կայուն զարգացում** (Արդյունք . 3)

Որոշելու համար, թե ինչ պետք է գիտենա աշակերտը ենթահարցի հետ կապված, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Աղյուսակ 1),** որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի ամբողջացված մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է մի քանի փուլում.

ա) նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և ուսանում-ուսուցման գործընթացը պլանավորելու փուլում (**ինչ ակտիվություններ, մեթոդներ, մարտավարություններ պետք է կիրառենք, որպեսզի աշակերտին օգնենք այս սպասումը իրական արդյունքի վերածելու մեջ**),

բ) հաջորդ ուսանում-ուսուցման գործընթացի մոնիթորինգի համար (**ինչպե՞ս է ընթանում գործընթացը, հայտնվեցի՞ն սպասելիքներին համապատասխան նշաններ: Ի՞նչ հարցեր պետք է օգտագործեմ որպես փայտամած**),

գ) ուսանում-ուսուցման գործընթացում և համալիր առաջադրանքը ավարտելու ժամանակ կոնկրետ հետադարձ կապի ձևավորման մեջ (**սպասելիքներից ո՞ր արտահայտությունները հարմար կլինեն աշակերտի արդյունքը նկարագրելու, խրախուսելու, խորհուրդ տալու համար**),

դ) վերջում՝ միջանկյալ և երկարաժամկետ նպատակների վրա աշխատանքը՝ մանկավարժական պրակտիկայի կառուցվածքային ինքնագնահատման համար (**իրատեսական սպասելիքները ո՞ր հաստատուն պատկերացման՝ Հաստ. պատկ. կապակցությամբ որոշեցի: Ո՞ր սպասելիքի համար գտա ճիշտ լուծումը ակտիվությունների և մեթոդների տեսքով: Որտե՞ղ պետք է փոխեմ մոտեցումը**):

Աղյուսակ 1.

Թիրախային հասկացություն **Ենթահարց**	**Թիրախային հասկացության կապակցությամբ հաստ. պատկերացումներ**	**Սպասելիքներ** **<u>Աշակերտը կարող է.</u>**	**Ուսուցչի մեկնաբանությունը**
Կայուն զարգացում (Արդյունք. 3)	1. Ռեսուրսները կիրառելիս կարևոր է հասարակության շահերը և ապագայի հեռանկարները նկատի ունենալ:	Կոնկրետ օրինակների վրա հիմնված վերլուծել. - կլիմայի փոփոխություններ առաջացնող գործոնները, կլիմայի փոփոխությունների արդյունքները, - ինչո՞ւ է կարևոր համագործակցությունը կայուն ապագայի համար, - քննարկել՝ ի՞նչ դեր ունի համագործակցությունը մասնավոր և հանրային սեկտորի և քաղաքացիական հասարակության միջև կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:	

2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդված	2. Լոկալ արարքներին ուղեկցում են գլոբալ արդյունքներ (օրինակ, շրջակա միջավայրի մասին հոգածությունը մի հայացքով աննշան արարքներով է սկսվում (օր. աղբը գետնին չգցել, պոլիէթիլենային տոպրակներից հրաժարվել):	Հենվելով քննարկված օրինակների վրա հիմնավորել. • Լոկալ արարքների նշանակությունը կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:	

Ստորև տրված միջանկյալ/համալիր առաջադրանքի մատրիցայում **(Աղյուսակ 2.)** բերված են համալիր առաջադրանքի պայմանը, գնահատման չափանիշները և իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, ուղղորդող հարցեր և կարճ հանձնարարականներ ուսուցչին):

Աղյուսակ 2.

Հարց - «Կայուն քաղաքականություն»
Ենթահարց -2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդված. **Ենթահասկացություն – Կայուն զարգացման նպատակ 17,** **Թիրախային հասկացություն – Կայուն զարգացում (Արդյունք. 3)**
Հանգուցային հարցում – Ինչո՞ւ է նշանակալից գործընկերությունը կառավարության/կառավարությունների, մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության միջև կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: Ինչպե՞ս արտացոլել աշխատանքում կայուն զարգացման նպատակների անտեսման արդյունքները:
Համալիր առաջադրանք Ծանոթացե՛ք 2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդվածին (էջ 87-93), վերլուծեք հոդվածում ծագած խնդիրները: Այս և դասագրքում ներկայացված 1-5 իրավիճակի (էջ 99-104) վերլուծության հիման վրա կազմե՛ք **աղյուսակ/սխեմա:** Ուշադրությունը կենտրոնացրե՛ք կառավարության, մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության դերի վրա հիմնախնդիրը լուծելու գործում, մասնավորապես. հիմնախնդիրներ առաջացնող պատճառների վրա, արդեն առաջացած և հնարավոր արդյունքների վրա, վնասը նվազեցնելու ուղիների վրա:

Կայուն զարգացման գլոբալ նպատակ	Ի՞նչ արդյունքներ կհետևեն նպատակի անտեսմանը	Ի՞նչ քայլեր պետք է կատարվի կառավարության կողմից նպատակին հասնելու համար	Ի՞նչ քայլեր պետք է կատարվի մասնավոր սեկտորի կողմից նպատակին հասնելու համար	Ի՞նչ քայլեր պետք է կատարվի քաղաքացիական հասարակության կողմից նպատակին հասնելու համար	Դատողությո՛ւն արեք նպատակին հասնելու հարցում գործընկերության նշանակության մասին:
N					
N					
N					
N					

Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.

- Ի՞նչ քայլեր պետք է կատարվեն կառավարության, մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության կողմից կայուն զարգացման նպատակներին հասնելու համար **(Կ. զարգ. Հաստ. պատկ. 1.2.)**
- Ի՞նչ արդյունքներ կհետևեն կայուն զարգացման նպատակների անտեսմանը, և ինչո՞ւ է կարևոր համագործակցությունը ընդհանուր նպատակներին հասնելու համար: **(Կ. զարգ. Հաստ. պատկ. 1.2.)**

Թիրախային հասկացության/հասկացությունների հետ կապված հաստատուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ՝	**Գնահատման չափանիշ** Աշակերտը կարող է.	**Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.**
Կայուն զարգացում (Արդյունք. 3) 1. ռեսուրսները կիրառելիս կարևոր է հասարակության շահերը և ապագայի հեռանկարները նկատի ունենալ,	**Կայուն զարգագում.** Լոկալ արարքներին կապակցել գլոբալ արդյունքները: **(Հաստ. պատկ. 1.2.)**	• Ի՞նչ քայլեր պետք է կատարվի կառավարության, մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության կողմից կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: **(Կ. զարգ. Հաստ. պատկ. 1.2.)** • Ի՞նչ արդյունքներ կհետևեն կայուն զարգացման նպատակների անտեսմանը, և ինչո՞ւ է կարևոր

2. լոկալ արարքներին ուղեկցում են գլոբալ արդյունքներ (օրինակ, շրջակա միջավայրի մասին հոգածությունը մի հայացքով աննշան արարքներով է սկսվում (օր. աղբը գետնին չգցել, պոլիէթիլենային տոպրակներից հրաժարվել):		համագործակցությունը ընդհանուր նպատակներին հասնելու համար: **(Կ. զարգ. Հաստ. պատկ. 1.2.)**

Համալիր առաջադրանքի իրականացման փուլեր (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I. Ծանոթացում համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրս. Դասագիրք, II թեմա: III գլուխ: **Կայուն քաղաքականություն:** Համալիր առաջադրանքի պայման, II մաս, էջ 86

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.

- Ինչպե՞ս եք հասկանում կայուն զարգացումը:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակներին եք ծանոթ:
- Ինչո՞ւ են կարևոր կայուն զարգացման նպատակները:
- Ի՞նչ նպատակ է հետապնդում աղյուսակ/սխեմա ստեղծելը:
- Ի՞նչ քայլեր կկատարեք առաջադրանքը կատարելու համար:
- Ինչպե՞ս կհստակեցնեք հարցի ակտուալությունը:
- Ձեր բառերով ձևակերպեք՝ ինչի՞ հետ է կապված տրված առաջադրանքը:
- Նման ձևի՞ կամ բովանդակության առաջադրանք ուրի՞շ ժամանակ կատարե՞լ եք, արդյոք:

Հանձնարարական ուսուցչին.

Հարցերի միջոցով մեկ անգամ կրկին վերստուգեք, առաջադրանքի պայմանը բոլորի համար հասկանալի՞ է, թե՞ ոչ:

Հաղորդե՛ք աշակերտներին տեղեկատվություն այն մասին, որ մինչև համալիր առաջադրանքի կատարումը ուսանելի հարցին կտրամադրեք մի քանի դաս, և վերջում բոլորը կունենան կատարված առաջադրանքը դասարանին ներկայացնելու հնարավորություն:

Ուշադրություն:

Համալիր առաջադրանքի վրա աշխատանքը հիմնականում դասարանում, դասերի ժամանակ է ընթանում և միայն բացառիկ դեպքում եք կիրառում տնային առաջադրանքը:

Փուլ II. – Համալիր առաջադրանքի վրա աշխատանք

Թիրախային գիտելիք,
Ենթահարց. 2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդված,
Ենթահասկացություն -կայուն զարգացման նպատակ 17,
Թիրախային հասկացություն. կայուն զարգացում (Արդյունք. 3)
Ենթատեքստ-օրինակների առաջնային մշակում

Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով, II մաս, էջ 87-93
Ուշադրությամբ վերանայեք 2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդվածը (էջ 87-93): Տեղափոխե,ք աղյուսակը թերթի վրա:

- Առաջին սյունակում գրառե՛ք հոդվածում քննարկված լոկալ գործողությունները, որոնք գլոբալ հիմնախնդիրներ են առաջացնում, իսկ երրորդ սյունակում՝ կանխարգելման ուղիները,
- համեմատե՛ք այլ զույգերի կողմից կազմված կանխարգելման ուղիները, ընդհանուր ի՞նչ բացահայտեցիք,,
- ինչո՞վ են աչքի ընկնում ձեր կողմից առաջարկված կանխարգելման ուղիները մյուսներից (որքանո՞վ է ճիշտ, գուցե՝ տարբերվում կամ առանձնանում): Անվանե՛ք կոնկրետ օրինակներ և պատասխանը հիմնավորե՛ք:

Լոկալ արարքներ	Գլոբալ հիմնախնդիր/հիմնախնդիրներ	Կանխարգելման ուղիներ

Չափանիշ 1. Ի՞նչ քայլեր պետք է կատարեն կառավարությունը, մասնավոր սեկտորը և քաղաքացիական հասարակությունը կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: **(Կայուն զարգ. Հաստ. պատկ. 1.2.)**

Ռեսուրս. 2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդված, **դասագիրք, II մաս, էջ 87-93**
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում
Հարցեր.

- Վերհիշե՛ք կայուն զարգացման նպատակները: Կայուն զարգացման ո՞ր նպատակի/նպատակների մասին է խոսվում հոդվածում:
- Նախնական գիտելիքի կիրառմամբ, ի՞նչ կարող եք կատարել՝ որպես աշակերտ, որպես քաղաքացի կայուն զարգացման նպատակին հասնելու համար: Պատասխանը կոնկրետացրե՛ք:

- Ո՞ր նպատակն եք համարում Վրաստանի համար ամենահիմնախնդրային: Պատասխանը հիմնավորե՛ք:
- «Քաղաքացիություն» առարկայի շրջանակներում ամեն տարի սովորում եք՝ ի՞նչ կարող է կատարել աշակերտը կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: Իսկ հոդվածում այդ ձգտումները հեղինակը «միկրոսպառողական հիմարություններ» է անվանում: Ձեր կարծիքով, ինչո՞ւ: Ի՞նչ ի նկատի ունի հոդվածի հեղինակը: Ի՞նչ կարծիքի եք դուք:
- Ինչի՞ հիման վրա է հեղինակը քննադատում մեդիային: Ի՞նչ փաստեր է բերում հեղինակը այն բանի համար, որպեսզի ցույց տա մեդիայի սառնասրտությունը կայուն նպատակների նկատմամբ:
- Ինչո՞ւ է հեղինակը քննադատում քաղաքացուն սպառողի կարգավիճակում:
- Ի՞նչ կատակլիզմներ՝ համաղետներ է առաջացնում մարդու անմտությունը, և ինչո՞ւ այն չենք նկատում մենք:
- Ի՞նչ ելք է տեսնում հեղինակը էկոհամակարգը փրկելու համար: Ինչի՞ մեջ եք դուք տեսնում ելքը:
- Հոդվածի ընթերցումից հետո ինչպե՞ս եք պատկերացնում ձեր դերը կայուն զարգացման կոնկրետ նպատակին հասնելու գործում: Ինչի՞ մասին մտածմունք առաջացրեց հոդվածը:
- Ինչպե՞ս են կապված քաղաքականությունը և կայուն զարգացման նպատակների իրականացումը միմյանց հետ: Կարո՞ղ է արդյոք մի կառույցը (մասնավորապես դուք՝ որպես կառույց), մի պետությունը ինքնուրույն մաքառել կայուն զարգացման նպատակներն իրականացնելու համար:
- Ո՞ր ներքին պետական ինստիտուցիաները կկիրառեիք ձեր դերի կարգավիճակում: Ո՞ր միջազգային ինստիտուցիաները:
- Ինչպես կարող ենք կապակցել կայուն զարգացման երեք չափանիշները. տնտեսական զարգացումը, սոցիալական ընդգրկվածությունը և շրջակա միջավայրի կայունությունը:
- Կապակցե՛ք միմյանց հոդվածում ծագած հիմնախնդիրները և 1-5-ում իրավիճակ (էջ 99-104) նկարագրված փորձերը կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: Պատասխանը հիմնավորե՛ք:

Ռեսուրսներ.

Կայուն զարգացման բաղադրիչները, **դասագիրք, էջ 88**

Կայուն զարգացման գլոբալ նպատակները, **դասագիրք, էջ 95**

Ակտիվություն: Աշխատե՛ք խմբերում, Կայուն զարգացման բաղադրիչներին կապակցե՛ք կայուն զարգացման նպատակները:

Կայուն զարգացման բաղադրիչներ	**Կայուն զարգացման նպատակներ N**
Կայուն սոցիալական զարգացում (մարդը)	
Շրջակա միջավայրի կայուն զարգացում (մոլորակ)	
Կայուն տնտեսական զարգացում (բարեկեցություն)	

Հարցեր.

- Ինչպե՞ս եք հասկանում կայուն զարգացման յուրաքանչյուր բաղադրիչի նշանակությունը:
- Դժվարացա՞ք, թե՞ ոչ նպատակները բաղադրիչներին կապակցելու հարցում:
- Ինչպիսի՞ն է կայուն զարգացման բաղադրիչների փոխհարաբերությունը:

Ռեսուրսներ.

Կայուն զարգացման գլոբալ նպատակներ, **դասագիրք, էջ 95**

Իրավիճակ 1,2,3,4,5, **դասագիրք, II մաս, էջ 99-104**

Աշակերտի գրքում (II մաս, էջ 104) **տրված օգտակար ռեսուրսներ.**

ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներ – տեսություն https://bit.ly/3l7Siav

Կայուն զարգացման նպատակներ https://bit.ly/3RMzhGV

Կայուն զարգացումը և դրա տեսանկյունները https://bit.ly/3HqO4SI

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում: Բաժանե՛ք ստորև տրված 5 իրավիճակը և պատասխանե՛ք հարցերին:

Հարցեր.

- Ի՞նչ գործունեություն է ծավալում «Գրամին բանկը» Բանգլադեշում:
- Ինչո՞ւ է Գրամինի մոդելը աղքատ բնակչության (այդ թվում՝ կանանց) օգնության արդյունավետ միջոց:
- Ինչո՞ւ է այսօր կարևոր աջակցությունը խոցելի սոցիալական շերտի ֆինանսական ինտեգրմանը:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակներին հասնելուն է աջակցում բանկի գործունեությունը:
- Ի՞նչ նպատակով վերացվեց բանակը Կոստա Ռիկայում:
- Ի՞նչ փաստարկներով է բացատրում Կոստա Ռիկայի նախկին նախագահը և խաղաղության ոլորտում Նոբելյան մրցանակի դափնեկիրը բանակի վերացումը:
- Համաձա՞յն եք, արդյոք, այդ փաստարկին: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ի՞նչ նպատակների ուղղեց երկիրը բանակի համար հատկացված ռեսուրսները:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակին կկապակցեք Կոստա Ռիկայում բանակի չեղարկմամբ առաջացած արդյունքները:
- Ձեր կարծիքով՝ ճիշտ վարվե՞ց, թե՞ ոչ Կոստա Ռիկայի իշխանությունը: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ինչո՞ւմ արտահայտվեց Գաբոնի իշխանության տնտեսական քաղաքականությունը:
- Ի՞նչ նպատակի է ուղղված 2001 թվականին Գաբոնում ընդունված անտառային օրենսգիրքը:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակի հետ է կապվում Գաբոնի իշխանության քաղաքականությունը: Ինչո՞ւ է այդ նպատակը կարևոր:

- Ի՞նչ արդյունքներ են հետևում նման քաղաքականությանը:
- Կցանկանայի՞ք, արդյոք, որ Վրաստանը նույնպես վարեր նման քաղաքականություն: Ինչո՞ւ:
- Էներգիայի ի՞նչ աղբյուրներ էր օգտագործում և այժմ էլ շարունակում է կիրառել Իսլանդիան:
- Ինչո՞ւմ է կայանում Իսլանդիայի «էներգետիկական հեղափոխության» էությունը:
- Ինչո՞ւ է կարևոր էներգիայի մշակումը նորացվող աղբյուրներից:
- Ի՞նչ նպատակ է հետապնդում Արևելյան Աֆրիկայի երկրներին օգնելու Իսլանդիայի 2010 թվականի նախաձեռնությունը:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակի հետ է կապվում Իսլանդիայի «Էներգետիկական հեղափոխությունը»:
- ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի շրջանակներում ինչո՞ւ է նշանակալից Իսլանդիայի աշխատանքը Արևելյան Աֆրիկայի երկրներում:
- Ինչո՞ւ է Ֆրայբուրգը աշխարհի ամենակենսունակ, առաջադեմ և կայուն քաղաքներից մեկը:
- Ի՞նչը նպաստեց Ֆրայբուրգի այդպիսի քաղաքի վերածվելուն:
- Ի՞նչ է արդյունաբերական սիմբիոզը:
- Քանի՞ արտադրական ձեռնարկություն է միավորում Կալունդբորգի ինդուստրիալ սիմբիոզը:
- Ի՞նչ դրական արդյունք է բերում շրջակա միջավայրին արդյունաբերությունների միջև համագործակցությունը:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակներին կկապակցե՛ք արդյունաբերությունների միջև համագործակցությունը:
- Կապակցե՛ք միմյանց հոդվածում ընդգծված հիմնախնդիրները և 1-5 իրավիճակում նկարագրված (էջ 99-104) կայուն զարգացման նպատակներին հասնելու փորձերը: Պատասխանը հիմնավորե՛ք:

Չափանիշ 2. Ի՞նչ արդյունքներ կհետևեն կայուն զարգացման նպատակների անտեսմանը, և ինչո՞ւ է նշանակալից համագործակցությունը ընդհանուր նպատակներին հասնելու համար (Կայուն զարգ. Հաստ. պատկ. 1.2.):

Ռեսուրսներ.
Կայուն զարգացման գլոբալ նպատակներ, **դասագիրք, II մաս, էջ 95**
Ի՞նչ են անում երկրները կայուն ապագա ստեղծելու համար, **դասագիրք, II մաս, էջ 97**

Ակտիվություն. Քննարկե՛ք
Հարցեր.
- Ինչո՞վ է պայմանավորված Կիլիմանջարոյի սառցե ծածկույթի հալվելը:
- Ինչո՞ւ է կրճատվում Հիմալայան լեռների ձյան հավերժական ծածկույթը:
- Ի՞նչ արդյունքներ են հետևում հրդեհների ավելանալուն մեծ քաղաքներում:

- Ինչո՞ւ են աշխարհում տարեկան հեկտարներով անտառներ վերանում:
- Ինչո՞ւ են ոչնչանում ցեղային տեսակները բնական թափի համեմատությամբ 100 անգամ արագ:
- Ինչո՞վ է պայմանավորված այն, որ աշխարհի բնակչության նշանակալից մասի համար անհասանելի են սանիտարիան և մաքուր ջուրը:
- Ինչպե՞ս խուսափենք կլիմայի փոփոխության պատճառով տեղաշարժված տարհանվածների թվաքանակի աճից:
- Կայուն զարգացման ո՞ր նպատակների հետ են կապվում վերևում թվարկած հիմնախնդիրները:
- Ի՞նչ ենք անում այս գործընթացներին դիմակայելու համար:
- Զգտո՞ւմ ենք, թե՞ ոչ պայքարել գոյության համար և պահպանել երկրագնդի պահպանված տեսքը (այն, որ սկզբնական տեսքը չենք կարող վերադարձնել, փաստ է):
- Ո՞ր կայուն զարգացման նպատակն եք համարում առավել կարևոր:
- Թվարկած հիմնախնդիրներից ո՞րն է ամենաակտուալը Վրաստանի համար:
- Հասարակությունը, պետությունը, դուք ինչպե՞ս եք գործում նշված հիմնախնդիրները նվազեցնելու համար:
- Ինչո՞ւ է կարևոր համագործակցությունը կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:

Ռեսուրս. Անվտանգ վարքի կանոնները արտակարգ իրավիճակների ժամանակ: **Դասագիրք, II մաս, էջ 108, 109, 110**
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում
Աշակերտի գրքում (II մաս, էջ 115) **տրված օգտակար ռեսուրսներ.**
Անվտանգության կանոններ հրդեհի ժամանակ https://bit.ly/3xuw19I
Հրշեջ-անվտանգության ուսումնական տեսահոլովակ https://bit.ly/3xzXcjg
Ինչպե՞ս վարվենք ջրհեղեղի ժամանակ https://bit.ly/413NWBE
Երկրաշարժ https://bit.ly/3Sh7WwI
Անվտանգության կանոններ երկրաշարժի ժամանակ https://bit.ly/3IwwnD1

Հարցեր.
- Ինչպիսի՞ն են անվտանգ վարքի կանոնները ջրհեղեղի ժամանակ:
- Ինչպիսի՞ն են անվտանգ վարքի կանոնները երկրաշարժի ժամանակ:
- Ինչպիսի՞ն են անվտանգ վարքի կանոնները հրդեհի ժամանակ:
- Որքանո՞վ է այս կանոնների պահպանումը ծառայում կայուն զարգացման նպատակներին հասնելուն:

Ռեսուրս. Տեղական ինքնակառավարման դերը արտակարգ իրավիճակների կառավարման մեջ և վաղ հաղորդագրությունների համակարգը: **Դասագիրք, II մաս, էջ 111**

Ակտիվություն. Քննարկե՛ք
Հարցեր.

- Ինչպե՞ս է գործում քաղաքացիական անվտանգության Ազգային համակարգը:
- Ինչո՞ւ է կարևոր կենտրոնական և տեղական իշխանության համագործակցությունը քաղաքացիական անվտանգության նպատակների համար:
- Ի՞նչ նպատակների է ծառայում արտակարգ իրավիճակների կառավարման ծառայությունը:
- Ի՞նչ դեր ունի վաղ հաղորդագրության համակարգը արտակարգ իրավիճակներով առաջացած վնասը նվազեցնելու գործում:
- Ո՞ր չորս հիմնական տարրից է կախված վաղ իրազեկման համակարգի հաջողությունը:
- Համեմատե՛ք արտասահմանում գոյություն ունեցող վաղ իրազեկման պրակտիկան Վրաստանում գործողի հետ:
- Ի՞նչ պարտականություններ ունեն քաղաքացիները արտակարգ իրավիճակների ժամանակ:
- Ի՞նչ դեր ունի համագործակցությունը գլոբալ և լոկալ մակարդակով բնական աղետների դժբախտություններով առաջացած արտակարգ իրավիճակների ռիսկերը կրճատելու, աղետի հետևանքով առաջացած վնասը նվազեցնելու մեջ:

Ռեսուրս. Միասին կանգնելու օրինակ, **դասագիրք, II մաս, էջ 105-106**
Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով
Հարցեր.

- Այդպիսի ծանր աշխատանքներ կատարելու ի՞նչ մոտիվացիա ունեին քաղաքացիները:
- Ինչպե՞ս էր գործում մայրաքաղաքի քաղաքապետարանը:
- Գործե՞ց վաղ իրազեկման համակարգը:
- Ինչպե՞ս կզարգանային իրադարձությունները վաղ իրազեկման դեպքում:
- Ինչպե՞ս էր տեղի ունենում կամավորների գործունեության կազմակերպումը:
- Ի՞նչ պատճառներ պայմանավորեցին հունիսի 13-ի ողբերգությունը:
- Կարելի՞ էր, թե՞ ոչ այս իրադարձությունից խուսափել: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ինչո՞ւ եք կամավորությունը համարում կարևոր:
- Եղե՞լ եք կամավոր: Ո՞վ կարող է դառնալ կամավոր արտակարգ իրավիճակների ժամանակ:
- Ինչո՞ւ է արդյունավետ կամավորությունը արտակարգ իրավիճակների ժամանակ:

- Հիշե՛ք դեպք, երբ քաղաքացիական շարժման և պետության կողք-կողքի կանգնելով նշանակալից գործ կատարվեց:
- Քո կարծիքով՝ որքանո՞վ ակտուալ է քաղաք Թբիլիսիի համար կայուն զարգացման նպատակը: 11-կայուն քաղաքների և բնակավայրերի համար:
- Որքանո՞վ կարևոր է այդ նպատակին հասնելու համար համագործակցությունը հանրային և մասնավոր սեկտորի, քաղաքացիական հասարակության միջև:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Նկարագրե՛ք՝ ինչպե՞ս է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը.
- Ինչպե՞ս եք պլանավորում/պլանավորեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ի՞նչ էիք նկատառում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Ունեի՞ք, թե՞ ոչ նախնական պլան առաջադրանքի վրա աշխատանքի համար: Որքանո՞վ այդ պլանը օգնեց աշխատանքի գործընթացում: Անհրաժեշտ էր, արդյոք, նախնական աշխատանքային պլաններում փոփոխություններ մտցնելը: Ինչո՞ւ:
- Ու՞մ հետ և ինչպե՞ս համագործակցեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Հանդիպեցի՞ք, թե՞ոչ տարբերվող կարծիքներ ունեցող մարդկանց: Որքանո՞վ օգնեց այլ մարդկանց հետ համագործակցությունը:
- Կիրառեցի՞ք, թե՞ ոչ տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Ինչո՞ւմ օգնեց տեխնոլոգիաների կիրառումը:
- Ի՞նչ արտադրանք ստեղծեցիք համալիր առաջադրանքի տեսքով:

Բացատրեք՝ ինչ գիտելիք և փորձ ձեռք բերեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:
- Ի՞նչ հարցի է վերաբերում ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ գիտեիր ուսանելի հարցի մասին: Ի՞նչ նոր բան իմացար: Լրացուցիչ ի՞նչ կուզենայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացության հանգեցրեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ինչո՞վ են հաստատվում ձեր կողմից կատարված եզրակացությունները:
- Ու՞մ համար և ինչո՞ւ է ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ միջոցներից օգտվեցիք ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար:/Համալիր առաջադրանքը ավելի լավ կատարելու համար:

Գնահատե՛ք՝ որքանով արդյունավետ և հետաքրքիր էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:
- Գնահատե՛ք՝ որքանով ստացվեց առաջադրանքի կատարումը: Որքանո՞վ այն համընկավ ուսուցչի սպասելիքներին:

- Ի՞նչը կատարեցիք ինքնուրույն: Ինչո՞ւմ անհրաժեշտ եղավ այլոց օգնությունը:
- Ի՞նչ գործոններ նկատի ունեցաք/պետք է նկատի ունենաք այն բանի համար, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լիներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ և որքանո՞վ է տարբերվում ձեր կողմից կատարված առաջադրանքը համադասարանցիների աշխատանքներից:

Ի՞նչ կկատարեիք այլ կերպ, եթե նորից սկսեիք առաջադրանքի վրա աշխատել:

Աղյուսակ 3
Որոշող գնահատականի խորագիր

Դասարան. XI **Թեմա.** «Քաղաքականություն և քաղաքական մշակույթ» **Հիմնական հարց** – Կայուն քաղաքականություն **Աշակերտ.**		
Գնահատման չափանիշներ	Առավելագույն միավոր	Մեկնաբանություն
Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա. վերլուծել քաղաքական գաղափարները/գաղափարախոսությունները, որոնք դրվել են Մուհամեդ Յունուսի գործունեության հիմքում:	**1,5**	
Ժողովրդավարություն – Աշակերտը պետք է կարողանա. Մուհամեդ Յունուսի կողմից հիմնադրված «Գրամին բանկի» դերը գնահատել բանկի բենեֆիցիարների սոցիալ-տնտեսական իրավունքների իրականացման տեսանկյունով:	**1,5**	
Քաղաքացիական մասնակցություն – Աշակերտը պետք է կարողանա. բնութագրել քաղաքացիական մասնակցության յունուսյան ուղին/մեթոդը:	**1,5**	
Կայուն զարգացում – Աշակերտը պետք է կարողանա. «Գրամին բանկի» գործունեությունը քննարկել կայուն զարգացման սկզբունքների նկատառումով:	**1,5**	

Որոշող գնահատման առաջարկված խորագիրը հիմնված է առակայական չափորոշչում տրված **թեմայի սահմաններում արդյունքներին հասնելու ինդիկատորներին (թիրախային հասկացությունների համաձայն)** և նախատեսված է ամփոփիչ առաջադրանքի գնահատման համար, ինչը իր հերթին նպատակամղված է հասկացություններին կողմնորոշմամբ թեմայի կամ դրա մասի ամփոփմանը**:**

Ամփոփիչ առաջադրանքի համար խորհուրդ է տրվում ընտրել ենթատեքստ-օրինակ և նախապես տալ աշակերներին ծանոթանալու/վերլուծելու համար: Նրանք կգիտենան, որ մոտավորապես մեկ շաբաթում իրենք պետք է ամփոփիչ առաջադրանքը կատարեն առաջարկված հարցերի համաձայն, որոնք կապված կլինեն տրված ենթատեքստ-օրինակին:

Տվյալ դեպքում ընտրեք «Գրամին բանկը» Բանգլադեշում» (II մաս, էջ 99-100) ենթատեքստ-օրինակը: Աշակերտին հանձնարարում ենք առաջադրանք. ծանոթանալ «Գրամին բանկը» Բանգլադեշում» աղբյուրին: Գրավոր գնահատել բանկի/Մուհամեդ Յունուսի գործունեությունը (100-150 բառ) հետևյալ չափանիշների համաձայն:

- ✓ Ո՞ր քաղաքական գաղափարախոսությամբ/գաղափարով էր ներշնչված Մուհամեդ Յունուսը բանկը հիմնադրելիս:
- ✓ Ո՞ր իրավունքների իրականացման մեջ է օգնում բանկը բենեֆիցիարներին:
- ✓ Քաղաքականությունում մասնակցության ի՞նչ ուղի ընտրեց Մուհամեդ Յունուսը: Բնութագրե՛ք քաղաքացիական մասնակցության նրա ուղին:
- ✓ Կայուն զարգացման ո՞ր սկզբունքների իրականացմանն է աջակցում Յունուսի կողմից հիմնադրված բանկի գործունեությունը:

XI դասարանի «Քաղաքականություն և քաղաքական մշակույթ» պարտադիր թեմայի չորրորդ հիմնական հարցը «քաղաքականությունում քաղաքացիական մասնակցությունն» է: Այս հարցի առնչությամբ աշակերտի նախնական գիտելիքի ակտիվացումը և նոր գիտելիքի կառուցումը կատարվում է ենթատեքստ-օրինակով՝ «Մարդ, որը ժամանակից առաջ անցավ» և ըստ բովանդակության նրան մոտ գտնվող օրինակներով.

Հիմնական քեյս և օրինակներ համեմատության համար	**Ռեսուրսներ**
Հիմնական քեյս. «Անձ, որը ժամանակից առաջ անցավ»	• Դասագիրք, II մաս, էջ 145-148 • Ուսուցչի գիրք, հավելված 8 « (էջ 197):
Օրինակ՝ համեմատության համար 1 « Բոստոնի թեյախմությունը, Աղի քայլերթը, 68 թվականի մայիս:	• Դասագիրք, II մաս, էջ 134, 135, 136

Օրինակ՝ համեմատության համար 2 9 ապրիլի, Վրաստան	• Դասագիրք, II մաս, էջ 137
Օրինակ՝ համեմատության համար 3	• Դասագիրք, II մաս, էջ 145-148

Պարզաբանում. Նոր գիտելիքի կոնստրուկտիվ կառուցումն ապահովելու համար կարևոր է աշակերտներին առաջարկենք նրանց գիտելիք-փորձին հասանելի այնպիսի օրինակներ (մասնավոր դեպքեր, իրավիճակներ, պատմություններ), որոնց քննարկում-վերլուծումը կօժանդակի նրանց թիրախային գիտելիքը (ենթահարցը, ենթահասկացությունները, թիրախային հասկացությունները) ըմբռնելուն և յուրացնելուն: Ենթատեքստ–օրինակները ճիշտ այդպիսի օրինակներ կարող ենք անվանել: Այդ պատմությունները պետք է ընտրվեն պարտադիր թեմաների շրջանակներում հստակեցված հիմնական հարցերի համաձայն և պետք է ցույց տան կենսական իրավիճակներ (երկընտրանքներ, էմոցիաներ):

Այստեղ ևեթ ընդգծված նշում ենք, որ ուսուցչի գրքում առաջարկվող հիմնական ենթատեքստ-օրինակները կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, այսինքն՝ կարող եք հիմնական գործառույթը վերագրել դասագրքում ներկայացված մեկ այլ ենթատեքստ-օրինակի և դրա վրա հիմնվելով ձևակերպել համալիր առաջադրանքի պայմանը:

Ուսուցման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հիմնական ենթատեքստ-օրինակի վերլուծության վրա: Դրա մշակումը կատարվում է խորքային՝ ենթատեքստը, էմոցիոնալ-սոցիալական տեսանկյունները նկատի ունենալով, իսկ համեմատության համար ընտրված օրինակները հիմնականում ֆոնային գիտելիքի դեր են կատարում:

Ենթատեքստ-օրինակի առաջնային մշակման ժամանակ ուսուցիչը ուղղորդող հարցերով, ակտիվություններով աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է այն մանրամասնությունների վրա, որոնք մշակվող ենթահասկացությունների, թիրախային հասկացությունների հետ կապի մեջ են: Օրինակ՝ կոնկրետ դեպքում ենթատեքստ - օրինակի այն ծավալի վրա ենք փորձում կենտրոնանալ, որոնք հանգուցային հարցերում էլ (ինչ գործոններ և ինչու են պայմանավորում պետության միջամտությունը ազատ շուկայի կարգավորման գործում: Ինչպե՞ս պատկերացնել պետության առջև ծառացած երկընտանքները/մարտահրավերները մարդու իրավունքների պաշտպանության պարտականությունների և տնտեսական ազատության սկզբունքի պահպանության կապակցությամբ) որոշված են:

<u>Թիրախային գիտելիքի որոշման աղյուսակ</u>

<u>Թեմա.</u> Քաղաքականություն և քաղաքական մշակույթ **<u>Հիմնական հարց.</u> Քաղաքացիական մասնակցություն քաղաքականությունում** **<u>Հիմնական քեյս.</u>** «Մարդ, որը ժամանակից առաջ անցավ»

Ենթահարց	**Ենթահասկացություններ**		**Թիրախային հասկացություն**
«Մարդ, որը ժամանակից առաջ անցավ» (Նիկո Նիկոլաձե)	Ընտրություններ	Մասնակցության սանդուղք	Հասարակություն

Որոշելու համար, թե ինչ պետք է գիտենա աշակերտը ենթահարցի հետ կապված, մենք կարող ենք օգտագործել թիրախային գիտելիքի հաստատուն պատկերացումների վրա հիմնված **զարգացնող գնահատման խորագիրը (Աղյուսակ 1)**, որտեղ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչ սպասելիքներ կարող ենք ունենալ աշակերտից ուսանելի հարցի առնչությամբ: Սպասելիքները համապատասխանում են Ազգային ուսումնական պլանի արդյունքների տաքսոնոմիայի ամբողջացված մակարդակին: Այդ խորագիրը ուսուցչին օգտակար է մի քանի փուլում.

ա) նախ և առաջ իր խնդիրը հասկանալու և ուսանում-ուսուցման գործընթացը պլանավորելու փուլում (**ինչ ակտիվություններ, մեթոդներ, մարտավարություններ պետք է կիրառենք, որպեսզի աշակերտին օգնենք այս սպասումը իրական արդյունքի վերածելու մեջ**),

բ) հաջորդ ուսանում-ուսուցման գործընթացի մոնիթորինգի համար (**ինչպե՞ս է ընթանում գործընթացը, հայտնվեցի՞ն սպասելիքներին համապատասխան նշաններ: Ի՞նչ հարցեր պետք է օգտագործեմ որպես փայտամած**),

գ) ուսանում-ուսուցման գործընթացում և համալիր առաջադրանքը ավարտելու ժամանակ կոնկրետ հետադարձ կապի ձևավորման մեջ (**սպասելիքներից ո՞ր արտահայտությունները հարմար կլինեն աշակերտի արդյունքը նկարագրելու, խրախուսելու, խորհուրդ տալու համար**),

դ) վերջում՝ միջանկյալ և երկարաժամկետ նպատակների վրա աշխատանքը՝ մանկավարժական պրակտիկայի կառուցվածքային ինքնագնահատման համար (**իրատեսական սպասելիքները ո՞ր հաստատուն պատկերացման՝ Հաստ. պատկ. կապակցությամբ որոշեցի: Ո՞ր սպասելիքի համար գտա ճիշտ լուծումը ակտիվությունների և մեթոդների տեսքով: Որտե՞ղ պետք է փոխեմ մոտեցումը**):

Աղյուսակ 1.

Թիրախային հասկացություն Ենթահարց	**Թիրախային հասկացության կապակցությամբ հաստատուն պատկերացումներ**	**Սպասելիքներ** <u>**Աշակերտը կարող է.**</u>	**Ուսուցչի մեկնաբանություն**

Քաղաքացիական մասնակցություն (Արդյունքներ. 2, 4) «Մարդ, որը ժամանակից առաջ անցավ» (Նիկո Նիկոլաձե)	3.Ժողովրդավարական պետությունում ցանկացած մարդ կարող է ազդեցություն գործել երկրի սոցիալական և քաղաքական կյանքի վրա, 4. Ակտիվ քաղաքացիները տարբեր ճանապարհներով (սոցիալական նախագծերի պլանավորում իրականացնելով, կամավորական գործունեությամբ, փաստաբանությամբ, շահարկմամբ) հոգում են հասարակական հիմնախնդիրների կարգավորման մասին: Այդ ժամանակ նրանք համագործակցում են միմյանց, հասարակական ինստիտուտների, ոչ կառավարական կազմակերպությունների, պետական կառույցների հետ:	Նիկո Նիկոլաձեի օրինակների վրա հենվելով նկարագրել, թե համայնքում/հասարակությունում առկա հիմնախնդիրների կարգավորումը որքանով էր պայմանավորված ընտրություններին քաղաքապետի մասնակցությամբ: Ընտրություններին քաղաքապետի մասնակցության, աղի քայլերթի, Բոստոնի թեյախմության, հանրաքվեի, պլեբիսցիտի օրինակների քննարկման հիման վրա դատողություն արեք մասնակցության այս կամ այն ձևի արդյունավետության մասին:	
	5.Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնի արարքները:	Կոնկրետ օրինակների հիման վրա այս կամ այն ձևի կիրառմամբ քննարկել ոչ բռնի սկզբունքի նշանակությունը:	

Հարց - «Քաղաքացիական մասնակցություն քաղաքականությունում»
Ենթահարց. «Մարդ, որը ժամանակից առաջ անցավ» (Նիկո Նիկոլաձե): **Ենթահասկացություններ –** ընտրություններ, մասնակցության սանդուղք: **Թիրախային հասկացություն – Քաղաքացիական մասնակցություն (Արդյունք. 2,4)**
Հանգուցային հարց – Ինչո՞ւ է կարևոր ընտրություններին մասնակցությունը սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների կարգավորման համար»: Ինչպե՞ս ներկայացնեմ մասնակցության այս ձևաչափի արդյունավետությունը աշխատանքի ճանապարհով:
Համալիր առաջադրանք

Ծանոթացե՛ք «Մարդ, որը ժամանակից առաջ անցավ» աղբյուրին (II մաս, էջ 145-148): Պատկերացրեք, որ ուսումնասիրում եք ձեր բնակավայրի ընտրողների իրազեկվածությունը/պատկերացումները համայնքում գոյություն ունեցող հասարակական հիմնախնդիրների կարգավորման գործում նրանց ընդգրկվածության նշանակության մասին: Պատրաստե՛ք երևակայական (հանդիսանում եք ինչպես հարցազրույցը վարող, այնպես էլ՝ պատասխանող) **հարցազրույցի տրանսկրիպտ** (հարցազրույցի կամ ֆոկուս-խմբի աուդիո-ձայնագրությունը թղթի վրա փոխադրման («սղագրման») արդյունքում ստացած տեքստը):

Հանձնարարական. Կարող եք առաջադրանքի վրա աշխատել ինչպես ինքնուրույն, այնպես էլ զույգընկերոջ հետ միասին: Զույգընկերոջ հետ միասին առաջադրանքը ներկայացնել կարելի է տեսահոլովակի տեսքով:

Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.

- Ի՞նչ հիմնախնդիրներ են բնակավայրում: Որքանո՞վ կարևոր են այդ հիմնախնդիրները և ինչի՞ց են դրանք առաջանում: (**Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 1)**
- Որքանո՞վ արդյունավետ է ինքնակառավարման ընտրություններում մասնակցությունը և մասնակցության այլ ձևերը հիմնախնդիրները կարգավորելու համար (**Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 2,3)**

Թիրախային հասկացության/հասկացությունների կապակցությամբ հաստատուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ	**Գնահատման չափանիշներ** Աշակերտը կարող է.-	**Աշխատանքում/աշխատանքի շնորհանդեսի ժամանակ ընդգծված ներկայացրե՛ք.**
Քաղաքացիական մասնակցություն (Արդյունքներ. 2,4	**Քաղաքացիական մասնակցություն.**	• Ի՞նչ հիմնախնդիրներ են բնակավայրում: Որքանո՞վ կարևոր են այդ հիմնախնդիրները, և ինչո՞վ են պայմանավորված դրանք: (**Քաղաքացիական մասնակցություն: Հաստ. պատկ. 1)**

1. Ժողովրդավարական պետությունում ցանկացած մարդ կարող է ազդեցություն գործել երկրի սոցիալ և քաղաքական կյանքի վրա: **2.** Ակտիվ քաղաքացիները տարբեր ուղիներով (սոցիալական նախագծերի պլանավորման իրականացմամբ, կամավորական արարքներով, փաստաբանությամբ, շահարկմամբ) հոգում են հասարակական խնդիրների կարգավորման մասին: Այդ ժամանակ նրանք համագործակցում են միմյանց հետ, հասարակական ինստիտուտների, ոչ կառավարական կազմակեր-պությունների, պետական կառույց-ների հետ:	• Վերլուծել սոցիալ-քաղաքական հիմնա-խնդիրներ առաջացնող պատճառները, գնահատել դրանց նշանակությունը **(Հաստ. պատկ. 1),** • արտահայտել կարծիքներ քննարկման առարկա ընտրված սոցիալ-քաղաքական հիմնա-խնդիրները լուծելու ուղիների մասին, քննարկման ժամանակ կիրառել քաղաքացիական մասնակցության ձևերի հետ կապված գիտելիք: **(Հաստ. պատկ.2 ,3)**	• Որքանո՞վ արդյունավետ է ինքնակառավարման ընտրություններին մասնակ-ցությունը և մասնակցության այլ ձևերի գոյությունը հիմնա-խնդիրների կարգավորման համար: **(Քաղաքացիական մասնակցություն: Հաստ. պատկ. 2,3)**
3. Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնի արարքները:		

Համալիր առաջադրանքի իրականացման փուլեր (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I – Ծանոթացում համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրս. Դասագիրք**, II թեմա: IV գլուխ: Քաղաքացիական մասնակցություն:** Համալիր առաջադրանքի պայման, **II մաս, էջ 118.**

<u>Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը կողմնորոշված հարցեր.</u>

- Ի՞նչ է քաղաքացիական մասնակցությունը:
- Մասնակցության ո՞ր ձևերին եք ծանոթ:

- Քաղաքացիական մասնակցության ո՞ր ձևերն եք համարում առավել արդյունավետ: Ինչո՞ւ:
- Ձայնագրե՞լ եք, թե՞ ոչ հարցազրույց:
- Ի՞նչ կարևոր մանրամասնությունների վրա կկենտրոնացնեք ձեր ուշադրությունը հարցազրույցը ձայնագրելիս:
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է հարցազրույցը արդյունավետ միջոց կոնկրետ հարցը ներկայացնելու համար:
- Ի՞նչ ռեսուրս կպահանջվի տրված արտադրանքը ստեղծելու համար:
- Ի՞նչ քայլեր պետք է կատարենք, ի՞նչ կպահանջվի դրա համար:
- Ինչպե՞ս կարողանամ իմ արտադրանքով ուրիշների վրա տպավորություն գործել:
- Ձեր բառերով ձևակերպեք՝ ինչի՞ն է վերաբերվում այսօր հանձնարարված առաջադրանքը:
- Նման ձևի կամ բովանդակության առաջադրանք երբևէ կատարե՞լ եք, արդյոք:

Հանձնարարական ուսուցչին.
Հարցերի միջոցով մեկ անգամ կրկին վերստուգեք, առաջադրանքի պայմանը բոլորի համար հասկանալի՞ է, թե՞ ոչ:
Հաղորդե՛ք աշակերտներին տեղեկատվություն այն մասին, որ մինչև համալիր առաջադրանքի կատարումը ուսանելի հարցին կտրամադրեք մի քանի դաս, և վերջում բոլորը կունենան կատարված առաջադրանքը դասարանին ներկայացնելու հնարավորություն:

Ուշադրություն:
Համալիր առաջադրանքի վրա աշխատանքը հիմնականում ընթանում է դասաժամին և միայն բացառիկ դեպքում ենք կիրառում տնային առաջադրանքը:

Փուլ II -Համալիր առաջադրանքի վրա աշխատանք
<u>Թիրախային գիտելիք.</u>
Ենթահարց – «Մարդ, որը ժամանակից առաջ անցավ» (Նիկո Նիկոլաձե)**:**
Ենթահասկացություններ. ընտրություններ, մասնակցության սանդուղք:
Թիրախային հասկացություն – քաղաքացիական մասնակցություն: (Արդյունք. 2, 4)

Ենթատեքստ-օրինակների առաջնային մշակում
Ակտիվություն. Աշխատե՛ք զույգերով՝ II մաս, էջ. 148

«Մարդ, որը ժամանակից առաջ անցավ» **տեքստի** (II մաս, էջ 145-148) կիրառմամբ՝ թերթի վրա փոխադրե՛ք և լրացրե՛ք աղյուսակը:

- ✓ Առաջին սյունակում թվարկած են Նիկո Նիկոլաձեի կողմից Փոթիում անցկացված որոշ միջոցառումներ:

✓ Քննարկե՛ք՝ ժամանակակից իրականությունում մասնակցության ո՞ր ձևը/ձևերը կլինի/կլինեն առավել արդյունավետ թվարկած միջոցառումները անցկացնելու համար: Կարծիքը հիմնավորե՛ք:

	Ընտրություն-ներ	Ազատ դատարան	Մանիֆեստա-ցիա	Պետիցիա – Խնդրագիր	Պլեբիսցիտ	Բնակավայ-րի ընդհա-նուր ժողով	Ոչ կառավարական կազմակերպու-թյուն
Նավահան-գըստի բարե-կարգում							
Մաքսային հարկի ներմուծում							
Քաղաքի գլխավոր պլանի ստեղծում							
Դենդրոլո-գիական զբոսայգու աճեցում							
Ոռոգման ջրանցքների շինարարու-թյուն							

Ճանապարհ-ների սարքա-վորում							
Հաղորդակ-ցության համակարգե-րի զարգա-ցում							
Էլեկտրիֆի-կացիա							
Դրսի լուսավորու-թյուն							
Հիվանդանո-ցի շինարա-րություն							

Չափանիշ 1. Ի՞նչ հիմնախնդիրներ են բնակավայրում: Որքանո՞վ կարևոր են այդ հիմնախնդիրները, և ինչի՞ց են դրանք առաջանում: (**Քաղաքացիական մասնակցություն, Հաստ. պատկ. 1)**

Ռեսուրս. «Մարդ, որը ժամանակից առաջ անցավ», **դասագիրք, II մաս, էջ 145-148.**

Ակտիվություն. Աշխատանք տեքստի վրա: Քննարկե՛ք.

Հարցեր.

- Ո՞վ էր Նիկո Նիկոլաձեն: Ի՞նչ պաշտոն էր զբաղեցնում նա Փոթիում:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ նրան ընտրեցին քաղաքապետ:
- Ի՞նչ տեսակ սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ կային քաղաքում:
- Ի՞նչ միջոցառումներ անցկացրեց Նիկո Նիկոլաձեն քաղաք Փոթիում գոյություն ունեցող հիմնախնդիրները կարգավորելու համար:
- Որքանո՞վ արդյունավետ էին այդ միջոցառումները: Պատասխանը հիմնավորե՛ք:

- Ի՞նչ եք կարծում, եթե չլիներ քաղաքացիների կողմից ընտրություններին մասնակցությունը/նրա քաղաքապետ ընտրվելը, կկարգավորվե՞ն այդ հարցերը:
- Ինչո՞ւ է կարևոր ինքնակառավարման ընտրություններում մասնակցությունը արդյունավետ ճանապարհ տեղական հիմնախնդիրների կարգավորման համար:
- Ի տարբերություն ընտրություններին, մասնակցության ո՞ր ձևերն եք համարում արդյունավետ տեղական հիմնախնդիրների կարգավորման համար:

Ռեսուրս. Քաղաքի սակրեբուլոյի թեկնածուների ծրագրերը, **դասագիրք, II մաս, էջ 119-123**
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում

	Քաղաքականու-թյան ոլորտ	Սոցիալական և տնտեսական ոլորտ	Մշակույթի ոլորտ	Առողջապահություն և սպորտ	Բնապահպանություն
Կուսակցություն «Առողջ Վրաստան»					
Կուսակցություն «Էկոփրկարար»					
Կուսակցություն «Բարգավաճ քաղաք»					

Հարցեր.

- Ո՞ր հիմնախնդիրների կարգավորմանն են կողմնորոշված նախորդ ընտրական խոստումները: Թվարկե՛ք բնակավայրում առկա հնարավոր հիմնախնդիրները:
- Ի՞նչ պետք է նկատի ունենա ընտրողը ընտրություններին մասնակցության ժամանակ: Ո՞ր դեպքում կլինի նրա մասնակցությունը արդյունավետ:
- Որքանո՞վ իրատեսական են ծրագրերը: Ո՞ր ոլորտներին են դրանք կողմնորոշված:
- Ո՞ր ծրագիրն է ձեզ համար ընդունելի և ինչո՞ւ: Ո՞ր կուսակցությունը կընտրեիք:
- Բավակա՞ն է, թե՞ ոչ միայն ընտրություններին մասնակցությունը սակրեբուլոյի արդյունավետ վերահսկողության և ընթացիկ գործընթացների վրա ազդեցություն ձեռք բերելու համար:
- Վերհիշե՛ք Նիկո Նիկոլաձեի կողմից անցկացված միջոցառումները: Ինչպիսի՞ հիմնախնդիրների (սոցիալ-տնտեսական, մշակութային, բնապահպանություն և այլն) կարգավորմանն էին դրանք կողմնորոշված:

- Տեղական ինքնակառավարման իրականացմանը մասնակցության ուրիշ ի՞նչ ձևեր գիտեք:
- Ինչո՞ւ են ընտրությունները քաղաքականությանը մասնակցելու արդյունավետ ձև:

Հանձնարարական ուսուցչին. Խնդրեք աշակերտներին աշխատել խմբերում: Ընտրական ծրագրերի վերլուծությունից հետո աղյուսակի համապատասխան սյունակում գրեն, թե որ ոլորտի կարգավորման վրա է կատարում շեշտադրությունը կոնկրետ կուսակցությունը: Առաջադրանքի վրա աշխատելուց հետո աշակերտները դասարանին պետք է ներկայացնեն աշխատանքները:

Ռեսուրս. Ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները: **Դասագիրք, II մաս, էջ 126**
Ակտիվություն: Աշխատե՛ք խմբերում

Ընտրությունների սկզբունքները	**Պարզաբանում**	**Հիմնավորեք, ինչո՞ւ է կարևոր նշված սկզբունքի պահպանումը**
Համընդհանուր		
Հավասար		
Ուղղակի		
Գաղտնի		

Հարցեր.

- Վերհիշե՛ք ընտրությունների հիմնական սկզբունքները:
- Ինչպե՞ս եք հասկանում ընտրությունների հիմնական սկզբունքների նշանակությունը:
- Ինչո՞ւ է այդ սկզբունքների պահպանումը կարևոր:
- Սկզբունքներից որևէ մեկին կշնորհեի՞ք, արդյոք, գերապատվություն:
- Կհամարվե՞ն, թե՞ ոչ ընտրությունները մասնակցության ձև, եթե նշված սկզբունքները չեն լինի պաշտպանված:
- Վերհիշե՛ք մասնակցության սանդուղքը: Մասնակցության սանդուղքի ո՞ր աստիճանին կհամապատասխանեցնե՞ք ընտրություններին մասնակցությունը: Պատասխանը հիմնավորե՛ք:

Ռեսուրս. Ընտրական ցենզեր՝ արտոնակարգեր: **Դասագիրք, II մաս, էջ 129-130**
Ակտիվություն. Քննարկե՛ք.

Հարցեր.

- Ի՞նչ տիպի ընտրական սահմանափակումներ հստակեցվեցին տեքստում:
- Խմբավորե՛ք սահմանափակումները ընտրողների և սահմանափակումները թեկնածուների համար:
- Ի՞նչ տարբերություն է ակտիվ և պասսիվ ընտրական իրավունքների միջև:
- Ձեր կարծիքով, ինչի՞ն են ծառայում տարբեր երկրներում հաստատված տարբեր ընտրական սահմանափակումները: Ո՞ր սահմանափակումն է ձեզ համար ընդունելի և ինչո՞ւ:
- Ո՞ր սահմանափակումը կարգելեիք և ինչո՞ւ: Որքանո՞վ արդարացի եք համարում ընտրական սահմանափակումները:
- Ո՞ր ընտրական սահմանափակումը կցանկանայիք, որ հաստատվեր Վրաստանում:
- Ձեր կարծիքով, ընտրական ցենզերը սահմանափակո՞ւմ են, թե՞ ոչ քաղաքացիական մասնակցության իրավունքը: Հիմնավորե՛ք ձեր դիրքորոշումը:

Ռեսուրս. Դասագիրք, II մաս, էջ 162-163
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում
Հարցեր.

- Ստորև տրված հարցերից ո՞րն է պատկանում տեղական նշանակության հարցերին:
- Կենտրոնական իշխանության իրավասությանը պատկանող ո՞ր հարցերն են կարևոր ամբողջ երկրի համար:
- Որքանո՞վ կարգավորված են այդ հարցերը ձեր մունիցիպալիտետում:
- Ինչպե՞ս կարելի է այդ հարցերը ավելի լավ կարգավորել:
- Ո՞ր հարցի կարգավորմանը կմասնակցեիք և ինչո՞ւ:
- Փաստաբանության և շահարկման հարցերի իմացությունը կօգնի՞ կոնկրետ հիմնախնդրի լուծման մեջ: Ինչպե՞ս:
- Որքանո՞վ արդյունավետ է ինքնակառավարման ընտրություններում մասնակցությունը աղբյուրում տրված հարցերը կարգավորելու համար: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Վերհիշե՛ք «Մարդ, որը ժամանակից առաջ անցավ» աղբյուրը: Թվարկած հարցերից, որի՞ կարգավորման մասին հոգած Նիկո Նիկոլաձեն քաղաքապետ աշխատելիս: Գնահատե՛ք նրա գործունեությունը:

Ռեսուրս. Տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության ձևերը: Դասագիրք, II մաս, էջ 161
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում

	Նկարագրե՛ք ինքնակառավարմանը մասնակցության ձևերը	Հիմնավորե՛ք դրանց նշանակությունը
Քաղաքապետի, գամգեբելիի (շրջանային վարչության նախագահի), սակրեբուլոյի (Ավագանու) անդամի կողմից աշխատանքի կատարման հաշվետվության ունկնդրում		
Բնակավայրի ընդհանուր ժողով		
Մունիցիպալիտետի սակրեբուլոյի և հանձնաժողովի նիստերին մասնակցություն		
Քաղաքացիական խորհրդատուների խորհուրդ		

Հարցեր.

- Ինքնակառավարմանը մասնակցության ո՞ր ձևերին եք ծանոթ:
- Ո՞ր դեպքում է նշանակալից մասնակցության այս կամ այն ձևի կիրառումը:
- Որքանո՞վ արդյունավետ են ինքնակառավարմանը մասնակցության տրված ձևերը:
- Մասնակցության սանդուղքի ո՞ր աստիճանին կհամապատասխանեցնեք ինքնակառավարմանը մասնակցության ձևերը:

Չափանիշ 2. Որքանո՞վ արդյունավետ է ինքնակառավարման ընտրություններում մասնակցությունը և մասնակցության այլ ձևերը առկա հիմնախնդիրների կարգավորման համար: (**Քաղաքացիական մասնակցություն: Հաստ. պատկ. 2.3)**

Ռեսուրս. Հանրաքվե և պլեբիսցիտ, **դասագիրք, II մաս, էջ 131-132**
Ակտիվություն. Վեննի դիագրամի վրա աշխատանք
Հարցեր.

- Վրաստանի նորագույն պատմությունում ի՞նչ հարցի հետ կապված հանրաքվե անցկացվեց:
- Վրաստանի նորագույն պատմությունում ի՞նչ հարցի հետ կապված պլեբիսցիտ անցկացվեց:
- Ինչո՞ւ են հանրաքվեն կամ պլեբիսցիտը քաղաքացիական մասնակցության արդյունավետ ձևեր:
- Ի՞նչ դեպքում է նպատակահարմար հանրաքվեի կամ պլեբիսցիտի անցկացումը:

- Ի՞նչ դրական/բացասական կողմեր ունեն մասնակցության այս ձևերը:
- Հանրաքվեն/պլեբիսցիտը համեմատե՛ք մասնակցության ձեզ ծանոթ ձևերի հետ:
- Հանրաքվեն և պլեբիսցիտը ժողովրդավարության ուղղակի՞ թե՞ ներկայացուցչակա՞ն ձևեր են:
- Ինչո՞վ են միմյանց նման և ինչո՞վ են տարբերվում հանրաքվեն և պլեբիսցիտը:

Ռեսուրսներ. «Բոստոնի թեյախմություն», «Աղի քայլերթ», «68 թվականի մայիս», «9 ապրիլի»: **Դասագիրք, II մաս, էջ 135-138**

Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում

Աշակերտի գրքում (էջ 143) տրված օգտակար ռեսուրսներ.

Ընտրությունները և ժողովրդավարությունը https://bit.ly/3HH7Jzi
Ժողովրդավարություն democracy: https://bit.ly/3HFar8b
Քաղաքացիական հասարակություն https://bit.ly/3jeSggk
Մարդու ազատություններ https://bit.ly/3HCspbo
Քաղաքական ծաղրանկարի պատմություն / History of political cartoons: https://bit.ly/409lHky
Ինչպե՞ս վերածվեց վրացական ծաղրանկարը քաղաքական պայքարի զենքի https://bit.ly/40duDW8
Բողոք Protest https://bit.ly/3HEi6nb

Հարցեր.

- Ի՞նչ ընդհանրություն ունեն ներկայացված բողոքի գործողությունները: Ի՞նչ ազդեցություն ունեցավ ստորև տրված բողոքը ժամանակակից քաղաքականության վրա և ի՞նչ չափաբաժնով:
- Վերջին հաշվով ժողովրդավարական երկրներում ի՞նչ ազդեցություն են գործում բողոքի գործողությունները:
- Այսօր եթե անցկացվեն բողոքի գորղծողություններ, ի՞նչ խորհուրդներ կտայիք դրանց կազմակերպիչներին:
- Դուք կմասնակեի՞ք, արդյոք և ինչո՞ւ:
- Դա և նման բողոքի գործողությունները ինչպե՞ս արտացոլվեցին ժամանակակից քաղաքականության վրա մեր երկրում/գլոբալ մասշտաբով:
- Ինչո՞ւ են բողոքի գործողությունները մասնակցության արդյունավետ ձև:
- Համեմատե՛ք օրինակներում բերված քաղաքացիական մասնակցության ձևերը (ցույցին մասնակցություն, հանրային ելույթ, հանրահավաք, բոյկոտ և այլն): Ինչո՞վ են դրանք նման/տարբերվում միմյանցից:
- Վերհիշե՛ք՝ մասնակցության սանդուղքը, մասնակցության սանդուղքի ո՞ր աստիճանին կհամապատասխանեցնեիք բողոքի գործողություններին մասնակցությունը:

- Ինչո՞ւ է կարևոր բողոքի գործողություններում մասնակցության ժամանակ ոչ բռնի սկզբունքի պահպանումը:

Ռեսուրս. Քաղաքական ծաղրանկարներ, **դասագիրք, II մաս, էջ 159**
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում
Հարցեր.

- Որոշե՛ք ծաղրանկարի թեմատիկան:
- Ի՞նչ է ծաղրանկարի հիմնական գաղափարը: Գլխավոր ասելի՞քը:
- Ո՞ր քաղաքական իրավիճակին է համապատասխանում ծաղրանկարը: Ի՞նչ է դրա նշանակությունը և նպատակը: Պատասխանը հիմնավորե՛ք:
- Ինչի՞ դեմ է ուղղված յուրաքանչյուր ծաղրանկարը:
- Ինչպե՞ս պետք է պաշտպանի քաղաքացին իրեն այն բանից, ինչի դեմ ուղղված է ծաղրանկարը:
- Որքանո՞վ ակտուալ է ծաղրանկարում նկարագրված հիմնախնդիրը Վրաստանի ժամանակակից իրականության համար: Բերե՛ք օրինակ:
- Վերհիշե՛ք ի՞նչ սկզբունքների պահպանությամբ պետք է անցկացվեն ընտրությունները, որպեսզի այն իրապես համարվի քաղաքացիական մասնակցության ձև:

Ռեսուրս. Խնդրագիր: Դասագիրք, II մաս, էջ 162
Ակտիվություն. Աշխատե՛ք խմբերում, Մտածե՛ք գաղափար տեղական նշանակության հարցը կարգավորելու համար
Հարցեր.

- Ի՞նչ կցանկանայիք փոխել ձեր համայնքում: Ձևակերպե՛ք հիմնախնդրի էությունը:
- Ինչպե՞ս եք պատկերացնում այդ հարցի կարգավորումը:
- Ինչո՞ւ եք ձեր գաղափարի քննարկումը կարևոր համարում սակրեբուլոյի նիստում:
- Ի՞նչ է խնդրագիրը:
- Ո՞վ կարող է խնդրագիր ներկայացնել:
- Ինչո՞վ է նման/տարբերվում խնդրագիրը մասնակցության այլ (ընտրություններ, հանրաքվե, պլեբիսցիտ, ցույց և այլն) ձևերից:

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Համալիր առաջադրանքի կատարման և շնորհանդեսի գործընթացում ուսուցչի առաջադրած հարցերը կոնկրետ աշակերտի հետ ինքնուրույն աշխատանք վարելու համար են.

Նկարագրե՛ք՝ ինչպե՞ս է ընթանում/ընթացավ առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը.

- Ինչպե՞ս եք պլանավորում/պլանավորեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ի՞նչ էիք նկատառում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Ունեի՞ք, թե՞ ոչ նախնական պլան առաջադրանքի վրա աշխատանքի համար: Որքանո՞վ այդ պլանը օգնեց աշխատանքի գործընթացում: Անհրաժեշտ էր, արդյոք, նախնական աշխատանքային պլաններում փոփոխություններ մտցնելը: Ինչո՞ւ:
- Ու՞մ հետ և ինչպե՞ս համագործակցեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Հանդիպեցի՞ք, թե՞ոչ տարբերվող կարծիքներ ունեցող մարդկանց: Որքանո՞վ օգնեց այլ մարդկանց հետ համագործակցությունը:
- Կիրառեցի՞ք, թե՞ ոչ տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում: Ինչո՞ւմ օգնեց տեխնոլոգիաների կիրառումը:
- Ի՞նչ արտադրանք ստեղծեցիք համալիր առաջադրանքի տեսքով:

Բացատրեք՝ ինչ գիտելիք և փորձ ձեռք բերեցիք համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացում:

- Ի՞նչ հարցի է վերաբերում ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ գիտեիր ուսանելի հարցի մասին: Ի՞նչ նոր բան իմացար: Լրացուցիչ ի՞նչ կուզենայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացության հանգեցրեց համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը: Ինչո՞վ են հաստատվում ձեր կողմից կատարված եզրակացությունները:
- Ու՞մ համար և ինչո՞ւ է ձեր կողմից ստեղծված համալիր առաջադրանքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ միջոցներից օգտվեցիք ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար:/Համալիր առաջադրանքը ավելի լավ կատարելու համար:

Գնահատե՛ք՝ որքանով արդյունավետ և հետաքրքիր էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքի գործընթացը:

- Գնահատե՛ք՝ որքանով ստացվեց առաջադրանքի կատարումը: Որքանո՞վ այն համընկավ ուսուցչի սպասելիքներին:
- Ի՞նչը կատարեցիք ինքնուրույն: Ինչո՞ւմ անհրաժեշտ եղավ այլոց օգնությունը:
- Ի՞նչ գործոններ նկատի ունեցաք/պետք է նկատի ունենաք այն բանի համար, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդրի համար հասկանալի և ընդունելի լիներ:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ և որքանո՞վ է տարբերվում ձեր կողմից կատարված առաջադրանքը համադասարանցիների աշխատանքներից: Ի՞նչ կկատարեիք այլ կերպ, եթե նորից սկսեիք առաջադրանքի վրա աշխատել:

Աղյուսակ 3.
Որոշող գնահատման խորագիր

Դասարան. XI **Թեմա. «Քաղաքականություն և քաղաքական մշակույթ»** **Հիմնական հարց** – Քաղաքացիական մասնակցություն քաղաքականությունում **Աշակերտ.**		
Գնահատման չափանիշներ	**Առավելագույն միավոր**	**Մեկնաբանություն**
Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա. 1968 թվականին Ֆրանսիայի հասարակությունում առկա հիմնախնդիրները վերլուծել և այդ հիմնախնդիրների կարգավորման գործում հստակեցնել քաղաքացիների/հասարակության դերը:	**1,5**	
Ժողովրդավարություն – Աշակերտը պետք է կարողանա. Ժողովրդավարության սկզբունքների հիման վրա գնահատել 1968 թվականի իրադարձությունները:	**1,5**	
Քաղաքացիական մասնակցություն – Աշակերտը պետք է կարողանա. Վերլուծել 1968 թվականին Ֆրանսիայում քաղաքական գործընթացներում քաղաքացիների ընդգրկվածության ձևը:	**1,5**	
Կայուն զարգացում – Աշակերտը պետք է կարողանա. 1968 թվականին Ֆրանսիայի իրադարձությունները քննարկելիս նկատի ունենալ կայուն զարգացման սկզբունքները:	**1,5**	

Որոշող գնահատման առաջարկված խորագիրը հիմնված է առակայական չափորոշչում տրված **թեմայի սահմաններում արդյունքներին հասնելու ինդիկատորներին (թիրախային հասկացությունների համաձայն)** և նախատեսված է ամփոփիչ առաջադրանքի գնահատման համար, ինչը իր հերթին նպատակամղված է հասկացություններին կողմնորոշմամբ թեմայի կամ դրա մասի ամփոփմանը**:**

Ամփոփիչ առաջադրանքի պատրաստման համար խորհուրդ է տրվում ընտրել ենթատեքստ-օրինակ և տալ աշակերներին նախապես ծանոթանալու/վերլուծելու համար: Նրանց հայտնի է, որ շուտով, մոտավորապես մեկ շաբաթում իրենք պետք է ամփոփիչ առաջադրանքը կատարեն առաջարկված հարցերի համաձայն, որոնք կապված են տրված ենթատեքստ-օրինակի հետ:

Տվյալ դեպքում ընտրեք «**68 թվականի մայիս, Ֆրանսիա**» ենթատեքստ-օրինակը **(II մաս, էջ 136,)** աշակերտին հանձնարարում ենք վերլուծել աղբյուրը և լրացնել աղյուսակը:

Աշխատանքում ընդգծված ներկայացրե՛ք.

- ✓ 1968 թվականին Ֆրանսիայի հասարակությունում առկա հիմնախնդիրները, այդ հիմնախնդիրների կարգավորման գործում քաղաքացիների/հասարակության դերը:
- ✓ Ժողովրդավարության սկզբունքները և մարդու իրավունքները, որոնց բողոքարկում էին ցուցարարները:
- ✓ Քաղաքական գործընթացում մասնակցության ո՞ր ձևը ընտրեցին ցուցարարները: Ինչո՞ւ:
- ✓ Կայուն զարգացման ո՞ր սկզբունքների իրականացմանն էր աջակցում արդյունքը (արդյունքները), որը հետևեց (որոնք հետևեցին) բողոքի ելույթներին:

Ֆրանսիայի հասարակությունում առկա հիմնախնդիրներ	Ժողովրդավարության սկզբունքներ և մարդու իրավունքներ, որոնց դիմում էին ցուցարարաները	Քաղաքացիական մասնակցության ընտրված ձևի նկարագրություն, ընտրված ձևի արդյունավետության հիմնավորում	Բողոքի ելույթների արդյունքների վերլուծում կայուն զարգացման սկզբունքները նկատի ունենալով

Հավելված 1.

Ձեռնարկատիրություն – մտածողության տեսակ

Ես Linkedin-ի համահիմնադիրն եմ: Հավատացե՛ք, եթե ձեռնարկաատիրության մեջ ցանկանում եք հաջողության հասնել, պետք է սկսեք մտածողությամբ:Հաճախ ասում ենք, որ ընկերության հիմնումը ժայռից կատարած ցատկին և ճանապարհին ինքնաթիռ կառուցելուն է նման: Դա միանգամայն պարզ փոխաբերություն է, որտեղ մեծ ճշմարտություն է թաքնված: Ձեզ նախ և առաջ համարձակություն և լավատեսություն է հարկավոր: Պետք է հավատաք, որ կկարողանաք ամեն ինչ անել: Այնուհետև գալիս է խորաթափանցությունը, դա նույնպես անպայման հարկավոր է: Ինքնաթիռ հավաքելը թեկուզև հանգիստ վիճակում ընդունակություն և ունակություններ է պահանջում, թուլանալը անչափ վտանգավոր է և այդ պատճառով անհրաժեշտ է աշխուժությունը և արագ արձագանքելը: Խաղաղություն պետք է պահպանեք անգամ ազդեցության տակ գտնվելիս: Միևնույն ժամանակ ձեզ համար այդ ցատկը պետք է լինի հիացնող ճանապարհորդություն: Եվ բացի դրանից, պետք է նաև խաղադրույք դնեք: Եթե ինքնաթիռը ժամանակին չհավաքեք, վայր կընկնեք: Իսկ իրական կյանքում դրամը կսպառվի: Այդ պատճառով արագությունը վճռական նշանակություն ունի, երբ ժայռից եք ցատկում և շատ արագ գետնին եք իջնում: Այդ պատճառով ցանկացած դեպքում գոյություն ունի գրեթե դատապարտված ստարթապ, որը դանդաղորեն է զարգանում: Դա միայն այն բանի մասն է, թե ինչու է ձեռնարկատիրությունն այդպես հոգնեցնող: Այն պատճառով, եթե ինքնաթիռը չեք կարողանում հավաքել, մահը անխուսափելի կլինի ոչ միայն ձեզ, այլ նաև ցանկացածի համար, ում հավաստիացրիք ձեզ հետ միասին ցատկ անել:

Այնպես որ ի՞նչ է հարկավոր ձեռնարկատիրության մեկնարկների մեջ հաջողության հասնելու համար, որոնք հավատալու վրա են հաստատված: Պատասխանը միաժամանակ և՛ հեշտ է, և՛ անչափ դժվար. դրա համար ձեռնարկատիրական մտածողություն է անհրաժեշտ: Այո՛, այդպիսի մտածողություն հնարավոր է մշակել: Դա ընդհանրական, բազմակողմանի բան է, ինչը սովորեցի՝ որպես Linkedin-ի համահիմնադիր, PayPaI-ի առաջին աշխատակիցներից, ներդրողներից մեկը: Եվ նաև՝ չորս տարվա ընթացքում **Masters of Scale** պոդկաստի համար անցկացրած հարցազրույցների ժամանակ: Բոլոր այս տարիների ընթացքում ձեռք բերած փորձառությունը հավաստիացրեց, որ երկու միատեսակ հիմնադիր գոյություն չունի:

Գոյություն չունի ֆաբրիկա Սիլիկոնյան հովտում, որտեղ ձեռնարկատերերին կապիշոնով վերնաշապիկներ են բաժանում և սուպերհերոսների ուժեր են փոխանցում, ո՛չ բակալավրի աստիճան են շնորհում համակարգչային գիտություններում Ստենֆորդի համալսարանում և ո՛չ էլ հորդորում են. «Որոնե՛ք և գտե՛ք»: Ո՛չ բոլոր հիմնադիրներն են երիտասարդ և ո՛չ էլ բոլոր հիմնադիրներն են գալիս տեխնոլոգիաների ոլորտից: Ո՛չ բոլոր հիմնադիրներն են ավարտում ամենահայտնի համալսարանները (իսկ ոմանք, ինչպիսիք **են Սըր Ռիչարդ Բրենսոնը և Բիլլ Գեյթսը,** ընդհանրապես ոչինչ չեն ավարտում): Բացի դրանից, ոչ բոլոր հիմնադիրներն ունեն միևնույն ունակությունները, փորձառությունը կամ ընդունակությունը:

Մտածողության մասին ի՞նչ կասեք:

Իսկ դա իսկապես միավորում է աշխարհի ամենահաջողակ ձեռնարկատերերին: Ձեռնարկատերերը աշխարհին այլ կերպ են նայում, որպես օրենք, լավատես են, և ի պատասխան մարտահրավերներին՝ գործի են անցնում: Նրանք կենսունակներ են, և նրանց բանականությունը ստեղծելու, արարելու վրա է կողմնորոշված: Այդ ամենը հաճախ միանգամայն այն բանի հակառակն է, ինչը դպրոցում մեզ սովորեցնում են:

Իրականում ձեռնարկատիրական մտածողությունը ներառում է ամբողջական փաթեթ. դա գործնական դատողություն է, քառսում անգամ՝ հարմարավետության որոնումը, արագորեն որոշումներ ընդունելու ունակությունը, հաստատուն բնավորությունը, լավատեսությունը, պաշտպանական պլանների ամբողջ սերիան և այլն:

Դուք նույնպես պե՞տք է լինեք այդպիսին և պե՞տք է տիրապետեք այդ ամենին: Ո՛չ, դա անհնար է: Ձեռնարկատիրոջ մտածողության մեջ այս տարբեր հատկությունները տարբեր կոմբինացիաներով և համաչափությամբ են միախառնված: Եվ միաժամանակ նրանց մոտ որոշ բաներ միանգամայն ինքնին են ստացվում: Իսկ այլ հատկություններ մշակել հնարավոր է: Գլխավորն այն է, որ հասկանաք, թե ինչն է ձեր ուժեղ հատկությունը, ինչը պետք է սովորեք կամ ինչին պետք է հարմարվեք: Օրինակ՝ հնարավոր է, որ դուք ի ծնե լավատես եք և ձեզ հարմարավետ եք զգում քառսում, բայց դժվարանում եք շտապ որոշումներ ընդունել, ինքներդ ձեր մեջ պակաս չափով եք համոզված:

Հնարավոր է, ժամանակի ընտրությունը հիանալիորեն է ձեզ մոտ ստացվում և գործողությունների անցնելու անզուսպ ցանկություն նույնպես ունեք, բայց այլ մարդկանց ուժեղ հատկանիշները ճանաչել չեք կարողանում: Հնարավոր է, բնական բնազդ ունեք, ինչպես պետք է խուսափեք մրցակցությունից, բայց այլ հիմնադիրների կամ գործընկերների հետ հարաբերությունների մասին գրքերով և դասընթացներով քիչ եք սովորել: Տեխնոլոգիան այստեղ նույնպես կարևոր դեր է կատարում ամենօրյա սովորությունների ձևավորման մեջ, և վերջին հաշվով ձեզ կօգնի ձեռնարկատիրական մտածողության զարգացման մեջ (անկեղծորեն եմ ասում, որ ես այժմ ինքս ինձ նույնպես առաջարկում եմ այս սպասարկումը): Վերջերս Masters of Scale-ի թիմի հետ միասին տարածեցինք ապլիկացիա: Դա ամենօրյա 10-րոպեանոց պրակտիկա է, որը կօգնի ձեզ ձեռնարկատիրական մտածողության զարգացման մեջ: Դա մագիստրական դասընթացներ են անվանում և, բնական է, ուզում եմ դուք նույնպես փորձեք և զգաք, թե որքանով արդյունավետ է այն:

Իմ փորձառության համաձայն, ձեռնարկատերերին անպայման պետք է հիշեցնեք, որ ժամանակ պետք է հատկացնեն այն ամենին, ինչը մեկ հայացքով նման է սեփական անձի վրա կենտրոնացմանը: Դուք հիմնադիր եք և ղեկավար և ամբողջ էներգիան ոչ թե սեփական անձին, այլ հիմնախնդիրներին եք տրամադրում՝ ձեր արտադրանքին, ձեր շուկային, ձեր թիմին և ֆինանսներին: Բայց իսկապես չեմ ասի, որ նույնքան ժամանակ հատկացրած ունեք սեփական դատողության զարգացմանը: Այն ժամանակ, երբ դա ամենակարևոր գործիքն է, որը կարող եք օգտագործել ձեր բիզնեսի ստեղծման և զարգացման համար:

Բոլորը չեն ծնվում Սըր Ռիչարդ Բրենսոնի ունակություններով, գործողությունների դիմելու անզուսպ ցանկությամբ կամ Սթիվ Ջոբսի նման ուրիշներին հավաստիացնելու ունակությամբ կամ էլ Սառա Բլեկլիի զարմանահրաշ համառությամբ: Բայց բոլոր ձեռնարկատերերն ունեն

բանականություն, որի հնարավորությունները իսկապես անսահման են: Նրանք կարող են այնպես վարժեցնել իրենց մտածողությունը, որ կարողանան նաև հաջողության հասնել և այնուհետև դրա մշակման մասին այնպես անդադար հոգալ, ինչպես իրենց բիզնեսի կատարելագործման վրա են աշխատում: Մշտական անձնական զարգացումը համարեք կենսականորեն կարևոր ներդրում, քանզի հաջողության ճանապարհին հասնելը կամ թևաթափ լինելը ամբողջությամբ կախված է ձեր բանականությունից: Մասնավորապես՝ ինչպես պետք է զարգանա հաղթանակած ընկերությունը: Այս ամենը լավ սկիզբ է, բայց դրա վրա կանգ չառնեք: Միայն ամենօրյա նպատակաուղղված վարժանքով կկարողանաք բանականությունը անհրաժեշտ տեսանկյունով զարգացնել:

Սա հաստատեցին նաև դոկտոր Կարոլ Դվեկի հիմնարար հետազոտությունները աճ-զարգացման վրա կողմնորոշված մտածողության մասին: Նա Ստենֆորդի համալսարանում ուսուցանում է հոգեբանություն և նրա հետազոտությունների վրա Ամերիկայում ուշադրությունը կենտրոնացրին մանկավարժների ամբողջ սերունդներ: Դվեկի գլխավոր եզրակացությունն այսպիսին է. եթե աճի վրա եք կենտրոնացած, դա հնարավորություն կտա սովորել և նաև աճի հնարավորություն համարել բոլոր պարտությունները: Բարդությունները պետք է քննարկեք ինչպես մարտահրավեր, և այդ դեպքում սկզբնական փուլի անհաջողությունը ձեզ համար կդառնա ժամանակավոր երևույթ:

Այժմ մտածողության վրա ազդեցության հարցերը սովորեցնում են ԱՄՆ-ի բոլոր նահանգների տարրական դպրոցներում, և այդ պատճառով երեխաները թեստերից ավելի բարձր միավորներ են ստանում: Սակայն մտածողության զարգացման վրա աշխատանքը կարևոր է ոչ միայն երեխաների համար: Հետաքրքիր է՝ դուք ինքներդ ինչպե՞ս եք հոգում ձեր ձեռնարկատիրական մտածողության զարգացման մասին: Այդ դեպքում ահա թե ինչն է կարևոր.

1. **Ինչ-որ բան պետք է սովորեք և միևնույն ժամանակ ինչ-որ բան պետք է մոռանաք:** Ձեռնարկատիրական տեսակի մտածողությունը, օրինակ՝ որոշումների արագ ընդունումը կամ հրդեհին հնարավորություն տալը, որպեսզի ամեն ինչ ավերակների վերածի, հաճախ միանգամայն այն ամենի հակառակն է , ինչը մեզ սովորեցնում են:

2. Ոչ թե միայն տեսությամբ, այլ իսկական պատմություններով սովորեք: Մարդկանց մեծամասնության համար ամենալավ դասը ձեռնարկատիրոջ կյանքն է: Այնպես որ, սա այն դեպքն է, երբ տեսությունը լավագույնս հաստատվում է պատմություններով:

3. **Ամեն օր հոգացեք սովորույթի հաստատման մասին:** Ամենակարևորը նորովի մտածողությունն է: Իսկ դրա համար ուրիշներին նույնպես պետք է ունկնդրեք, հարցնեք (գրեք անգամ): Բայց դա բավական չէ: Որպեսզի նորովի մտածողությամբ շարունակեք կյանքը, պետք է գործեք այն բանի համաձայն, ինչ հասկացել եք: Իսկ ձեռնարկատիրական մտածողության զարգացման համար, իսկապես բազմաթիվ ճանապարհներ գոյություն ունեն:

Հավելված 2.
Թղթապանակ. «Դեղորայքի վրա գների շեմի ներառում»
Նամակ 1

Թանկագին խմբագրություն,
այս նամակը գրում ենք երկու տարեց մարդիկ, որպեսզի ձեր օգնությամբ մեր ձայնը հասցնենք իշխանությանը:
Ես և իմ ամուսինը բնակվում ենք մայրաքաղաքից և շրջանային կենտրոնից հեռու գտնվող մի գյուղում: Արդեն 80-ն անց ենք: Պատահեց այնպես, որ մենք ստիպված ինքներս ենք մեր մասին հոգում, մեր զավակները իրենց առողջական խնդիրների, իրենց դեղերի մասին են հոգում և անգամ մեզ տեսակցել չեն կարողանում: Իմ ամուսնու կարծիքով, այն պատճառով չեն գալիս, որ չեն կարող մեզ օգնել:

Երկուսիս էլ անհանգստացնում են խրոնիկական հիվանդություններ (սրտանոթային, շաքար), տարիքային խնդիրներ և ստիպված ենք մշտապես դեղեր ընդունել: Գյուղի բժիշկը առավել խնայողական դեղեր նշանակեց և դրանցից մի քանիսը ծրագրով անվճար ստանում ենք: Բայց, չնայած դրան, դեղեր գնելու համար ամսական 400 լարի է հարկավոր: Եթե դեղերը գնենք, հարկերի և սննդի համար կենսաթոշակը չի բավարարում, եթե դեղերը չգնենք, հիվանդությունը նեղում է և հաճախ շտապ օգնությանն ենք անհանգստացնում, ինչը այնուամենայնիվ հավանելու բան չէ:

Այժմ հեռուստացույցով լսեցինք, որ որոշ դեղերի վրա կառավարությունը դեղատների գները իջեցրեց և դրանից շատ ուրախացանք, ծերեր ենք, բայց մենք էլ իրավունք ունենք հետևել մեր առողջությանը, իսկ առանց դեղի ինչ կդառնանք:

Շնորհակալություն փոխանցեք պետությանը, լավ է, որ հիշեցին ժողովրդի հիմնախնդիրը և գները նվազեցնում են: Խնդրեք՝ ստուգեն, որ այդ օրենքը ամենուրեք պաշտպանեն, որքան մեզ նման և մեզնից ավելի կարիքավոր կա: Լավ կլինի՝ մթերքների գներն էլ իջեցնեն:

Հարգանքներով՝ Լիզա և Գոգի Խիխրիկաձեներ

Նամակ 2

Թանկագին խմբագրություն, դիմում ենք դեղագործների պրոֆեսիոնալ միավորման անունից:
Հասկանում եք, մեզ անհանգստացնում է պետության կողմից կատարված արմատական քայլը մասնավոր բիզնեսին սահմանափակումներ հաստատելու մասին:
Մեր ասոցիացիայի անդամները բարեխիղճ վճարողներ են, և մեր եկամուտներով քիչ գումար չի մտնում պետության բյուջեի մեջ: Մենք ժողովրդավարական երկրում ենք ապրում և մտածում ենք, որ պետությունը պարտավոր է գործել տնտեսական ազատության սկզբունքի պաշտպանությամբ: Ինչ վերաբերում է սոցիալապես անպաշտպան բնակչությանը, նրանց նկատմամբ պետությունը կարող է դեղերի **սուբսիդավորում** կատարել և այդպես հոգալ նրանց իրավունքների պաշտպանության մասին:

Շատ ձեռնարկատերեր հայտարարում են, որ կոնկրետ դեղամիջոցներ կան, որոնք զեղչ կատարելու հնարավորություն չեն տալիս և ստիպված կլինեն դրանց ներկրումը դադարեցնել, ինչը կրկին խնդիրներ կստեղծի մարդկանց առողջության համար: Հատկապես զայրացնում են պատժամիջոցները, որոնք շատ մանր ձեռնարկատերերի համար կարող են կործանարար լինել: Առանց դատարանի նման պատժամիջոցների գործարկումը ուղղակիորեն սահմանափակում է ձեռնարկատիրոջ ազատությունը, արդարացիության սկզբունքը:

Խնդրում ենք հասարակության բանավեճի դուրս բերեք այս թեման, լսեք փորձագետների կարծիքները և սպասումները: Մենք նույնպես ունենք մեր իրավունքները և մենք նույնպես այս երկրի քաղաքացիներ ենք: Այդ պատճառով խնդրում ենք մեր ձայնը հասցնել պետությանը:

Ստորագրում է միավորման 60 անդամ:

Պաշտոնական տեղեկատվություն[1]

15 փետրվարի, 2023 թվական

Գործարկվեց 800-ից ավելի խրոնիկական և ուռուցքաբանական դեղորայքի ռեֆերենտ գինը:

«Այսօրվանից գործարկվում է դեղերի վրա ռեֆերենտ գինը: Շատ ուրախ եմ, որ մի քանի ընկերություն հաշվի առնելով ռեֆերենտ գնի կարևորությունը, մինչև դրա գործարկումը, կոնկրետ դեղորայքի վրա արդեն գինը նշանակալիորեն իջեցրել են: Սա առաջին փուլն է և արդեն հաջորդ ժամանակաշրջանում կշարունակենք ռեֆերենտ գներ սահմանել դեղորայքի նաև այլ խմբերի վրա», - նշեց առողջապահության նախարարը կառավարության նիստի ավարտից հետո:

Նրա իսկ խոսքով, ռեֆերենտ գինը տարածվեց 800-ից ավելի խրոնիկական և ուռուցքաբանական դեղորայքի վրա: Իսկ ընդհանուր առմամբ, բարեփոխումը երկրում դեղերի արժողությունը էժանացրեց 40%-ով:

Նախարարը ուշադրությունը կենտրոնացրեց նաև ռեֆերենտ գնի սահմանման և գործարկման ընթացակարգերի վրա և հայտարարեց, որ դեղորայքի մի մասի վրա սահմանված գնի փոփոխությունը, որի դեմ բողոքեց դեղագործական սեկտորը, կգործարկվի մարտի 15-ից:

«1200-ից ավելի դեղամիջոցների մի մասը բողոքարկվեց: Ճիշտ այդ պատճառով այսօր 800-ից ավելի դեղի ռեֆերենտ գինը մտավ ուժի մեջ: Մնացած 400-ից պակաս դեղերի մեծ մասի վրա կատարվեց դեղերի արժողության վերանայում: Իսկ ընդհանուր առմամբ, մարտի 15-ից բոլոր 1200

[1] Աղբյուր. https://moh.gov.ge/ka/news/7315/#!

դեղամիջոցների վրա կգործարկվի ռեֆերենտ գին», - ասաց նախարարը և ընդգծված ավելացրեց, որ դեղորայքի գնի հաշվման նշված մեթոդոլոգիան Եվրոպայում և աշխարհի այլ երկրներում փորձարկված պրակտիկա է:

«Մեծածախ ռեֆերենտ գինը, ինչպես նաև մարժաները, որոնք դեղատներին սահմանեցինք, այլ երկրների համանման դեղամիջոցների գներից են դուրս բերված: Դա ընդհանուր առմամբ այն իրավական մարժան է՝ ապրանքի առք ու վաճառքի գների տարբերությունը, ինչը այս սեգմենտը և այս արդյունաբերությունը պետք է ունենա: Եթե այս գներն ընդունելի են տարբեր և համեմատաբար բարձր եկամուտ ունեցող շատ երկրներում, որտեղ բնակչության մեկ շնչի հաշվարկով GDP-ն (համախառն ներքին արդյունքը) շատ ավելի բարձր է և որոնք տնտեսապես ավելի զարգացած են, ապա մեր երկրում առավել ևս խնդիր չպետք է լինի: Սեկտորին մենք թողնում ենք այն անպայման և իրավական մարժան, ինչը հարկավոր և անհրաժեշտ է ինչպես մեծածախ, այնպես էլ հատավաճառ ընկերության գործունեության համար», - հայտարարեց նախարարը:

Հիշեցնենք, որ բնակչության համար դեղերի հասանելիությունը մեծացնելու նպատակով պետությունը խրոնիկական և ուռուցքաբանական դեղորայքի արժողության այն առավելագույն շեմը սահմանեց, որից բարձր գնով դրանց իրացումը արգելվում է:

Դիտե՛ք Վրաստանի օրենքը – «Օրենսդրական տեղեկատու» «Դեղերի և դեղագործական գործունեության մասին» Վրաստանի օրենքում փոփոխություն մտցնելու վերաբերյալ https://matsne.gov.ge/ka/document/view/5629060?publication=0 Հոդված 2. և հոդված 37-ի կետերում մտցված փոփոխություններ:

Փորձագետի մեկնաբանություն

Փորձագետ 1. «Նորույթի էությունը կայանում է նրանում, որ փոխվեց պետական քաղաքականությունը դեղագործական արտադրանքի շրջանառության ոլորտում, և եթե այսօր պետական քաղաքականությունը դեղագործական արտադրանքի շրջանառության ոլորտում նախատեսում է արդյունավետ, անվտանգ և որակյալ դեղագործական արտադրանքի առկայություն Վրաստանի շուկայում, առաջարկված փոփոխություններով պետական քաղաքականությունը դեղագործական արտադրանքի շրջանառության ոլորտում նախատեսում է որակյալ, անվտանգ և արդյունավետ դեղագործական արտադրանքների մատչելիության ապահովում»:

Փորձագետ 2. Որոշ երկրներում (Մոլդովա, Ադրբեջան), որտեղ բոլոր դեղամիջոցների վրա մտցվեց ռեֆերենտ գին, խնդիրներ ստեղծվեցին: Ընկերություններին ձեռնտու չէր դեղերի վաճառքը ցածր գնով: Եթե պետությունը խրոնիկական հիվանդություններով անձանց մի մասի համար դեղորայքի գնի (սուբսիդավորում կատարի), իսկ մնացածին, որոնք ծրագրի մեջ չեն ընկնում, դեղորայքի համար ռեֆերենտ գին առաջարկի, ընկերությունը կրկին կունենա դեղ ներկրելու մոտիվացիա:

Վիդեո ռեսուրս – «Ինչ կփոխեն ռեֆերենտ գները շուկայում», տեսանյութ. https://shorturl.at/iDJNR

Քաղվածքներ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից
Հոդված 1

Սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները շնորհվում են յուրաքանչյուր անձի՝ առանց որևէ տեսակի խտրականության, այն է՝ ռասա, մաշկի գույն, սեռ, լեզու, կրոն, քաղաքական կամ այլ հայացք, ազգային կամ սոցիալական ծագում, ունեցվածք, կոչում կամ այլ կարգավիճակ: Բացի այդ, անթույլատրելի է այդ երկրի կամ տարածքի քաղաքական, իրավասության հետ կապված որևէ տարբերակում, անկախ այն բանից՝ այդ տարածքը անկա՞խ է, խնամակալակա՞ն, ոչ ինքնակառավարվո՞ղ, թե՞ այլ կերպ սահմանափակված իր ինքնիշխանությամբ:

Հոդված 11.1.

Քրեական հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ըստ օրենքի, հրապարակային դատաքննությամբ, որի ժամանակ նա ունեցել է իր պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր երաշխիքները:

Հոդված 25.1.

Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև ապահովության իրավունք՝ գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում գոյության այլ միջոցներից զրկվելու դեպքում:

Հոդված 29. 1.

Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի հասարակության առջև, քանզի միայն հասարակությունում է հնարավոր նրա անձի ազատ ու լիարժեք զարգացումը:

Հոդված 29.2.

Իր իրավունքներն ու ազատությունները իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքը երաշխավորելու և ժողովրդավարական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջներն ապահովելու նպատակո

Հավելված 3

«Փենովանի» սոցիալական ձեռնարկության հաշվարկված և չհաշվարկված արդյունքները

«Փենովանի» սոցիալական ձեռնարկությունում արդեն զբաղված է 12 կին: Այսօր նրանց միավորում է գործը: Մինչ այդ միմյանց չէին էլ ճանաչում, բայց նրանց մոտ ընդհանուրն այն էր, որ բոլորը եղել էին ընտանեկան բռնության զոհ: Նրանց պատմությունները տարբեր են, բայց այնուամենանիվ իրար նման են. ընտանիք ստեղծելը, լքված հույսեր, բռնություն, օգնություն որոնելու անարդյունք փորձեր, ինչպես նաև բռնություն, արդեն անտանելի... Վերջում բռնության զոհերի հանգրվանում ապաստարանում, վերականգնման գործընթաց և իսպանացի խոհարարից թխողի մասնագիտություն սովորելը, աշխատել սկսելը, սեփական եկամուտը, ինքնավստահության բորբոքումը, հույսերի աշխուժացումը:

Ոչ կառավարական կազմակերպության համար, որն արդեն տարիներ շարունակ աշխատում է բռնության թեմայով, լավ էին ծանոթ այդ սոցիալական խնդիրները և դրանք պայմանավորող պատճառները: Առավելապես (նրանց դեպքում այդպես էր) ընտանեկան բռնության զոհ են դառնում այն կանայք, որոնք վաղ ամուսնության պատճառով չեն կարողացել ո՛չ կրթություն ստանալ, ո՛չ մասնագիտություն ունենալ, ո՛չ էլ աշխատանքային փորձ, իսկ միջավայրը՝ «Համբերիր», «Ընտանիքը հո՞ չես քանդի» - «խորհուրդներ» էր տալիս:

Ոչ կառավարական կազմակերպության առաջնորդները մեկ անգամ կրկին վերլուծեցին ամեն ինչ, հաշվում էին, հաշվարկում էին, ներդրողների էին ընտրում, որոնում էին: Նոր ոչինչ չեն հայտնաբերել. այդ կանանց մեծամասնությանը բռնությունից փրկվելու գլխավոր պատնեշը ստեղծել են կրթություն, մասնագիտություն չունենալը, տնտեսապես ամուսնուց կախվածությունը, գնալու տեղ չունենալը, հասարակական կարծրատիպերը:

Նախ և առաջ նրանց պետք է վերադարձնել հավատը սեփական կարողությունների նկատմամբ: Սովորեցնել նորովի ապրել: Մինչև սոցիալական ձեռնարկության գործարկումը հրավիրեցին խոհարարի, անցան ուսուցում մի քանի կոնկրետ ուղղություններով՝ կիսաշերտավոր խմորի պատրաստում, միջուկների պատրաստում, հրուշակային արտադրանք... Այդ ժամանակ սոցիալական ձեռնարկության պարագլուխները հոգում էին փուռը լրիվությամբ և կանոնների պահպանությամբ սարքավորելու մասին: Հարկ եղավ ներդրման մի քանի աղբյուր որոնել, որպեսզի անհրաժեշտ սարքեր և գույք ձեռք բերեին, հումքի աղբյուր գտնեին: Պետությունը նույնպես օգնեց՝ տարածքը փոխանցեց երկարաժամկետ վարձակալությամբ: Որոշ առևտրական օբյեկտներ գները իջեցրին, ոմանք զրոյական ապառիկ ձևակերպեցին, հումքն էլ զեղչ գնով գտան նույնպես սոցիալական ձեռնարկատերերի մոտ: Շատ ներդրողների մոտ հանդիպեցին նաև խուլ՝ չարձագանքող պատի, բայց դրանից չվախեցան, գործը այնուամենանիվ սկսեցին:

Այսօր արդեն պատվեր պատվերի ետևից է գալիս, նրանք արտադրանք են պատրաստում տարբեր միջոցառումների համար (վարժանքներ, հանդիպումներ, կոնֆերանսներ...), արդեն այնտեղ եթթ բացված խանութում արտադրանքը ձեռք են բերում նաև սովորական սպառողները: Արտադրանքը հավանության է արժանանում, գներն էլ համեմատաբար մատչելի են, արտադրանքի տեսքը գրավիչ է. խաճապուրի, լոբիանի,

հավի, տավարի մսով, սնկով, կարտոֆիլով բլիթներ, խմորեղեն: Էկոլոգիական փաթեթավորման նյութ, հարմար պնակներ և տախտակներ, բարեհաճ սպասարկում տեղում մատուցելով և ֆուրշետային սեղանների դասավորում-հավաքումով: Կարճ ասած՝ ամեն ինչ լավ է ստացվում, ամեն օր ավելի ու ավելի զարգացնում են մասնագիտական ունակությունները: Գործը բաշխված է և, եթե անհրաժեշտ է, միմյանց փոխարինում են:

- Ի՞նչ կասեք ձեր աշխատանքի մասին, հավանո՞ւմ եք: Բավարարո՞ւմ է Ձեզ: --Հարցնում ենք Էկային, «շեֆ-խոհարարին», ինչպես գործընկերներն են անվանում:

- Հավանո՞ւմ եմ: Սա ինձ համար միայն աշխատանք չէ, սա իմ վերակենդանացման, հույս առաջանալու տեղն է, որտեղ ինձ լիարժեք մարդ եմ զգում: Մեկ տարի առաջ լրիվությամբ կորած, դժբախտ մարդ էի, եթե երեխաներս չլինեին, ապրել նույնիսկ չէի ուզում, քանի որ չգիտեի՝ ինչ անել, չէի դիմանում անտանելի կենցաղին և գնալու տեղ չունեի, ոչ էլ երբևէ աշխատել էի, մասնագիտություն նույնպես չունեի, 16 տարեկան ամուսնացել էի: Հետո՝ երեխաներ... այսօր գիտեմ, որ իմ երեխաներն ունեն ապաստարան, վարձակալած, բայց այնտեղ ոչ ոք ինձ չի նեղի, երեխաները հաճախում են մանկապարտեզ, ես ունեմ աշխատանք, աշխատավարձ: Ունեմ փաստաբան և սպասում եմ դատարանի ավարտին բնակարանը կիսելու և ալիմենտի կապակցությամբ: Ունեմ ապագայի պլաններ... Այստեղ բոլորիս մոտ հույս առաջացավ, հետն էլ միմյանց օգնում ենք, կիսվում ենք:

Հաջորդ հարցը ուղղեցինք սոցիալական ձեռնարկության ղեկավարին, տիկին Մերիին.

-Ի՞նչ կասեք ձեր ձեռնարկության մասին, որքանո՞վ իրեն արդարացրեց:

- Չգիտեմ՝ դուք արդարացնելու մեջ ի՞նչ ի նկատի ունեք, այդ պատճառով մի փոքր ընդարձակ կբացատրեմ: Մեր սոցիալական ձեռնարկության գլխավոր առաքելությունը բռնության զոհ կանանց սոցիալականացումն է, նրանց կրթությունը և զբաղվածությունն է: Ինչ խոսք, ուրախ ենք, որ կոմերցիոն տեսակետից նույնպես գործը լավ է ընթանում, պատվերներ ունենք, սա նույնպես մի տեսակ աջակցություն է հասարակության, ոչ կառավարական սեկտորի կողմից, փորձում են մեր ծառայությունից օգտվել: Շահույթի մեծ մասով ջերմոց պատրաստեցինք, այնտեղ էլ աշխատանքի տեղավորեցինք մեր բենեֆիցիարներին: Մեր խմբի կողմից այս սոցիալական ձեռնարկության հիմնումը բավականին համարձակ քայլ էր, ճիշտ է, ոչ կառավարական կազմակերպությունում աշխատանքի մեծ փորձ ունեի, բայց արտադրությունում բոլորովին անփորձ էի: Բայց համարձակվեցինք, մինչ այդ բազմատեսակ ուսուցում անցանք այս տեսակ գործունեության մասին և՛ Վրաստանում, և՛ Եվրոպայում: Խիզախեցինք, քանզի պարզորոշ տեսնում էինք, որ այս կանանց համար կենսականորեն անհրաժեշտ էին մասնագիտությունը և աշխատանքը: Մեզ համար գլխավորը շահույթը չէ, մեզ համար գլխավորը բռնության զոհերի վիճակը գոնե մի փոքր թեթևացնելը և նրանց գործազրկության և աղքատության չմատնելն է: Կանայք կյանքը նոր աչքերով են տեսնում, հավատում են իրենց ուժին:

- Առանց շահույթի ինչպե՞ս կարող եք գոյություն ունենալ, ինչպե՞ս կշարունակեք ձեր գործունեությունը:

- Եթե ոտք ես դնում սոցիալական արտադրություն, պետք է նախապես իմանաս, որ սա սովորական բիզնես չէ, և դու (ձեռնարկատիրոջն ի նկատի ունեմ) շուկայի կանոններին ամբողջությամբ չես կարող տրվել: Պետք է պատրաստ լինես նաև այն բանի համար, որ կարող ես պարտություն կրել բիզնեսի տեսակետից, բայց արդեն պետք է ունենաս օգնող պլան՝ որտեղ, ինչպես գտնել ռեսուրսներ ոտքի կանգնելու համար: Դու շղթայված ես սոցիալական հիմնախնդրին և ոչ թե անձնական շահույթ ստանալուն: Իսկ սոցիալական հիմնախնդրի ետևում այս մարդիկ են կանգնած՝ իրենց ծանր պատմություններով, հազիվ կենդանացած հույսերով: Այդ պատճառով պետք է հավաքես ուժերդ նոր շունչ բացելու համար և սկզբից սկսես գործը ուղղել: Երբ միայն ձեռնարկատեր ես և շահույթ ես սպասում, որևէ խնդրի առաջացման դեպքում քո որոշումն է՝ կշարունակե՞ս, թե՞ ձեռքերդ թափ կտաս... Այստեղ, մեզ մոտ այլ կերպ է...

- Ինչպե՞ս կգնահատեք ձեր արդյունքները:

- Սոցիալական ձեռնարկության արդյունքները դժվար է հաշվարկել, քանի որ դրանք միայն գումարով կամ քանակով, մի խոսքով, թվանշաններով չեն չափվում, սոցիալական հիմնախնդիրներն այնքան բազմանիստ են, դժվար է դրանք չափել: Հապա, ով կհաշվի՝ ի՞նչ արժե խաղաղ անցկացրած ամեն մի գիշերը երեխայի համար, որը մինչ այդ ամեն գիշեր հայրիկի ու մայրիկի կռիվը անկողնում կուչ եկած կամ դուրս վռնդված և դողացնելով էր լսում: Կամ ի՞նչ արժեն այս կանանց մտքում կենդանացած հույսերը, ժպիտը, որը բերում է սպառողի շնորհակալությունը:

Սա հաշվելը անհնար է և ճիշտ սա է սոցիալական ձեռնարկության առանձնահատկությունը և խթան հանդիսացողը – հաղթած, նվազած սոցիալական հիմնախնդիրներ: Բիզնեսի արդյունքները հաշվարկելի են, շահույթը՝ չափվում է, բայց երբեմն այդ աստղաբաշխական թվերը իմաստը կորցնում են, եթե մտածում ես և հիշում ես, որ այսօր էլ փոքրիկը խաղաղ քնի և մի պատառ հացի կարոտ է... Կարծում եմ, որ ապագան ճիշտ սոցիալական ձեռնարկատիրությանն է:

Հավելված 4.

Փոփոխություններ բիզնեսի կայունության ընկալման մեջ

IKEA կահույքի ընկերությունը (շվեդական կահույքի, խոհանոցային և տան տարբեր աքսեսուարների մուլտինացիոնալ (բազմազգ) ընկերություն է և 2008 թվականից կահույքի վաճառքի շուկայում հանդիսանում է լիդեր), որը հայտնի է «զրոյական թափոններ աղբանոցներում» մոտեցմամբ, գտնում է, որ ֆինանսական արդյունավետության հասնել հնարավոր է շրջանառու տնտեսության (ցիրկուլյար) մոդելի արմատավորմամբ և կիրառմամբ: Նշված մոդելը մեծացնում է ընկերության կոմերցիոն հնարավորությունը և, որ գլխավորն է, այն դարձնում է կայուն: IKEA-ն կահույք պատրաստելու համար անհրաժեշտ փայտի գրեթե 50%-ը ձեռք է բերում կայուն անտառներից, դրա հետ միասին իրենց կողմից օգտագործվող բամբակի 100%-ը արտադրված է այնպիսի ֆերմաներում, որոնք ծախսում են նվազ քանակությամբ ջուր, էներգիա և քիմիական պարարտանյութեր: Շվեդական ընկերությունը 700 000-ից ավելի արեգակնային վահանակի սեփականատեր է, որոնք իրենց խանութներին մատակարարում են էներգիա:

2012 թվականին IKEA-ն գործարկեց «Լավատես ժողովուրդ և մոլորակ» անվանունով ռազմավարությունը, որի նպատակը համատեղ ուժերով կայուն զարգացման նպատակներին համապատասխան կարևոր փոփոխությունների իրականացումն է:

Ընկերությունը գիտակցում է այն փաստը, որ ցանկացած բիզնեսի երկարաժամկետ նպատակների իրականացումը անհնարելի կլինի այն դեպքում, եթե մոլորակի իրավիճակը դրա հնարավորությունը չի տալիս: IKEA-ն սպառողներին հորդորում է ապրել հաստատուն կերպով, և ինքն էլ աջակցում է նրանց այդ գործընթացում: 2012 թվականին բարձրաձայնած մարտավարության նպատակներից մեկը ներկայացնում է հասարակության համար ավելի լավ կյանք ստեղծելը: Թեև, պարզ է, որ այդ փոքր քայլերը այնպիսի հսկայական կորպորացիայի համար, ինչպիսին IKEA – ն է, անբավարար են:

Չնայած այն բանին, որ ընկերությունը ձգտում է ածխածնի հետքերը կրճատել, այնուամենայնիվ իրականացված միջոցառումները բավարար չեն կլիմայի փոփոխությամբ առաջացած արդյունքները կրճատելու համար:

Կարելի է եզրակացնել, որ ապագան պատկանում է բիզնեսին, որը շահույթի առավելագույն շեմը պլանավորում է էկոլոգիական և սոցիալական սկզբունքների պահպանությամբ:

Բիզնես կայունության հայեցակարգը ժամանակի ընթացքում փոփոխություն էր կրում և այժմ էլ շարունակում է կրել: Դեռևս մինչև կայուն զարգացման հարցի ակտիվացումը ոլորտի հետազոտող և գիտնական Փիթեր Դրաքերը բարեգործությունը և կորպորատիվ պատասխանատվությունը քննարկում էր 19-րդ դարի երկու ամերիկացի հաջողակ ձեռնարկատերեր Էնդրյու Կարնեգիի և Ջուլիուս Ռոզենվալդի օրինակով:

Էնդրյու Կարնեգին կյանքի վերջին տարիներին իր գույքի մեծ մասը ներդրեց բարեգործության մեջ: Նրա անվան հետ է կապվում Ամերիկայում մինչև 3000 հասարակական գրադարանի, ինչպես նաև շուրջ 7000 եկեղեցու հիմնադրումը, Նյու-Յորքում Կարնեգի հոլի և Պիտսբուրգում Կարնեգի Մելոն համալսարանի շինարարությունը:
«Պետք է գործեմ բարօրության համար, ինչը այնուհետև հնարավորություն կտա կատարելու նաև շահավետ գործ»: Այսինքն՝ լավ գործ կատարելու համար նախ դրա հնարավորությունը պետք է ունենաս: Այսպես սահմանեցին Կարնեգիի հայեցակարգը:
Ջուլիուս Ռոզենվալդը կարողացավ Sears Roebuck-ը վերածել ամենամեծ խանութների ցանցի ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ աշխարհում: Նրա նպատակն էր ամերիկացի ֆերմերների ունակություն-հմտությունները զարգացնելը և արգասաբերությունը մեծացնելը, ինչը հետագայում դարձավ անուղղակի ճանապարհով Sears-ի տնտեսական հաջողության հիմքը:
«Պետք է կատարես օգտակար գործ, ինչը այնուհետև կբերի նաև բարի օրեր», - այսպիսին է Ռոզենվալդի մոտեցումը:
Դրաքերի կարծիքով, սուր սոցիալական մարտահրավերները արդյունավետորեն հաղթահարելու համար հարկավոր է ռոզենվալդյան մոտեցում: Միայն կառավարությանը և հասարակությանը չի բավարարի ուժը դա հաղթահարելու համար, այստեղ կարևոր է բիզնեսի ռեսուրսը, գիտելիքը և փորձը: Հարկավոր են այնպիսի շրջանակային պայմաններ, որոնք կօժանդակեն ընկերության կողմից կայուն զարգացման կողմը կատարված քայլերի և տնտեսական հաջողության կոմբինացիային՝ համակցությանը: Դրանով հնարավոր է դառնում **կայուն մենեջմենտի** զարգացման մասին խոսելը:
Կայուն մենեջմենտի հասկացությունը **սկզբնական փուլում** բիզնեսի համար նշանակում էր շահույթի առավելագույն աճ և միևնույն ժամանակ՝ տնտեսական, էկոլոգիական և հասարակական հնարավորությունների և ռիսկերի կառավարում:
Կայուն մենեջմենտի ըմբռնման **երկրորդ փուլում** տնտեսական, էկոլոգիական և սոցիալական նպատակները հավասարապես նշանակալից են դառնում:
Նշված մոտեցումը առաջարկեց **Ջոն Էլկինտոնը:** Այդ նպատակին հասնելու համար բիզնեսը իրականացրեց կայուն զարգացման տարբեր մարտավարություններ և պլաններ: Միևնույն ժամանակ, նկատվում էր այդ մոդելի բիզնես գործընթացներին ինտեգրման աճող միտումը, ինչը նշանակում է, որ ընկերությունում ոչ թե կոնկրետ դիրքորոշում կամ ծառայություն է գործում կայուն զարգացման մասին, այլ բոլոր ծառայությունները, դեպարտամենտները սեփական նպատակներում իրականացնում են կայուն զարգացման ինտեգրում: Եվ այնուամենայնիվ, այստեղ նույնպես նպատակը ընկերության էկոլոգիական և սոցիալական «բացասական հետքի» նվազեցումն է:

Այսօր ավելի ու ավելի շատ ընկերություններ բողոքում են այն մասին, որ կայուն մենեջմենտը իրենց համար դարձավ կարևոր հարց, թեև, իրականում, գլոբալային մակարդակով, տարբերությունը կատարվելիքի և կատարվածի միջև մշտապես աճող է:

Կլիմայի փոփոխությունը հաստատում է, որ կայուն զարգացման գործող ձևերն ունեն հիմնախնդիրներ: Դա հստակ ցույց է տալիս նաև մեր ռեսուրս օգտագործման տնտեսական մոդելի սահմանափակ լինելը: Ռեսուրսների կիրառման տեսանկյունից այդ մոդելը կրկին հիմնվում է ուղղագիծ մտածողության՝ «Վերցրու, կատարիր, դեն նետիր» -ի վրա: Ցիրկուլյար՝ շրջանառու տնտեսության մոդուլի սկիզբը միայն մի քանի հարցում է նկատվում: Միևնույն ժամանակ, մեծ կարողունակություն ունեցող թարմացվող էներգիաներին անցումը դանդաղ է ոտք դնում:

Ամեն տարի յուրաքաքանչյուր անձի պահանջները կայուն մակարդակով բավարարելու համար հարկավոր է գրեթե 2 մոլորակ, իսկ Շվեյցարիայի բնակչության մակարդակին հասնելու համար անհրաժեշտ է 3 մոլորակ:
Իսկ իրականում, անհրաժեշտ է նոր մոդել, նոր հեռանկար ոչ միայն մակրոտնտեսական մակարդակով, այլ նաև բիզնես մակարդակով: Քանի որ, ինչպես փորձագետներն են նշում, մենք ուզում ենք իրական բիզնես կայունություն:

Աղբյուր. : https://bit.ly/3HVky7F

Հավելված 5.
Ուինսթոն Չերչիլ: II մաս, էջ 7-10

Ուինսթոն Չերչիլ – ռազմավար, քաղաքագետ, հռետոր, նկարիչ, գրող (Նոբելյան մրցանակի դափնեկիր), մարզիկ – այս բոլոր «տիտղոսները» պատկանում են մեկ մարդու: Բայց նրա ամենամեծ տիտղոսը այնուամենայնիվ ժողովրդի ծառա լինելն է: Սըր Ուինսթոնը այդ «տիտղոսը» դրսևորեց հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Նա զգում էր Առաջին համաշխարհային պատերազմի մոտենալը և այդ պատճառով էլ շտապ կարգով կատարեց նավատորմիղի արդիականացում՝ մոդեռնացում (այն քարածխի վառելիքից անցկացրեց նավթի վրա), իսկ արդյունքում նավթի արդյունահանումը նույնպես կրկնակիորեն մեծացրեց, ստեղծեց ծովաօդային ուժեր, ինքնաթիռները անձամբ էր փորձարկում և ավիավթարից էլ փրկվեց:

Հարավային Աֆրիկայի պատերազմի գերիների ճամբարից փախուստի դիմելուց հետո հայրենիք վերադարձած անձը որոշեց գործել քաղաքականությունում և 1915-1929 թվականներին գրեթե բոլոր կարևոր նախարարների պաշտոնները հերթով զբաղեցրեց:

1929 թվականից, երբ իր պահպանողական կուսակցությունից հեռացավ, նա մեծ ճանաչում ձեռք բերեց՝ որպես գրող և հրապարակախոս: Այդ ժամանակաշրջանում նա հաճախ էր ուշադրությունը կենտրոնացնում Հիտլերի աճող սպառնալիքի և սպասվող զինված հակամարտության վրա, ինչը նաև արդարացավ, և աշխարհը խրվեց II համաշխարհային պատերազմի փոթորկի մեջ:

Երբ լյուֆտվաֆը (Գերմանիայի օդային ուժեր) անողոքաբար ռմբակոծում էր Բրիտանիան, Չերչիլը այն ժամանակ նույնպես ժողովրդի կողքին էր և փորձում էր առավելագույնս համերաշխություն ցուցաբերել, մնալ քաղաքացիների մոտ և իր ներկայությամբ խաղաղեցնել նրանց:

Չերչիլը գործնական միջոցառումների կոչերով հանդես էր գալիս նացիստական Գերմանիայի դեմ և խստորեն քննադատում էր ագրեսորի քաղաքականությունը: Սակայն նրա հակաֆաշիստական կոչերը մնում էին անարդյունք:

1940 թվականին Չերչիլը դարձավ վարչապետ և Բրիտանիան ղեկավարեց պատերազմի ծանր տարիներին: Նա սկզբից ևեթ հրաժարվեց պարտությունը որպես հնարավոր տարբերակներից մեկը դիտարկել և հիմնովին բացառեց նացիստների հետ որևէ տեսակի գործարք: Այդ առանց փոխզիջման տրամադրվածությունը բրիտանական դիմադրությանը մարտական ոգևորություն տվեց, ինչը նշանակալից դեր կատարեց այն ժամանակ, երբ իր երկիրը Հիտլերի դեմ ընդդիմությունում բոլորովին միայնակ էր:

1940 թվականի մայիսի 10-ին Չերչիլը կանգնեց կառավարության ղեկի մոտ, իսկ մայիսի 13-ին խոսքով դիմեց հասարակությանը. «Երկիրը գտնվում է պատմության մեջ մեծագույն պայքարի մեկնարկի փուլում, և ես չեմ կարող ժողովրդին որևէ բան խոստանալ, բացի արյունից, աշխատանքից, արտասուքից և քրտնքից»:

Չնայած այս վաստակին՝ պատերազմից հետո նա ընտրություններում պարտություն կրեց, սակայն ապագայի իրադարձությունների զարգացման ճիշտ կանխագուշակման ունակությունը չկորցրեց և Ֆուլտոնում իր հայտնի ելույթում ընդարձակ խոսեց խորհրդային կոմունիստներից եկող վտանգի մասին: Այնտեղ առաջին անգամ կիրառեց «երկաթե վարագույր» արտահայտությունը, իսկ 1946 թվականին Ցյուրիխում հանդես եկավ իր հայտնի ելույթով, որում Եվրոպայի Միացյալ Նահանգներ ստեղծելու կոչ արեց:

Չերչիլը նոր համաշխարհային պատերազմից խուսափելու մեխանիզմը տեսնում էր եվրաինտեգրման մեջ, իսկ այդ ճանապարհի վրա՝ որպես առաջին քայլ, պաշտպանում էր Եվրոպայի խորհրդի ստեղծումը: Այդ պատճառով էլ, երբ 1948 թվականին Եվրոպայի մեծ կոնգրեսում ամբողջ Եվրոպայից 800 պատվիրակ էր հավաքվել, Չերչիլը միանգամայն արժանապատվորեն հրավիրված էր պատվավոր նախագահի վարկանիշով:

Գործընթացը պսակվեց 1949 թվականի մայիսի 5-ին Եվրոպայի խորհրդի ստեղծմամբ, որի առաջին հանդիպմանը նույնպես Չերչիլը անձամբ մասնակցեց: Այնտեղ նա կոչ արեց կատարել դեպի հետագա ինտեգրում տանող հաջորդ քայլերը, ինչի մասին 1955 թվականին համաձայնեցին Մեսսինայի կոնֆերանսի ժամանակ, ինչը երկու տարի անց, 1957 թվականին Հռոմի պայմանագրի ձևակերպմամբ ավարտվեց:

Անասելի մեծ էր Չերչիլի տեսադաշտի դիապազոնը: Եվրոպայի միավորված բանակի և Ստրասբուրգի մարդու իրավունքների եվրոպական դատարանի ստեղծման գաղափարները նույնպես նրանից եկան: Դատարանը հիմնադրվեց 1959 թվականին, ճիշտ տասը տարի անց այն պահից, երբ այդ կարծիքը առաջինը ինքը բարձրաձայնեց:

Ֆաշիզմի դեմ Եվրոպայի ժողովուրդներին պայքարի դրդող քաղաքագետը արդարացիորեն համարվում է Եվրոպայի միավորման ետևում կանգնած շարժիչ ուժ: Չերչիլը իր համառության, հազվագյուտ մոտեցումների և անսահման վաստակների հետևանքով դարձավ եվրաինտեգրման պաշտպանությանը ուղղված ակտիվ պայքարի խորհրդանիշ:

Ուինսթոն Չերչիլի սուրբծննդյան ուղերձը (1941 թ.). «Տարօրինակ Սուրբ Ծնունդ է: Կարծես ամբողջ աշխարհը մահ ու կենաց պայքարում է ընդգրկված, և պետությունները միմյանց ոչնչացնում են ամենասարսափելի զենքերով, ինչը գիտությունը կարողանում է մեզ տալ: Այս Սուրբ Ծնունդին կհաստատվեր թախիծը, եթե չունենայինք այն բանի անսասան հավատը, որ ո՛չ ուրիշ ժողովուրդների հարստության և հողերի հափշտակման ագահությունը, ո՛չ գռեհիկ ամբիցիաները և ո՛չ էլ այլոց ծախսով շահույթ ստանալու կեղտոտ վարմունքը՝ նկրտումը չի եղել մարտադաշտ դուրս գալու մեր պատճառը: Այստեղ՝ պատերազմի սրտում, պատերազմի, որը մոլեգնում և թնդում է ցամաքում և ծովում և

դաժանորեն գալիս է մեր տների ու սրտերի կողմը, այստեղ՝ այս խառնարանի կենտրոնում, այսօր գիշերով խաղաղություն կիջնի բոլոր ընտանիքներում և մեր մեծահոգի ժողովրդի սրտերին: Այդ պատճառով էլ այս գիշեր կարող ենք կողքի դնել բոլոր այն մտահոգությունները և զայրույթը, որոնք հանգիստ չեն տալիս, և փոթորկի վերածված աշխարհում երջանկության երեկո նվիրենք մեր զավակներին: Եվ ուրեմն ավագ-ներս լրիվությամբ կիսենք նրանց անարատ հաճույքը, մինչև կրկին կկանգնենք մռայլ աշխարհի և փշոտ տարիների առաջ, որոնք սպասում են առջևում՝ այն հաստատուն հույսով լցված, որ մեր հոգատարության և տված զոհերի շնորհիվ այս երեխաներից ոչ ոք չի հափշտակի սեփական ժառանգությունը և ազատ ու արժանապատիվ աշխարհում ապրելու իրավունքը»:

Պատերազմի ժամանակ Չերչիլը իր բոլոր ելույթներում օգտագործում էր մի ժեստ, որը արտացոլում էր լատինական V-ն (Victory - հաղթանակ): Չնայած նրան, որ այդ ժեստը դեռևս միջին դարերից էր հայտնի, ճիշտ Չերչիլի շնորհիվ տարածվեց ամբողջ աշխարհում՝ որպես հաղթանակի խորհրդանիշ: Ի սկզբանե «V» ժեստը բացարձակապես չէր նշանակում հաղթանակ: Պատերազմից հետո, երբ նրանք տուն էին վերադառնում, այդ ժեստով ցույց էին տալիս, որ իրենք կենդանի են, և իրենց մատները, որ գլխավոր զենքն էին իրենց գործերում, բոլորը տեղում էին:

Առանց Չերչիլի աշխարհն այսօր միանգամայն օտար, դժվար ճանաչելի կդառնար՝ մութ, անհամարձակ, տանջված... նախ և առաջ հաղթանակի համար պահանջվում էր մի մարդ, առանց որի պայքարը սկզբից ևեթ պարտված կլիներ: Նրանց հարկավոր էր Ուինսթոն Չերչիլ:

Հավելված 6

«Արխիվային լրաբեր» №2. 2008 թ. Վրաստանի Ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն*

«Արխիվային լրաբեր» №2. 2008 թ. Վրաստանի Ներքին գործերի նախարարության արխիվային վարչություն*

Անցյալ դարի 20-30-ական թվականներին Միխեիլ Ջավախիշվիլին Խորհրդային Միության ամենահայտնի այլախոհ գրողներից էր, ով չկարողացավ ընդունել խորհրդային նոր համակարգը թե՛ անձամբ, թե՛ ստեղծագործական առումով: Նա փորձեց, բայց չկարողացավ Իգոեթիի կոմունայի մասին անգամ ակնարկ գրել: Ինչ գրեց, պատռեց և ասաց. «Ի՞նչ անեմ, պատվերով գրել չեմ կարող»:

Միխեիլ Ջավախիշվիլիի համար բանտը, կալանքը օտար չէին: Դեռևս թագավորական կառավարության ժամանակ նա եղել էր բանտարկված Մետեխիի բանտում: Այդ պատվից նրան խորհրդային կառավարությունն էլ չզրկեց:

20-ական թվականներին գրողի ծանր հոգեկան վիճակը լավ արտահայտում է նրա կողմից Դավիթ Սուլիաշվիլիին գրած նամակը. «Եղբայր Դավիթ, ես այստեղ ապրել չեմ կարող: Իմ հեռանալը Վրաստանից իմ երկրորդ ծնունդը կլինի: Այս գործում օգնիր ինձ, փոխարենը խնդրիր՝ ինչ ուզում ես, մենակ թե օգնիր... Հավաստիացնում եմ, եղբայր Դավիթ, դրսում ավելի շատ և ազատ կգրեմ, այդպիսով մի փոքր օգուտ կբերեմ իմ հայրենիքին: Այստեղի նորություննե՞րը: Ոչ մի թերթ չեմ կարդում, ամենուրեք իշխում է սովորական ստորությունը, բամբասանքը և հիասթափությունը: Եկեք ազատեք, ուժասպառ ենք և կռացած: Սա է և սա»:

Իսկ նախախնամությունը, թե ճակատագիրը արդեն որոշել էին Միխեիլ Ջավախիշվիլիի բախտը: Նա քրտնաթոր ցլի նման, առանց ծունկը ծալելու աշխատում է, աշխատում է և հետն էլ անտեսանելի քաղաքական կյանք է վարում՝ որպես ազգային-ժողովրդավարական կուսակցության ղեկավարներից մեկը: Ավելի ուշ գրողը կասի. «Իմ գաղտնի աշխատանքը ազգային-ժողովրդավարական կուսակցությունում 1921-1923 թվականներին նման էր մարդու արարքին, որը լողալ չգիտի, բայց ուրիշին օգնելու համար թռչում է կամրջից և ջուրն է ընկնում: Սա բացատրել անհնար է: Այստեղ գործում է քողարկված ուժ, մերձավորին փրկելու բնազդը, և այդ բնազդը հարյուր անգամ ավելի ուժ ունի, քան գիտակցությունը»:

Միխեիլ Ջավախիշվիլիին չկարողացավ փրկել **կոնսպիրացիան**: Չեկան (Առաջին խորհրդային պետության անվտանգության ծառայությունը) աչալրջորեն հետևում էր և նրա բոլոր քայլերը ճշտապահությամբ ցուցակագրում էր: 1923 թվականին կալանավորեցին և հապճեպորեն դատապարտեցին գնդակահարության: Բոլշևիկների գնդակից նա փրկվեց վրացի գրողների մի խմբի շնորհիվ: Պավլե Ինգորոքվան և ուրիշներ Սերգո Օրջոնիկիձեին դիմեցին խնդրանքով, թե՝ Միխեիլ Ջավախիշվիլին շնորհալի գրող է, մի գնդակահարեք նրան: Երևի այդ օրը Սերգոն լավ

տրամադրության էր և գրողին ներեց, թե չէ սա այն Սերգոն է, որին Վաժա Փշավելայի որդու համար խնդրեցին, թե՝ մի գնդակահարեք, ներեք, սա Վաժայի տղան է, պատասխանեց՝ Վաժայի տղային չէ, եթե ինքը՝ Վաժա Փշավելան կենդանի լինի, նրան էլ կգնդակահարենք:

Այդ ընթացքում եկան ճակատագրական 30-ական թվականները: Միխեիլ Ջավախիշվիլին արդեն հրատարակել էր «Ջաղոյի եկվորները», «Արսենա Մարաբդելին» և ստեղծագործական այլ գլուխգործոցներ: Ստալինի նախաձեռնությամբ՝ գրողին պարգևատրեցին Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով: Այդ պարգևը գրողը կյանքի փրկության երաշխիք էր կարծում, բայց կուսակցական և պետական գործիչ Բերիան (1899-1953 թթ., վրացի և խորհրդային քաղաքական գործիչ) այդպես չէր մտածում:

Այդ ժամանակաշրջանում Լավրենտի Բերիան հրամայեց քանդել Մետեխիի եկեղեցին, ինչը առաջ բերեց վրաց հասարակության զայրույթը: Վրացի գրողների մի խումբ, որի կազմում էր նաև Միխեիլ Ջավախիշվիլին, խնդրանքով գնաց Բերիայի մոտ:

«Տեսնելուն պես հուզմունքից դեմքը մթագնեց: Նա կոպտաբար ասաց. «Այսպես, պատվիրակության տեսքով, միասին չպետք է գայիք ինձ մոտ, առանձին-առանձին ինչո՞ւ չեկաք», - հիշում է գրողի դուստր Քեթևան Ջավախիշվիլին հոր ասած խոսքերը»:

Գրողները Բերիային համոզեցին, որ Մետեխիի եկեղեցին չի կարելի քանդել, քանի որ այն միջին դարերի վրացական հուշարձանային հազվագյուտ նմուշ է: Միխեիլ Ջավախիշվիլին վերջում նաև ասաց. «Այդպիսի հուշարձանը Եվրոպայում ոսկե հովանոցի տակ են տեղադրում»...

Բերիան կարգադրությունը փոխեց, բայց վրդովվեց, որ իրեն տգիտության մեջ բացահայտեցին, վիրավորանքը չմոռացավ և ավելի ուշ պատվիրակության գրեթե բոլոր անդամներին գնդակահարեց:

Բերիայի կողմից վրացի գրողների ընդունումից հետո տուն վերադարձած Միխեիլ Ջավախիշվիլիի դեմքին գույն չկար: Ճիշտ է, Մետեխիի եկեղեցին վրաց ժողովրդի համար պահպանեց, բայց կյանքը դրվեց կշեռքի վրա: Բերիայի մոտ վատ հիշեցրեց իրեն, որին այնպես էլ Բերիան չէր մոռացել: Այս անգամ ձեռք չտվեց, բայց Բերիայի գործակալները հետևում էին նրա բոլոր քայլերը: Գրողը տեսնում էր, թե իր շուրջը ճակատագրական աղեղը ինչպես էր նեղանում, և միանում, նրա զինակիցներին և ընկերներին աստիճանաբար ինչպես էին բանտարկում: Չգիտեր՝ ինչ անել, ինչ ճանապարհով գնալ: Առողջությունը արդեն դավաճանում էր, ծնկները ցավում էին, քայլել դժվարանում էր, իսկ ժամանակը արճճի նման ծանրացել էր:

Մինչև Միխեիլ Ջավախիշվիլիի հարցաքննության արձանագրություններին ծանոթացնելը, երկու խոսքով շոշափեմ 1937 թվականի քաղբանտարկյալներին «կոտրելու» եղանակները: «Չեկայի» բանտը Դանթեի կողմից հանճարեղորեն նկարագրված դժոխքին էր նման, բայց նրանից շատ ավելի վատ էր այն պատճառով, որ Դանթեի նկարագրած դժոխքում մարդիկ մեղքերի պատճառով էին տանջվում, իսկ «Չեկայում» անմեղ

մարդկանց հոգին հանում էին տանջահարություններով և չկատարած հանցանքի համար ստորագրել էին տալիս: «Այդ դժոխքից դուրս եկած հերոս չկարողացա տեսնել», - գրում էր Ալ. Յակովլևը, որը նախկին խորհրդային կայսրության բռնադատվածների վերականգնման հանձնաժողովի նախագահն էր, և նրա ձեռքի տակով հազարավոր անմեղ պատժվածների գործեր էին անցել:

30-ական թվականներին «Չեկայի» բանտի դահիճն էր աստրախանցի Զախար Իվանի Շաշուրկինը: Նա կա՛մ ղեկավարում էր մահապատժի գործողությունները, կա՛մ ինքն էր գնդակահարում բանտարկյալներին: Այդ նույն ժամանակ կար ազգությամբ հույն մի մարդ՝ Ֆեյխորա անունով, որը բանտարկյալներին հատուկ մտրակներով ծեծում էր և այլևայլ եղանակներով տանջանքի էր ենթարկում: Ավելի ուշ՝ 40-ական թվականներին, կալանավորներին ծեծում էին ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Արսեն Մեկոկիշվիլին և բռնցքամարտի Խորհրդային Միության չեմպիոն Նավախարդովը:

Միխեիլ Զավախիշվիլիի անունը՝ որպես ֆաշիստական կազմակերպության ղեկավարի, մինչև ձերբակալությունը նախ ասել տվեցին այլ բանտարկյալների: «Վկաներից» մեկը նախկին սոցիալ-դաշնակից Լևան Քոքրաշվիլին էր, որը մեծ տանջանք-հալածանքից հետո անվանեց ֆաշիստական կենտրոնի կազմը. «Միխեիլ Զավախիշվիլի (կենտրոնի ղեկավար), Գիորգի (Զոզո) Նանեիշվիլի, Ալեքսանդրե Ախմետելի (ռեժիսոր), Ցինցաձե (պրոֆեսոր), Ալյոշա Ծերեթելի (պրոֆեսոր)»:

1937 թվականի օգոստոսի 19-ին հալածված Միխեիլ Զավախիշվիլիին երես առ երես կանգնեցրին Քոքրաշվիլիի հետ: Քննիչը մեղադրանք հնչեցրեց, որ իբր Միխեիլը վարում է ակտիվ հակախորհրդային հակահեղափոխական գործունեություն և պահանջեց հանցանքը խոստովանել: Միխեիլ Զավախիշվիլին այդ մեղադրանքին պատասխանեց. «Հակակազմակերպությունում չեմ եղել, բայց որոշ անձանց հետ զրույցի ժամանակ իմ կողմից արտահայտված առանձին կարծիքը հակահեղափոխական բնույթի եղել է»:

Այդ պատասխանը ճշմարտություն էր, քանզի Միխեիլ Զավախիշվիլին, չնայած մեծ զգուշությանը, այնուամենայնիվ բերանից թռցնում էր հակախորհրդային կարծիքներ, բայց «Չեկայի» աշխատակիցներին գրողի հակախորհրդային կարծիքները չէին հետաքրքրում: Դա այնպես էլ լավ գիտեին: Նրանց նպատակն էր Միխեիլ Զավախիշվիլիին հակախորհրդային ահաբեկչական կազմակերպության, ֆաշիստական կազմակերպության ղեկավարության և կապիտալիստական երկրների հետ լրտեսական գործունեության մեջ «մերկացնել»...

Հալածանքներից ուժասպառ եղած Քոքրաշվիլին առերեսվելիս Միխեիլին «բացահայտեց» որպես ֆաշիստական կազմակերպության ղեկավար:

Ֆաշիստական կազմակերպության ևս այլ անդամների «անվանեց» «Վրաց գրական հիմնադրամի» տնօրենի տեղակալ Դավիթ Ծերեթելին: Ինչ խոսք, այդ «անվանումը» նույնպես կատարվեց նրա վրա սադիստական ճնշման արդյունքում: Այդ «ֆաշիստներն» էին «Միխեիլ Զավախիշվիլին, Կոնստանտինե Գամսախուրդիան, Գերոնտի Քիքոձեն, Իլո Մոսաշվիլին, Կոնստանտինե Ճիճինաձեն, Կոկի Աբաշիձեն, Նիկոլոզ Միծիշվիլին, Արչիլ

Զաջանաշվիլին, Պավլե Ինգորոդվան, Տիցիան Տաբիձեն, Պաոլո Իաշվիլին, Գոգլա Լեոնիձեն, Դավիթ Սուլիաշվիլին, Ալեքսանդրե Աբաշելին, Միխեիլ Պատարիձեն, Լևան Ասաթիանին, Ռաժդեն Գվետաձեն, Շալվա Դեմետրաձեն, Ակակի Գաձերելիան, Թեդո Սախոկիան, Ապոլոն Ծուլաձեն, Ալեքսանդրե Քութաթելին, Արչիլ Միքաձեն, Իակինթե Լիսաշվիլին և ինքը՝ Դավիթ Ծերեթելին»:

Իրականում ոչ մի տեսակ գրողների ֆաշիստական հակահեղափոխական կազմակերպություն գոյություն չուներ: «Չեկիստները» Քվիշխեթիի հանգստյան տանը ճաշի ժամանակ գրողների զրույցները մկրտեցին՝ որպես ֆաշիստական կազմակերպության նիստեր, և դա էլ ասել տվեցին Դավիթ Ծերեթելիին:

Մի խոսքով, գրողների ֆաշիստական կազմակերպություն երբեք գոյություն չի ունեցել: Դա եղել է միայն չեկիստների հիվանդ բանականության մեջ: Ոչինչ չենք ասում Միխեիլ Զավախիշվիլիի ահաբեկիչ լինելու մասին, ինչը այժմ դառը ժպիտ է առաջացնում: Ընթերցում եմ այս հատորները, և ում գործում չենք հանդիպում Միխեիլ Զավախիշվիլիի անունը կամ ում անունը տալ չստիպեցին Միխեիլ Զավախիշվիլիին... Նրանց թվարկելը հեռու կտանի, սակայն մի բան նշեմ. Սանդրո Ախմետելիին ֆիզիկապես այնպես«մշակեցին» «Չեկայի» դահիճները, որ նաև ասել տվին այն, իբր Միխեիլ Զավախիշվիլին «Արսենա Մարաբդելի» «ազգային-ֆաշիստական» վեպը գրել է հակահեղափոխական Ղուրուլովի պատվերով և նման հազար այլ հիմարություններ:

Կարճ ասած, Քվիշխեթիում սեղանի շուրջ կայացած զրույցները «Չեկան» հակահեղափոխական զինված, ահաբեկչական, ֆաշիստական և այլ աղմկահարույց կազմակերպությունների նիստերի վերածեց:

Միխեիլ Զավախիշվիլիի հալածանքը «Չեկայում» մեթոդապես շարունակվում էր: Այստեղ չեմ թվարկի, թե ինչ անմարդկային եղանակով էին հալա-ծում մեծ գրողին: Հալածեցին այնքան, մինչև «դիմում – խոստովանություն» գրել տվեցին: Այս, այժմ արդեն արխիվային դարձած նյութում գրողը ստիպված է «խոստովանել» «հանցանքը» և իրեն հայտարարել որպես երեք կապիտալիստական երկրների գործակալ, միևնույն ժամանակ իբր մինչև 5000 մանեթ ստացել է՝ որպես լրտեսության վարձատրություն: Այն մասին, թե ինչպես տեղի ունեցավ նման «հանցագործության խոստովանությունը», վկայում է գրողի մյուս քննիչի՝ Միխեիլ Նացվլիշվիլիի 1954 թվականին Միխեիլ Զավախիշվիլիի արդարացման ժամանակ տված ցուցմունքը:

Բերում ենք համառոտ հատված. «1937 թվականին ձերբակալեցին և գնդակահարեցին վրացի գրող Միխեիլ Սաբայի Զավախիշվիլիին: Նա մեղադրվում էր ընդհատակյա հակախորհրդային աշխատանքի մեջ: Զավախիշվիլիի առաջին հարցաքննությունը անցկացրեց Բերիան՝ Քոբուլովի և բաժնի պետ Լևան Կոնստանտինի Աբաշիձեի մասնակցությամբ: Զավախիշվիլին իր ձեռքով գրեց ցուցմունք իր հակախորհրդային գործունեության մասին: Աբաշիձեն Զավախիշվիլիի գրած ցուցմունքները փոխանցեց ինձ, որպեսզի ձևակերպեմ որպես հարցաքննության

արձանագրություն: Ես ծանոթացա Զավախիշվիլիի գրած ցուցմունքին և կասկած առաջացավ ցուցմունքների անկեղծության վերաբերյալ, քանի որ նրա ցուցմունքում բերված էին փաստեր, որոնք իրականությանը չէին համապատասխանում: Այդ ժամանակ դիմեցի Աբաշիձեին, որը մասնակցում էր Զավախիշվիլիի հարցաքննությանը և հարցրի, թե ինչումն էր գործը: Աբաշիձեն պատասխանեց մի քանի աշխատակցի ներկայությամբ, որոնցից այժմ միայն բաժնի պետ Այվազովին եմ հիշում. «Ինձ որ այդպես ծեծեին, կխոստովանեի, որ Սիամի լրտես եմ, - և ավելացրեց, - գրե՛ք՝ ինչպես կա»:

Միխեիլ Զավախիշվիլիի գործի «հետաքննությունն» ավարտվեց 1937 թվականի սեպտեմբերի 19-ին: Քննարկման համար ուղարկվեց, այսպես կոչված, «Տրոյկային»: Բերում ենք մեղադրական եզրակացությունից փոքր հատված. «Մեղադրյալ Միխ. Զավախիշվիլին հետաքննության նյութերով ամբողջությամբ դիտվում է, որ պատրաստում էր զինված ապստամբություն և լրտեսում էր արտասահմանյան պետությունների օգտին, զբաղվում էր վնասարարությամբ, կազմակերպում էր դավադրական ակտեր և պատրաստում էր ահաբեկչական հարձակումներ, այսինքն՝ մեղադրվում է Վրաստանի քրեական օրենսգրի 58-8 և 58-11 հոդվածներով նախատեսված հանցագործությունում: Բացի այդ, նրան առաջադրվում է մեղադրանք 58-10 և 58-11 հոդվածներով»:

Քրեական հանցագործությունների հոդվածներից յուրաքանչյուրը նախատեսում է պատժի բարձրագույն չափ՝ գնդակահարություն:

Միխեիլ Զավախիշվիլիին գնդակահարեցին 1937 թվականի սեպտեմբերի 30-ին: Ճիշտ այդ օրը Գրողների տանը տեղի ունեցավ ժողով: Վրացի գրող-ները հակահեղափոխական Միխեիլ Զավախիշվիլիին դատապարտեցին և պահանջեցին նրա ֆիզիկական ոչնչացումը: Պահանջեցին այն պատճառով, որ այդպես էր ցանկանում Լավրենտի Բերիան...

P.S. Միխեիլ Զավախիշվիլիի մասին քրեական գործի #9997 (արխիվային #34) նյութերը 30-ական թվականներին բռնադատված այլ հասարակական գործիչների գործերի հետ միասին անցյալ դարի 90-ական թվականներին նախկին Անվտանգության նախարարության արխիվից անորոշ իրավի-ճակում կորան: Տպագրական մեքենայի վրա վերատպված միայն մի քանի փաստաթուղթ է պահպանված գրողի ժառանգների արխիվներում: Ճիշտ այդ փաստագրական նյութի վրա կառուցվեց վերոնշյալ հոդվածը:

Հավելված 7
2022 թվականին բրիտանական «Գարդիան» թերթում հրապարակված հոդված

«Միկրոսպառողական հիմարությունների մասին» մտածմունքի փոխարեն, ինչպիսին է, օրինակ, պլաստմասսայե սրճի բաժակներից հրաժարվելը, պետք է հակադրվենք չափից ավելի ունեցվածքի մասին հոգալուց և ագահությունից, և մեր կենսակարգը պետք է պարզեցնենք, և ոչ թե՝ հակառակը կատարենք:

Երբ այնպիսի սպասելի կամ խրոնիկական վտանգի առջև հայտնվենք, ինչպիսին են կլիմայի փոփոխությունը կամ էկոլոգիական աղետը, մեր մեջ ինքնափրկության բնազդը չի արթնանա: Հավաստիացնում ենք ինքներս մեզ, որ լուրջ ոչինչ, կամ էլ բոլորովին, ընդհանրապես ոչինչ տեղի չի ունենում: Մենք կրկնապատկում ենք վտանգը, երբ սովորական ավտոմեքենաները փոխարինում ենք սրընթաց «Ջիպերի» հետ և այդ խելագար սպառողական վազքում մեզ նրանով ենք հանգստացնում, որ «իրավիճակի լրջության դեպքում, ինչ-որ մեկը անպայմանորեն մեզ կկանգնեցներ»:

Ի՞նչ գիտենք:

Գիտենք, որ մեր կյանքը ամբողջությամբ կախված է բնության այնպիսի բարդ համակարգերից, ինչպիսիք են մթնոլորտը, օվկիանոսի հոսանքները, բնահողը, մոլորակի կենսական ցանցերը: Գիտնականները հաստատեցին, որ ցանկացած համակարգ գործում է օրինաչափությունների սահմաններում: Նշանակություն չունի համակարգը բանկային ցանց է, ազգային պետություն, արևադարձային անտառ, թե սառույցի շերտ: Դրա վարքը ենթարկվում է մաթեմատիկական օրենքներին: Նորմալ պայմաններում համակարգը կարգավորում է ինքն իրեն և պահպանում է հավասարակշռությունը: Նա մինչև որոշակի սահման ցնցումը կարողանում է նաև մարսել: Բայց այնուհետև հանկարծ գլխիվայր է կանգնում, հատում է բեկումնային պահը և հավասարակշռության նոր դիրք է գտնում, որը հաճախ անշրջելի է:

Մարդկությունը այսօր հավասարակշռության գոյություն ունեցող տարողության վրա է հենվում: Թեև ամբողջ աշխարհում կարևորագույն համակարգերի աշխատանքը հասնում է կրիտիկական սահմանին: Եթե մեկը գոնե դուրս գա կուռ համակարգից, մեծ հավանականությամբ այն մնացածներին նույնպես իր հետ կտանի, ինչին քաոսի այնպիսի կասկադ կհետևի, ինչպիսինն անվանում են համակարգային էկոլոգիական փլուզում: Համանման գործընթացների արդյունքը անցյալի զանգվածային անհետացումներն են:

Սպասվող սցենարներից մեկն այսպիսն է. սավաննայի գոտին, որը հայտնի է սերադո անունով, շրջապատում է կենտրոնական Բրազիլիան: Դրա բուսական ծածկույթը կախված է ցողի առաջացումից: Ցողը ստեղծվում է խորը արմատ ունեցող ծառերից, որոնք գրունտային՝ բնահողի ջրերը ներծծում են և այնուհետև դրանք իրենց տերևներից օդի մեջ են ցողում:

Վերջին մի քանի տարիների ընթացքում սերադոյի հսկայական տարածքները մաքրվել են գյուղատնտեսական մշակաբույսերի, հիմնականում՝ սոյայի համար, որով կերակրում են աշխարհի հավերին և խոզերին: Ծառերի արմատահատման հետևանքով օդը ավելի ու ավելի չոր է դառնում: Իսկ դա նշանակում է, որ ավելի փոքր բույսերը ոչնչանում են, որով է՛լ ավելի է նվազում ջրի շրջանառությունը: Գլոբալային տաքացման հետ միասին, որի մասին որոշ գիտնականներ զգուշացնում էին, այդ արատավոր շրջանը կարող է շուտով և անսպասելիորեն ամբողջ համակարգը անապատի վերածել:

Սերադոն նաև Հարավային Ամերիկայի որոշ հսկայական գետերի աղբյուրն է, այդ թվում՝ այն գետերի, որոնք Ամազոնի ավազանին են միանում: Գետերի ջրի պաշարների կրճատումը կմեծացնի այն սթրեսը, որն առանց այդ էլ ապրում են արևադարձային անտառները: Անտառահատումները, հրդեհները, շոգը մահացու համակցություն են անտառների համար, որոնց համակարգային փլուզում է սպառնում: Սերադոն և արևադարձային անտառները ստեղծում են խոնավ օդի «երկնքի գետ» կոչվող հոսքեր, որոնք տեղումները բաշխում են ամբողջ երկրով մեկ և նպաստում են օդի և օվկիանոսի հոսանքների շարժման արդյունքում ստեղծված գլոբալ շրջանառությանը:

Որքան էլ դժվար լինի համակարգի ուսումնասիրությունը, միշտ կարելի է ասել՝ մոտենո՞ւմ է, թե՞ ոչ այդ բեկումնային պահը: Համակարգի մասերը սկսում են առկայծել, և որքան ավելի մոտ է գտնվում համակարգը կրիտիկական սահմանին, տատանումները ուժեղանում են: Այն, ինչը այս տարի տեսանք, մեծ գլոբալային առկայծում է, երբ երկրագնդի կենսական համակարգերը սկսում են քանդվել: Օդի տաք զանգվածները Հյուսիսային Ամերիկայի ծովի առափնյակի գլխին, զանգվածային հրդեհները Սիբիրի և Միջերկրական ծովի շուրջը, մահացու ջրհեղեղները Գերմանիայում, Բելգիայում, Չինաստանում, Սիերա Լեոնեում - սրանք խուճապի ազդանշաններն են, որը կլիման ուղարկում է:

Դուք երևի մտածում եք, որ գիտակից՝ բանական էակները այդ ազդանշաններին արագորեն և վճռորոշ կարձագանքեն և արմատականորեն կփոփոխեն սեփական վերաբերմունքը բնության նկատմամբ: Բայց մենք այդպես չենք վարվում: Մեր բարձր բանականությունը և բարձր զարգացած գիտակցությունը, որը մի ժամանակ մեծ աշխատանք է կատարել և այդքան հաջողության է հասցրել մեզ, այսօր գործում է մեր դեմ:

Քանի դեռ աշխարհում անտառային հրդեհներ են, ջրհեղեղները փողոցներից հեղեղում են ավտոմեքենաները և ցանքսերը չորանում են, դուք լսում եք բանավեճեր այն մասին, թե ինչպես է ավելի լավ գուլպաները հագնել՝ նստած վիճակո՞ւմ, թե՞ կանգնած կամ ինչպիսի տախտակի վրա է ավելի լավ շան համար երշիկ կտրատել: Այս օրինակները ես չեմ հորինում, սեփական ականջներով լսեցի տարբեր ռադիոալիքներով կլիմայական աղետի օրերին: Տպավորություն է առաջանում, որ անգամ այն բոպեներին, երբ երկրագնդի վրա աստերոիդ կշարժվի, իսկ մենք ռադիոն միացնենք, այնտեղից կլսենք. «Ուրեմն այսպես, օրվա ամենաթեժ թեման՝ պատմե՛ք ծիծաղաշարժ պատմություն, որը համընկել է քաբաբ ուտելու ժամանակի հետ»: Այ, այս կատակով և սառնասրտությամբ ավարտվում է մարդկությունը:

Մեդիայի կայունությունն ուսումնասիրող ընկերության («ALBERT») վերլուծությունում կարդում ենք այն մասին, որ 2020 թվականին Միացյալ Թագավորության հեռուստատեսային հաղորդումներում «թխվածքաբլիթ» բառը տասն անգամ ավելի հաճախ է հիշատակված, քան «կլիմայական փոփոխությունը», «շոտլանդական հավկիթը»՝ երկու անգամ ավելի հաճախ, քան «կենսաբազմազանությունը», իսկ «բանանի հաց»-ը առաջ է անցնում միասին վերցրած «քամու էներգիայի» և «արևի էներգիայի» հիշատակումներից:

Խոստովանում ենք, որ մեդիան հասարակություն չէ, և հեռուստալիքները շահագրգռված են բանանի՝ ադամաթզի հացի հանրայնացմամբ: Մենք կարող ենք վիճել այն մասին, թե որքանով մեծ առավելություն են շնորհում լրագրողները թխվածքաբլիթին կլիմայի համեմատությամբ, բայց կարծում ենք, որ «թխվածքաբլիթի» և «կլիմայի» այս համամասնությունը պարզորոշ ցույց է տալիս այն «առաջընթացը», որին հասել ենք համակարգային էկոլոգիական աղետից խուսափելու գործում: Ակնհայտ է, որ մեր դուռը թակող գլոբալ աղետը մեզ համար ակտուալ չէ: Ցանկացած պահի միացրեք ցանկացած ռադիոկայան, և ինքներդ կհամոզվեք:

Աննախադեպ ճգնաժամին դեմ առ դեմ մենք առավելությունը տալիս ենք հիմարությունների մասին դատարկախոսությանը: Ցանկացած այլ թեմայի մասին խոսելը սոցիալապես դառնում է անհնար: Չեմ ասում, որ միայն սպասելի աղետը պետք է քննարկենք: Դեմ չեմ զվարճախոսությանը, բայց չեմ կարող միայն զվարճանալ: Այս մահացու անլրջությունը միայն երաժշտական և զվարճալի ալիքներին չի վերաբերում: Քաղաքական «Նորությունների» մեծամասնությունը բամբասանքների մասին է պատմում. ով որտեղ է, ով ինչ ասաց: Նրանք խուսափում են այն մասին խոսելուց, ինչը այս ամենի ետևում է կանգնած. սև փող, կաշառակերություն, իշխանությունների շեղում ժողովրդավարությունից, սպասելի էկոլոգիական փլուզում: Համոզված եմ, որ սա մտադրված տեղի չի ունենում: Սա ենթագիտակցական ռեֆլեքս է, որը շատ ավելին է ասում մեր մասին, քան մեր մտածված արարքները:

Գոյություն ունեն ջրի միջատի ցանցաթև տեսակներ, որոնց կյանքը կախված է գետի մակերևույթի գալարումներից: Էգ միջատը խախտում է մակերեսը, հասնում է ճեղքի (ինչը այսպիսի փոքր և փխրուն էակի համար հերոսության արժեք ունի), իջնում է ջրի խորության մեջ և գետի հատակին ձու է դնում: Եթե մակերևույթը չկարողանա պատռել, նա չի կարողանա փակել կենսական ցիկլը, որի պատճառով սերնդի հետ միասին կոչնչանա:

Մարդու պատմությունը նույնպես համանման է: Եթե մենք չխախտենք այս անվերջանալի զվարճանքի մակերևույթը և չխորանանք այն ամենի մեջ, ինչը էական է, մենք չենք կարողանա փրկել ո՛չ մեր զավակներին և, հնարավոր է, ո՛չ էլ մեր կենսաբանական տեսակին: Բայց, ինչպես երևում է, չենք կարող կամ ոչ էլ ցանկանում ենք այդ մակերևույթը ճեղքել: Ես մեր այս տարօրինակ վիճակը «մակերեսային հուզմունք» կանվանեի, ինչ-որ միջանկյալ մի բան մոտալուտ ճգնաժամի իմացության և այն թեթևամտության միջև, որով մենք բաժանվում ենք այս գիտելիքից:

Մակերևութային հուզմունքը գերիշխում է նաև այն ժամանակ, երբ ապացուցում ենք, որ մեր կյանքին անհրաժեշտ համակարգերի փրկության համար ենք պայքարում: Կենտրոնացած ենք միկրոսպառողական հիմարությունների, մանր հարցերի վրա, ինչպիսիք են, օրինակ, պլաստիկ ձողիկները և սրճի բաժակները այն հսկայական կառուցվածքային ուժերի փոխարեն, որոնք քշում են մեզ աղետի կողմը: Կառչած ենք պոլիէթիլենի պայուսակների դեմ պայքարից: Հավատում ենք, որ աշխարհին մեծ շահույթ ենք բերում, երբ ցելոֆանի տոպրակները բամբակե պայուսակներով ենք փոխարինում՝ չնայած այն անին, որ ոմանց գնահատմամբ, օրգանական բամբակի պայուսակների արտադրության վնասարար ազդեցությունը կլիմայի վրա ավելի մեծ է՝ այն հավասար է 20 հազար պլաստիկական պայուսակի արտադրությանը:

Մենք արդարացիորեն զայրանում ենք, երբ տեսնում ենք ձիաձկան, որի պոչին բամբակե ականջամաքրիչ է կպած, բայց մեզ չի անհանգստացնում այն, որ ձկնարդյունաբերությունը ոչնչացնում է ծովի ամբողջ էկոհամակարգը:

Քանի որ երկրագնդի վրա չկա բավարար էկոլոգիական և ֆիզիկական տարածություն անգամ այն բանի համար, որ բոլոր առանձին մարդիկ՝ անհատները, ստեղծեն մասնավոր բարեկեցություն, բավական է նրանցից ամեն մեկին ապահովենք հասարակական պերճությամբ՝ հիանալի զբոսայգիներով, հիվանդանոցներով, լողավազաններով, պատկերասրահներով, թենիսի կորտերով և տրանսպորտային համակարգերով, մանկական հրապարակներով և հասարակական կենտրոններով: Մեզանից ամեն մեկը պետք է լինի բավականին ապահովված, և եթե թևերը բացել ցանկանանք, դա այնպես պետք է կարողանանք կատարել, որ այլ մարդկանց ռեսուրսները չհափշտակենք:

Մենք կփրկվենք, եթե մերժենք հնազանդությունը: Դա գիտեին 19-րդ դարում ժողովրդավարության համար պայքարողները, սուֆրաժիստները, Մահաթմա Գանդին, Մարտին Լյութեր Քինգը:

Էկոբողոքականները, որոնք պահանջում էին համակարգային փոփոխություններ, նույնպես յուրացրին այս հիմնարար ճշմարտությունը: Համակարգային էկոլոգիական փլուզման դեմ ընթացակարգերում մենք տեսնում ենք այնպիսի մարդկանց, մեծավ մասամբ՝ երիտասարդների, որոնք չեն ցանկանում հնազանդվել: Նրանք հասկացել են պատմության ամենակարևոր դասը. մեր փրկությունը մեր բողոքի և դիմադրության մեջ է:

Հավելված 8
Մարդ, որը ժամանակից առաջ անցավ*

Վրաստանի քաղաքները պատմության ընթացքում շատ լավ և արժանավոր կառավարիչներ են ունեցել, սակայն նրանց շրջանում միանգամայն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վրացի հասարակական գործիչ և քաղաքագետ, հրապարակախոս, «Թերեքի ջուր խմածների» ներկայացուցիչ Նիկո Նիկոլաձեն, որը 1894-1912 թվականներին Փոթիի քաղաքագլուխն էր:

Փոթին Վրաստանի նավահանգստային հնագույն քաղաքներից մեկն է: XIX դարում, կայսերական Ռուսաստանի կառավարման ժամանակ Փոթին Թբիլիսիից և Բաթումիից հետո երրորդ քաղաքն էր, որն անցավ ինքնակառավարման, այսինքն՝ քաղաքի կառավարումը, նրա բյուջեի տնօրինումը, որոշումների ընդունումը հանձնարարվեց քաղաքի կառավարմանը: Նման իրավիճակում քաղաքի գլուխ եկավ Նիկո՝ Իակոբ Նիկոլաձեն, որը ճահճային, ցեխոտ, չբարեկարգված ավանը շուտով վերածեց եվրոպական ոգով զարգացած նավահանգստային քաղաքի:

Նիկո Նիկոլաձեն պետության խելացի կառավարման գլխավոր պայմաններից մեկը համարում էր երկրում լայն տեղական ինքնակառավարման ապահովումը: Վրացի գործիչների շրջանում նա առաջինն էր, ով եվրոպական ինքնակառավարման գինը լավ գիտեր և դեռևս 1870-ական թվականների սկզբին քարոզում էր խիստ սահմանափակ տեղական ինքնակառավարում մտցնելու անհրաժեշտությունը: Ցավոք, այն ժամանակ վրացի գործիչները նրան աջակցություն չցուցաբերեցին: Ինչ խոսք, ինքնակառավարումը իրատեսական ինքնավարություն ձեռք բերելու գլխավոր լծակն էր: Նիկոլաձեն ճարպկորեն քողարկում էր այդ տերմինը և անվանում էր գիտության մեջ ընդունված տերմինը՝ «ծավալուն տեղական ինքնակառավարում»: Նրա անմիջական նախաձեռնությամբ կատարվեց ք. Թբիլիսիի **խմոսանիների** կողմից (որտեղ մեծամասնությունը հայերն էին կազմում) Դիմիտրի Ղիփիանիին Թբիլիսիի քաղաքագլուխ ընտրելը, քաղաք Քութաիսիում ինքնակառավարում ներդնելը, ինքն էլ Փոթին վերածեց ինքնակառավարման դասական քաղաքի: Նիկո Նիկոլաձեն կտրուկ պահանջում էր ընտրական ցենզի չեղարկում և բնակիչների ամբողջ զանգվածի (տղամարդ, կին) մասնակցությունը ինքնակառավարմանը և ընտրություններին, Նիկոլաձեն ժողովը համարում էր զանգվածների դաստիարակման դպրոց, իսկ պետական կառավարման ամենաբանական ձևը՝ ժողովրդի ներկայացուցչության սկզբունքների վրա կառուցված ինքնակառավարումը:

Նիկո Նիկոլաձեն ապացուցում էր, որ տեղական կառավարում ձևավորելիս՝ պետք է ընտրվեն զարգացած, փորձված և դաստիարակված մարդիկ, որպեսզի այդ վերջինները արժանանան տեղական բնակչության աջակցությանը և կարեկցանք առաջացնեն նրանց մոտ: Նիկոլաձեն առաջիններից էր, ով առաջ քաշեց այն միտքը, որ քաղաքի բոլոր գործերը պետք է ենթարկվեն քաղաքային ինքնակառավարմանը, ինչը որոշակիորեն

սահմանափակվել էր 1874 թվականին Թբիլիսիի քաղաքային կառավարման կանոնակարգով: Օրինակ՝ ինքնակառավարման իրավասության մեջ չէին մտնում առողջապահության, կրթության և այլ հարցեր:

«Ինքնակառավարումը և ժողովրդավարական համակարգը, - գրել է նա, - առաջընթացի և հաջողության լավագույն գրավականն է, հասարակության դաստիարակության լավագույն դպրոցը... Իսկական ինքնակառավարումը, ինչպես համոզվել է ողջ կրթված մարդկությունը, կարող է լինել միայն ներկայացուցչության կարգով, քանի որ միայն այս կարգի օգնությամբ են արտասահմանում հաստատվել արդարատադությունն ու ազատությունը, հավասարությունն ու ճշմարտությունը... Բոլորը հասկացան, որ ներկայացուցչությունը ինքնակառավարման երկրորդ և հույժ կարևոր քայլն էր... նաև այս երկրներում (Շվեյցարիա և այլն):

Ժողովրդի կարծիքը արտահայտողը, ժողովրդի գործերը կառավարողը, ժողովրդի ճակատագիրը որոշողը այնուամենայնիվ ժողովրդի ներկայացուցչությունն է, որը մենակ և հազվագյուտ ցավալի դեպքում այնպես չի գործադրի իր դատավճիռը, եթե նախ ժողովրդին ցույց չտա և չհարցնի՝ համաձա՞յն են այս դատավճռին, թե՞ ոչ»:

Վերջում Նիկոլաձեն եզրակացնում է, որ «այդպիսի կառավարումը երկրի ընդհանուր գործին շատ ավելի նախընտրելի է, քան ժողովրդի միասնական ձայնազրկությունը, նրա խլությունը, նրա ստրկությունը»:

«Երկրագնդի վրա այնպիսի ազգ չի գտնվի, որը երբեք ինքնակառավարում չի ունեցել: Ուշադրությո՛ւն դարձրեք ազգի բարքերին և կյանքին: Ինքնակառավարում ներդնելուց և ներդնումից տասնյակ տարի հետո. ամեն ինչում կնկատեք փոփոխություն և բարելավում, աճ և հզորացում, ոչ թե միայն հասարակական գործերն են բերվում ուժով, ազգի բարքերով, այլև մասնավոր անդամների, նրանց դաստիարակության և բարքերի վրա նույնպես փայլատակում է ինքնակառավարումը, այսինքն՝ ազատության լույսը» (Նիկոլաձե, 1894 թ.):

«Ով Փոթի քաղաքի վարչությունը փոքր-ինչ գոնե ճանաչում է, նա հստակորեն գիտի, որ ոչ մի պաշտոնյա անձի թույլ չեմ տալիս, որպեսզի ծառայություն սողոսկի ինչ-որ կուսակցական, լիազորական կամ ազգայնական միտում: Ամենուրեք պահանջում եմ միայն անձնվեր ծառայություն հօգուտ քաղաքի» (Նիկոլաձե, 20/1):

Ն.Նիկոլաձեի հարուստ գործնական փորձից այլ կարևոր հարցերի հետ ճիշտ այսպիսի մոտեցումը պետք է նկատի ունենանք ժամանակակից կառավարման համակարգում: Նիկոլաձեն տեղական ինքնակառավարման արմատավորումը արդարացնում էր ոչ միայն քաղաքական, տնտեսական և իրավական տեսանկյունից, այլև այն համարում էր նախնիների կողմից թողած ավանդույթների, սովորույթների և բարոյական հատկանիշների փրկության միջոց:

Քաղաքի բնակչությունը Նիկո Նիկոլաձեին որպես իր կառավարիչ իրար ետևից հինգ անգամ, չորսական տարով ընտրեց: Նիկո Նիկոլաձեն նախ և առաջ ձեռնամուխ եղավ նավակայանի շինարարությանը և բարեկարգմանը մեկնեց ձեռքը: Նավակայանը պետք է քաղաքին բերեր տնտեսական զարգացում: Ինքն նեթ սահմանեց առաջին մաքսային հարկը, որը բավականին փոքր էր, թեև վերջնականապես նշանակալից գումար էր հավաքվում: Փոթին Վրաստանի քաղաքների շրջանում առաջիններից մեկն է, որը գլխավոր պլանի համաձայն վերականգնվեց և փրկվեց: Այդ պլանը Նիկո Նիկոլաձեն վերցրեց Փարիզից:

Նիկո Նիկոլաձեն վերականգնեց հազվագյուտ դենդրոլոգիական զբոսայգին, որտեղ աշխարհի տարբեր անկյուններից բերված բույսեր էին աճում: Փոթին այսօր էլ շրջապատված է էվկալիպտների անտառով, որը այդ նույն ժամանակաշրջանում է աճեցվել, քանի որ պարզվեց, որ այդ բույսը շատ լավ է ներծծում խոնավությունը: Փորեցին դրենաժային ջրանցքներ, անցկացրին քարասալարկներ, բացվեց առաջին հիվանդանոցը, սարքավորվեց հեռագրային գիծը և այլն: 1908 թվականին հնարավոր դարձավ Փոթիի էլեկտրաֆիկացիան, նավակայանի և փողոցների լուսավորությունը, կառուցվեց 20 կապիտալ՝ հիմնապատ շենք, որոնք հատկացվեցին պետական հիմնարկություններին: Նիկո Նիկոլաձեն կարողացավ Փոթիին տալ իսկական քաղաքի տեսք և դրա զարգացման համար նոր ճանապարհներ բացեց:

Նիկոլաձեն քաղաք Փոթիի ինքնակառավարման ղեկավարն էր, նա 1894 թվականին քվեարկեց և Փոթիի չորրորդ խորհրդի անդամ դարձավ, իսկ նույն թվականի հոկտեմբերի 25-ին նրան ընտրեցին քաղաքագլուխ: Հրահանգի համաձայն՝ գործառույթների բաշխմամբ քաղաքագլխի պարտականությունների մեջ էին մտնում ընդհանուր ղեկավարությունը, պաշտոնյա անձանց գործունեության համակարգումը և վերահսկողությունը, վարչության անդամների շրջանում գործերի բաշխումը, խորհրդի որոշումների կատարման վերահսկողությունը, նահանգապետի ցուցումների կատարումը, տարեկան բյուջեի կազմումը, քաղաքի եկամուտների և պատկանող գույքի կիրառման վերահսկումը, կադրերի ընտրությունը և այլն:

1907 թվականին տպագրված ուղերձներից մեկում թվարկված են այն ձեռքբերումները, որոնց հասավ և ապագայում մտադիր էր իրականացնել քաղաքի ինքնակառավարումը. նավակայանի վերականգնում, ցամաքեցման համակարգի կառուցում, էլեկտրալուսավորություն, հեռախոսային ցանց, իգական և արական գիմնազիաների շինություններ, գերեզմանոցի բարեկարգում, բուժարանի և ոստիկանության շենքեր և այլն: Ապագայի համար նախատեսվում էին. շրջանի ջրանցքով միացում նավահանգստին, երկաթգծի ապրանքի վրա մաքսավճարի սահմանում, քաղաքի ընդհանրական բանկի բացում, ուսուցչական սեմինարիայի և ինստիտուտի հիմնադրում, ճահիճների չորացում և այլն:

Փոթիի քաղաքային ինքնակառավարումը Ն. Նիկոլաձեի ղեկավարությամբ արգասաբեր էր գործում մինչև 1912 թվականը: Այն վերածվեց քաղաքի առաջատար կազմակերպիչ ուժի, Փոթիի քաղաքացիները մեծ ուշադրությամբ էին հետևում խորհրդի ընտրություններին: Խմոսանիների՝

ընտրական ձայն ունեցողների կազմը յուրաքանչյուր ընտրության ժամանակ քիչ թե շատ փոփոխության էր ենթարկվում: Անփոխարինելի միայն Ն. Նիկոլաձեն էր, որը տասնյակ տարիների ընթացքում ղեկավարում էր Փոթի քաղաքը, կանգնած էր մեծ մասշտաբի աշխատանքների ղեկի մոտ: